

ՅԱԿՈԲ Ս.
ԳԱՍԱՐՃԵԱՆ

ՆՈՒՒՐՈՒՄ

Ռ.Ա.Կ.-Ի
ՃԱՄԲՈՎ

*Յիսնամեայ
գործունէութեան
արձանագրութիւն*

Հաաքեց եւ խմբագրեց
ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ

Երեւան - 2016



ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

ՅԱԿՈԲ Ս. ԳԱՍԱՐԱԾԵԱՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

***Յիսնամեայ գործունէութեան
արձանագրութիւն***

**Հաւաքեց եւ խմբագրեց
ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ**

Երեւան - 2016

© Յակոբ Ս. Գասարճեան, 2016

Հեղինակային բոլոր իրաւունքները վերապահուած:

Արտատպումներու համար դիմել հեղինակին՝ Hagop S. Kassardjian,
Dekwaneh, Parallel Tower Bld., Block B, 4th Floor, Beirut, Lebanon

E-mail: agopkas@hotmail.com

ISBN: 978-1-931834-41-4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	9
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ	11
Պատանեկության Տարիներ	13
Ռ.Ա. Կուսակցության Անդամակցութիւնս	20
Ազգային-քաղաքական Գործունեութիւնս Ֆրանսայի Մէջ	22
Կուսակցական Գործունեութիւն Ֆրանսայի Մէջ	32
Ռ.Ա.Կ. Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանակի Առաջին Պատգամաւորական Ժողովը	34
Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի Երրորդ Խորհրդակցական Ժողովը	38
Ռ.Ա.Կ. ԺԷ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը	42
Ռ.Ա. Կուսակցության ԺԸ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը	43
Ռ.Ա. Կուսակցության Հիմնադրութեան 70 Ամեակի Տօնակատարութիւնը Լիոնի Մէջ	45
Թ.Մ.Մ. Հիմնադիրներու Մարմնի Անդամ	47
Մեթր Ջրաչեայ Սեդրակեանի Ոսկեայ Յօբելեանը	49
Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնի Կարեւոր Ժողովը	51
Ռ. Ա. Կուսակցության ԺԹ. (19) Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը եւ Ռ.Ա.Կ.-ի Պառակտումը	52
Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Հետ Հանդիպումս Ուաշինկթընի Մէջ	54
Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Ե. Պատգամաւորական Ժողովը	58
Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութեան Այցելութիւնը Հայաստան	59

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԱՐՎ

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի Հետ Երկրորդ Հանդիպումը	68
Արտակարգ Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, Լիբանան, Պիքֆայա, Նաաս	70
Ռ.Ա.Կ.-ի 75 Ամեակի Փառաշուք Հանդիսութիւնը Նախագահութեամբ Վարչապետ Ռաֆիք Հարիրիի	73
Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութեան Այցելութիւնը Հիւսիսային Ամերիկա եւ Գանատա 1997ին	77
«ՉԱՐԹՕՆԹ»ի 60 եւ Թ.Մ.Մ.-ի 50 Ամեակներու Նշում	82
Այցելութիւններ Յունաստան եւ Հարաւային Ամերիկա	85
Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի Ակումբներու Միացեալ Ժողով	92
Թէքէեան Կեդրոնի Մեր Յրաչեայ Սեդրակեան Սրահի Բացում	97
Ռ.Ա.Կ. ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով	99
Կուսակցութեան Միասնականութեան Վերականգնման Ծիզեր եւ Ռ.Ա.Կ. ԻԲ. (22րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով	100
Փարիզի Հաշտութեան Ժողովը	102
Լիբանանի Ռ.Ա.Կ. Շրջանակի Միասնականութեան Վերականգնում	109
Երեսփոխանութիւն եւ Լիբանանեան Ներքին Զաղաքական Կեանքի Մասնակցութիւն	111
Վարչապետ Ռաֆիք Հարիրիի Հետ Մեր Դաշինքը	116
Այցելութիւն Ֆրանսա եւ Հանդիպումներ Զաղաքական Դէմքերու Հետ	123
Ռ.Ա.Կ. ԻԲ. (22րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով	126
Արմենականներու Ամմանի Մեծ Բանակումի հովանաւորութիւն	129
Ռ.Ա.Կ.-ի 80 եւ Հ.Ռ.Ա.Կ.-ի 10 Ամեակի Հանդիսութիւնները Պէյրութի եւ Երեւանի Մէջ	130
Համահայկական Բ. Խորհրդածողովի Մասնակցութիւն	135
Փաթրիք Տէվէճեանի Հետ Հանդիպում	139
Վահան Թէքէեան Վարժարանի 50 Ամեակի Հանդիսութիւն	141
Ռ.Ա.Կ. ԻԳ. (23րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, Փարիզ	142

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

Վարչապետ Ռաֆիք Չարիրիի Պատմական Այցելությունը	
Թեքեան Կեդրոն	144
Վարչապետ Չարիրիի Այցը Հայաստան	148
Թ.Մ.Մ. Գերսամ Ահարոնեան Սրահի Բացում	149
Մեծ Եղեռնի 89 Ամեակի Հրապարակային Ոգեկոչում	150
Ռ.Ա.Կ.-ի Պետական Արձանագրությունը	152
Ռ.Ա.Կ.-ի 83 Ամեակի Շրջադարձային Հանդիսությունները Թեքեան	
Կեդրոնի եւ «Պիե»ի Համալիրին Մեջ	154
Ռաֆիք Չարիրիի Սպանությունը	158
2005ի Խորհրդարանական Ընտրություններ	159
Երեսփոխանական Գործունեություններ	164
Հայաստանի Խորհրդարանի Հիմնադրության 15 Ամեակ	168
Միջ-Լիբանանեան Ազգային Երկխոսություն	170
«Չարթոնք»ի Դադրեցումը եւ Վերահրատարակությունը	176
2009ի Խորհրդարանական Ընտրություններ	180
Իտալիոյ Հանրապետության Սպայից Կարգի Արժանեաց Շքանշանով	
Պարգևատրումս	186
Լիբանանեան Զրետի Պանքը Հայաստանի Մեջ	188
Հայաստանի Հանրապետության «Մխիթար Գոշ» Մետալով	
Պարգևատրումս	189
ԵԼՈՅԹՆԵՐ	193
ՀԱՐՑԱԶՐՈՅՆԵՐ	249
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	317
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ	329

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կեանքիս շուրջ կես դարու իրադարձությունները, դեպքերը եւ դեմքերն են որ պիտի երեւան այս գիրքին մէջ: Ընտանեկան յարկի եւ պատանեկութեան տարիներու յիշողութիւններ, միութենական, կուսակցական, ազգային-քաղաքական, ինչպէս նաեւ Լիբանանի խորհրդարանական գործունեութեան դրուագներ թուղթին յանձնելու եւ ձեւով մը հինգ տասնամեակներու հաշուետուութիւն մը տալու ցանկութիւնը զիս մղեց ձեռնարկելու այս գործին:

Դասական իմաստով յուշագրութիւն մը չէ ասիկա, այլ՝ զանազան տարիներու ընթացքին կատարած գրառումներուս, նօթերուս, անձնական արխիւիս եւ մամուլին մէջ լոյս տեսած նիւթերու մէկտեղումը, հաւաքումը եւ անոնց դասաւորումը, որոնց վերընթերցումը առիթը կու տայ նաեւ վերյիշելու, վերարժեւորելու անցեալ տասնամեակներու ապրուած կեանքը եւ մանաւանդ դասեր քաղելու անկէ:

Հասուն տարիքի իմ գործունեութիւնը զուգադիպեցաւ կարելոր հանգրուաններու՝ լիբանանահայ ազգային ծաղկուն կեանք եւ ապա քաղաքացիական պատերազմ, Ֆրանսա տեղափոխութիւն, Արցախեան Շարժում, աղիտալի երկրաշարժ, Հայաստանի Անկախութեան հռչակում, Լիբանանի խորհրդարանի անդամակցութիւն, ազգային նոր իրողութիւններ, տագնապներ, կուսակցական ներքին պայքարներ եւ պառակտումներ:

Վերելքներով եւ ընկրկումներով հարուստ ժամանակաշրջան մըն էր որ անկասկած իր հետքը թողուց գործունեութեանս յաջորդող տարիներուն վրայ: Իբրեւ ժամանակակիցը, երբեմն նաեւ անմիջական մասնակիցը ազգային-քաղաքական ու կուսակցական կարելոր իրադարձութիւններու, կ'անդրադառնամ մեր յաջողութիւններուն եւ միեւնոյն ատեն գործած անհատական թէ հաւաքական սխալներուն, վրիպումներուն եւ նոյնիսկ մեղքերուն: Թէեւ ջանացած եմ նուագագոյն սխալը գործել, բայց սխալներուս համար ներողութիւն կը խնդրեմ ընտանիքէս, կուսակցութենէս, համախոհներէս թէ հակառակորդներէս: Աշխատողն է որ սխալներ կը գործէ:

Կուսակցական ղեկավար մը, այլյատկանիշներու կողքին, պէտք է զիջող, ներողամիտ եւ համբերատար ըլլայ: Կը կարծեմ թէ այս ուղղութեամբ ջանացած եմ առաւելագոյնը ընել: Թէ որքանո՞վ յաջողած եմ, ուրիշներ կրնան որոշել: Միշտ փորձած եմ մեր կուսակցութեան մեծ երախտաւորները եւ ղեկավարները օրինակ ունենալով, հետեւիլ անոնց գծած ուղիին:

1990ականներին սկսեալ Ռ.Ա.Կ.-ի շարքերուն մէջ նկատելի դարձան ներքին դժուարութիւններ եւ տարակարծութիւններ, յաճախ անձնական գետնի վրայ: Սերնդափոխութիւնը, դիմադրութիւններու եւ պայքարներու գնով, շատ դժուար եղաւ: Կ'ուզէի որ որպէս կուսակցականներ, անձնական շահերէ դուրս ելլելով, խորհինք գերագոյն շահերու մասին: Կուսակցական կարգապահութիւնը աւելի քան անհրաժեշտ է. այլապէս՝ կառոյցը կը կորսնցնէ գոյութեան իր իմաստը: Օրինաւորապէս ընտրուած կուսակցական բոլոր մարմինները եւ վարչութիւնները պէտք է յարգանք վայելեն, իսկ ներքին ընդդիմութիւնն ալ իր սահմաններուն մէջ մնայ, առանց կուսակցութիւնը պառակտելու եւ անջատողական շարժումներ նախաձեռնելու:

Իմ մէջ գոյութիւն ունեցած երկու պատկանելութիւնները՝ Զ.Բ.Շ.Մ եւ Ռ.Ա.Կ., երբեք մէկը միւսէն գերադաս չեմ նկատած: Համոզումով ջանացած եմ իմ այդ հաւատամբը գործնականացնել ազգային ծառայութեան ընթացքին, ընդունելով եւ հաւատալով որ մէկը միւսը կ'ամբողջացնէ, սակայն դժբախտաբար չեմ կրցած կատարելապէս իրականացնել այդ սկզբունքը:

Չեմ կրնար երախտագիտութեան եւ շնորհակալութեան խօսք չըսել իօրս, որ մեծագոյն դերը ունեցած է ազգային դաստիարակութեանս մէջ, տիկնոջս՝ Անիին, որ ամուր իմ կողքին կանգնած՝ միշտ քաջալեր, աջակից ու լծակից եղած է ինծի: Շնորհակալութեան խօսք նաեւ դուստրերուս՝ Վալերիին, Զարոյիկին եւ Թամարին, որոնք համբերութեամբ ու հասկացողութեամբ հանդուրժած են ազգային, միութենական եւ կուսակցական կեանքի պատճառով յաճախակի բացակայութիւններս ընտանեկան յարկէն: Երախտագիտութեան խօսք ունիմ նաեւ անցեալի բոլոր ղեկավարներուն, որոնցմով ներշնչուած եւ ոգեւորուած եմ: Շնորհակալութիւն գործակիցներուս, մտերիմներուս, հարազատներուս եւ բոլոր անոնց, որոնց հետ քալած եմ անցնող տասնամեակներուն:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ընկեր Յովիկ Էօրտեքեանին, որ բժախնդի աշխատանքով հաւաքեց տարտղնուած նիւթերը եւ արխիւները, դասաւորեց զանոնք, երկարատեւ հանդիպումներու ընթացքին գրի առաւ մեր զրոյցները եւ ի վերջոյ խմբագրեց գիրքը: Շնորհակալութիւն նաեւ ընկեր Դոկտ. Վաչէ Ղազարեանին, որ արժեքաւոր ներդրում ունեցաւ գիրքի վերստուգման, սրբագրութեան եւ ձեւաւորման մէջ:

ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐԵԱՆ

ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹԻՒՄ



Պատանեկության Տարիներ

Դպրոցական առաջին քայլերս առած եմ Հայկաի Հայ Աւետարանական Եմմանուէլ վարժարանէն ներս: Քանի որ Հ.Ա.Ը.Մ.-ի քաղաքի ակումբը մօտ էր Պէյրուքի Չուքաք Էլ-Պլաթ շրջանի մեր տան, հոն կը յաճախէի: 1956ի դէպքերուն հայրս մօտէն կ'առնչուէր եկեղեցական տաճկապին, իբր Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարներէն մին: Յաճախ հետը կ'երթայի Պէյթ Մերի, ուր հաւաքուած կ'ըլլային **Գիւտ, Շահէ, Խաղ** եւ **Ներսէս** սրբազանները, որոնց հետ բռնն քննարկումներ կ'ըլլային եւ յաճախ ականջալուր կ'ըլլայի անոնց խօսակցութիւններուն: Ծանր օրեր էին: Կը յիշեմ, երբ օր մը դարձեալ Հ.Ա.Ը.Մ. ակումբ գացի, հոն գտնուող երիտասարդներ վրաս յարձակեցան եւ «պօլշէիկի գաւակ» ըսելով ապտակեցին զիս: Ասիկա շատ ազդեց վրաս: Ատկէ ետք այլեւս Հ.Ա.Ը.Մ. չգացի:

Հայեցի նախնական կրթութիւնս ստացայ Հայ Աւետարանական Գոլէճին մէջ յաճախելով մինչեւ նախակրթարան, ինքնաշխատութեամբ ալ հայերէնը կատարելագործեցի: Աւելի ուշ յաճախեցի **British School**, զոր աւարտելէ ետք ընդունուեցայ Պէյրուքի Ամերիկեան Համալսարան, ուր աւարտեցի քաղաքային ճարտարապետութեան բաժինը: Մեր հօրենական յարկէն ներս կը տիրէր ազգային խորունկ մթնոլորտ մը եւ Հ.Բ.Ը. Միութիւնը զօրաւոր ներկայութիւն մըն էր: Ինչպէս Միութեան, Նոյնպէս մեր տան մէջ հայրս կը ներկայանար որպէս օրինակելի ազգային մը, հետեւաբար իր անմիջական պարագաները բնականօրէն այդ ոգիով թրծուեցան ու այդ լրջութեամբ մօտեցան ազգային հարցերուն:

Հ.Ե.Ը.-ի ընկերային եւ երիտասարդական գործունեութեան մասնակցելուս առումով մեծապէս նպաստած է մեծ քոյրս՝ **Լենան**, որ ինծի համար առաջնորդ մը եղաւ: Ան էր որ իբրեւ Հ.Ե.Ը.-ի անդամ զիս մասնակից կը դարձնէր դպրոցական պտոյտներու եւ տարբեր ձեռնարկներու: **Լենան** ամուսնացաւ **Հայկազ Եարտըմեանի** հետ, բախտաւորուելով երկու զաւակներով՝ **Քառլա** եւ **Հրաչ**: **Ալին** քոյրս ամուսնացաւ Տոթթ. **Գեորգ Փափագեանի** հետ, բախտաւորուելով երկու զաւակներով՝ **Սեւակ** եւ **Սարին**:

Պատանեկութեան տարիներու դաստիարակութեան ճանապարհը հետագային զիս առաջնորդեց անդամագրուելու Հ.Ե.Ը.-ի Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան՝ նախ որպէս անդամ, երկու տարի, ատենապետութեամբ **Կարպիս Բէշիշեանի** եւ **Յարութ Պալեանի**, ապա որպէս

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ



Ձախեն աջ՝ քույրս՝ Լենա, հայրս՝ Սեդրակ, մայրս՝ Վալենթին, ես եւ քույրս՝ Ալին:

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ



Հ.Ե.Ը.-ի Նաևասարդեան խաղեր. համալսարանականներու տողանցքի պահուն, որպէս դրօշակակիր, Պէյրուժ, 1961



Հ.Ե.Ը.-ի Ալեք Մանուկեան կեդրոնի բացում՝ Հ.Ե.Ը.-ի համալսարանականներուս հանդիպումը Նախագահ Ալեք Մանուկեանի հետ, Պէյրուժ, 1970: Ձախէն աջ՝ Չօիրապ Գոֆթիկեան, Գրիգոր Տեկիրմենճեան, Ես, Նախագահ Ալեք Մանուկեան, Յովհաննէս Մուրադեան եւ Միսաք Ներսիսեան:

ատենապետ: Վարչության մաս կը կազմէին Զ.Բ.Ը.Մ.-ի այժմու նախագահ **Պերճ Սեդրակեան, Զօհրապ Գոֆթիկեան, Միսաք Ներսեսեան**, որ հետագային դարձաւ ինսամիս, **Յովհաննէս Մուրատեան, Արփի Զաճընլեան** եւ ուրիշներ:

Այդ ծիրին մէջ մնալով սկսած եմ գործունէութիւն ծաւալել Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մէջ: Տակաւին կը յիշեմ Զ.Ե.Ը.-ի Զայ Զամալսարանական Ուսանողաց Միութեան 30 Ամեակի տպաւորիչ հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ 22 Մայիս 1970ին, Գալուստ Կիւլպէնկեան սրահին մէջ, որուն ընթացքին բացման խօսքը կատարեցի՝ պատմականը ընելով Միութեան եւ թուարկելով անոր նպատակները. «Ա) Օտար համալսարաններ յաճախող ուսանող-ուսանողուհիները ի մի հաւաքել Զ.Բ.Ը.Մ.-ի եւ Զ.Ե.Ը.-ի ազգային հարազատ շունչին տակ ու զանոնք հեռու պահել ուժացումէ: Բ) Ճանչցնել անոնց հայ մշակոյթը եւ խանդավառել զանոնք հայ արժէքներով: Գ) Զարգացնել անոնց մէջ առողջ հայրենասիրութիւնն ու գիտակից ազգասիրութիւնը: Դ) Ապահովել անոնց միջոցով վաղուան ժողովրդանուէր, պարկեշտ եւ անշահախնդիր ղեկավար մտաւորականութիւնը, որմով պայմանաւորուած է ազգապահպանման սրբազան պայքարին յաջողութեամբ պսակումը: Ե) Դաստիարակել հայ համալսարանականները



Զ.Ե.Ը.-ի համալսարանականներն Զայաստանէն ժամանած մտաւորականներու հետ:

որպես տիպար քաղաքացիներ իրենց պատկանած երկիրներուն: 2) Ընկերային առողջ յարաբերութիւններ ստեղծել՝ մշակելով հայ համալսարանականներու մէջ համագործակցութեան ոգին»:

Խօսքս ակարտեցի հետեւեալ հաստատումով. «*Յ.Ե.Ը.-ի համալսարանականներու հաւատամքը մէկ է եւ անփոփոխելի: Հաւատալ Ս. Էջմիածնին եւ անոր հոգեւոր կոչումին. հաւատալ Հայ Դատին եւ անոր լուծումին. հաւատալ հայ արժէքներուն եւ վեր պահել զանոնք. հաւատալ Հ.Բ.Ը.Մ.-ին եւ միշտ ծառայել անոր: Մենք այս հաւատքով է որ ճամբայ ելած ենք եւ այս հաւատքով պիտի շարունակենք մեր գործը*»:

Հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր Հ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի տնօրէն **Արա Թովճեան**, իսկ փակման խօսքը վստահուած էր Փրոֆ. **Բարունակ Թովմասեան**ին:

1977էն 1979 Պեյրուքի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի գործունեութեան հաւատաւոր նուիրեալն էի, եւ որպէս անդամ Հ.Բ.Ը.Մ.-ի Պեյրուքի Տեղական Վարչութեան, կարելոր գործունեութիւններ կ'ունենայինք: Տեղական վարչութեան ատենապետը **Փոլ Պեյլերեան**ն էր: Իմ ատենապետութեամբ գործող Հ.Ե.Ը.-ի Տնօրէն Գործադիր Մարմինը ամէն ճիգ ի գործ կը դնէր հայրենասիրական վեհ գաղափարներով գործունեութիւն ծաւալելու: Մեր սրբազան նպատակը կը նկատէինք աշխատիլ Մայր Հայրենիքի քաղաքական, տնտեսական ու մշակութային ընդհանուր զօրացումին ու բարգաւաճումին համար: Գործադիր Մարմնի գործակիցներս էին **Նուպար Նազարեանը, Օննիկ Համալեանը, Միքայէլ Մարտիրեանը, Կարպիս Բեշիշեանը** եւ շատ ուրիշներ:

Այդ ժամանակաշրջանին Հ.Ե.Ը.-ի Տնօրէն Գործադիր Մարմինը կարելոր գործունեութիւն կը ծաւալէր: Տեղական զանազան վարչութիւններ, նոյնիսկ Ասպետներու Համախմբումի վարչութիւնը, կապուած էին Տնօրէն Գործադիր Մարմնին, որ կը հովանաւորէր ամէն տեսակի մշակութային, ընկերային, սկառտական եւ երիտասարդական շարժումներ, որոնք կը ջատագովէին Միութեան վեհ գաղափարները: Մարզական կեանքը նոյնպէս անբաժանելի մասը կը կազմէր իմ գործունեութեան: Տակաւին երիտասարդ տարիքիս տարուած էի պասքէթպոլով, խաղալով Հ.Ե.Ը.-ի խումբին մէջ: Երաժշտութեան հանդէպ սերս պատանեկութեան տարիքէս սկսած էր: Ճագի, լատինական եւ դասական երաժշտութեան սիրահար էի: Դաշնակ եւ դաշնամուր նուագել սկսած եմ փոքր տարիքէս:

Տակաւին 6 տարեկանէս յատուկ սեր ունէի *աքորտեռնի* հանդէպ: Կարճ ժամանակ մըն ալ դպրոցէն ետք դաշնամուրի դասերու կը հետեւէի տիկին **Սոնա Ահարոնեան**ի մօտ: Մայրս, սակայն, չուզեց որ շարունակեմ երաժշտութեան դասերու երթալ, մտավախութիւն ունենալով որ երաժիշտ կրնամ

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

դառնալ: Ես, սակայն, շարունակեցի դաշնամուր նուագել լսողութեամբ, առանց *սոլֆեժի*:

Ամուսնանալով **Անի Ահարոնեանի** հետ, բախտաւորուեցայ երեք դուստրերով՝ **Վալերի, Զարուին** եւ **Թամար**: **Վալերին** ամուսնացաւ **ՕլիվիէՏանուի** հետ, բախտաւորուելով երեք զաւակներով՝ **Տիգրան, Կրեկորի** եւ **Վալանթին**. **Զարուին** ամուսնացաւ **Մարթ Թապուրեանի** հետ, բախտաւորուելով երեք զաւակներով՝ **Զարլ, Օտրէ** եւ **Ժաք**. իսկ **Թամար** ամուսնացաւ **Սարօ**



Ես եւ կինս՝ Անի Ահարոնեան-Գասարճեան:

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

Ներսեսեանի հետ, բախտաւորուելով երկու զաւակներով՝ **Գլարա** եւ **Լորա**: Կինս, զաւակներս եւ ութ թոռներս, որոնցմով ուրախ եմ ու երջանիկ, իմ մեծագոյն հարստութիւնս են:



Կնոջս՝ Անիի, դուստրերուս՝ Վալերիի, Զարուիկի, Թամարի եւ թոռնիկներուս հետ:

Ռ.Ա. Կուսակցության Անդամակցություն

Ես լաւապէս կը գիտակցեի, թէ ազգային գործունէութիւնը միայն միութենական կամ ակումբային շրջապատով չէր կրնար սահմանափակուիլ, այլ՝ ազգային գաղափարական գործունէութիւն ծաւալելով է որ հայ անհատը կը դառնայ լիարժէք: Իմ ազգային եւ գաղափարական հաւատամբս միայն ազատական գաղափարախօսութեան կը հակէր, հետեւեալքար 1977ին, ինքնուրոյն որոշումով, անդամակցեցայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ ուխտատուութիւնս կատարեցի ատենի Ռ.Ա.Կ.-ի Շրջանային Վարչութեան:

Լուսահոգի հայրս դեմ էր կուսակցական ըլլալու: Զակառակ անոր որ որոշուած էր որ կուսակցական շարքեր միանալս որոշ ժամանակով խորհրդապահական պիտի մնար, ընկերներ **Յովհաննէս Թապաքեան եւ Եսայի Տատուրեան** յաջորդ օրը առաւօտեան այցելութիւն տալով հօրս, շնորհաւորած էին զինք կուսակցական ըլլալու առիթով՝ անակնկալի մատնելով զինք: Երբ մի քանի ժամ յետոյ գրասենեակ հասայ, հայրս անմիջապէս ըսաւ. «Տուած խրատներէս ո՛չ մէկը գործադրեցիր. կանուխ մի՛ սիրահարիր ըսի, սիրահարեցար, մի՛ ծխեր ըսի, գաղտնի կը ծխես, կուսակցական մի՛ ըլլար ըսի, այդ մէ՞կն ալ գլխուս բերիր»:

Ընկ. **Վահէ Պահատրեան**ի միջնորդութեամբ՝ ես, **Էտի Պահատրեան եւ Էտի Կոստանեան** միասնաբար երդում տուած էինք կուսակցութեան: Կը յիշեմ որ շատ մը ընկերներ հայրս հակակուսակցական կը նկատէին: Այդ ժամանակաշրջանին կուսակցութեան Սին Էլ-Ֆիլի ակումբը կը գործեր Նազարեան կեդրոնին մէջ եւ այդ պատճառով ալ կուսակցութիւնը հարցեր ուներ հօրս հետ: Ընկերներ **Զայկաշէն Ուզունեան** եւ Դոկտ. **Արշաւիր Կեօնճեան** խնդրած էին, որ «հակակուսակցական» հօրս հետ խօսիմ այդ հարցով: Զայրս, անշուշտ, երբեք հակակուսակցական չէր եղած: Կուսակցութեան անդամագրումս կը պարտիմ նաեւ հօրմէս ստացած ազգային-հայրենասիրական դաստիարակութեանս:

Ես ընտանիքի մը զաւակն եմ, որ մեծցած է Զ.Բ.Ը. Միութեան հայրենասիրական ոգիով: Զայրս Բարեգործականի Սուրբոյ եւ Լիբանանի դեկավարներէն եղած էր: Թէեւ մեր ընտանիքին մէջ չկար կուսակցական մթնոլորտ, սակայն գաղափարական պատրաստութիւնս ստացած եմ հօրմէս: Զիս այնպէս դաստիարակած էր, որ երբ հասայ որոշ հասունութեան

մը՝ նկատեցի թե ազգիս օգնելու ձեւը միայն մարզական, մշակութային կամ բարեսիրական միջոցները չէին: Կար անոնցմէ աւելի բարձրը՝ ազգային քաղաքական մեր Դատը, զոր հետապնդելու համար անհրաժեշտ էր քաղաքական աշխատանք: Առանց քաղաքական աշխատանքի կարելի չէ որեւէ լուրջ արդիւնքի հասնիլ: Այդ մեկնակետով է որ որոշեցի պատկանիլ կուսակցութեան մը, որուն գաղափարականը իմ համոզումներուս կը համապատասխանէր: Բնական հետեւողութեամբ՝ զինուորագրուեցայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան: Այդ օրէն սկսեալ, պահելով հանդերձ Բարեգործականի անդամի պարտաւորութիւններս, աշխատանքս կեդրոնացուցած եմ կուսակցական կեանքին վրայ: Այդ օրերուն Լիբանանի իմ նեղ շրջանակիս մէջ կուսակցական ըլլալս այնքան ալ փայլուն պիտակ մը չէր, «բարենիշ» մը չէր, սակայն ժամանակները ցոյց տուին թէ ես իրաւունք ունիմ եւ միւս բարեկամներս սխալած էին: Ու կը կրկնեմ ամենայն համոզումով այսօր ալ, եթէ կ'ուզենք որեւէ լուրջ աշխատանք տանիլ յօգուտ մեր ժողովուրդին ու հայրենիքին, անպայման զինուորագրուելու ենք կուսակցական մեր շարքերուն:

Նա'խ ըսեմ որ միայն ուրախութեամբ չեմ արձանագրեր այսօր իմ մասնակցութիւնս Ռ.Ա. Կուսակցութեան շարքերէն ներս, այլ նաեւ՝ հպարտութեամբ: Հպարտութեա'մբ՝ քանի որ այսօր արդէն ապացոյցը ունինք որ մեր կուսակցութեան ազատական- ռամկավարութեան գաղափարականը Հայաստանի մէջ ալ որդեգրուած է եւ մեր հայրենիքը այդ ուղղութեամբ կ'ընթանայ եւ իր ապագան կը կերտէ: Ասոր ես բացարձակապէս համոզուած եմ ու կը խորհիմ թէ Հայաստանի ղեկավարութիւնը եւս համոզուած է:

Ազգային-քաղաքական Գործունեությունն Ֆրանսայի Մեջ

1979-ին, լիբանանեան քաղաքացիական տազնապալի օրերուն, երբ Փարիզ կայք հաստատեցինք, բնական ներքին մղումով հաւատաւոր ընկերներով սկսանք գործունեութիւն ծաւալել Փարիզի Զ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղէն ներս: Զոն զգալի էր, որ ազգային գործունեութիւն հասկացողութիւնը տարբեր ենթահող ունէր եւ տարբեր մակարդակի վրայ աշխատանք կը պահանջէր: Ազգային պահանջատիրութեան գիտակցութիւնը տարբեր երանգ ունէր օտար երկնակամարի տակ՝ համեմատած Լիբանանի:

Ազգային-կուսակցական առումով կրնամ հաստատել, թէ այս հանգրուանը ինծի համար շատ կարեւոր եղած է: Մեր առաջին եւ գլխաւոր աշխատանքը եղաւ վերակենդանացնել տեղւոյն Բարեգործականի շրջանակը՝ նախ վերակազմելով Զ.Բ.Ը.Մ.-ի Շրջանակային Յանձնաժողովը: Ապա, Ալէք Մանուկեանի կոչին անսալով, երիտասարդական շարժում մը ստեղծեցինք՝ նոր աւիւն ներարկելու համար տեղւոյն վարչութեան: Նոր թափ առաւ նորակազմ վարչութիւնը եւ երիտասարդական ոգիով սկսաւ գործունեութիւն ծաւալել: Տարի մը ետք արդէն ստանձնելով ատենադպիրի պաշտօնը, նոր ոգեւորութեամբ լծուեցանք միութենական ու հայրենական գործունեութեան: Այս ընթացքին նուիրեալ աշխատանք տարաւ նաեւ ընկ. **Արթո Յամբարձումեան**, որուն ճիգերուն շնորհիւ, երկարամեայ ընդմիջումէ ետք, Շրջանակային Վարչութեան ժողովներու ատենագրութիւնները ֆրանսերէնէ հայերէնի վերածեցինք:

Որպէս հաւատաւոր անդամներէն մէկը մեր ազգային մեծ Միութեան, երջանկութիւն էր ինծի համար տեսնել անոր ծաւալումն ու բազմապիսի ծառայութիւնները ի նպաստ մեր ժողովուրդին եւ իր հիմնական գաղափարականին՝ հայապահպանման: Զ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովը անվերապահօրէն արծագանգը հանդիսացաւ միութենական ու ազգային իտեալներուն, որուն համար մինչեւ այսօր երախտապարտ ոգիով կը վերյիշեմ գործադրուած իւրաքանչիւր ճիգ:

Զ.Բ.Ը.Մ.-ի մեր հիմնադիրները հեռատեսութիւնը ունեցած են Միութեան համար սահմանելու «Միութիւնը Զօրութիւն է» նշանաբանը: Փարիզի մեր գործունեութեան ծիրէն ներս առաւել եւս կը պայծառանար անոր խորհուրդը, երբ ինծի անմիջական գործակից ու գաղափարակից ունենալով ընկ. **Անդրանիկ Զեչիշեանը** եւ այլ երիտասարդ ուժեր, ոգեւորուած Միութեան

ատենի հրամայականով, ոգի ի բռին Նուիրուելով միութենական գործունեութեան, իբրեւ ազգային Նուիրական պարտականութիւն մեծապէս կ'աջակցեինք ազգագուտ ու գեղեցիկ նպատակներու լաւագոյն իրագործումին: Այդ օրերուն էր, որ 450-500 անդամներով կազմուեցաւ **UGAB Jeune**-ը, որուն առաջին հսկայական աշխատանքը եղաւ կազմակերպել պատմական ողիմպիական մարզախաղերը հայաշատ Փարիզի, Լիոնի, Մարսէյի, ժընեւի եւ Կրէնոպլի մէջ: Զ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակի Դ. Միջ-Մասնաճիւղային Մարզական Խաղերը, կազմակերպուած Զ.Բ.Ը. Միութեան Եւրոպայի Երիտասարդական Յանձնախումբին կողմէ 1982ին, Վալանսի մէջ, Միութեան Եւրոպայի երիտասարդական եւ մարզական կեանքին կարելոր ձեռնարկներէն էր: Զ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդաց Կեդրոնական Մարմինը կը գլխաւորէր Պերժ Սեդրակեան: Անոր կ'անդամակցէի նաեւ ես, միեւնոյն ատեն ատենապետելով Եւրոպայի Մարմին:

Զ.Բ.Ը. Միութիւնը, ինչպէս ամենուրեք, կրթական ու բարեսիրական կարելոր դեր մը ունի ազգային մեր կեանքին մէջ: Ֆրանսայի մէջ եւս մեծ դեր մը վերապահուած է Միութեան: Դժբախտաբար, մինչեւ 70ական թուականները, Փարիզի մէջ կծկուած իր Ալէք Մանուկեան Ակումբի վարչութեամբ՝ Նեղ գործունեութիւն մը ունէր ան: Կային միայն Նուպարեան Գրադարանը եւ Մարի Նուպար Ուսանողական Տունը: Ֆրանսայի այլ քաղաքներու մէջ անուանական տեղական մասնաճիւղեր գոյութիւն ունէին միայն:

1980ի սկիզբը, երբ Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովը երիտասարդացուցինք ատենապետութեամբ ընկ. Տոքթ. **Էտի Ադամեանի** եւ իմ ատենադպրութեամբ, Բարեգործականը սկսաւ փայլիլ ու իր գործունեութեան դաշտը ընդարձակուեցաւ: Այս աշխատանքներու կարգին մտան Փարիզի վարչութեան կազմութիւնը, Երիտասարդաց Մարմնի ստեղծումը, Լիոնի, Վալանսի, Վիենի, Սէն Շամոնի, Նիսի, Մարսէյի վարչութիւններու կազմութիւնը: Ֆրանսայի բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ Բարեգործականը այսօր ունի գործուն մասնաճիւղեր իրենց վարչութիւններով:

Աւելցնեմ նաեւ թէ Լիոնի մէջ գնուեցաւ Նոր ակումբ մը, որուն գնումին օժանդակեց Զ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Նախագահ եւ ազգային բարերար **Ալէք Մանուկեան**: Ակումբի գնումը իրականացաւ տեղական վարչութեան ատենապետ պրն. **Սեդրակ Սանճեանի** հետեւողական աշխատանքին շնորհիւ: Ֆրանսայի մէջ Բարեգործականը վարկ կը վայելէ ոչ միայն ֆրանսահայ գաղութին մօտ, այլեւ՝ Ֆրանսայի տեղական շրջանակներու մէջ: Օրինակ, Փարիզի քաղաքապետարանը կարելոր ձեռնարկներու պարագային կը դիմէ Բարեգործականի Նախաձեռնութեան: Ըսեմ նաեւ թէ 1986ին, երբ Զ.Բ.Ը. Միութեան 80 ամեակը տօնուեցաւ Փարիզի մէջ, քաղաքապետարանը կազ-



Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային եւ Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Շրջանային Վարչութեան կազմակերպած ընդունելութիւն. ելոյթ կ'ունենայ Ալան Ժիւլիէ, Փարիզ, Հ.Բ.Ը.Մ.-ի Ալէք Մանուկեան կեդրոն, 1986:

մակերպեց ընդունելութիւն մը ի պատիւ հիւրերուն: Միութեան 80 ամեակի եւ Ընդհանուր Ժողովին առիթով Միութեան նախագահ **Ալէք Մանուկեան** անձամբ **Լեւոն Զեպապճեանը**, **Էտի Ադամեանը** եւ զիս պարգեւատրեց «Բարերար Անդամ»ի վկայագիրով՝ առ ի գնահատանք UGAB FUND-ի ստեղծման ուղղութեամբ մեր գործադրած ճիգերուն եւ իբր առաջին ներդրողներ՝ հիմնադրամին կատարած մեր նուիրատուութիւններով:

Հ.Բ.Ը. Միութեան 80 ամեակին նուիրուած հանդիսութիւններու օրերուն տեղի ունեցաւ նաեւ հօրս՝ **Սեդրակ Գասարճեանի** ծննդեան 75 ամեակին եւ ազգային գործունեութեան 50 ամեակին նուիրուած հանդիսութիւն մը: Այս առիթի Ամենայն Հայոց Կաթողիկոս Երջանկայիշատակ **Վազգէն Ա.** Սրբատառ Կոնդակով եւ շքանշանով պարգեւատրեց հայրս, մինչ Հ.Բ.Ը. Միութեան նախագահ **Ալէք Մանուկեան** անձամբ ներկայ գտնուելով հանդիսութեան, Պատուոյ Անդամի վկայագիր յանձնեց հօրս:

Ներկայ էին տիկին **Լուիզ Մանուկեան-Սիմոն**, **Պերճ Սեդրակեան**, **Կարլէն Դալլաքեան**, **Հայկաշէն Ուզունեան**, **Արշաւիր Կեօնճեան**, **Գիւտ Սրբազան** եւ տիկին **Մարի Մանուկեան** եւ աշխարհի բոլոր կողմերէն ժամանած Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարներ եւ անդամներ:

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ



Հ.Բ.Ը.Մ.-ի 80 ամեակի եւ Ընդհանուր ժողովի ելոյթի ընթացքին, Փարիզ, Ալեք Մանուկեան կերորն, 1986:



Նախագահ Ալեք Մանուկեան զիս կը պարգեւատրէ Բարեբար Անդամի վկայականով, Փարիզ, 1986:



Հորս ծննդեան 75 ամեակի եւ ազգային գործունեութեան 50 ամեակի
հանդիսութեան կ'արտասանեմ խօսքս:

Խօսելով իմ մասին, Ալեք Մանուկեան ի միջի այլոց ըսաւ. «...Կեանքի մէջ շրջաններ կան երբ զաւակները կը ճանչցուին իրենց ծնողաց միջոցաւ եւ շրջաններ ալ կան որ ծնողներ կը ճանչցուին իրենց զաւակներուն միջոցաւ: Այդ հիման վրայ ալ Փարիզի մեր շրջանակին համար ներկաներս համախմբուած ենք մեծարելու Յակոբ Գասարճեանի հայրը՝ անոր 75 ամեակին առիթով. իսկ մեզմէ շատերուն համար Բարեգործականի վաստակաւոր դեկավար մըն է որ կը մեծարենք պրն. Սեդրակ Գասարճեանի անձին մէջ: Սակայն, կերպով մըն ալ լաւ է որ Սեդրակ Գասարճեան ճանչցուի Յակոբին միջոցաւ, որովհետեւ այդ կը նշանակէ թէ իր գործը կը շարունակուի իր զաւակին միջոցաւ: Ամէն հայր չունի այդ բախտաւորութիւնը: Գեղեցիկ գաղափար էր տարեդարձի այս տօնակատարութիւնը կայացնել այս օրերուն Փարիզի մէջ, նախ որովհետեւ այս օրերուն տօնախմբութեան տրամադրութիւն չկայ Լիբանանի մէջ եւ ապա՝ անոր համար որ մեծարուողը ազգային դէմք մըն է. որքան որ իր կեանքը կը պատկանի իր ընտանիքին, ան կը պատկանի նաեւ իր ազգին. եւ այս պարագային նաեւ՝ Բարեգործականին. այս կերպով առիթ կը ստեղծուի մեզի ու մեր բարեկամներուն բաժնելու այս հաճելի մթնոլորտը եւ մեր սիրտի խօսքը բերելու մեր բարեկամին՝ իր կեանքի կարեւոր հանգրուանին:



Հայրս Նախագահ Ալեք Մանուկեանէն կը ստանայ Պատուոյ Անդամի վկայականը:



Հօրս ծննդեան 75 ամեակի եւ ազգային գործունէութեան 50 ամեակի հանդիսութեան ընթացքին առնուած ընտանեկան լուսանկար: Ձախէն աջ՝ քոյրս՝ Լենա Եարտըմեան, ես, հայրս, մայրս, տիկինս եւ քոյրս՝ Ալին Փափազեան:



Հայրս եւ մայրս՝ իօրս ծննդեան 75 ամեակի եւ ազգային գործունեութեան
50 ամեակի հանդիսութեան, Փարիզ, 1986:

Չկայ չափ և ոչ խորացման չափեր և, և չափի
 հարմար համարում ենք որ ոչ չափազանց
 մեծ պատիվ է ինձի համար այս գրությունը ստանալու
 և անհամարժեք շնորհակալություններ արտահայտել
 ձեր և անհամարժեք շնորհակալություններ արտահայտել
 հարգանքներով ձեր համար և ձեր 75 տարեկանը:
 Նախ և հետո, ուրիշ մեծ միջոցներով և ունենալով
 հայտնի հոգիներ հայ ազգի արժանապատվության,
 որոնցով միայն հայ ազգի պիտի դարձնվի և յուր
 համայն: Անհամար շնորհակալություններ ունենալով
 և խորապես շնորհակալ եմ ձեր անհամար
 ջանքերին:
 18/11/86 Հարգանքներով
 Միայն Համայնքային
 Միություն

Հորս ձեռագրով գրուած գիրը:

Պրն. Սեդրակ Գասարճեան առաջնորդող դէմք մը եղած է լիբանանահայ գաղութին մէջ: Իր ծառայութեան գլխաւոր դաշտը եղած է Բարեգործականը, որուն նկատմամբ իր նուիրումը եղած է բոլորանուէր եւ անսակարկ:

Հայրս շատ զգացուած եւ յուզուած էր ձեռնարկէն, իր գեղեցիկ ձեռագրով գիր մը նուիրեց ինծի, զոր կու տամ հոս. «**Չկայ չափ մը, որ կարողանայ չափել հոր եւ պաւկին իրարու հանդէպ ունեցած սէրն ու յարգանքը, որոնք մէկ պատիկ նշոյն է որ ցոլաց այդ գիշեր այս իշխանական եւ անպուզական ձեռնարկով...: Հայ մարդու համար որքա՛ն մեծ միջոցարանք է ունենալ հայու վեհ հոգիով հայ ազգին արժանաւոր պաւակ մը, որոնցմով միայն հայ ազգը պիտի վտանայ եւ յաւերժանայ: Աստուած երկար կեանք, առողջութիւն, ոյժ եւ կորով տայ իրեն եւ իր ընտանիքին գլխէն պակաս չընէ»:**

Հայրական սիրով
 Սեդրակ Գասարճեան

Այս ձեռնարկէն երկու տարի ետք կորսնցուցի **Վալենթին** մայրս, որ փակեց իր աչքերը Պեյրուի մէջ, 1988ին. իսկ յաջորդ տարի վախճանեցաւ հայրս՝ խոր սուգի մատնելով բոլորս: Իմ ողջ գործունեութեան ընթացքին

միշտ աշխատած եմ արժանի հետեւորդը ըլլալ սիրելի հօրս, հակառակ իր տուած խրատներէն մի քանին գործադրած չըլլալուս:

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակի գործունեութեան աշխուժացումին եւ վերակազմակերպումին մէջ մեծ դեր ունեցան **Լեւոն Զեպապճեանը, Սոնա Ադամեանը, Յակոբ Կոշկարեանը, Սեդրակ Սանճեանը, Գեղամ Թորոսեանը, Միշէլ Սապպաղը, Վահէ Ճազմատարեանը, Խաչիկ Տարագճեանը** եւ ուրիշ ռամկավար ընկերներ ու բարեկամներ: Հ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի գործունեութիւնը մօտէն կը համակարգուէր Միութեան Կեդրոնին կողմէ, սերտ համագործակցութիւն մը հաստատելով մանաւանդ **Պերճ Սեդրակեանին** հետ, որ այն ատեն ատենադպիրն էր Կեդրոնական Վարչական Ժողովին: Իմ անձնական բարեկամութիւնս **Սեդրակեանին** հետ յաճախ կը դիւրացներ մեր աշխատանքները:

Ինչ կը վերաբերի Մարի Նուպար Ուսանողական Տան, Փարիզի հայ համայնքէն ներս անտեղի արձագանգներ սփռուեցան անոր գոյավիճակին մասին: Մանաւանդ մեզի ընդդիմադիր ճակատի մարդիկ որոշ չարախօսութիւններով, ըսի-ըսաներով ու բամբասանքներով շփոթութիւն ստեղծեցին, ըսելով թէ Բարեգործականը պիտի փակէ Ուսանողական Տունը: Անշուշտ բոլոր այդ ըսուածները աւելորդ էին: Բարեգործականը դպրոցի, եկեղեցիի, ակումբի օգնած է ու միշտ ալ պիտի շարունակէ օգնել: Ուսանողական Տան կապակցութեամբ անշո՛ւշտ ունեցանք դժուարութիւններ, որոնք կու գային 70ական թուականներէն: Մեր **Շաւարշ Սեւյոսեանի** առաջարկին վրայ հիմնուելով, Տան հոգատարութիւնը անջատուած էր Համալսարանի տնօրէնութենէն, որ կը նշանակէր նիւթական յաւելեալ ծանր յանձնառութիւններու ենթարկել Բարեգործականը: Անշուշտ որոշ առաւելութիւններ շահեցանք ամբողջութեամբ ստանձնելով Տան խնամակալութիւնը, ինչպէս՝ որոշ պայմաններ չլրացնող հայ ուսանողներ ընդունիլը: Բայց եւ այնպէս, դրական քայլ մը կարծուած այդ որոշումը տարիներու ընթացքին որոշ դժուարութիւններ յառաջացուց: Տունը վերածուած էր պարզապէս հայկական ապաստանարանի մը, որուն բնակիչները ընդհանրապէս Լիբանանէն ու Պարսկաստանէն եկած գաղթականներ էին: Ասիկա իր կարգին յառաջացուց բարոյական դժուարութիւններ Փարիզի Համալսարանի շրջափակէն ներս: Տան տնօրէնները՝ ընկերներ **Եկաւեան** եւ **Քոչունեան**, դժուարութիւններու մատնուեցան: Այս շփոթութեան կողքին՝ նիւթական մեծ բացը չէր արդարացներ Տունը պահել այդ դրութեան մէջ: 50-60 աշակերտի համար հարիւր հազարաւոր ֆրանքի յաւելեալ ծախսը չէր արդարանար:

Տագնապի այդ օրերուն, դիմեցինք ֆրանսահայ գաղութին նիւթական օժանդակութեան, Տան ծախսերուն բացը գէթ չափով մը զոցելու խնդրան-

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

քով: Դժբախտաբար, շօշափելի ոչ մեկ արդիւնք տուաւ մեր դիմումը: Դարձեալ Բարեգործականի վերին մարմինն ուսերուն ինկաւ Տան ամբողջական ծախսը հոգալը: Ու Նիւ Եորքի Կեդրոնական Վարչական Ժողովը կտրուկ որոշումներ առաւ եւ ընկեր Տոքթ. **Էտի Ադամեան** շնորհիւ իր լաւ յարաբերութեան համալսարանի տնօրէնութեան հետ, վերջնականապէս յաջողեցաւ ձեռք ձգել 70ական թուականի գոյավիճակը, որոշ իրաւասութիւններ պահելով հայ ուսանողներ ընդունելու գծով:

Կուսակցական գործունեություն Ֆրանսայի Մեջ

Ռ.Ա. Կուսակցությունը Ֆրանսայի մեջ անցելիս մեծ գործունեություն ունեցած էր շնորհիվ վաստակաւոր ընկերներու, ինչպէս՝ **Արշակ Զօպանեան, Արտակ Դարբինեան** եւ ուրիշներ, որոնք բացի կուսակցական գործունեութենէ, կատարած են նաեւ անելի լայնածիր ազգային-քաղաքական ազգօգուտ աշխատանքներ Եւրոպայի այս կարեւոր ոստանին մէջ: Ունեցած ենք մեր պաշտօնաթերթը՝ «Ապագայ»: Բայց դժբախտաբար, Բ. պատերազմէն վերջ ու պաղ պատերազմի ընթացքին, քաղաքական զանազան պատճառներով մեր կուսակցությունը չէր կրցած շարունակել հայաշէն իր լուրջ աշխատանքները: Կուսակցական կազմակերպուած եւ ամուր կառոյց մը գոյություն չունէր:

Ընկեր **Անդրանիկ Անդրեասեանի** Փարիզ այցելությունը խանդավառություն մը յառաջացուցած էր մեր շարքերէն ներս: 70ականներու աւարտին, առաւելաբար Միջին Արեւելքէն կարգ մը ընկերներու հաստատումովը Ֆրանսա, հոն գտնուող ընկերներու, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ընկերներ **Յրաչեայ Սեդրակեանի** եւ **Հայկաշէն Ուզունեանի** թելադրություններուն շնորհիւ, կարելի եղած էր համախմբել Ֆրանսայի եւ Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ ապրող հին ու նոր ընկերները եւ նոր թափ հաղորդել կուսակցութեան գործունեութեան: Ընկեր Մերթր **Յրաչեայ Սեդրակեանի** Ֆրանսա կատարած այցելութեան առիթով հիմնեցինք Փարիզի Արշակ Զօպանեան Ակումբը:

Անշուշտ չենք կրնար մոռնալ անունները կուսակցութեան աշխուժացումի առաջին օրերու աշխատանքներուն մէջ բաժին բերած ընկերներ **Անդրանիկ Բէշիշեանի, Լեւոն Բեպապճեանի, Տոքթ. Էտի Ադամեանի** եւ ուրիշներու, որոնք խանդավառութեամբ եւ նուիրումով անցան գործի: Եւրոպայի եւ մասնաւորաբար Ֆրանսայի մէջ Ռ.Ա. Կուսակցությունը վերակազմակերպելով, այն համոզումը ունէինք թէ՝ Յ.Բ.Ը.Մ.-ը նոյնպէս կը զօրանայ այն գաղութներուն մէջ, ուր Ռ.Ա.Կ.-ը զօրաւոր է:

Միեւնոյն մօտեցումը ունէր Յ.Բ.Ը.Մ.-ի նախագահ **Ալեք Մանուկեան**, որ կը կրկնէր. «Ո՛ր որ Ռ.Ա.Կ.-ը զօրաւոր է, հոն Յ.Բ.Ը.Մ.ի ունիւնն ալ զօրաւոր է»:

Այս համոզումով եւ ընկ. **Անդրանիկ Բէշիշեանի** աջակցութեամբ Ֆրանսայի զանազան հայաշատ շրջաններու մէջ յաջորդաբար վերակենդանացուցինք Լիոնի՝ քանի մը հաւատաւոր տարեց ընկերներով անգործ վիճակ մը

ունեցող Միհրան Տեր Ստեփանեան եւ Վալանսի Զրաչ Երուանդ ակումբները: Մշակութային գետնի վրայ Լիոնի մէջ հիմնեցինք նաեւ Թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղ մը, առանց որ ան խանգարէ տեղական Բարեգործականի մասնաճիւղին գործունեութիւնը:

Նորաստեղծ այս ակումբները շուտով քաղաքական աշխատանքի լծուելով իրենց ներկայութիւնը եւ ազդեցութիւնը զգալի դարձուցին գաղութի ազգային-քաղաքական եւ եկեղեցական ու միութենական կեանքին մէջ: Ֆրանսական քաղաքական շրջանակներու մօտ ճանչցուեցանք «Փարթի Արմենյէն Տեմոքրաթ Լիպերալ» անունով: Մնայուն յարաբերութեան մէջ էինք տեղական քաղաքական իշխանութիւններուն հետ, տեղեկացնելով մեր կուսակցութեան դիրքը, մանաւանդ այդ օրերուն, Զայաստանի քաղաքական անցուդարձերու կապակցութեամբ:

Կուսակցական գործունեութիւնը նոր վերելք մը արձանագրեց Պրիւքսելի մէջ հիմնումովը Արմենակ Եկարեան, իսկ Մարսելի մէջ՝ Յակոբ Կօշկարեան ակումբներուն: Ընկ. **Յակոբ Կօշկարեան** Վալանսի Զրաչ Երուանդ ակումբի ղեկավարներէն էր եւ իր անունով կոչեցինք Մարսելի ակումբը իր մահուընէն ետք: Ակումբի ատենապետութիւնը ստանձնեց ընկ. **Կարապետ Սայապալեան**: Մի քանի տասնեակ նորագիրներ միացան Ռ.Ա.Կ.-ի շարքերուն: Մինչ այդ կազմուած էր արդէն Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանային Վարչութիւնը, որ հետագային Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան որոշումով վերափոխուած էր Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Վարչութեան: Զետեւաբար, Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակին մաս կազմած էին Փարիզի, Մարսելի, Լիոնի, Վալանսի, Պրիւքսելի եւ Լոնտոնի մեր ակումբները, ինչպէս նաեւ Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ ապրող մեծ թիւով ընկերներ:

Զ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի կառոյցներուն մէջ գործող պատասխանատուներուն մեծամասնութիւնը խանդավառութեամբ ու հաւատքով անդամագրուեցաւ կուսակցական շարքերուն: Զետագային ունեցանք Եւրոպայի շրջանակի խորհրդակցական ժողով մը, որուն ներկայ եղան նաեւ Չուիցերիոյ եւ Աւստրիոյ մեր ընկերները: Այս ժողովին որոշումով հրաւիրուեցաւ Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Առաջին Պատգամաւորական Ժողովը, որ տեղի ունեցաւ 23 Նոյեմբեր 1991ին, Լիոնի Զ.Բ.Ը. Միութեան Ալէք Մանուկեան Կեդրոնին մէջ, ուր կազմուեցաւ Եւրոպայի Շրջանային Վարչութիւնը իմ ատենապետութեամբ:

Ռ.Ա.Կ. Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանակի Առաջին Պատգամաւորական Ժողովը

21-22 Նոյեմբեր 1987ին, Փարիզի մէջ գումարուեցաւ Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանակի Առաջին Պատգամաւորական Ժողովը: Պատգամաւորներ հաւաքուած էին Փարիզէն, Լիոնէն, Վիեննէն, Վալանսէն, Նիսէն, Մարսելէն, Պրիւսէլէն եւ Ժըննէն: Իբրեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Եւրոպայի ու Միջին Արեւելքի Շրջանակներու պատասխանատու, շեշտեցի Եւրոպայի Շրջանակին կարեւորութիւնը եւ ակումբներուն կոչ ըրի աւելի լաւ կազմակերպելու եւ խտացնելու իրենց շարքերը՝ ծառայելու հայ ժողովուրդին:

Պատգամաւորական ժողովին որոշումներով ստեղծեցինք 75 հազար ֆրանսական ֆրանքի դրամագլուխով հիմնադրամ մը: Որոշեցինք նաեւ Լոնտոն հրատարակուող «Էրեբունի» երկշաբաթաթերթը վերածել Եւրոպայի Շրջանակի պաշտօնաթերթի, ֆրանսերէն, անգլերէն եւ գերմաներէն յաւելուածներով: Ընտրուեցաւ Եւրոպայի Շրջանակին Վարչութիւնը հետեւեալ կազմով՝ **Յակոբ Գասարճեան, Լեւոն Զեպապճեան, Արթո Չամբարձումեան, Նազարեթ Թօփալեան, Յակոբ Կօշկարեան, Կարապետ Փալթոպետրոսեան, Անդրանիկ Զէյիշեան, Ռաֆֆի Պետիկեան, Մարտիրոս Միհրանեան, Սեպուհ Աւետիքեան եւ Ժաք Էքմէքճեան:** Այս վարչութեան գործունեութեան շնորհիւ Ռ.Ա.Կ. Եւրոպայի կառոյցը դարձաւ կարեւոր օղակներէն մէկը աշխարհատարած մեր անդամակցութեան ու տասնամեակներու բացակայութենէ ետք Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակը գործուն մասնակցութիւն բերաւ կուսակցական մեր գործունեութեան:

Այնուհետեւ Ռ.Ա.Կ.-ը վերածնունդ կ'ապրեր Եւրոպայի մէջ ու այս համընդհանուր խանդավառութեան մէջ ծնունդ առաւ նաեւ **La Lettre de l'ADL** պարբերականը, որուն հրատարակութիւնը եւ խմբագրութիւնը տարբեր ժամանակներու մէջ ստանձնեցին ծանօթ գաղափարակից գրողներ **Նազարեթ Թօփալեանը, Վարուժան Սիրապեանը, Վարուժան Կիւրեղեանը** եւ ուրիշներ: Սկզբնական օրերուն, գործակցեցանք Լոնտոն հրատարակուող Թէքեան Մշակութային Միութեան «Էրեբունի» երկշաբաթաթերթին հետ, ունենալով Ֆրանսայի համար ֆրանսերէն լեզուով բաժին մը: Բայց գործնական գետնի վրայ, տեսանք թէ այդ ձեւը դժուարութեանց դուռ կը բանայ:

La Lettre de l'ADLին նիւթական կարիքները հոգաց ընկ. **Լեւոն Զե-**

պապճեան: Նկատի ունենալով որ Ֆրանսայի մէջ Նոր սերունդը ֆրանսախօս է, որոշած էինք թերթը ֆրանսերէն լեզուով հրատարակել, հակառակ մեր փափաքին, գէթ երիտասարդութիւնը եւ ֆրանսախօս սերունդը մեզի կապելու, ազգային քաղաքական մեր գործունեութեամբ խանդավառելու ու հայրենիքի իրականութեան իրազեկ դարձնելու համար: Դժբախտաբար, այժմ դադրած է անոր հրատարակութիւնը: Յոյսով եմ շուտով միջոցներ պիտի ստեղծուին մեր թերթը վերահրատարակելու:

Կուսակցութիւնը մասնակցութիւն բերաւ նաեւ ընկ. **Ժան Զլոտ Զեպապճեանի** եւ **Միշէլ Բազումեանի** հիմնած գիտահետազոտական կեդրոնի հրատարակչական գործունեութեան, զոր 2004ին, անձնական նախաձեռնութեամբ, շարունակեց ընկ. **Վարուժան Սիրապեան**՝ Արշակ Զօպանեան Ինստիտուտ անունով: Ընկ. **Սիրապեան** Ալֆրովիլի քաղաքապետարանի անդամ եղաւ 1995-2001 թուականներուն, ինչպէս նաեւ գլխաւորեց Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանային Վարչութիւնը 1999էն 2005 եւ մաս կազմեց Կեդրոնական Վարչութեան 2003-2005 թուականներուն:

Ռ.Ա.Կ.-ի աշխոյժ գործունեութիւնը եւ ներկայութիւնը Եւրոպայի հայկական եւ տեղական քաղաքական շրջանակներէն ներս, ինչպէս նաեւ



Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի եւ Պելճիքայի Ա. Շրջանային Ժողով. ընկ. Լեւոն Զեպապճեանի հետ, Փարիզ, 1987:



Վիգեն Խաչատրեանի եւ Ռուբեն Միրզախանեանի Փարիզ այցելութեան առիթով իմ տան մէջ կազմակերպուած ընդունելութեան ընթացքին: Ձախէն աջ՝ ընկերներ Ռուբեն Միրզախանեան, Տոբթ. Յարութիւն Եոզկաթեան, Վիգեն Խաչատրեան, Յակոբ Աւետիքեան եւ ես, Փարիզ, 1992:

Հայաստանի հետ անմիջական կապը կը պահանջէին լոյսով ուսումնասիրել եւ վերլուծել ազգային-քաղաքական նոր կացութիւնները: Այս առնչութեամբ Վալանսի մէջ կազմակերպեցինք գիտաժողով մը, որուն կը մասնակցէին Եւրոպայի տարբեր քաղաքներէն ժամանած պատասխանատու ընկերներ, Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան Վարիչ-տնօրէն ընկ. **Վաչէ Ղազարեան** եւ Հայաստանէն ընկ. **Վիգեն Խաչատրեան**:

Աւելի ուշ կազմակերպեցինք նաեւ ընկերներ **Վիգեն Խաչատրեանի** եւ **Ռուբեն Միրզախանեանի** այցելութիւնը Ֆրանսա, ուր հանդիպումներ ունեցան Ֆրանսայի տեղական կուսակցական շրջանակներու հետ: Այդ այցելութեան ընթացքին ընդունելութիւն մը կազմակերպեցի իմ տան մէջ, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով ընկերներ Միացեալ Նահանգներէն եւ Լիբանանէն:

Գիտաժողովին արծարծուեցան Ռ.Ա.Կ.-ի կառոյցի, գործելակերպի փոփոխութեան, Հայաստանի մէջ անոր զօրացման, իշխանութիւն-կուսակցութիւններ յարաբերութեանց, ինչպէս նաեւ ազատական ռամկավարութեան

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

Կիրարկումին հետ կապուած հարցեր: ԳիտաԺողովի ընթացքին վերոյիշեալ հարցերուն մասին տրուեցան զեկուցումներ, որոնց քննարկումներուն արդիւնքները ներկայացուեցան Ռ.Ա.Կ. յաջորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին:

Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի Երրորդ Խորհրդակցական Ժողովը

Հայրենիքի թէ սփիւռքի հայ ժողովուրդի քաղաքական կեանքի վերիվայրումները կ'ազդէին կուսակցութիւններու գործունեութեան վրայ: Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի կառույցը նոյնպէս վերակազմակերպուելու անհրաժեշտութեան առջեւ կը գտնուէր:

Ռ.Ա.Կ. Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանային Վարչութիւնը առաջին իսկ առիթով հրաւիրեց Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի Երրորդ Խորհրդակցական Ժողովը, որ տեղի ունեցաւ 27 Հոկտեմբեր 1989ին, Լիոնի մէջ: Առաջին Խորհրդակցական Ժողովը տեղի ունեցած էր Յուլիս 1986ին: Ժողովին մասնակցող պատուիրակներ Արշակ Զօպանեան, Միհրան Տէր Ստեփանեան, Հրաչ Երուանդ եւ Արմենակ Եկարեան ակումբներէն, ինչպէս նաեւ Աւստրիոյ եւ Չեխոսլովակիոյ ներկայացուցիչներ՝ Ժամանելով Լիոն, մասնակցեցան եռօրեայ



Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի շրջանակի Խորհրդակցական Ժողովներէն մէկուն ընթացքին: Չախէն աջ՝ ընկ. Կարապետ Փալթոպետրոսեան, Յակոբ Կօշկարեան եւ ես, Վալանս, 1987:



Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի շրջանակի խորհրդակցական ժողովներէն մէկուն ընթացքին: Ձախէն աջ՝ ընկերներ Նազարէթ Թօփալեան, Արթօ Յամբարձումեան եւ Անդրանիկ Բէշիշեան, Վալանս, 1987

Ժողովին: Պատուիրակները ամբողջ կազմով մասնակցեցան Նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի նոր կեդրոնի բացման արարողութեան:

Բացման խօսքիս մէջ Նշեցի կուսակցութեան Եւրոպայի կառոյցը վերակազմակերպելու անհրաժեշտութիւնը: Ընկ. **Լեւոն Թորոսեանի** ատենապետութեամբ եւ ընկերներ **Արթօ Յամբարձումեանի** եւ **Ժան Գարամիսասեանի** ատենադպրութեամբ ընթացող ժողովը կարեւոր որոշումներ առաւ Ռ.Ա.Կ. Եւրոպայի շրջանակի Առաջին Պատգամաւորական ժողովը Նախապատրաստելու ուղղութեամբ: Ժողովին ընթերցուեցաւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան Նախագահ ընկ. Մեթր **Հրաչեայ Սեդրակեանի** ողջոյնի եւ քաջալերանքի գիրը:

Ժողովի աշխատանքներու աւարտին ընկ. **Էտի Ադամեանի** հետ միասին հարցազրոյց մը ունեցանք ֆրանսական մամուլի ներկայացուցիչներուն հետ, պատասխանելով մեր կուսակցութեան եւ Հայաստանի վերաբերող անոնց հարցումներուն: Ժողովի աւարտին հինգ անձեր Լիոնէն եւ Վալանսէն իրենց ուխտը տալով միացան Ռ.Ա.Կ.-ի շարքերուն: Հոկտեմբեր 28ին, կարգ մը հանդիպումներէ ետք, ժողովական ընկերներով եւ այլ հիւրերով Փիզէի

Նշանաւոր դղեակին մէջ կէսօրուան ճաշի հիւրը եղանք Յ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի Նախագահ **Սեդրակ Սանճեան**ին:

Իմ ատենապետութեան շրջանին Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի կառոյցի զօրացումին հետ միասին, մեր կապերը աշխուժացուցինք Նաեւ տեղական կուսակցութիւններու, մանաւանդ Եր. ՓԷ. Եր.-ի ղեկավարութեան՝ Փարիզի բաղաքագլուխ **Ժաք Շիրաքի** հետ, որոնց հետ յարաբերութիւններու մէջ էինք Նախքան անոնց իշխանութեան գալը: Այդ յարաբերութիւններու հիմը դրուած էր կարգ մը ընկերներու, մանաւանդ Վալանսի փոխ-բաղաքապետ ընկ. **Նուպար Զէշիշեանի** կողմէ: Եր. ՓԷ. Եր. ջատագովն է ազատական եւ ռամկավարական սկզբունքներուն եւ բնական էր որ հայ իրականութենէն Ներս գաղափարակից գործակիցի մը փնտռութիւն ընթացքին Ռ.Ա.Կ.-ը գտներ որպէս այդպիսին:

Երկու կուսակցութիւններու ղեկավարութեան միջեւ բազմաթիւ տեսակցութիւններու արդիւնքով Եր. ՓԷ. Եր. իր մասնակցութիւնը բերաւ Յ.Բ.Ը. Միութեան բոլոր կարեւոր ձեռնարկներուն՝ Փարիզի, Լիոնի, Վալանսի եւ Մարսէյի մէջ: Համագործակցութեան լաւագոյն օրինակներէն էր Եր. ՓԷ. Եր.-ի Ընդհանուր Զարտուղար **Ալան Ժիւլիէի** այցելութիւնը Յ.Բ.Ը. Միութեան Ալէք Մանուկեան կեդրոն, ուր ան պաշտօնապէս ընդունուած էր Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Շրջանային եւ Յ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակային վարչութիւններուն կողմէ: Միեւնոյն ատեն Եր. ՓԷ. Եր.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ Փարիզի եւ Ֆրանսայի այլ բաղաքներու մէջ բաղաքական եւ ընկերային շարժումներու գծով սերտ համագործակցութիւն ստեղծուէր Եր, որով Եր. ՓԷ. Եր.-ը իշխանութեան գալով, մեզի առիթը կը ներկայանար շաղկապը հանդիսանալու Ֆրանսայի եւ Հայաստանի պետական ներկայացուցիչներու միջեւ:

Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի Շրջանակին հետեւողական աշխատանքներուն շնորհիւ իրականացաւ Եր. ՓԷ. Եր.-ի պատուիրակութեան այցելութիւնը Հայաստան՝ գլխաւորութեամբ Երիտասարդութեան եւ Մարմնակրթանքի Նախարարուհի **Միշէլ Ալիօ-Մարիի** եւ Մարդասիրական հարցերու Նախարար **Ռեշար Կազընաւի**, որ հիմը դրաւ Յ.Բ.Ը.Կ.-ի հետ համագործակցութեան: Այդ համագործակցութեան շնորհիւ իրականացան հայանպաստ բազմաթիւ ծրագիրներ եւ մարդասիրական օգնութիւններու առաքումներ: Երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներ միասնաբար աշխատեցան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան Յ.Բ.Ը.Կ.-ի տարբերակին վրայ, որ կարեւոր կը նկատենք հայկական պետականութեան եւ ռամկավարութեան համակարգի ամրապնդման ճամբուն վրայ:

Ընտրուելով Կեդրոնական Վարչութեան անդամ, Փարիզի մէջ հսկայական գործունեութիւն կը ծաւալէինք Հայաստանի ի նպաստ, մանաւանդ

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

Երկրաշարժի աղիտեալ գօտիին օգնության գծով: Այս ժամանակաշրջանին էր որ նախագահ **Լևոն Տեր-Պետրոսեան** իր առաջին այցելութիւնը տուաւ Փարիզ եւ մենք՝ Կեդրոնական Վարչութեան այլարգելի ընկերներով, ինչպէս՝ Դոկտ. **Արշաւիր Կեօնճեան**, **Հայկաշէն Ուզունեան** եւ **Լևոն Զեպապճեան**, մեծ շուքով հիւրընկալեցինք զինք, որպէս հետագայի ազատ անկախ Հայաստանի Առաջին նախագահ:



*Ժագ Շիրաքի հետ, Պէյրուք, երբ Շիրաք ընտրեալ
նախագահն էր Ֆրանսայի Հանրապետութեան:*

Ռ.Ա.Կ. ԺԷ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը

Ռ.Ա.Կ.-ի 17րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը գումարուեցաւ Մոնթրէալի մէջ 1988ին: Կուսակցութեան Զամատենապետներ ընտրուեցան Մեթր **Հրաչեայ Սեդրակեան** եւ Դոկտ. **Արշաւիր Կեօնճեան**: Կեդրոնի անդամներ ընտրուեցան ընկերներ **Հայկաշէն Ուզունեան, Վարդան Ուզունեան, Տոքթ. Յարութիւն Եոզկաթեան, Պարոյր Աղպաշեան, Երուանդ Ազատեան**, Դոկտ. **Վաչէ Ղազարեան, Ասպետ Զամալեան** եւ **Հայկ Նազգաշեան**: Արդէն այս շրջանին նկատելի դարձան որոշ տարակարծութիւններ եւ յառաջ եկան դժգոհութիւններ, նոյնիսկ՝ ըմբոստութիւններ ղեկավարութեան դէմ: Այս ժողովին էր որ առաջին անգամ Կեդրոնական Վարչութեան մաս կազմեցի գանձապահի պաշտօնով: Կեդրոնի բոլոր գործերը կը տնօրինուէին Մոնթրէալի մէջ, իսկ ես իբր դիւանի անդամ գանձապահի պարտականութիւններով տեղեակ չէի դառնար կատարուած գործառնութիւններէն: Կեդրոնը իր առաջին լիազումար ժողովը ունեցաւ Աթենքի մէջ, ուր հրաժարական տուի գանձապահի պաշտօնէն: Չիս փոխարինեց ընկ. **Ասպետ Զամալեան**:

Ռ.Ա. Կուսակցության ԺԸ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը

Մոնթերեալի մէջ Ապրիլ 11-14, 1991ին գումարուած ԺԸ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կուսակցութեան պատմութեան մէջ դրական թէ ժխտական իրադարձութիւններու սկիզբը հանդիսացաւ՝ Արցախեան Շարժում, Հայաստանի անկախութեան հռչակում, բայց նաեւ ներքին կուսակցական խմորումներ: Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի դիւանը կազմուեցաւ հետեւեալ ընկերներէն՝ ատենապետներ՝ Դոկտ. **Վաչէ Ղազարեան, ճորճ Մանտոսեան**, ատենադպիրներ՝ **Օհան Պոտրումեան, Յովիկ Էօրտեքեան**: Արդարեւ, այս Ժողովին էր, որ որոշում առնուեցաւ կուսակցութեան կեդրոնը փոխադրելու Մոնթերեալ, որուն գաղափարը ինքնին ըմբոստութիւն յառաջացուց որոշ շրջանակներու մօտ, մէկը ըլլալով Լիբանանը: Հակառակ որ քաջ կը գիտակցէինք, թէ Ռ.Ա.Կ.-ի Գերագոյն Մարմինը իր գաղափարախօսութեամբ, լրջախոհութեամբ, ծանրակշռութեամբ կեդրոնացած էր Մոնթերեալի մէջ՝ գլխաւորութեամբ ընկ. Դոկտ. **Արշաւիր Կեօնճեանի**, սակայն ընդդիմութիւնը դարձաւ անզսպելի ու ծայր առաւ շրջանակներու մէջ ըմբոստութեան հասնող պայթար մը:

1991ի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին, հակառակ որ ընդդիմութիւնը ծաւալ սկսած էր ստանալ, ի մտի ունենալով Ռ.Ա.Կ.-ի գերագոյն շահերը, միջնորդի դեր ստանձնելով, Եւրոպայի Ռ.Ա.Կ.-ը յաջողեցաւ մեղմել ընդդիմութիւնը՝ գործակցութեան ոգի յառաջացնելով ընկերներ Դոկտ. **Արշաւիր Կեօնճեանի, Երուանդ Ազատեանի** եւ **Յակոբ Վարդիվառեանի** միջեւ: Այնուհետեւ Պատգամաւորական Ժողովը կայացաւ խաղաղ մթնոլորտով: Ընտրուելով Կեդրոնի անդամ, ես նշանակուեցայ Միջին Արեւելքի եւ Եւրոպայի շրջանակներու պատասխանատու: Կեդրոնի անդամներ ընտրուեցան ընկերներ Մերթ **Հրաչեայ Սեդրակեան** Պատուակալ ատենապետ, **Արշաւիր Կեօնճեան** ատենապետ, **Հայկաշէն Ուզունեան, Երուանդ Ազատեան, Տոքթ. Յարութիւն Եոզկաթեան, Տոքթ. Յարութիւն Արզումանեան, Ռուբէն Թերզեան, Վարդան Ուզունեան, Ասպետ Համալեան, Պարոյր Աղպաշեան** եւ Դոկտ. **Վաչէ Ղազարեան**, իսկ փոխ անդամ՝ **Օշին Մոստիշեան**: Թէեւ Փոխ-ատենապետի թեկնածու էի, սակայն նկատի ունենալով ընկ. **Հայկաշէն Ուզունեանի** տարիներու վաստակը եւ տարիքը, ան ընտրուեցաւ այդ պաշտօնին համար: Այս Ժողովին էր որ որոշում ընդունուեցաւ հիմնելու

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցությունը եւ ճիգեր գործադրելով՝ զօրացնելու հայրենական մեր կառույցը:

Ռ.Ա. Կուսակցության Հիմնադրության 70 Ամեակի Տոնակատարությունը Լիոնի Մեջ

Ռ.Ա.Կ. Եւրոպայի Առաջին Պատգամաւորականին առիթով, 23 Նոյեմբեր 1991ին, Լիոնի «Շալէ տիւ Փարք»ի սրահին մեջ հանդիսաւոր շուքով նշեցինք կուսակցութեան 70 ամեակը: Հանդիսութիւնը կազմակերպած էր տեղւոյն **Միհրան Տէր Ստեփանեան** ակումբը: Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուած էին Ֆրանսայի քաղաքական դեմքեր, Ազգային Ժողովի երեսփոխաններ, Նահանգային երեսփոխաններ եւ շրջանային ընդհանուր խորհրդականներ՝ Ռոն Նահանգի երեսփոխան **Պերնատէթ Իզաաք-Պիպիլ**, Իզեր Նահանգի երեսփոխան **Ալէն Մուան-Պրեսան**, Ռոն-Ալպ շրջանի գլխաւոր խորհրդական **Մարք Ֆրեյս** եւ Պիւլիքեան Հիմնարկութեան Նախագահ Փրոֆ. **Փիէռ Մարիոն**: Ներկայ գտնուեցան նաեւ Լիոնի Հայրապետական



Ռ.Ա.Կ. Եւրոպայի Առաջին Պատգամաւորական Ժողով: Ձախէն աջ՝ ընկերներ Վարդան Ուզունեան, Հրաչ Գումրուեան, Հայկաշէն Ուզունեան, ես եւ Անդրանիկ Բէշիշեան, Լիոն, 1991:

Պատուիրակի Փոխանորդ **S. Նորվան Եպս. Չաքարեան**, Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչության փոխ-ատենապետ **Հայկաշեն Ուզունեան**, նոյն վարչության անդամ **Վարդան Ուզունեան**, Լիոնի Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ նախագահ **Սեդրակ Սանճեան**, Հ.Բ.Ը.Մ.-ի Չուկցերիոյ Մասնաճիւղի ատենապետուհի **Թալին Աւագեան**, ինչպէս նաեւ Ֆրանսայի զանազան շրջաններէն եկած Ռամկավար ընկեր-ընկերուհիներ եւ հարիւրէ աւելի հրաւիրեալներ:

Ելոյթներ ունեցան երիտասարդ ընկերներ **ԺողէՖ Տիմիճեան** եւ **Ասպետ Զէշիշեան**: Խօսեցան նաեւ **Պերնատէր Իզաաք-Պիպիլ**, որ փոխ-նախագահն է Ֆրանսայի խորհրդարանի Ֆրանքեւիայ բարեկամութեան խումբին, խոստանալով ամէն ճիգ գործադրել որպէսզի շուտով կառուցուի Գիւմրիի ֆրանսական դպրոցը, **Մարք Ֆրէյս եւ Փիէռ Մարիօ**: Հանդիսութեան փակման խօսքը ըսաւ **S. Նորվան Եպս. Չաքարեան**, որ յաջողութիւն մաղթեց Ռ.Ա.Կ.-ի գործունեութեան Հայաստանի թէ Սփիւռքի մէջ: Յաւուր պատշաճի ելոյթ մը ունեցայ նաեւ ես: Հայաստանի անկախութեան հռչակումին ստեղծած ազգային հպարտութեան եւ խանդավառութեան մթնոլորտը, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ Ռ.Ա. Կուսակցութեան ծաւալած աշխոյժ գործունեութիւնը գլխաւոր առանցքներն էին այդ հանդիսութեան ընթացքին արտասանած խօսքիս:

Փարիզի Արշակ Զօպանեան ակումբի կազմակերպութեամբ, Փարիզ հրաւիրեցինք Հ.Ռ.Ա.Կ.-ի ատենապետ **Ռուբէն Միրզախանեան**ը, որ դասախօսութիւն մը տուաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ալէք Մանուկեան կեդրոնին մէջ, 28 Ապրիլ 1992ին: Ան խօսեցաւ հայրենիքի ներքին կացութեան եւ տնտեսական եւ ընկերային դժուարութիւններուն մասին, անդրադառնալով նաեւ Արցախի հիմնահարցին: Կազմակերպեցինք նաեւ ընկերներ **Վիգէն Խաչատրեանի** եւ **Պետրոս Զացախեանի** այցելութիւնը Ֆրանսա, ուր սերտ համագործակցութիւն մը հաստատուեցաւ Հ.Ռ.Ա.Կ.-ի եւ Էր. ՓԷ. Էր.-ի միջեւ: Այս համագործակցութեան շնորհիւ, Օգոստոս 1992ին Էր. ՓԷ. Էր.-ի պատուիրակութիւն մը Երեւան մեկնեցաւ հրաւերովը Հ.Ռ.Ա.Կ.-ի: Պատուիրակութեան մաս կազմեցին Եւրոխորհրդարանի երեսփոխան եւ նախկին նախարարուհի **Միշէլ Ալիօ-Մարի**, Ֆրանսայի Ազգային Ժողովի երեսփոխաններ **Ռեշար Կազընաւ** եւ **Էրիք Ռոյ**:

Թ.Մ.Մ. Հիմնադիրներու Մարմնի Անդամ

Թեթեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնին անդամ ըլլալը ինքնին մեծ գոհողութիւն ու պատասխանատուութեան գիտակցութիւն կը պահանջէ: Հիմնականօրէն հոգիի պարտականութիւն կը նկատենք մեր հիմնադիրներէն մեզի ժառանգուած բարոյական եւ նիւթական արժէքներու պահպանումը: Հետեւաբար եւ բնականաբար, մեր գլխաւոր պարտաւորութիւնը կը հանդիսանար նաեւ Թեթեան Կեդրոնի եւ Վահան Թեթեան վարժարանի կառոյցները կանգուն պահել ու պահպանել՝ ամէն ճիգ ի գործ դնելով: Մեր գործունեութեան ծիրը կը կեդրոնացնէինք Թ.Մ.Մ.-ը պատնէշի վրայ կանգուն պահելու եւ անոր բարի երթը ապահովելու վրայ:

1992ին, ընկ. Տոքթ. **Յարութիւն Եոզկաթեան**ի ատենապետութեան ընթացքին, պատիւը ունեցայ նշանակուելու Հիմնադիրներու Մարմնի անդամ: Այդ օրերուն Հիմնադիրներու Մարմինը կը բաղկանար հետեւեալներէն.- Տոքթ. **Յարութիւն Եոզկաթեան**, ատենապետ, ընկերներ **Կարապետ Պապահէքեան**, **Սարգիս Մենակ**, **Վարուժան Խաչատուրեան**, **Հայկաշէն Ուզունեան**, **Կարապետ Յարութիւնեան**, **Վահագն Զիրիշեան** եւ **Արտաւազդ Մելքիսէթեան**: Յաջորդող տարիներուն որոշ ընկերներու կեանքէ հեռանալէն ետք նոր նշանակումներ եղան եւ Հիմնադիրներու Մարմինը ունեցաւ հետեւեալ ամբողջական կազմը.- **Կարապետ Պապահէքեան** ատենապետ, **Յակոբ Գասարճեան** փոխ-ատենապետ, **Վահագն Զիրիշեան** գանձապահ, **Արտաւազդ Մելքիսէթեան** ատենադպիր, **Նար Խաչատուրեան**, **Մայք Խարապեան**, **Յովսէփ Էմիրեան** եւ **Հրայր Հովիւեան**: Ընկերներ **Յովսէփ Էմիրեան** եւ **Հրայր Հովիւեան** իմ առաջարկութեամբ է որ նշանակուած էին Հիմնադիրներու Մարմնի անդամներ: Ընկ. **Կարապետ Պապահէքեան**ի հրաժարումէն ետք ընտրուեցայ Հիմնադիրներու Մարմնի ատենապետ:

Միութեան բոլոր կառոյցներուն մէջ սկսած էր նշմարելի դառնալ բարեկարգումներու աշխատանքը, յատկապէս Թեթեան Կեդրոնի եւ Թեթեան դպրոցի շրջապատէն ներս: Արդէն լծուած էինք կազմակերպչական լուրջ աշխատանքի՝ մանաւանդ թատրոնով, գրական եւ այլ ձեռնարկներով, ներքին կառոյցները ամրապնդելով, մշակութային կեանքը ծաղկեցնելով, կապը ամրապնդելով Հայրենիքի եւ սփիւռքահայ այլազան գաղութներու հետ: Մեր հիմնական աշխատանքը կը կեդրոնանար Թեթեան վարժարանին վրայ՝ մինչ այդ արձանագրած կրթական եւ բարոյական մակարդակը պահ-

պանելու եւ ամէն ճիգ ի գործ դնելով դպրոցին գոյերթը ապահովելով առաւել եւս լաւագոյնին ձգտելու:

Լիբանանի քաղաքական ներքին զարգացումները, խորհրդարանական յաջորդ ընտրութիւններու սպասումը, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան հրաւիրած Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը Լիոնի մէջ ներքին տարակարծութիւններու դուռ բացին մեր շրջանակէն ներս եւ Զիմնադիրներու Մարմնի կարգ մը անդամներու մօտ, որոնց պատճառով Մարտ 2012ին հրաժարականս ներկայացուցի Զիմնադիրներու Մարմնի ատենապետութենէն: Չանազան անձնական պատճառներով ընկերներ **Էտի Պահատրեան, Յովսէփ Էմիրեան, Արտաւազդ Մեքիսեթեան եւ Զրայր Զովիւեան** ընդունեցին հրաժարականս եւ անմիջապէս Զիմնադիրներու Մարմնի ատենապետ նշանակեցին ընկ. **Զրայր Զովիւեանը**, որ տարիներու գործակիցս ըլլալով, իմ կարծիքով պէտք չէ ընդունել ատենապետութիւնը: Ընկ. **Զովիւեան** կարծած էր թէ այդ պաշտօնը պիտի օգնէր իրեն որ երեսփոխան առաջադրուէր, սակայն այդ մէկը չիրականացաւ: Միւս կողմէ, չկարենալով գլխաւորել Զիմնադիրներու Մարմինը եւ կանոնաւոր ժողովներ գումարել, ինչպէս նաեւ տարակարծութիւններ ունենալով Զիմնադիրներու Մարմնի կարգ մը անդամներու հետ, ստիպուած եղաւ երկու տարի ետք ժողով մը հրաւիրել՝ զիս ալ ընդգրկելով, ներողութիւն խնդրել ինձմէ եւ Զիմնադիրներու Մարմինէն, եւ հրաժարիլ պաշտօնէն:

Զիմա որ Զիմնադիրներու Մարմնի ատենապետութիւնը կրկին ինծի վստահուած է, առաւել եւս նպատակասլաց աշխատանք կ'ենթադրէ մեր գործունեութեան ծիրը՝ միշտ գործակցութեամբը ժողովական ընկերներուս, որով պատասխանատուութեան բովանդակ գիտակցութեամբ ստանձնած կը մնանք հիմնադիրներէն մեզի ժառանգուած ջահը:

Ներկայիս, նոր նշանակումներով, Թ.Մ.Մ.-ի Զիմնադիրներու Մարմինը ունի հետեւեալ կազմը.- **Յակոբ Գասարճեան**՝ ատենապետ, **Էտի Պահատրեան**՝ փոխ-ատենապետ, **Անի Լաչինեան**՝ ատենադպրուհի, **Յովիկ Վարդանեան**՝ գանձապահ, **Արտեմ Պիլպիւլեան**, հաշուեքննիչ, **Սայք Խարապեան**, **Անդրանիկ Տազետեան**, **Նար Խաչատուրեան** եւ **Զրայր Զովիւեան**՝ անդամներ:

Մեր Յրաչեայ Սեդրակեանի Ոսկեայ Յոբելեանը



Մեր Յրաչեայ Սեդրակեանի Ոսկեայ Յոբելեանի հանդիսութեան ընթացքին, 1994: Մերին եւ ընկ. Էտի Կոստանեանի հետ:

Մեր ղեկավարներէն Մեր **Յրաչեայ Սեդրակեանի** վաստակը գնահատելու, զինք մեծարելու եւ իր ազգային-քաղաքական ծառայութիւններուն արժանի յարգանք մատուցելու նախանձախնդրութեամբ Դեկտեմբեր 1994ին, Թեքեան Մշակութային Միութեան եւ Զ.Ե.Ը.-ի հետ միասին կազմակերպեցինք Մերին Ոսկեայ Յոբելեանը: Ձեռնարկը տեղի ունեցաւ Զ.Կ.Մ.-ի Յովհաննէս Պօղոսեան հանդիսարանին մէջ, խումներամ բազմութեան մը ներկայութեամբ:

Հանդիսութիւնը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Լիբանանի տնտեսութեան եւ առեւտուրի նախարար **Յակոբ Տէմիրճեանի**: Ներկայ գտնուեցան հայ երեսփոխաններ, Հայաստանի հաւատարմատար **Երուանդ Մելքոնեան**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի Զ.Բ.Ը.Մ.-ի Զ.Ե.Ը.-ի ղեկավարներ, այլ միութեանց ներկայացուցիչներ, Հալէպէն, Դամասկոսէն եւ Ամմանէն ժամանած

հիւրեր, բարեկամներ եւ Մեթրին երբեմնի գործակիցներ եւ պաշտօնակիցներ:

Հանդիսութեան բացումը արաբերէն լեզուով կատարեց ընկ. **Արտաւազդ Մելքիսեթեան**: Առաջին բանախօսը եղաւ պրն. **Ժիրայր Դանիէլեան**, որ յատուկ կերպով շեշտեց Մեթրին բերած նպաստը Հ.Ե.Ը.-էն ներս իբրեւ հիմնադիրներէն մէկը: Բանախօսեցի նաեւ ես, ներկայացնելով Մեթրին ազգային-քաղաքական ընդգրկուն գործունեութիւնը եւ անոր ղեկավարի յատկութիւնները:

Լիբանանի հանրապետութեան նախագահ **Իլիաս Հրաուի**, գնահատելով Մեթրին բոլորանուէր ծառայութիւնները, զինք պարգեւատրեց յատուկ շքանշանով մը: Մեթրը այդ օրը արժանացաւ նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Ե.Ը.-ի եւ Թ.Մ.Մ.-ի շքանշաններուն: Գոհունակութիւն էր ինծի համար որ կրցանք ըստ արժանւոյն մեծարել մեր սիրելի Մեթրը, որ որոշ ժամանակ մը Գանատա մնալէ ետք վերադարձած էր Պէյրութ:

1997ին վերջին հրաժեշտը տուինք Մեթրին, որուն ազգային-քաղաքական եւ կուսակցական գործունեութիւնը օրինակելի եղած էր մեզի համար: Մեթր Սեդրակեան եղաւ օրինապահ, ուղղամիտ եւ սկզբունքային այն գործիչը, որ իր կեանքի վերջին օրերուն մերժեց մասնակիցը դառնալ կուսակցական երկփեղկումին կամ անջատողական շարժումին, արժանանալով բոլորին սիրոյն, գնահատանքին եւ յարգանքին:

Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնի Կարեւոր Ժողովը

Կարեւոր էր Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնի այն ժողովը, որ տեղի ունեցաւ 1 Սեպտեմբեր 1997ին, ներկայութեամբ ընկերներ **Կարապետ Պապահեքեանի, Սարգիս Մենակի, Արտաւազդ Մելիք-սեքեանի, Վահագն Զիրիշճեանի** եւ **Հրաչ Գումրուեանի**, որ հրաւիրեալի կարգավիճակով կը մասնակցէր ժողովին: Միութեան հիմնադրութեան յիմնամեակին առիթով տեղի ունեցած արտակարգ ժողովներուն ընթացքին կարեւոր որոշումներ ընդունուեցան հանգրուանային ձեւով հիմնական բարեփոխումներու ենթարկելու Թ.Մ. Միութիւնը, ինչպէս նաեւ որոշուեցաւ հաստատել Թ.Մ. Միութեան Մշակութային Հիմնադրամ մը: Հիմնադիրներու Մարմնին մէջ իմ գործունեութեան ամենէն կարեւոր կողմը կը նկատեմ կանոնադրային բարեփոխումները եւ երկար տարիներու վրայ հաւաքուած պետական պարտքերու հանգրուանային մարումը:

Արդարեւ, Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնին կողմէ ինծի տրուած լիազօրագրին հիման վրայ, անձնական հետապնդումներուս, բայց մանաւանդ երեսփոխանական կապերուս շնորհիւ կրցայ զեղչերով եւ մասնակի վճարումներով մարել «Չարթօնք»ի եւ Թեքեան Կեդրոնի 70ականներէն ի վեր կուտակուած եւ հարիւր հազարաւոր ամերիկեան տոլարի հասնող պետական տուրքերու պարտքերը: Երկար ժամանակ խլեցին նաեւ Թեքեան Կեդրոնի հին վարձակալներուն դէմ մեր բացած դատական գործերը, որով ի վերջոյ կրցանք նոր սակագիներով վարձքերու եկամուտները կրկնապատկել եւ ատով Թեքեան Վարժարանին եւ «Չարթօնք»ին պարտքերը մարել:

Նոյնիսկ լիբանանեան ներքին քաղաքական կացութեան ձգտուած վիճակին մէջ, երբ ամիսներով ստիպուած էի գործակից երեսփոխաններու հետ պանդոկի մը մէջ արգելափակուած մնալ, շարունակեցի աշխատանք տանիլ Թ.Մ.Մ.-ի, «Չարթօնք»ի եւ Թեքեան Վարժարանի տասնամեակներ շարունակ երեսի վրայ ձգուած կալուածաթուղթերուն օրինականութեան ապահովման ուղղութեամբ:

**Ռ. Ա. Կուսակցության ԺԹ. (19) Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը
Եւ Ռ.Ա.Կ.-ի Պառակտումը**

Կիպրոսի մէջ, Սեպտեմբեր 1-2, 1995ին գումարուած Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ հայութեան, մեր հայրենիքին եւ մեր կուսակցութեան պատմութեան համար կարեւոր հանգրուանի մը ժամանակաշրջանին: Հետեւաբար, ժողովը անխուսափելիօրէն որդեգրեց այդ պահուն լրջութեան համապատասխան ազգային-քաղաքական ուղեգիծ, առաջադրելով, որ կուսակցութիւնը կիրարկէ իր պատմական առաքելութիւնը: Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը ընդունեց կարեւոր Յայտարարութիւն մը, ինչպէս նաեւ Կեդրոնը վերստին տեղափոխեց Պէյրութ:

Ընդհանուր Ժողովին բացումն իսկ դժուարութիւններու հանդիպեցաւ: Նախապէս, Ռ.Ա.Կ.-ի Ամերիկայի Արեւելեան Շրջանային Վարչութիւնը կուսակցութեան շարքերէն վտարած էր ընկերներ **Միսաք Հայկենցը** եւ **Յակոբ Վարդիվառեանը**, իսկ մենք կը պնդէինք որ անպայման ներում շնորհուի անոնց եւ շարքերը վերադարձուին այդ ընկերները: Ի վերջոյ, երկար ձգձգումներէ ետք, այդ ընկերներուն ներում շնորհուեցաւ եւ անոնցմէ ընկ. **Յակոբ Վարդիվառեան**, որ արդէն իսկ Կիպրոս կը գտնուէր, կրցաւ մասնակցիլ Պատգամաւորական Ժողովին:

Հակառակ ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին «բոցավառ» մթնոլորտի մէջ ընթանալուն, ի վերջոյ համախոհութիւն մը գոյացաւ եւ նոր Կեդրոնական Վարչութիւն մը կազմուեցաւ իմ գլխաւորութեամբ: Կեդրոնի անդամներ ընտրուեցան հետեւեալ ընկերները.- **Յակոբ Գասարճեան, Ասատուր Տէվլեթեան, Մայք Խարապեան, Պարոյր Աղպաշեան, Գրիգոր Ատանալեան, Երուանդ Ազատեան, Ռուբէն Թէրզեան, Իրմա Տէր Ստեփանեան, Յակոբ Վարդիվառեան, Յովսէփ Էմիրեան, Փանոս Զէշիշեան, Տոքթ. Գեորգ Զէշիշեան եւ Տոքթ. Էտի Ադամեան:**

Ներքին հակասութիւններու պատճառով, առաջին նիստին վարչապետական դրութեամբ չկարենալով կազմել վարչութիւնը, հրաժարած էի ատենապետութենէն, բայց մանաւանդ ընկ. Դոկտ. **Արշալիր Կեօնճեան**ի պնդումին եւ ծափահարութիւններով ուղեկցող ընկերներու կոչերու ճնշումին տակ խառն հոգեկան ապրումներով խնդրեցի գործս դիւրացնել, որով միաձայնութեամբ վերստին վարչապետական դրութեամբ կազմեցի Կեդրոնական վարչութիւնը՝ ձեռք բերելով բոլոր ընկերներուն հաւանութիւնը: Իմ



Ռ.Ա.Կ.-ի 19րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի կողմէ ընտրուած Կեդրոնի անդամները, Կիպրոս, Սեպտեմբեր 1995: Ձախէն աջ՝ ընկերներ Յովսէփ Էմիրեան, Ռուբէն Թերզեան, Ասատուր Տելլէթեան, Պարոյր Աղպաշեան, Գրիգոր Ատանալեան, Գեորգ Բէշիշեան, եւ, Փանոս Բէշիշեան, Մայք Խարապեան, Էտի Աղամեան եւ Երուանդ Ազատեան. կը բացակային Իրմա Տէր Ստեփանեան եւ Յակոբ Վարդիվառեան:

Երախտագիտութիւնս կը յայտնեմ ներկայ գտնուող բոլոր ընկերներուն, որոնք կուսակցական պատկանելութեան վեհ գիտակցութեամբ, Ռ.Ա.Կ.-ի գերագոյն շահերը ամեն տեսակի շահերէ վեր դասելով, զիս ընտրած էին որպէս Կեդրոնական Վարչութեան ատենապետ: Անգամ մը եւս Ռ.Ա.Կ.-ի պատմութիւնը եկաւ ապացուցելու, թէ իւրաքանչիւր անդամ, պատգամաւոր թէ ղեկավար, պարտաւոր է ունենալու օրէնքի ու գաղափարական մտածողութեան գիտակցութիւն, խիղճի արթնութիւն, որ ինքնին կը թելադրէ կուսակցական օրինապահութիւն:

Հարկ է ամենէն բուռն պայքարներուն մէջ իսկ դատողութիւն եւ հաւասարակշռութիւն պահելով գաղափարական պարկեշտութեան ոգի ցուցաբերել:

1995ի Ռ.Ա.Կ.-ի 19րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին, ի Կիպրոս, երբ ատենապետ ընտրուեցայ Կեդրոնական Վարչութեան, առաջարկ ներկայացուցած էի, որ Թ.Մ.Մ.-ի Հիմնադիրներու Մարմինը եւ Թ.Մ.Մ.

Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան անդամները ցկեանս ըլլալու հանգամանքէն դուրս գան ի սփիւռս աշխարհի: Այլ ղեկավարներ իրենց յարգելի ու տրամաբանական տուեալները ունենալով՝ մերժած էին առաջարկս Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան նկատմամբ: Հակառակ անոր որ ներքին կուսակցական խնդիրները արգելք հանդիսացան զայն իրագործելու, ես կը շարունակեմ պահել սկզբունքային կեցուածքս եւ այսօր որպէս Հիմնադիրներու Մարմնի ատենապետ ամէն ջանք ի գործ կը դնեմ իրագործելու համար խոստումս:

Միաձայնութեամբ ընտրուած Կեդրոնական Վարչութեան Հայաստան այցելութիւնը եւ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ Կեդրոնին տրուած աջակցութիւնը, բայց մանաւանդ Յ.Ռ.Ա.Կ.-ի կողմէ պաշտօնական ղեկավարութեան քննադատութիւնները թէ՛ իբրեւ թէ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը կը միջամտէ Յ.Ռ.Ա.Կ.-ի ներքին հարցերուն եւ ատով կ'անտեսէ Հայաստանի պետական օրէնքները, սկիզբ եղան տխուր իրադարձութիւններու:

Կուսակցութեան պառակտումին պատճառները բազմաթիւ էին, բայց ընդհանուր գիծերով կրնամ ըսել թէ սերնդափոխութեան յառաջացուցած դժուարութիւնները՝ նորեր ի յայտ գալով եւ հիներն անոնց ընդդիմանալով, մեծ դեր կատարեցին:

Ամէն ինչ սկիզբ առաւ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան տուած մէկ որոշումով, որով ընկ. **Գրիգոր Զեօւեան** նշանակուեցաւ Ռ.Ա.Կ. Մամլոյ Դիւանի ատենապետ: Ընկ. **Երուանդ Ազատեան** ընդդիմացաւ այդ որոշումին: Ինք եւ ընկ. **Ռուբէն Թերզեան** հրաժարեցան Կեդրոնի անդամութենէն եւ այլ ընկերներու հետ միասին հրապարակեցին Կեդրոնին դէմ ուղղուած «Չգաստութեան Կոչ» մը, որ կուսակցութեան պառակտումին սկիզբը եղաւ: Թէեւ միշտ բարձր գնահատած եմ ընկ. **Երուանդ Ազատեանի** մտաւորական կարողութիւնները, փայլուն հրապարակագրութիւնը եւ աշխատասիրութիւնը, կուսակցութեան այդ մէկ որոշումին դէմ անոր այդքա՛ն բռն արձագանգը զարմացուցած է զիս:

Անոնք Կեդրոնը կ'այպանէին թէ դէմ կը գործէ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի կարգ մը որոշումներուն եւ միասնականութեան ոգիին ու զայն կը կոչէին «Պեյրութի խմբակ»: «Չգաստութեան Կոչ»ին եւ Յ.Ռ.Ա.Կ.-ի՝ «Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության Հայտարարությունը»ին ի պատասխան, Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը հրապարակեց իր ծաւալուն՝ «Ռ.Ա.Կ. Բժախնդրօրէն Յարգած Է Ու Կը Յարգէ Հայաստանի Հանրապետութեան Օրէնքները (Ի Պատասխան Յ.Ռ.Ա.Կ.-ի Թխածոյ Մէկ Յայտարարութեան)» վերնագրով յայտարարութիւն մը, որուն մէջ մանրամասն պատասխաններ տրուեցան երկու յայտարարութեանց եւ, պաշտօ-

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

Նապեւ, Յ.Ռ.Ա.Կ.-ին արգիլուեցաւ գործածել կուսակցութեան դրօշը, զինանշանը եւ քայլերգը:

Հակառակ անոր որ Ռ.Ա.Կ.-ի գրեթէ բոլոր շրջանակները՝ Միացեալ Նահանգներու Արեւմտեան, Արեւելեան եւ Գանատայի, Աւստրալիայի, Հարաւային Ամերիկայի, Ֆրանսայի, Յունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Սուրիա-Յորդանանի եւ Լիբանանի, Կեդրոնին օրինականութիւնը ճանչցող եւ անոր զօրակցող յայտարարութիւններ ըրած էին, Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի կարգ մը ղեկավար ընկերներու նախաձեռնած ընդդիմութիւնը ստեղծեց այնպիսի սուր տագնապ մը, որ պատճառ դարձաւ կուսակցութեան տկարացումին եւ պառակտման խորացումին:

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի Հետ Հանդիպումն Ուաշինկթոնի Մէջ

Հոկտեմբեր 1995ին, Ամերիկայի Հայկական Համագումարին հրաւերով Միացեալ Նահանգներ մեկնեցայ մասնակցելու Ուաշինկթոնի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան պաշտօնական բացման հանդիսութեան: Ուաշինկթոն ժամանած էր նաեւ Հայաստանի Նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսեան**: Առիթէն օգտուելով, առանձին հանդիպում մը ունեցայ Նախագահին հետ: Ան ընդարձակ եւ սպառնիչ տեղեկութիւններ տուաւ Հայաստանի քաղաքական-տնտեսական վիճակին եւ Արցախի կացութեան մասին: Նախագահը անդրադարձաւ նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն, առաւելաբար հիմնուելով Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան Յայտարարութեան ազգային-քաղաքական ուղեգիծին վրայ:

Ամբողջովին սիրալիր եւ ջերմ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցած այդ հանդիպումին ընթացքին Նախագահ **Տեր-Պետրոսեան**ին տուի ընդհանուր տեղեկութիւններ **ԺԹ**. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին եւ անկէ բխած ազգային-քաղաքական *փլաթֆորմ*ին մասին, յատկապէս անդրադառնալով այն որոշումներուն, որոնք կը վերաբերին կուսակցութեան հայրենիքի առնչուող քաղաքականութեան: Շեշտեցի թէ Ռ.Ա. Կուսակցութիւնը, հաւատարիմ իր ազգային քաղաքական աւանդութեան, ջերմ պաշտպանը կը մնայ հայրենի պետութեան ամրապնդման, Հայաստանի տնտեսական բարգաւաճման, ներքին քաղաքական կայունութեան, Հայաստանի միջազգային վարկին բարձրացման, եւ այդ ուղղութեամբ իր բոլոր կարելիութիւնները ի սպաս պիտի դնէ, որպէսզի դիւրացնէ նաեւ հայրենի իշխանութիւններուն աշխատանքը: Ռ.Ա.Կ.-ի սկզբունքներուն անբաժան մաս կը կազմէ նաեւ իր տեսակետները լսելի դարձնելու պարտաւորութիւնը ազգային զանազան հարցերու շուրջ, ամէն անգամ որ անոր հարկը զգացուի:

Նախագահ **Տեր-Պետրոսեան** ջերմօրէն շնորհաւորեց Ռ.Ա.Կ.-ի Նոր Կեդրոնական Վարչութիւնը եւ անձնապէս զիս, իր համարումը յայտնեց կուսակցութեան աւանդական ազգային քաղաքականութեան, ինչպէս նաեւ անոր ժողովրդավարական սկզբունքներուն նկատմամբ, գնահատեց **ԺԹ**. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն բխած ազգաշէն առաջադրանքները, եւ ամբողջական յաջողութիւն մաղթեց մեզի:

Ուաշինկթոն այցելութեանս ընթացքին, ընկ. **Մայք Խարապեան**ի հետ միասին հանդիպումներ ունեցանք Ամերիկայի Հայկական Համագումարի

Նախագահ **Հրայր Յովնանեանի** եւ ամերիկահայ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ ազգայիններու հետ: Այդ հանդիպումներուն գլխաւոր նիւթը Հայաստանին օգնելու եւ հայկական *լուսափիհներ* զօրացնելու հարցերն էին: Այդ տեսակցութիւններուն կը մասնակցէին նաեւ ընկերներ **Գեորգ Զէշիշեան, Մայք Խարապեան** եւ **Գրիգոր Զեօսեան**: Ուաշինկթըն ժամանած էին նաեւ Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցիչներ ընկերներ **Երուանդ Ազատեան, Իրմա Տէր Ստեփանեան, Ռուբէն Թերզեան, Միհրան Միսասեան** եւ Ռ.Ա.Կ. Հայ Իրաւանց Խորհուրդի ատենապետուհի **Անի Թորթախ**:



*Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ
տեսակցութիւնս Ուաշինկթընի մէջ, Հոկտեմբեր 1995:*

Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Ե. Պատգամաւորական Ժողովը

Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Շրջանային Ե. Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Վալանսի մէջ, 29 Նոյեմբեր 1995ին: Մարսելի Յակոբ Կօշկարեան, Վալանսի Զրաչ Երուանդ, Լիոնի Միհրան Տէր Ստեփանեան եւ Փարիզի Արշակ Զօպանեան ակումբներու պատգամաւորները եւ Շրջանային Վարչութեան անդամները ներկայ գտնուեցան ժողովին, որուն կը մասնակցէր նաեւ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. **Էտի Ադամեան**: Աւելի ուշ, Զ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի ատենապետ Նշանակուելէ Ետք, ան առկախեց իր անդամակցութիւնը Կեդրոնի կազմին: Ժողովէն կը բացակայէր Լոնտոնի Միհրան Տամատեան ակումբը: Իմ նախագահութեամբ եւ ընկ. **Անդրանիկ Զէշիշեանի** ատենապետութեամբ տեղի ունեցած ժողովին ներկայացուցի Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան նախորդ մի քանի ամիսներու գործունեութիւնը, իսկ ակումբներն ալ կիսեցին իրենց գործունեութեան տեղեկագիրները: Խորհրդակցութիւններ ունեցանք Ֆրանսայի քաղաքական կեանքէն ներս տարուելիք ապագայ գործունեութեանց շուրջ: Այս ժողովին էր որ հրաժարականս ներկայացուցի Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտօնէն, զոր կը վարէի եօթը տարիներէ ի վեր:

Եւրոպայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընտրուեցաւ ընկ. **Վազգէն Էսքիճեան**:

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան Պատուիրակութեան Այցելութիւնը Հայաստան

9-16 Ապրիլ 1996ին, Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը այցելեց Հայաստան: Պատուիրակութեան մաս կը կազմէինք ընկերներ **Տոթթ. Գրիգոր Ատանալեան, Ասատուր Տէվլէթեան, Մայք Խարապեան, Պարոյր Աղապաշեան, Յովսէփ Էմիրեան, Փանոս Զէշիշեան** եւ ես: Հայաստանի անկախացումէն ետք առաջին անգամ ըլլալով Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութիւնը լայն կազմով եւ ներկայացուցչութեամբ կ'այցելէր Հայաստան: Այցելութիւնը գործնականացումն էր Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի հիմնական այն որոշումներուն, ըստ որոնց կուսակցութիւնը կը վերանորոգէր իր ակաւորական հաւատամքը՝ սատարելու հայրենի պետականութեան եւ անկախութեան ամրապնդման: Պետական մակարդակի վրայ տեղի ունենալիք հանդիպումները նախապատրաստելու համար Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն անմիջապէս յետոյ Երեւան մեկնած էին ընկերներ **Տոթթ. Գրիգոր Ատանալեան, Մայք Խարապեան** եւ **Պարոյր Աղապաշեան**: Պատուիրակութեան մաս կազմած էր նաեւ Հալէպէն ընկ. **Լեւոն Պլլթեան**:

Երեւանի «Չուարթոնգ» միջազգային օդակայանին մէջ մեր պատուիրակութիւնը դիմաւորեցին «Հայկական Աւիաուղիներ» օդանաւային ընկերութեան տնօրէն **Շահէն Պետրոսեանը**, Հայաստանի խորհրդարանի Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովի նախագահ եւ Հ.Հ.Շ. Վարչութեան փոխ-նախագահ **Յովհաննէս Իգիթեանը**, Երեսփոխան **Արամ Մանուկեանը**, Ռ.Ա.Կ.-ի Հայաստանի ներկայացուցիչ ընկ. **Յովիկ Էօրտէթեանը**, Թ.Մ.Մ.-ի Հայաստանի գրասենեակի ներկայացուցիչ ընկ. **Եղիա Գայայեանը** եւ Ռ.Ա.Կ. Արշակ Չօպանեան Ակումբի երիտասարդ ընկերները:

Մեր պատուիրակութիւնը Ապրիլ 11ին այցելութիւն մը տուաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Երջանկայիշատակ **Գարեգին Ա.**ին: Շատ ջերմ եւ անկեղծ տեսակութիւն մըն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, որուն ընթացքին քննարկեցինք ազգային-եկեղեցական հարցեր, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները: Վեհափառին հետ մանրամասնօրէն խօսեցանք ազգային եւ եկեղեցական հարցերու մասին: Շեշտեցինք թէ Ռ.Ա.Կ.-ը կը մնայ Ս. Էջմիածնի գերակայութեան եւ նախամեծարութեան պաշտպանութեան իր դիրքերուն վրայ, միեւնոյն ատեն կարելորդ նկատելով Մեծի Տանն



Ամենայն Հայոց Կաթողիկոս Երջանկայիշատակ Գարեգին Ա.ին կը յանձնեմ Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի յուշանուէրը, 1996:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերակատարութիւնը, առանց ընդունելու անոր քաղաքական ոյժի մը ենթակայ մնալու իրողութիւնն ու Մայր Աթոռին համահաւասար ըլլալու ձգտումները: Վեհափառը իր ուրախութիւնը եւ գոհունակութիւնը յայտնեց այցելութեան առիթով, գնահատեց Ռ.Ա.Կ.-ի ականդական հայրենասիրական ուղեգիծը, անելցնելով որ Ռ.Ա.Կ.-ին յատուկ չէ կիրքը եւ յախումն գործելակերպը: Պատուիրակութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեցի ընդունելութեան եւ Ռ.Ա.Կ.-ի դերակատարութեան արժեւորման համար: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ ամուր յարաբերութիւնները շարունակելու նոյն յանձնառութիւնը յայտնեցինք Վեհափառին: Իսկ բաժնուելէ առաջ **Գարեգին Ա.** Ամենայն Հայոց Կաթողիկոսին նուիրեցինք Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի յուշանուէր մը:

Այցելեցինք նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամ, ուր տնօրէնուհին՝ տիկին **Մանուշակ Պետրոսեան**, լայն բացատրութիւններ տուաւ մեզի Հիմնադրամի գործունեութեան մասին: Շատ գործնական եւ ջերմ հանդիպում մըն էր: Մեր աջակցութիւնը Հիմնադրամին գործնականացնելու համար, պաշտօնապէս, յանուն աշխարհատարած Ռ.Ա.Կ.-ին, տիկին **Մանուշակ Պետրոսեան**ին յանձնեցինք այն փոխգիրը, որով մեր



*Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչության պատուիրակությունը Գարեգին Ա. Ամենայն
Հայոց Կաթողիկոսի հետ տեսակցության ընթացքին: Աջեւ ծախ՝ ա. շարք՝
Ասատուր Տեվլեթյան, Մայք Խարապեան, Պարոյր Աղպաշեան, Յովիկ Եօրտեքեան,
բ. շարք՝ ես, Գրիգոր Ատանալեան եւ Յովսէփ Էսիրեան, 1996:*

Նահատակներուն յիշատակը խորհրդանշող Ծիծեռնակաբերդի ջահը վերստին պիտի բոցավառուէր: Այդ փոխգիրով մենք յանձն կ'առնէինք ապահովել Ծիծեռնակաբերդի Ամմահութեան Ձահին մնայուն բոցավառութիւնը եւ անմարութիւնը: Հեռատեսիլէն ցուցադրուած արարողութիւնը գնահատուեցաւ հայրենի ժողովուրդին կողմէ: Աւելի ուշ, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրէնուհի տիկին **Մանուշակ Պետրոսեանի** հետ բարձրացանք Ծիծեռնակաբերդ, ուր ծաղկեպսակներ զետեղեցինք մեր բիւրաւոր Նահատակներու յիշատակին եւ ծառատունկ կատարեցինք Յիշողութեան Պուրակին մէջ: Իր ընտրութենէն ի վեր Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը կարելոր համարած էր Հիմնադրամին համազգային նշանակութիւնը, որով աշխարհատարած իր շրջանակները քաջալերած էր նիւթապէս թէ բարոյապէս օժանդակելու Հիմնադրամի ծրագիրներուն: Կեդրոնական Վարչութիւնը նոյն Հիմնադրամին միջոցով ստանձնած էր նաեւ Բիւրականի աստղադիտարանի յիսնամեակի յոբելէնական հրատարակութիւններու մեկենասութիւնը:

Ռ.Ա.Կ.-ի եւ Յ.Յ.Շ.-ի միջեւ ստեղծուած համագործակցութիւնը սերտացնելու եւ միջ-կուսակցական հարցեր քննարկելու նպատակով այցելութիւն մը տուինք Յ.Յ.Շ.-ի կեդրոն, ուր տեսակցութիւն ունեցանք այդ կուսակցութեան ղեկավարութեան հետ: Յ.Յ.Շ.-ի հետ համագործակցութեան սկիզբը դրուած էր 1989ին, երբ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը՝ ընկերներ Մեթր **Հրաչեայ Սեդրակեան, Արշալիր Կեօնճեան, Հայկաշէն Ուզունեան եւ Յակոբ Աւետիքեան**, Երեւան այցելելով, ի շարս այլ հանդիպումներու, մասնակցած էր նաեւ Յ.Յ.Շ.-ի համագումարին, Նոյեմբեր 1989ին: Այդ համագործակցութիւնը շարունակուեցաւ հետագային, Անկախութեան Հռչակագրի պաշտպանութեամբ, ընկ. **Երուանդ Ազատեան**ի ելոյթով Հայաստանի խորհրդարանին առջեւ, Օգոստոս 1990ին, ի վերջոյ յանգեցելով Ռ.Ա.Կ.-ի կողմէ Յ.Յ.Շ.-ին զօրակցելու պատրաստակամութիւն յայտնող կոչի հրապարակման, Յունիս 1991ին: Յ.Յ.Շ.-ի հետ համագործակցութիւն հաստատած եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահական թեկնածութիւնը պաշտպանած նախկին ղեկավարութիւնը աւելի ուշ ամբաստանութիւններ տեղացուց իմ գլխաւորած Կեդրոնական Վարչութեան վրայ՝ Նոյն կազմակերպութեան հետ սերտ յարաբերութիւններ հաստատելու միջոցով Յ.Ռ.Ա.Կ.-ի դէմ դաւադրութիւններ հիւսելու զրպարտութեամբ:

Իբրեւ գաղափարակից կուսակցութիւն, Յ.Յ.Շ.-ի եւ մանաւանդ նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան**ի հետ Երեւանի թէ Փարիզի մէջ տեղի ունեցած բազմաթիւ հանդիպումներու ընթացքին քննարկուած էին համագործակցութեան հարցեր: Յ.Յ.Շ.-ի ներկայացուցիչները յաճախ կ'արծարծէին նաեւ Սփիւռքի մէջ իրենց կառոյցները ստեղծելու հարցը, որուն կ'առարկէինք թէ ատիկա գործնական չէ եւ չի կրնար փոխարինել աւանդական կուսակցութիւնները, փոխարէնը առաջարկելով մեզի հետ համագործակցիլ: Թէեւ գաղափարական նոյնութիւն մը կար երկու կուսակցութիւններուն միջեւ, սակայն յստակ կ'երեւար թէ Յ.Յ.Շ.-ն այնքան ալ խանդավառ չէր Ռ.Ա.Կ.-ի ծաւալումով Հայաստանի մէջ եւ անոր ինքնուրոյն քայլերով ներքին քաղաքական կեանքի թատերաբեմին վրայ: Նախագահ **Տէր-Պետրոսեան**ի եւ ընդհանրապէս Յ.Յ.Շ.-ի հետ յարաբերութիւնները գաղջ դարձած էին նաեւ նախագահին խնդրանքին ընդառաջելով՝ Հայաստանի կառավարութեան նոր կազմին մէջ նախարարական, կամ այլ պաշտօններու համար Յ.Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցած ցուցակի մերժումէն ետք:

Մեր այցելութեան ընթացքին տեսակցութիւններ ունեցանք Արտաքին գործոց փոխ-նախարար **Վարդան Օսկանեան**ի, Արտաքին գործոց նախարար **Վահան Փափագեան**ի, Հայաստանի խորհրդարանի նախագահ **Բաբգէն Արարեցեան**ի, Հայաստանի նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան**ի եւ

վարչապետ **Հրանտ Բազրատեանի** հետ: **Բաբգէն Արարբջեան** գնահատեց Ռ.Ա.Կ.-ի հայրենասիրական գործունեութիւնը Սփիւռքի մէջ եւ ըսաւ թէ համակրանք մը կը տածէ մեր կուսակցութեան հանդէպ՝ ի մասնաւորի անոր ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւնը նկատի ունենալով:

Շնորհակալութիւն յայտնեցի Պարոն **Արարբջեանին** եւ Ռ.Ա.Կ.-ի կողմէ անոր յանձնեցի կուսակցութեան 75 ամեակի յուշանուէրը: **Վարդան Օսկանեանի** եւ **Վահան Փափազեանի** հետ մեր տեսակցութիւնները ընթացան առաւելաբար Արցախի խնդրին եւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան հարցերուն շուրջ: Անոնք մեզի ներկայացուցին Արցախի հիմնահարցի բանակցութիւններուն ընթացքը: Երկու հանդիպումներուն ալ խօսեցանք Լիբանանի եւ ընդհանրապէս արաբական երկիրներու հետ յարաբերութիւնները սերտացնելու մասին: **Վահան Փափազեան** մեծապէս գնահատելի գտաւ մեր այցելութիւնը եւ մանաւանդ Կեդրոնական Վարչութեանս գործունեութիւնը, աւելցնելով թէ Ռ.Ա.Կ.-ը կրնայ մեծ դերակատարութիւն մը ունենալ Հայաստանի մէջ, ուր ազատական ռամկավարութիւնը որդէգրուած է իբրեւ պետական քաղաքականութիւն:

Ապրիլ 15ին մեր պատուիրակութիւնը ընդունուեցաւ Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեանի** կողմէ: Շուրջ երկու ժամ տեւած տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականութեան եւ ընկերային-տնտեսական կացութեան վերաբերեալ հարցեր: Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեանին** յայտնեցի թէ Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներու ճամբուն վրայ կարելոր յաջողութիւններ արձանագրուած են, իսկ Ռ.Ա.Կ.-ի բոլոր շրջանակները պատրաստ են օգնելու Հայաստանի իշխանութիւններուն՝ իրենց վարած քաղաքականութեան, ինչպէս նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ազգային տուրքի ծրագրի իրականացման գծով: Ներկայացուցի նաեւ կուսակցութեան գործունեութիւնը Սփիւռքի մէջ ի նպաստ Հայրենիքին, միեւնոյն ատեն մեր գորակցութիւնը յայտնելով իր գլխաւորած իշխանութիւններուն:

Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան** նախ շնորհաւորելով Ռ.Ա.Կ. Նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը եւ ողջունելով անոր որդէգրած ազգային-քաղաքական առողջ ուղեգիծը, ըսաւ թէ ուրախ է որ այս տեսակցութեամբ իրեն համար առիթ կը ստեղծուի մօտէն ծանօթանալու Ռ.Ա.Կ. Նորընտիր Կեդրոնական Վարչութեան մօտեցումներուն: Նախագահը խօսեցաւ մասնաւոր սեփականատիրութեան վրայ հիմնուած ազատ շուկայի տնտեսութեան եւ ժողովրդավարութեան գաղափարները դաւանող ուժերու միաւորումին մասին: Ան անդրադարձաւ Հայաստանի ներքին թէ արտաքին

քաղաքականության հարցերուն, ընկերային եւ տնտեսական դժուարութիւններուն, երկրին մէջ ընթացող բարեփոխումներուն, ինչպէս նաեւ վերլուծեց Արցախի հիմնահարցն ու շրջանային հարցերը:

Հանդիպման ընթացքին շեշտեցինք Հայաստանի իշխանութիւններուն եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ համագործակցութեան կարեւորութիւնը՝ քաղաքացիական հասարակարգի, հզօր միջին խաւի ձեւաւորման եւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ միասնականության ապահովման յառաջադրանքով: Արծարծուեցան նաեւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութեանց առնչուող այլ հարցեր: Տեսակցութեան աւարտին Ռ.Ա.Կ.-ի կողմէ նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսեան**ին յանձնեցի Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի առիթով պատրաստուած յուշանուէրը: Առիթէն օգտուելով, Ռ.Ա.Կ.-ի ամբողջական աջակցութիւնը յայտնեցի ազգընտիր նախագահին վարած քաղաքականութեան:

Նախագահ **Տեր-Պետրոսեան**ի հետ տեսակցութենէն ետք այցելեցինք Հայաստանի Ամերիկեան Համալսարան, ուր հանդիպում մը ունեցանք համալսարանի նախագահ Դոկտ. Փրոֆ. **Միհրան Աղապաեան**ի հետ:

Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութիւնը «Արմենփրես» լրատու գործակալութեան մամլոյ սրահին մէջ տուաւ ասուլիս մը, որուն կը մասնակցէին Հայաստանի գրեթէ բոլոր թերթերու եւ լրատու գործակալութիւններու թղթակիցները: Ընկերներ Տոքթ. **Գրիգոր Ատանալեան**ի, **Ասատուր Տէվլեթեան**ի, **Պարոյր Աղապաշեան**ի, **Յովսէփ Էմիրեան**ի եւ **Փանոս Բէշիշեան**ի մասնակցութեամբ տեղի ունեցած մամլոյ ասուլիսին խօսեցանք Ռ.Ա.Կ.-Հ.Ռ.Ա.Կ. յարաբերութիւններու, Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի որոշումներու, Հայաստանի մէջ Ռ.Ա.Կ.-ի Ներկայացուցչութիւն հիմնելու, նախագահական ընտրութիւններուն **Լեւոն Տեր-Պետրոսեան**ի թեկնածութիւնը ներկայացնելու, կուսակցութիւններու գործունեութեան վերաբերող Հայաստանի օրէնքները յարգելու գծով Ռ.Ա.Կ.-ի դիրքին եւ այլ հարցերու մասին: Մամլոյ ասուլիսի ընթացքին շեշտեցի խօսքի եւ մամուլի ազատութեան կարեւորութիւնը եւ ժողովրդավարութեան ամրապնդումը:

Թղթակիցներուն հարցումներուն կարեւոր մասը անշուշտ կը վերաբերէր Ռ.Ա.Կ.-Հ.Ռ.Ա.Կ. խզումին: Մենք կը բացատրէինք թէ այդ խզումին պատճառը Հ.Ռ.Ա.Կ.-ի յաջորդական պառակտումները եւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան հանդէպ անոր որդեգրած սխալ դիրքորոշումներն են: Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութիւնը այս առթիւ հրապարակեց մամլոյ հաղորդագրութիւն մը, որուն մէջ արտայայտեց իր դիրքորոշումները եւ տեսակետները ազգային-քաղաքական հարցերու մասին: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը կոչ ըրաւ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն քուէները կեդրոնացնելու արժանաւոր թեկնածու **Լեւոն Տեր-Պետրոսեան**ի օգտին:

Աւելի ուշ ընկերներ Տոթթ. **Գրիգոր Ատանալեան, Ասատուր Տէվլէթեան, Փանոս Զէշիշեան, Յովիկ Էօրտէքեան** եւ ես մասնակցեցանք Հայաստանի հեռատեսիլի կողմէ կազմակերպուած հարցազրոյցներու, որոնցմէ մէկը վարեց **Արթուր Բաղդասարեան**, որ հետագային դարձաւ Հայաստանի խորհրդարանի նախագահը:

Նոյն օրը հանդիպում մը ունեցանք վարչապետ **Հրանտ Բագրատեանի** հետ: Վարչապետը իր ուրախութիւնը յայտնեց որ առաջին անգամ ըլլալով կը հանդիպէր Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցիչներու հետ, աւելցնելով որ իբրեւ ռամկավար-ազատական գաղափարախօսութեան ջերմ հաւատացող, իրեն համար հաճելի է գրուցել հայ իրականութեան մէջ այդ գաղափարախօսութիւնը դաւանող միակ կուսակցութեան հետ: **Հրանտ Բագրատեան** խօսեցաւ Հայաստանի տնտեսական, առեւտրական, ելեմտական եւ ընկերային հարցերու մասին, յայտնելով որ հակառակ Հայաստանի շրջափակումին եւ ստեղծուած դժուարութիւններուն, որոշ յաջողութիւններ արձանագրուած են: Ան կոչ ըրաւ զօրավիգ կանգնելու Հայաստանի տնտեսութեան՝ սփիւռքահայերու եւ օտարներու կողմէ Հայաստանի մէջ համատեղ ձեռնարկութիւններ ստեղծելու միջոցով:

Տեսակցութեան ընթացքին յայտնեցինք թէ Ռ.Ա.Կ.-ը մեծ կարելորութիւն կու տայ հայրենիքի մէջ ռամկավար ազատական գաղափարներու տարածումին, սփիւռքահայութեան տնտեսական կարողութիւնները դէպի Հայաստան ուղղելուն, ինչպէս նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի օժանդակութեան: Վարչապետը գնահատեց Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան որդեգրած ուղեգիծը: Ան խոստացաւ անմիջապէս կարգադրութիւններ ընել Երեւանի մէջ Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցչութեան գրասենեակի հաստատման ուղղութեամբ: Հանդիպման աւարտին, վարչապետին յանձնեցինք Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի յուշանուէրը:

Այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցանք նաեւ Հայաստանի Թէքէեան Մշակութային Միութեան եւ Ռ.Ա.Կ. Արշակ Զօպանեան ակումբի անդամներուն հետ, որոնք, իբրեւ օրինապահ կուսակցականներ, իրենց զօրակցութիւնը յայտնեցին Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան:

Հայաստանի Արդարադատութեան նախարարութիւնը, 15 Ապրիլ 1996ին, յատուկ որոշումով մը պաշտօնապէս արձանագրեց «Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն» հասարակական կազմակերպութիւնը, որուն հիմնադիրներն էին՝ **Յակոբ Գասարճեան, Գրիգոր Ատանալեան, Ասատուր Տէվլէթեան, Մայք Խարապեան, Պարոյր Աղպաշեան, Փանոս Զէշիշեան** եւ **Յովսէփ Էմիրեան**: Կազմակերպութեան հիմնադիր ժողովը տեղի ունեցած էր Ապրիլ 12ին: Նոյն նախարարութիւնը,

Ապրիլ 22ին, դարձեալ յատուկ որոշումով մը «Ազգ» թերթի հիմնադիր եւ հրատարակիչ ճանչցաւ «Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն» հասարակական կազմակերպութիւնը: Որպէս օրինաւորապէս ընտրուած Կեդրոնական Վարչութիւն, բնականաբար ուզեցինք «Ազգ»ը վերադարձնել իր օրինական սեփականատիրոջ՝ Ռ.Ա.Կ.-ին: Թերթը հիմնուած էր Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան կողմէ առնուած որոշումով, որուն մասին պաշտօնական հաղորդագրութիւն մըն ալ հրապարակուած էր «Ռ.Ա. Կուսակցութեան Խօսքը «Ազգ»ի Զրատարակութեան Առիթով» վերնագրով: Ռ.Ա.Կ Մամլոյ Կեդրոնական Դիւանը նոյնպէս ողջունած էր «Ազգ»ի հրատարակութիւնը իբրեւ կուսակցութեան զանազան երկիրներու մէջ լոյս տեսնող 13 պաշտօնաթերթերուն հայրենական հողի վրայ միացող թերթ:

Դեռ աւելին, «Ազգ»ը իր առաջին եւ երկրորդ թիւերու ճակատին գրած էր թէ «Ազգ»ը պաշտօնաթերթն է Ռամկավար Ազատական Կուսակցութեան, սակայն աւելի ուշ «Վարչական Ազդ»ով մը հանած էր այդ վերտառութիւնը՝ Զայաստանի մէջ կուսակցութիւններու օրէնքի ընդունումէն եւ Ռ.Ա.Կ.-ի արձանագրումէն ետք այդ վերտառութիւնը վերստին հրատարակելու խոստումով: Զայաստանի իշխանութիւնները խոստացան օրինական քայլերով հարցը լուծել եւ կուսակցութեան վերադարձնել թերթը, սակայն յետոյ զանազան պատճառներով եւ հաշիւներով չարգեցին իրենց խոստումը: «Ազգ» թերթի սեփականութեան եւ օրինավիճակի հարցին շուրջ ծագած վեճը աւելի խորացուց մեր ներքին վերբերը:

Ապրիլ 23ին հրապարակեցինք «Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն» հասարակական կազմակերպութեան հիմնադրութեան մասին հետեւեալ հաղորդագրութիւնը. «Ս.թ. ապրիլի 15ին, ԶԶ Արդարադատութեան նախարարութեան կոլեգիայի որոշմամբ գրանցուեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն հասարակական կազմակերպութիւնը: Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն հասարակական կազմակերպութեան հիմնադիր ժողովը գումարուել էր Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կենտրոնական վարչութեան ատենապետ **Յակոբ Գասարճեանի** (Ֆրանսիա, Լիբանան), փոխատենապետ **Գրիգոր Ատանալեանի** (Սիրիա), ատենադպիր **Ասատուր Տէվլէթեանի** (Կիպրոս), փոխ-ատենադպիր, Ռ.Ա.Կ. ԿՎ պաշտօնաթերթ «Չարթօնք»ի գլխաւոր խմբագիր **Պարոյր Աղպաշեանի** (Լիբանան), զանձապահ **Սիքայէ Խարապեանի** (Գանատա), նոյն վարչութեան անդամներ Ռ.Ա.Կ. Մ. Նահանգների Շրջանային վարչութեան ատենապետ **Փանոս Զէշիշեանի**, **Յովսէփ Էմիրեանի** (Լիբանան) եւ այլոց մասնակցութեամբ: Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ներկայացուցչութիւն հասարա-

կական կազմակերպության նպատակն է լուսաբանել ազգային քաղաքական հարուստ աւանդոյների, բազում սերունդների արեան ու քրտինքի գնով ձեռք բերուած կենսափորձի տէր 75 ամեայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան գործունեութիւնը եւ նպաստել ժողովրդավարական-ազատական արժէքների տարածմանը»:

Ներկայացուցչութիւնը սկզբնական շրջանին գլխաւորեց ընկ. **Յովիկ Էօրտէքեան**, որուն յաջորդեց ընկ. **Վաչագան Գալստեան**: Հասարակական այս կազմակերպութեան շուրջ համախմբուեցան եւ անոր հետ գործակցեցան Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան օրինականութիւնը ճանչցող, Հ.Ռ.Ա.Կ.-ի ղեկավարութեան ընդդիմադիր, կամ Հ.Ռ.Ա.Կ.-էն անջատուած ընկերներ եւ համախոհներ:

Հակառակ Ռ.Ա.Կ. Հայաստանի Ներկայացուցչութեան հիմնումին դեմ միւս կողմին քննադատութիւններուն ու յարձակումներուն, ինքնահռչակ «Կեդրոն»ը իբր հակաքայլ նոր հասարակական կազմակերպութիւն մը ստեղծեց զոր կոչեց «Ռամկավարական Համահայկական Համախմբում»: Այս կազմակերպութիւնը նոյնպէս արձանագրուեցաւ Հայաստանի մէջ, Յուլիս 1997ին: Բացատրութիւն տրուեցաւ թէ քանի որ Հայաստանի օրէնքներով օտարահպատակները չեն կրնար զբաղիլ քաղաքականութեամբ, այս կազմակերպութեան ստեղծումը կը հետապնդէ Հայաստանի ընկերային կեանքին մէջ սփիւռքահայեր ներգրաւելու եւ յանուն ժողովրդավարութեան միասին գործելու նպատակը: Ռ.Ա.Կ. ներկայացուցչութեան գոյութիւնը քննադատող ընկերներ մաս կազմեցին գրեթէ նոյն իրաւափիճակը ունեցող այս կազմակերպութեան, որ, ինչպէս առաջինը, երկար կեանք չունեցաւ:

Նախագահ Լևոն Տեր-Պետրոսեանի Հետ Երկրորդ Հանդիպումը

1996ի նախագահական ընտրություններէն ետք նախագահ **Լևոն Տեր-Պետրոսեանի** հետ տեսակցելու առիթ մը եւս ստեղծուեցաւ: Արդարեւ, 28 Հոկտեմբերին, ըսկ. **Մայք Խարապեանի** հետ միասին յատուկ ժամադրութեամբ մը հանդիպեցանք նախագահին: Քննարկեցինք Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան, Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործունեութեան հետ կապուած հարցեր: Նախագահին ներկայացուցինք կուսակցութեան գործունեութիւնը, ինչպէս նաեւ խօսեցանք յառաջիկայ օրերուն գումարուելիք Ռ.Ա.Կ. Արտակարգ Պատգամաւորական Ժողովին մասին: Ան յաջողութիւն մաղթեց Պատգամաւորական Ժողովին եւ շնորհաւորեց մեզ Ռ.Ա.Կ.-ի հիմնադրութեան 75 ամեակին առիթով:

Նոյն օրը Հայաստանի Ազգային Ժողովի իր գրասենեակին մէջ, խորհրդարանի նախագահ **Բաբգէն Արարեցեան** ընդունեց Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը: Հանդիպման կը մասնակցէին ընկերներ **Մայք Խարապեան** եւ **Յովիկ Էօրտեքեան**: Տեսակցութեան ընթացքին խօսեցանք նախագահական ընտրութիւններուն, անոր յաջորդած դատապարտելի դէպքերուն, ինչպէս նաեւ երկրին ընկերային եւ տնտեսական կացութեան մասին:

Հոկտեմբեր 23ին, յատուկ ժամադրութեամբ մը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանին մէջ ընդունուեցանք **Գարեգին Ա.** Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ: Այս հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս **Արամ Ա.**ը: Հանդիպումին կը մասնակցէին նաեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ըսկ. **Մայք Խարապեան** եւ Ռ.Ա.Կ.-ի Հայաստանի ներկայացուցիչ ըսկ. **Յովիկ Էօրտեքեան**: Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալներուն հետ քննարկեցինք ազգային-եկեղեցական, ինչպէս նաեւ Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւններուն հետ կապուած հարցեր, որմէ ետք առանձին հանդիպում մը ունեցայ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նիստին մասնակցելու առիթով Հայաստան այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցանք նաեւ Հայոց Համազգային Շարժումի կազմակերպութեան ներկայացուցիչներու հետ, քննարկելով երկու կազմակերպու-

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

թեանց միջեւ համագործակցութեան, Հայրենիք-Սփիւռք յարաբերութեան եւ
Հայաստանի արտաքին թէ ներքին քաղաքականութեան հարցեր:



*Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ տեսակցութիւնս
Երեւանի մէջ, Հոկտեմբեր 1996:*

**Արտակարգ Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, Լիբանան,
Պիքֆայա**

Ընկ. **Հայկաշէն Ուզունեանի** գլխաւորած ճակատին հրապարակած «Չգաստութեան Կոչ»ով սկիզբ առած ընդդիմադիր շարժումը աւելի լայն թափ առած էր Կեդրոնին դէմ ուղղուած հակաօրինական քայլերով, անընդունելի յարձակումներով, յայտարարութիւններով եւ թռուցիկներու բաժանումով: ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին միաձայնութեամբ ընտրուած Կեդրոնական Վարչութեան եւ ընկ. **Հայկաշէն Ուզունեանի** գլխաւորած «Կեդրոնական Վարչութեան» միջեւ հակամարտութիւնը իր շարունակութիւնը ունեցաւ տարբեր շրջանակներէ ներս, յանգելով Նոր արտաքսումներու եւ կախակայումներու: Փոխադարձ քննադատութիւններ, ցեխարձակումներ, Նոյնիսկ զրպարտութիւններ ու ամբաստանութիւններ իրարու կը յաջորդէին: Ցաւալին այն էր, որ այս երեւոյթները կը դառնային հրապարակային՝ մեծապէս վնասելով կուսակցութեան վարկին:

Ռ.Ա. Կուսակցութեան պառակտումին լոյսին ներքեւ, Պիքֆայա-Նաասի մէջ գումարուեցաւ Ռ.Ա. Կուսակցութեան Ի. (20րդ) Արտակարգ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, Նոյեմբեր 8-10, 1996ին: Պատգամաւորական Ժողովը, Նկատի ունենալով որ միւս կողմը ինքնահռչակ Կեդրոն յայտարարած էր ինքզինք, կուսակցութեան շարքերէն արտաքսեց ընկերներ **Յարութիւն Արզումանեանը, Յակոբ Աւետիքեանը, Ռուբէն Թերզեանը, Արշաւիր Կեօնճեանը, Հայկաշէն Ուզունեանը** եւ **Վարդան Ուզունեանը**: Ժողովը հաստատեց Նաեւ Գերագոյն Դատական Ատեանի Յունուար 1996ի որոշումը **Երուանդ Ազատեանի** արտաքսման վերաբերեալ: Ի. Ընդհանուր Ժողովին որոշուեցաւ Նաեւ Կուսակցութեան Նոր Ծրագիր-Կանոնագիր մը պատրաստել եւ այդ նպատակով յանձնախումբ մը կազմուեցաւ հետեւեալ ընկերներէն՝ **Տոքթ. Գրիգոր Ատանալեան, Տոքթ. Գեորգ Զէշիշեան, Մեթր Սարգիս Սերայտարեան** եւ **Անդրանիկ Լեփեճեան**:

Լիբանանի Շրջանակը անմասն չմնաց տիւրը այդ իրավիճակէն, ուր ընդդիմադիրներ, Պէյրութի **Garden Tower** պանդոկի սրահին մէջ, 23 Դեկտեմբեր 1997ին տեղի ունեցած հաւաքի մը ընթացքին, յայտարարեցին Ռ.Ա.Կ. Լիբանանի Անկախ Նոր Շրջանային Վարչութիւն մը, մասնակցութեամբ ընկերներ **Յակոբ Սիւտճեանի, Պօղոս Աստուրեանի, Վիգէն Ասիւեանի, Վարդիվառ Եաւմանեանի, Հրաչ Կոստանեանի, Արա Ազնաւուրեանի**



Ռ.Ա.Կ.-ի 20րդ Արտակարգ Ընդհանուր Ժողովի խմբանկար, Նաաս, Պիթֆայա, 1996:

եւ **Չաւէն Աստուրեանի**: Ընդդիմադիրներու այս խումբին իրենց աջակցութիւնը բերին ընկերներ **Արթիւր Վայեճեան, Մինաս Գանգրունի, Յարութ Մակարեան** եւ **Նար Խաչատուրեան**: Վերջին երկուքը կ'անդամակցէին ընկ. **Հայկաշէն Ուզունեանի** գլխաւորած «Կեդրոնական Վարչութեան»:

Հակաօրինական քայլերուն, հակակուսակցական արարքներուն, յայտարարութիւններուն եւ այլ տխուր երեւոյթներուն պատճառով կուսակցութեան շարքերէն հեռացուեցան ընկերներ **Արթիւր Վայեճեան, Մինաս Գանգրունի, Յակոբ Սիւտճեան, Վիգէն Ասիլեան, Պօղոս Աստուրեան, Վարդիվառ Եալմանեան, Հրաչ Կոստանեան, Արա Ազնաւուրեան, Չաւէն Աստուրեան, Գրիգոր Եալմանեան, Պետրոս Թովճեան** եւ **Աւետիս Թորոսեան**: Անիմաստ պայքարի եւ ինքնակործան արարքներու շղթային մէջ կարգ մը ընկերներ, յայտնապէս ինքնակոչ «Կեդրոն»ին դրդումով եւ առ ի գործադրութիւն Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած ժողովի մը ընթացքին առնուած որոշումին, նոր Հիմնադիրներու Մարմնի մը գոյառումը յայտարարած էին, օգտագործելով ընկ. **Յարութ Մակարեանի** Պէյրութէն Ամերիկա իր հետ տարած Հիմնադիրներու Մարմնի որոշ պաշտօնաթուղթերը: Ընկերներ **Հայկաշէն Ուզունեանի, Վարուժան Խաչատուրեանի** եւ **Յարութ Մակարեանի** յայտարարած ինքնահռչակ Հիմնադիրներու Մարմինը փորձեց դատական մարմիններու միջոցով Թէքէեան Կեդրոնի շէնքը բռնագրաւել եւ Թ.Ս.Ս. Հիմնադիրներու Մարմնի կազմը փոխել, սակայն ի վերջոյ դատական վճիռներով շէնքը մնաց օրինաւոր Հիմնադիրներու Մարմնին:

Այս բոլորը անշուշտ հետեւանք էին գործունեութեանը ընկ. **Նար Խաչատուրեանի** գլխաւորած ընդդիմադիր շարժումին մասնակցող ընկերներու, որոնք կանոնաւորաբար կը հաւաքուէին եւ ժողովներ կը գումարէին Պէյրութի Փրոմէնատ պանդոկին մէջ: Վստահաբար կարելի է ըսել թէ բոլորս, անխտիր, պատասխանատուութեան մեր բաժինը ունեցած էինք Լիբանանի մեր կուսակցական կառոյցը հիւժած տխուր իրադարձութիւններուն մէջ:

Ռ.Ա.Կ.-ի 75 Ամեակի Փառաշուք Հանդիսութիւնը Նախագահութեամբ Վարչապետ Ռաֆիք Հարիրիի

Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակը նշուած էր տարբեր գաղութներու մէջ տեղի ունեցած ձեռնարկներով եւ հանդիսութիւններով: Լիբանանի մէջ կուսակցութիւնը իր տարեդարձը տօնեց անսախընթաց Յոբելեական հանդիսութեամբ մը, որ տեղի ունեցաւ Յոյն Ուղղափառ համայնքի սրահին մէջ, 10 Նոյեմբեր 1996ին՝ բարձր նախագահութեամբը Լիբանանի նահատակ վարչապետ **Ռաֆիք Հարիրիի**: Արդարեւ, հանդիսութենէն մի քանի օր առաջ այցելութիւն մը տուած էինք վարչապետին եւ զինք հրաւիրած նախագահելու կուսակցութեան 75 ամեակին նուիրուած եզրափակիչ հանդիսութեան: **Հարիրի** սիրով ընդառաջած էր մեր հրաւերին, տալով իր համաձայնութիւնը:

Հանդիսութեան ներկայ էին վարչապետ **Ռաֆիք Հարիրի**, Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա.** Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Լիբանանի Թեմի Առաջնորդական Տեղապահ **Գեղամ Վրդ. Խաչերեան**, Հայ Կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարք **Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան**, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ նախագահի ներկայացուցիչ Վեր. **Աբրահամ Սարգիսեան**, Ռ.Ա.Կ.-ի պատուոյ նախագահ ընկ. Մեթր **Հրաչեայ Սեդրակեան**, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան **Երուանդ Մելքոնեան**, նախարարներ, երեսփոխաններ, Հ.Յ.Դ.-ի, Ս.Դ.Հ.Կ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի ներկայացուցիչներ: Հանդիսութեան բացման խօսքը արաբերէնով արտասանեց ընկ. **Արտաւազդ Մելքիսեթեան**: 75 ամեակի Յոբելեական Յանձնախումբը՝ ատենապետութեամբ ընկ. **Կարապետ Պահահեթեանի**, ինչպէս նաեւ յանձնախումբերը եւ Արմենական Արիական Շարժումի պատանիները ամէն ջանք գործադրած էին հանդիսութիւնը բարձր որակով կազմակերպելու համար:

Կուսակցութեան 75 ամեակին առիթով արտասանած ճառիս մէջ պատմականը ըրի կուսակցութեան հիմնադրութեան, անդրադարձայ կուսակցութեան նպատակներու իրագործումին՝ նուիրուած տարագիր հայութեան կազմակերպումին, ազգապահպանումին, հայրենիքի կառչածութեան, Հայ Դատի հետապնդումին եւ ռամկավար ազատական գաղափարախօսութեան դաստիարակութեան, նշելով մեր կուսակցութեան մատուցած ծառայութիւնները հայ ժողովուրդին, հայրենիքին, եկեղեցիին եւ հայ մշակոյթին:



Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի հանդիսություն, Պեյրուսի Յոյն ուղղափառ համայնքի սրահ, Նոյեմբեր 1996:

Խօսելով հայրենի անկախ պետականության մասին, ըսի. «Հայրենի Նոր իրականությունը՝ անկախության գործընթացը, անտարակոյս անկիւնադարձային ու պատմական իրադրություն մըն է, որ հայ ժողովուրդը դրած է Նոր հրամայականներու ու մարտահրաւերներու առջեւ, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ... Ռ.Ա.Կ.-ը ջատագովն է անկախության այս գործընթացին, ո՛չ միայն անոր համար որ Հայաստանը անկախ է եւ ինքնիշխան, այլեւ՝ քանի որ որդեգրած է ռամկավարական սկզբունքները, ժողովրդավարական հիմունքները, ազատական ուղեցոյցները, որոնք կը կազմեն անխզելի օղակները ազատ շուկայական լծակներուն, սեփականաշնորհման, բազմակարծության ու բազմակուսակցական դրության որդեգրելի եւ իրագործելի հնարաւորութիւններուն: ...Ռ.Ա.Կ.-ը իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ հայրենի պետականության զօրացման եւ այն բոլոր գործօններուն նկատմամբ, որոնք հայրենի պետութիւնը կը պահեն ժողովրդավարական կարգերու մակարդակին, ազատական ռամկավարության հիմունքներով, այն նախանձախնդրութեամբ, որ ժողովրդային ու հանրային բարեկարգումները կը մնան անխուսափելի լծակները հայրենի իշխանութիւններուն»:

Հանդիսության աւարտին բեմ հրաւիրեցինք վարչապետ **Ռաֆիք Հարիրին** եւ զինք պարգևատրեցինք Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակին առիթով յատուկ պատրաստուած ոսկեայ տառերով յուշանուէր-ցուցատախտակով մը:



Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի եւ Լիբանանի անկախութեան 53րդ տարեդարձի յորելենական ճաշկերոյթը: Արամ Ա. Կաթողիկոս կը դիմաւորուի մեր կողմէ: Ձախէն աջ՝ ընկերներ Շահէ Ահարոնեան, Էտի Պահատրեան եւ Կարապետ Պապահէքեան, Արամ Ա. Վեհափառ, Գեղամ Եպս. Խաչերեան, ընկ. Յովսէփ Էմիրեան, ես եւ տիկինս՝ Անին, 1996:

Բարձր հովանաւորութեամբ Լիբանանի Նահատակ վարչապետ **Ռաֆիք Յարիրիի**, Լիբանանի անկախութեան 53րդ եւ կուսակցութեան 75 ամեակին Նուիրուած յորելենական ճաշկերոյթ մըն ալ տեղի ունեցաւ Պէյրութի Զոմոտոր պանդոկի շքեղ սրահին մէջ, 21 Նոյեմբեր 1996ին: Գալովորոյթին մասնակցեցան վարչապետ **Յարիրիի** Ներկայացուցիչ, Լիբանանի ապագայ վարչապետ **Ֆուատ Սինիորա**, Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա. Կաթողիկոս**, Արհ. ու Գեր. **Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան** Կաթողիկոս-Պատրիարք Կաթողիկէ Հայոց, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վեր. **Յովհաննէս Գարճեանի** Ներկայացուցիչ՝ Վեր. **Աբրահամ Սարգիսեան**, Հոգ. Տ. **Գեղամ Վրդ. Խաչերեան** (աւելի ուշ՝ Առաջնորդ Լիբանանահայոց Թեմի), Կաթողիկէ Հայոց Թեմի Առաջնորդ **Վարդան Աշգարեան**, Նախարարներ **Յակոբ Տեմիրճեան**, **Շահէ Պարսումեան** եւ **Պըշարա Մըրիէժ**, Երեսփոխաններ **Ժորժ Զասարժի**, Տոթթ. **Եղիկ ճերճեան**, **Աբրահամ Տետեան**, **Միշէլ Ֆարաոն** եւ **Հապիպ Հաքիմ**, Նախկին Երեսփոխաններ **Սուրէն Խանամիրեան** եւ **Արա Երեւանեան**, Սին



Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի յոբելենական կարկանդակը կը հաւտենք Հայաստանի դեսպան Երուանդ Մելքոնեանի եւ Նախկին վարչապետ Ֆուատ Սինիորայի հետ, 1996:

Էլ-Ֆիլի քաղաքապետարանէն **Վարդիվառ Տէր Գալուստեան**, կուսակցութեանց ներկայացուցիչներ, Թ.Մ.Մ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի ղեկավարներ, հայրենի երեսփոխաններ **Վիգէն Խաչատրեան** եւ **Էդուարդ Եգորեան**, ինչպէս նաեւ պատուարժան այլ հիւրեր: Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակը ողջունած էին Հայաստանի Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան**, Ամենայն Հայոց **Գարեգին Ա.** Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա.** Կաթողիկոս, հայ յարանուանութեանց պետեր եւ հայրենի կուսակցապետեր:

Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան** իր շնորհաւորագրին մէջ գրած էր. «...Ռ.Ա.Կ.-ը, ինչպէս եւ ազգային-հասարակական այլ առողջ ուժերը, ամենայն վճռականութեամբ կանգնեցին հայրենի նորանկախ պետականութեան կայացման եւ ամրապնդման գործընթացին սատարողների շարքում եւ իրենց շօշափելի ներդրումն ունեցան սփիւռքահայութեան դէպի ազատ հայրենիք կողմնորոշելու, Հայաստանի Հանրապետութիւնում սոցիալ-տնտեսական վերափոխութիւններ անցկացնող իշխանութիւններին սատարելու գործում»:

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչության Պատուիրակության Այցելությունը Հիւսիսային Ամերիկա եւ Գանատա 1997ին

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչությունը պատուիրակութեամբ մը, որուն մաս կը կազմէինք ընկերներ **Պարոյր Աղպաշեան, Հրաչ Գումրուեան** եւ ես Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի կուսակցական շրջանակներու եւ ազգային-քաղաքական ու եկեղեցական կառոյցներու ղեկավարներու հետ տեսակցութիւններ ունենալու նպատակով ձեռնարկեց պաշտօնական այցելութեան մը: Պատուիրակութեան միացան Կեդրոնական Վարչութեան ամերիկաբնակ անդամներ ընկ. **Տոթթ. Գեորգ Բէշիշեան**, ընկ.հի **Իրմա Տեր Ստեփանեան** եւ Արեւմտեան Ափի մէջ՝ ընկ. **Փանոս Բէշիշեան**: Շրջապտոյտը սկսաւ 25 Ապրիլին եւ շարունակուեցաւ մինչեւ 11 Մայիս 1997:

Կեդրոնական Վարչությունը կը փափաքէր մօտէն ծանօթանալ կուսակցական կառոյցներու գործունեութեան, խորհրդակցութիւններ ունենալ մեր շրջանակներու պատասխանատու ընկերներու հետ եւ ներդաշնակել ազգային-եկեղեցական հաստատութիւններու եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ համագործակցութիւնն ու ընդհանուր աշխատանքները: Յարակցաբար, մտադրած էինք նաեւ բանակցութիւններ վարել կուսակցական ընդդիմութեան հետ: Առ այդ, ընդառաջելով ընկ. **Հրաչ Գումրուեանի** խնդրանքին, որով փափաք յայտնած էր օգտակար ըլլալ հաշտութեան բանակցութիւններուն, զինք նոյնպէս հրաւիրած էի մաս կազմելու մեր պատուիրակութեան եւ հաշտութեան նպատակով բանակցութիւններու մէջ մտնելու միւս կողմին հետ: Սակայն աւելի ուշ պարզ դարձաւ թէ ան առաւելաբար Կեդրոնական Վարչութեան ատենապետ կարգուելու ուղղութեամբ բանակցութիւններ վարած է անոնց հետ:

Նիւ Եորք-Նիւ Ճըրզիի, Լոս Անճելըսի, Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Օթաւայի մէջ տեղի ունեցած հանդիպումները շատ գործնական եւ ոգեւորիչ էին: Հրապարակային ելոյթներ, ծանօթութիւններ, ժողովներ եւ մտերմիկ զրոյցներ իրարու կը յաջորդէին:

Նիւ Ճըրզիի «Փալիսետիում» շքեղ սրահին մէջ, նախաձեռնութեամբ Ռ.Ա.Կ. Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային Վարչութեան, 26 Ապրիլին, ի պատիւ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան, տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Ս.Դ.Հ.Կ.-ի, Հ.Յ.Դ.-ի եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայաստանի դեսպանութեան հաւատարմատար **Մովսէս Աբելեան**: Եղան



Ռ.Ա.Կ.-ի Հայ Իրաւանց Խորհուրդի ատենապետուհի եւ Հայկական Համագումարի Գործադիր Վարչութեան Նախագահուհի ընկ.հի Անի Թոթաիի կազմակերպած ճաշկերոյթի ընթացքին: Աջէն ձախ՝ ընկ. Երուանդ Ազատեան, ես եւ տիկինս, ընկ. ընկ. Վարդգէս Պալեան եւ Միհրան Մինասեան, Ուաշինկթըն, 1997:

մեր պատուիրակութեան այցելութիւնը ողջունող խօսքեր: Արտայայտուեցայ նաեւ ես: Խօսեցայ կուսակցութեան ապագայ դերակատարութեան մասին, մանաւանդ ազգային-քաղաքական խոր իրողութիւններու լոյսին տակ, ի միջ այլոց յայտնելով. «...Հիմնովին վերանորոգ որակով գործունեութեան լայնատարած ասպարէզ մը կը բացուի Ռամկավար Ազատական Կուսակցութեան առջեւ: Մենք պետք է կարենանք ծրագրել այնպէս, որ նուիրական մեր կուսակցութիւնը վերաճելով, կարենայ ընդգրկել մեր ժողովուրդին բոլոր խաւերը, որոնք գերծ կը մնան ծայրայեղական մոլուցքներէ: Հարկաւոր է որ կարենանք ռամկավարական եւ ազատական ըմբռնումներուն, սկզբունքներուն եւ գործելակերպին բաժանորդագրել, գէթ ընդհանրական սահմաններու մէջ, մեր ժողովուրդին ամենալայն հատուածները: Հարկաւոր է որ կուսակցութիւնը տանինք դէպի ժողովուրդ, ամենէն այժմեական եւ ազդու միջոցներու եւ եղանակներու որոնումով եւ որդեգրումով: Հարկաւոր է որ անսայթաք կերպով ընդառաջ երթանք ժամանակի հզօր այս հրամայականին: Ահա՛, այս ալ պետք է ըլլայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան այսօրուան գլխաւոր մտասէւեռումը»:



Ընկերեսմէն Էստուըրտ Փորթըրի հետ, Ուաշինկթըն, 1997:

Այդ օրը Ռ.Ա.Կ.-ի Վաստակի Պատուոյ Վկայագիր ստացան Թ.Մ.Մ.-ի Ամերիկայի Շրջանակի հիմնադիրներէն հասարակական գործիչ ու խմբագիր ողբացեալ ընկեր **Անդրանիկ Փոլատեան** եւ Ռ.Ա.Կ. Արեւելեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Յակոբ Վարդիվառեան**:

Յաջորդ օրը, «Հայ Տուն»-ի մէջ դարձեալ կազմակերպուած էր ընդունելութիւն մը, որուն ընթացքին «Չարթօնք»-ի պատասխանատու-խմբագիր ընկ. **Պարոյր Աղպաշեան** յուզիչ ելոյթ մը ունեցաւ նորոգ հանգուցեալ ընկերներ **Մեթր Հրաչեայ Սեդրակեանի** եւ **Շահէ Ահարոնեանի** մասին: Ռ.Ա.Կ. Նիւ Եորք-Նիւ Ընրզիի Արմենական-Յովսէփեան Ակումբի կազմակերպած այս ընդունելութեան ընթացքին իմ եւ ընկ. **Յակոբ Վարդիվառեանի** կնքահայրութեամբ տեղի ունեցաւ նաեւ նորագիրներու երդմանառութիւնը:

Մեր պատուիրակութեան այցելութիւններու ծիրին մէջ, Ապրիլ 28ին կարեւոր տեսակցութիւն մը ունեցանք Հ.Բ.Ը. Միութեան նախագահուհի **Լուիզ Մանուկեան-Սիմոնի** հետ, որուն ներկայ գտնուեցան Միութեան ատենի փոխ-նախագահ-ատենադպիր Մեթր **Պերճ Սեդրակեան** եւ **Գարեգին Արք. Ներսիսեան**: Սիրալիր ու ջերմ բարեկամական մթնոլորտի մէջ անցած հանդիպումին ընթացքին քննարկեցինք ազգային, հայրենական եւ եկեղեցական հարցեր, անդրադարձանք նաեւ Հ.Բ.Ը.Մ.-Ռ.Ա.Կ. յարաբերու-

թիւներուն: Արծարծուող հարցերուն մասին տեսակետներու նոյնութիւն մը կար, մանաւանդ հայրենի պետութեան ապահովութեան եւ մեր ժողովուրդի բարօրութեան ապահովման հարցերու առնչութեամբ: Լուրջ քննարկումի ենթարկեցինք նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Յ.Բ.Ը.Մ.-Ռ.Ա.Կ ամուր ճակատին պահպանման եւ զօրացման հարցերը:

Տեսակցութիւններ ունեցանք նաեւ Արեւելեան Թեմի Առաջնորդ **Խաժակ Արք. Պարսամեանի**, Յ.Բ.Ը.Միութեան փոխ-նախագահ-գանձապահ **Նազար Նազարեանի** եւ ազգային բարերար **Սուրեն Ֆեւճեանի** հետ: Ուաշինկթընի մէջ տեսակցութիւն մը ունեցանք Ուաշինկթընի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան **Ռուբեն Շուգարեանի** հետ: Շուրջ մէկ ժամ տեւած տեսակցութեան ընթացքին դեսպանին հետ քննարկեցինք հայրենիքն ու հայութիւնը յուզող բազմաթիւ հարցեր: Մենք մեր պատրաստակամութիւնը յայտնեցինք շարունակելու մեր աջակցութիւնը հայրենի պետութեան: Տեսակցութիւններ ունեցանք նաեւ Թ.Մ.Մ. Ամերիկայի եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. **Վարդգէս Պալեանի**, Ամերիկայի Հայկական Համագումարի Գործադիր Վարչութեան նախագահ **Անի Թորթաի** հետ: Այս վերջնոյն ուղեկցութեամբ հանդիպումներ ունեցանք ԵԱՀԿ Հելսինքիի խումբի նախկին համանախագահ եւ քննկրեսմէն **Սթենի Հոյլընտի**, վարչական խորհրդատու **Փիթըր Մարուքասի**, Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբի անդամ, Դեմոկրատ **Փոլ Սարպանեսի** հետ: **Անի Թորթաի** իր տան մէջ կազմակերպեց ճաշկերոյթ մը, որուն ներկայ գտնուեցան Ծերակոյտի անդամներ:

Լոս Անճելըս կատարած մեր պատուիրակութեան այցելութիւնը ընթացաւ երկու հանգրուաններով՝ Մայիս 1-4 եւ 8-11 օրերուն: Հոս նոյնպէս հանդիպումներ ունեցանք կուսակցական մեր Շրջանակին, ինչպէս նաեւ ազգային-եկեղեցական մարմիններու եւ հայ դիւանագետներու հետ: Արեւմտեան Ամերիկայի Թեմի Առաջնորդ **Վաչէ Արք. Յովսէփեանի** հետ հանդիպումէն ետք այցելեցինք Յ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան, ուր դիմաւորուեցանք Հոգաբարձութեան ատենապետ **Սիւսան Սիւսանեանի** եւ անդամներու կողմէ:

Թ.Մ.Մ. Պէշկեօթիլիւրեան հանդիսասարահին մէջ հանդիպում մը ունեցանք Լոս Անճելըսի Ռ.Ա.Կ.-ի անդամակցութեան հետ: Ռ.Ա.Կ. Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Արա Ահարոնեանի** բացման խօսքէն ետք համապարփակ զեկուցում մը տուի կուսակցութեան գործունեութեան եւ որդեգրած քաղաքականութեան մասին: Խօսեցան նաեւ ընկերներ **Պարոյր Աղպաշեան** եւ **Հրաչ Գումրուեան**: Յաջորդ օրը ներկայ գտնուեցանք Ռ.Ա.Կ. Ամերիկայի Արեւմտեան Շրջանակի 76րդ Շրջանային Պատգամաւորական

Ժողովին: Մայիս 10ին Նոյն կեդրոնին մեջ մեր պատուիրակության ի պատիւ տեղի ունեցաւ հրաժեշտի խրախճանք մը:

Գանատաւ այցելութիւնը սկսաւ Մոնթրէալի մեջ Մայիս 4ին տեղի ունեցած ճաշկերոյթ-խրախճանքով, ի պատիւ մեր պատուիրակության, որուն հրաւիրուած էին գաղութահայ ներկայացուցիչներ: Բացման խօսքը ըրաւ Ռ.Ա.Կ. Շրջանային Վարչութեան անդամ ընկ. **Գեորգ Մանուկեան**: Յաջորդօրը տեղի ունեցաւ Ռ.Ա.Կ. **Բարունակ Թովմասեան** Նորաստեղծ ակումբին հիմնադրութիւնը: Ընկերներուն ներկայացուցի կուսակցութեան գործունեութիւնը, վերջին շրջանի զարգացումները, Հայաստանի նկատմամբ մեր դիրքը եւ մեր պարտականութիւնները:

Նորագիրներուն եւ Նորաստեղծ ակումբի անդամներուն դիմելով, ըսի. *«Ռամկավար Ազատական Կուսակցութեան համար ընդհանրապէս եւ ձեզի համար մասնաւորապէս, այսօր ցնծութեան օր մըն է, որովհետեւ գանատահայ այս գաղութին մեջ կը բացուի այս շքեղ սրահը, ուր պիտի ունենաք ազգային-բաղաբական, մշակութային-կուսակցական եւ հասարակական-ընկերային եռուն գործունեութիւն մը: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող մեր պատուիրակութիւնը, անշուշտ, պատիւն ունի ինք պաշտօնապէս բացումը կատարելու այս կառոյցին եւ գոհունակութիւնը՝ որ անձամբ ներկայ է այս հոգեպարար արարողութեան»:* Վերերանի վկայականներու տուչութիւն ալ կատարեցինք այդ օրը, որուն ընթացքին Ռ.Ա.Կ.-ի Վաստակի Պատուոյ Վկայագիր յանձնեցինք ազգային-հասարակական գործիչ, գրող եւ հրապարակագիր ընկ. **Հայկ Նազգաշեան**ին, որ իր կարգին տպաւորիչ ելոյթ մը ունեցաւ:

Մեր պատուիրակութիւնը Օթաւայի կուսակցական շրջանակին կողմէ արժանացաւ յատուկ ընդունելութեան մը, մանաւանդ Նորաստեղծ Գերսամ Ահարոնեան Ակումբի անդամներէն ընկ. **Վարուժան Աւետիսեան**ի գլխաւորութեամբ: Հոս Նոյնպէս, մեր այցելութեան առիթով, եւ հակառակ փոքրաթիւ գաղութ մը ըլլալուն, Նորագիրներ միացան մեր շարքերուն: Այցելութիւն մը տուինք Նաեւ Հայաստանի դեսպան **Գառնիկ Նանագուլեան**ին:

Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ի սրահին մեջ, Մայիս 6ին, Ռ.Ա.Կ. Եսայի Եաղուպեան Ակումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Նաեւ բազմաթիւ հիւրեր: Ակումբի ատենապետ ընկ. **Վազգէն Տօքմեճեան** ողջունեց Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան այցելութիւնը: Խօսք առնելով անդրադարձաւ կուսակցութեան ներկայ վիճակին, Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին մեր պարտականութիւններուն եւ շեշտեցի անհրաժեշտութիւնը վերանորոգ հաւատքով ծառայելու հայրենիքին եւ հայ ժողովուրդին:

«ՉԱՐԹՕՆՔ»Ի 60 ԵՆ Թ.Մ.Մ.-Ի 50 Ամեակներու Նշում

Մեր պաշտօնաթերթ «Չարթօնք»ի 60 եւ Թ.Մ.Մ.-ի 50 ամեակները հանդիսաւորապէս նշեցինք 21 Նոյեմբեր 1997ին, Պէյրութի Պրիսթոլ պանդոկի շքեղ սրահին մէջ տեղի ունեցած յոբելեական ճաշկերոյթով մը:

Լիբանանի փոխ-վարչապետ **Միշէլ Մըրրի** հովանաւորութիւնը վայելող յոբելեական ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա.** Կաթողիկոսը, Լիբանանահայոց Թեմի Առաջնորդ **Գեղամ Եպս. Խաչերեանը**, ՄԱՅԱԵ Միութեան նախագահ Վեր. **Յովհաննէս Գարճեանը**, Հայ Կաթողիկէ համայնքէն Գերպ. **Վարդան Եպս. Ազգարեանը**: Ներկայ էին նաեւ Հայաստանի Մշակոյթի նախարար **Արմէն Սմբատեանը**, Երեսփոխան **Շաքեր Ապու Սլէյմանը**, Հայաստանի դեսպան **Երուանդ Մելքոնեանը**, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ **Հրանդ Մաթեւոսեանը**, Լիբանանի Մամլոյ Սենտիքայի նախագահ **Մուհամմատ Պաալպէին**, Խմբագիրներու Սենտիքայի նախագահ **Մըլիքէմ Զարամը**, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ **Վահրիճ Ճերեճեանը**, Հ.Բ.Ը. Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ **Աւետիս Տէմիրճեանը**, Սին Էլ-Ֆիլի քաղաքապետարանի անդամ **Վարդիվառ Տեր Գալուստեանը**, նախկին երեսփոխան **Սուրէն Խանամիրեանը**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի, Գրական Շրջանակի ղեկավար դէմքեր, հայրենի մտաւորականներ, արուեստագետներ, ինչպէս նաեւ գործարարներ եւ ընտրանի մը: Հայրենի ներկայացուցիչներու շարքին կը գտնուէին նաեւ մտաւորականներ **Վազգէն Գաբրիէլեանը**, **Սամուէլ Մուրատեանը**, **Դաւիթ Գասպարեան**ն ու դաշնակահարուհի **Սվետլանա Նաւասարդեանը**:

Արաբերէն լեզուով խօսք առաւ Թ.Մ.Մ.-ի վարչականներէն ընկ. Տոքթ. **Յակոբ Փափազեան**, իսկ հայերէն՝ «Չարթօնք»ի պատասխանատու-խմբագիր ընկ. **Պարոյր Աղպաշեան**: Ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքեր ըսին **Արամ Ա.** Վեհափառը, փոխ-վարչապետ **Միշէլ Մըրրը**, Մամլոյ Սենտիքայի նախագահ **Մուհամմատ Պաալպէին** եւ Խմբագիրներու Սենտիքայի նախագահ **Մըլիքէմ Զարամը**:

Թ.Մ.Մ.-ի 50ամեակի եզրափակիչ հանդիսութիւնը տեղի ունեցաւ 14 Դեկտեմբեր 1997ին, բարձր հովանաւորութեամբ Լիբանանի Մշակոյթի նախարար **Ֆաուզի Հըպէշի**: Իր ներկայութեամբ հանդիսութիւնը պատուեց եւ Հայրապետական Կոնդակ մը ընծայեց Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա.**

Կաթողիկոսը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան նաեւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. **Յովհաննէս Գարճեանը**, Հայ Կաթողիկէ Հոգեւոր Տիրոջ ներկայացուցիչ՝ Չմմառու վանքի մեծաւոր Գեր. **ճորճ Խազումեանը**, Լիբանանահայոց Առաջնորդ Հոգ. **Գեղամ Ծ. Վրդ. Խաչերեանը**, Նախարար **Շահէ Պարսումեանը**, երեսփոխաններ **Հապիպ Հաքիմը**, **Հիւսէյն Եաթիմը**, **Պահաւետոսին Իթանին**, **Ժամիլ Շամմասը**, **Խաչիկ Պապիկեանը**, **Եղիկ Ճերեճեանը**, **Աբրահամ Տետեանը**, **Ժաք Զուխատարեանը**, Լիբանանի ազգային բանակի հրամանատարի ներկայացուցիչը, վարչապետ **Հարիրիի** գրասենեակի տնօրէն եւ Մշակութային Համախմբումի նախագահ **Հիւսնի Մաժգուպը**, նախկին երեսփոխաններ **Սուրէն Խանամիրեանն** ու **Նուրիճան Տեմիրճեանը**, Հայաստանի դեսպան **Երուանդ Մելքոնեանը**, Լիբանանի Կեդրոնական Դրամատան փոխ-կառավարիչ **Յարութին Սամուէլեանը**, Ս.Դ.Հ.Կ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ **Վահրիճ Ճերեճեանը**, Սին Էլ-Ֆիլի քաղաքապետարանի անդամ **Վարդիվառ Տէր Գալուստեանը**, Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ **Սարգիս Տեմիրճեանը**, Լիբանանահայ Գրական Շրջանակի նախագահ Մերթ **Գասպար Տէրտէրեանը**, Հայր **Անդրանիկ Կռանեանը**, Վեր. **Ս. Զիլադպեանը**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Հ.Ե.Ը.-ի



Ձաթթօթ-ի 60 եւ Թ.Մ.Մ.-ի 50 ամեակի կարկանդակի հատում: Աջէն ձախ՝ ընկ. Պարոյր Աղպաշեան, Մամլոյ Սենտիքայի նախագահ Սուհամնատ Պապլպէի, ես, Միշէլ Սըրրի եւ ընկերներ Գրիգոր Տեկիրմէնճեան ու Կարապետ Պապահէթեան, Պէյրութ, 1997:

ղեկավարներ եւ անդամներ, տնօրէններ, մտաւորականներ եւ ընտրանի բազմութիւն մը:

Հանդիսութեան բացման խօսքը ըրաւ ընկ. Դոկտ. **Հրաչ Գումրուեանը**, ինչպէս նաեւ այս առիթով ելոյթ ունեցաւ Սուրիոյ եւ Յորդանանի Թ.Մ.Մ.-ի ատենապետ ընկ. Տոքթ. **Գրիգոր Ատանալեանը**: Այս առթիւ պատուեցինք նախարար **Ջըպէշը**, որուն յանձնեցինք 50ամեակի յատուկ յուշանուէր մը՝ ձեռամբ Թ.Մ.Մ. Հիմնադիրներու Մարմնի ատենապետ ընկ. **Կարապետ Պապահեքեանի**: Հանդիսութիւնը եզրափակուեցաւ **Արամ Ա.** Կաթողիկոսի պատգամով: Հանդիսութենէն առաջ, առաւօտեան, այցելութիւն մը տուած էինք Միութեան հիմնադիրներու շիրիմներուն՝ յարգանքի մեր տուրքը մատուցանելու անոնց յիշատակին:



*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի հետ,
Անթիլիաս:*

Այցելություններ Յունաստան եւ Հարաւային Ամերիկա

Ռ.Ա.Կ.-ի Յունաստանի Շրջանակին հրաւերով, ընկ. **Հրաչ Գումրուեանի** ընկերակցութեամբ Յունուար 1998ին Աթէնք մեկնեցայ ներկայ գտնուելու «Արարատ» Մշակութային Մարզական Միութեան շէնքին բացումին, որ տեղի ունեցաւ 25 Յունուար 1998ին: Հարաւային Ամերիկայէն մեզի միացաւ նաեւ Ռ.Ա.Կ. Հարաւային Ամերիկայի Պատուոյ Նախագահ ընկ. **Նահապետ Նահապետեան**: Նորակառոյց կեդրոնը իրագործումն էր Ռ.Ա.Կ.-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի միացեալ ճիգերուն եւ ներդրումին:

Հ.Բ.Ը.Մ.-Արարատ Մշակութային Մարզական Միութեան նոր կեդրոնի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Յունաստանի Միջավայրի եւ Հանրային Շինութեանց նախարարը, Հ.Բ.Ը.Մ.-ի փոխ-նախագահ եւ ատենադպիր Մեթր **Պերճ Սեդրակեանը**, Յունահայոց Թեմի Առաջնորդ



Հ.Բ.Ը.Մ.-Արարատ Մարզական Մշակութային Միութեան կեդրոնի բացում: Աջէն ձախ՝ ընկ. Նահապետ Նահապետեան, ես, Պերճ Սեդրակեան, դեսպան Արման Կիրակոսեան եւ ընկ. Հրաչ Գումրուեան, Աթէնք, 1998:



«Արարատ» Մշակութային Մարզական Միության շէքի բացում. ընկ. Նահապետ Նահապետեանի եւ Պերճ Սեդրակեանի հետ, Աթէնք, 1998:

Գերշ. Ոսկան Արք. Գալփաբեանը, Հայաստանի դեսպան **Արման Կիրակոսեանը**, Յունաստանի կուսակցութիւններու ներկայացուցիչներ, երեսփոխաններ, քաղաքապետեր, ինչպէս նաեւ յունահայ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Կեդրոնի բացման ժապաւենի հատումը կատարեցին Զ.Բ.Ը.Մ.-ի փոխնախագահ եւ ատենադպիր Մերձ **Պերճ Սեդրակեան** եւ ընկ. **Գրիգոր Խաչատուրեան**, որուն յաջորդեց «Անանիա եւ Վարդուի խաչատուրեան» սրահի յուշատախտակի քօղազերծումը ձեռամբ ընկ. **Խաչատուրեանի**: Քօղազերծումը կատարուեցաւ նաեւ ընկ. **Սիսակ եւ Աշիւն Քաջիկեան**ներու անունը կրող «Արարատ» Մշակութային Մարզական Միութեան վարչութեան գրասենեակի եւ «Մկրտիչ Փափագեան» մարզադաշտի յուշատախտակներուն:

Յատուկ ելոյթ մը ունեցայ բացումին առիթով, ի միջի այլոց ըսելով. *«Այսօր մեզի համար գօտեակոյիչ զգացում է, որ «Հին Աստուածներու» աշխարհ՝ մայրաքաղաք Աթէնքի մէջ, մեր շրջանակը կ'ունենայ իր նոր արդիական ու շքեղ կեդրոնատեղին՝ «Արարատ» Մշակութային Մարզական Միութիւնը, որ շքեղ իրագործում մըն է, համագործակցութեամբը՝ արտաշխարհի մեծագոյն համազգային կազմակերպութեան՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր*

Միութեան»: Անդրադարձայ նաեւ Հայաստանի, Արցախի, Սփիւռքի եւ եկեղեցւոյ հիմնահարցերու:

«Արարատ» Մշակութային Մարզական Միութիւնը, որ Ռ.Ա.Կ.-ի դաւանանքին հետեւող կազմակերպութիւն է, տարիներ շարունակ գործած է Յունաստանի մէջ վայելելով Հ.Բ.Ը.Մ.-ի հովանաւորութիւնը եւ իր հերթին ջատագովը եղած է մեր Միութեան գործունեութեան: Ընկ. **Գրիգոր Խաչատուրեանի** նուիրատուութեան շնորհիւ է որ արդիականացած եւ ժամանակակից յարմարութիւններով օժտուած էր կեդրոնը: Քնահատելով Յունաստանի Ռ.Ա.Կ.-ի Շրջանային Վարչութիւնը, խորհրդանշական զինանշան մը յանձնեցի ատենապետ ընկ. **Տիգրան Զաքիկեանին**, ինչպէս նաեւ կուսակցական զինանշանով պարգեւատրեցի ընկ. **Սարգիս Խաչատուրեանը** իր տարիներու կուսակցական վաստակին համար: Թեքեան Մշակութային Միութեան Յիսնամեայ Պատուոյ Յուշատախտակ մըն ալ յանձնեցի «Արարատ»ի ատենապետ ընկ. **Յովհաննես Զուլեանին**:

«Արարատ» Մշակութային Միութեան կատարած ներդրումը մեծ եղած էր կեդրոնի կառուցման գործին մէջ, կազմելով ընդհանուր գումարին երկու երրորդը: Միութիւնը վստահելով Հ.Բ.Ը. Միութեան, կեդրոնը դարձուցած էր Հ.Բ.Ը.Մ.-ի սեփականութիւնը: Կեդրոնի ծրագրի իրագործումին իրենց կարեւոր մասնակցութիւնը բերած են նաեւ ընկերներ **Գրիգոր Գալայճեանը, Յովհաննես Առաքելեանը, Յակոբ Ֆեսճեանը** եւ ուրիշներ:

1998ին, իբրեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ, Պուլէնոս Այրէս հրաւիրուեցայ նախագահելու տեղւոյն Թ.Մ.Մ. «Սուրէն եւ Վերճինիա Ֆեսճեան» կեդրոնի բացման արարողութեան, որ տեղի ունեցաւ Մարտ 29ին: Հարաւային Ամերիկայի մեր շրջանակին համար կարեւոր այս իրադարձութեան առիթով յատուկ ելոյթ մը ունեցայ: Բացումին հրաւիրուած էին նաեւ ընկերներ **Միսաք Հայկենց** եւ **Յակոբ Վարդիվառեան**: Հարաւային Ամերիկա այցելութեան առիթը թէւ բացումին ներկայ ըլլալն էր, բայց նաեւ Արժանքինի, Ուրուկուէյի եւ Պրագիլի մեր շրջանակներուն մօտէն ծանօթանալու նպատակ ունէր:

Նոր կեդրոնին շինութեան ծախսերուն կարեւոր մասը տրամադրած էր Միացեալ Նահանգներէն բարերար **Սուրէն Ֆեսճեան**, բայց նաեւ մասնակցութիւն բերած էին արժանքինահայ այլ ազգայիններ: Կեդրոնին մէջ կը գործէ «Սարդարապատ» շաբաթաթերթի խմբագրութիւնը: Հարաւային Ամերիկայի մեր շրջանակը արժանի էր նման նորակառոյց կեդրոնի մը:

Բացի մեր անմիջական շրջանակէն, հանդիպումներ ունեցայ Հ.Բ.Ը.Մ.-ի, թեմակալ առաջնորդներու եւ գաղութային այլ մարմիններու ներկայացուցիչներու հետ: Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակը, յատուկ հրաւեր մը ուղղելով ինծի,



Հանդիպում Պուլենոս Այրեսի Յ.Բ.Ը.Մ.-ի շրջանակին հետ, 1998:

բարձր մակարդակի ընդունելություն մը կազմակերպեց իմ այցելութեան առիթով: Հանդիպման ընթացքին մեծապէս գնահատեցի իրենց հայրենասիրական գործունեութիւնը, իսկ իրենք ալ շնորհաւորեցին զիս Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընտրուելու առիթով:

Ուրուկուէյ այցելութեան ընթացքին, ընկերակցութեամբ ընկ. Օհան **Պոտրումեանի**, տեսակցութիւն մը ունեցայ երկրի խորհրդարանի նախագահ **Խայմէ Թրոպոյի** հետ: Ընկ. **Օհան Պոտրումեան**, որ այն ատեն Յ.Բ.Ը.Մ.-ի վարժարանին տնօրէնն էր, այցելութիւն մը կազմակերպեց նաեւ Յ.Բ.Ը.Մ.-ի դպրոց եւ կեդրոն, ուր հանդիսութիւն մըն տեղի ունեցաւ դպրոցի աշակերտութեան մասնակցութեամբ:

Պրագիլ այցելութիւնը նոյնպէս օգտակար եղաւ մեր շրջանակին ծանօթանալու տեսակէտէ: Ընկ. **Օշին Մոստիչեանի** ընկերակցութեամբ այցելեցի Յ.Բ.Ը.Մ.-ի կեդրոն եւ հանդիպումներ ունեցայ գաղութի ներկայացուցիչներուն հետ: Սքանչելի տպաւորութիւններ ստացայ հեռաւոր այդ ակերտուն մէջ հայրենասիրական բարձր ոգիով գործող մեր միութիւններու եւ կուսակցական շրջանակի խանդավառ գործունեութենէն:



Պուևոս Այրեի Թ.Մ.Մ.-ի Սուրեն և Վերժինիա Ֆեռնան Կեդրոնի բացում: Աջից ձախ՝ Ռուբեն և
Էլսա Քեշիշեաններ, ընկ. Սերիօ Նահապետեան, ընկ.ուհի Տիանա Տեր Կարապետեան, Պարգել
Տեր Կարապետեան, Ես, Լուսաճին Տեր Կարապետեան, ընկ.ուհի Սուսաննա Տեր
Կարապետեան,տիկին, ընկ. Միսաք Հայկենց, ընկ.հի Պարտիկե Նահապետեան, ընկ.
Նահապետ Նահապետեան, տեր և տիկին Արաքսի և ժերար Չերահեան, Պուևոս Այրե, 1998:



Այցելութիւն Ուրուկույէի Առաջնորդ Յակոբ Եպս. Գըլճեանին: Աջէն ձախ՝ Ա. շարք. տիկինս, Ես եւ Առաջնորդ Սրբազանը: Բ. շարք՝ ընկ. եւ տիկին Օհան եւ Սիլվա Պոտրումեաններ, Մոնթեվիտո, 1998:



Ուրուկուէի խորհրդարանի նախագահ Խայսէ Թրոպոյի հետ, Մոնթեվիտո, 1998:



*Հանդիպում Պրագիլահայոց Թեմի Առաջնորդ Տաթև Արք.
Ղարիպեանի հետ: Չախեն աջ՝ ընկ. Օշին Մոստիչեան, Սիւզի
Մոստիչեան, ես, Տաթև Արք. Ղարիպեան, Ժերար Չերախեան,
տիկինս եւ Արաքսի Չերախեան, Սան Փաուլո, 1998:*

Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի Ակումբներու Միացեալ Ժողով

23 Յունիս 1996ին, Լիոնի եւ ապա Փարիզի Յ.Բ.Ը.Մ.-ի Ալեք Մանուկեան կեդրոններուն մէջ տեղի ունեցած Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակի ակումբներու միացեալ ժողովը նոր ոգեւորութիւն ստեղծեց եւրոպայի մեր ակումբներու գործունեութեան համար: Ժողովին մասնակցելու համար մեկնեցայ Ֆրանսա: Փարիզի Արշակ Զօպանեան, Լիոնի Միհրան Տամատեան, Վալանսի Զրաչ Երուանդ, Մարսելի Յակոբ Կօշկարեան եւ Ժընեւի ու Վիենի ակումբներու գործունեութիւնները յաջողութիւններ արձանագրած էին մանաւանդ Ֆրանսայի քաղաքապետութիւններու ընտրութիւններուն ընթացքին: Վալանսէն երեք ընկերներ եւ Ալֆորվիլէն ընկեր մը մաս կազմած էին քաղաքային վարչութիւններու:

Այս կարեւոր ժողովին, որուն կը մասնակցէին Եւրոպայի զանազան քաղաքներէն ժամանած մեծ թիւով ընկերներ, բացումը կատարեց Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Վազգէն Էսքիճեան**: Ժողովին ներկայացուեցաւ ակումբներու աշխոյժ գործունեութիւնը: Ժողովականները իրենց ամբողջական զօրակցութիւնը յայտնեցին Կեդրոնին եւ խստօրէն դատապարտեցին պառակտիչները: Խօսքիս մէջ գնահատեցի այս հաւաքը, ներկայացուցի ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորականին յաջորդած մեր գործունեութիւնը, պատասխանելով ընկերներու հարցումներուն: Ընկերներ **Կարապետ Սայապալեան**՝ Յակոբ Կօշկարեան Ակումբ, Մարսել, **Կարապետ Փալթոպետրոսեան**՝ Միհրան Տամատեան Ակումբ, Լիոն, **ԺոզէՖ Տիմիճեան**՝ Զրաչ Երուանդ Ակումբ, Վալանս, **Յակոբ Աւագեան** եւ **Արտէն ՇելլէՖեան**՝ Ժընեւի Ակումբ, իրենց հաւատարմութիւնը յայտնեցին կուսակցութեան ուղեգիծին եւ Կեդրոնին:

Տարբեր ժամանակաշրջաններու մէջ Ռ.Ա.Կ. Ֆրանսայի եւ ընդհանրապէս Եւրոպայի կառոյցներու կուսակցական կեանքը կազմակերպելու տեսակետէ կարեւոր աշխատանքներ եւ գործուն մասնակցութիւն ունեցած են ընկերներ **Անդրանիկ Զէշիշեանը**, **Լեւոն Զեպապճեանը**, **Տոքթ. Էտի Ադամեանը**, **Արթօ Զամբարձումեանը**, **Նազարէթ Թօփալեանը**, **Վարուժան Կիւրեղեանը**, **Ալեքսի Կեօվճեանը**, **Վարուժան Սիրապեանը**, **Կարապետ Սայապալեանը**, **Կարապետ Փալթոպետրոսեանը**, Վալանսի Փոխ-քաղաքապետ **Նուպար Զէշիշեանը**, **Յակոբ Կօշկարեանը**, **ԺոզէՖ Տիմիճեանը**, **Վազգէն Էսքիճեանը**, **Յակոբ Աւագեանը**, **Արտէն ՇելլէՖեանը**, **Ռաֆֆի Զերմոն Արաքսը** եւայլն:

Ֆրանսայի մեջ կը գործեր կուսակցութիւններու համախմբում մը՝ **Coordination des Organization Politique Armenien** անունով, որուն հետագային միացան նաեւ եկեղեցիները եւ միութիւնները, ստեղծելով **Comitee des Coordination des Organizations de France-CCAF** անունով համախմբումը: Այս կազմակերպութիւններուն եկաւ փոխարինելու առաւելաբար իմ եւ ընկ. **ԼԵՆՈՆ ՔԵԱՊԱԳՃԵԱՆԻ** ճիգերով ստեղծուած հայ կուսակցութիւններու համագործակցութիւն մը՝ Ապրիլ 24 յանձնախումբերը: Սկիզբը ընկ. **ԺԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԿԻՐԵՂԵԱՆ** կը զբաղէր կազմակերպչական հարցերով:

Զօրավար Անդրանիկի աճիւնները Երեւան փոխադրելու առնչութեամբ Ֆրանսահայ գաղութին մեջ շատ մը տարակարծութիւններ կը ծագէին, բաւական աղմուկով: Սկզբնական շրջանէն մինչեւ վերջին պահը մեր կուսակցութեան դիրքը շատ յստակ էր: Զերոսին աճիւնը պետք էր Զայաստան փոխադրել: Բայց եւ այնպէս, խնդիրները բոլորովին տարբեր հոլովոյթ մը առին: Նախ քան Զայաստանի կառավարութեան որոշումը, աճիւններու փոխադրութեան հարցով Ֆրանսայի մեջ կարգ մը կազմակերպութիւններ նախաձեռնարկ եղած էին արդէն, սակայն մեր կուսակցութիւնը որեւէ յանձնառութիւն չէր կատարած: Զայաստանի պետութեան պաշտօնական որոշումէն ետք, առաջին հերթին մեր եկեղեցին էր որ Փարիզի Առաջնորդ **ԳԻՆՈ ՍՐԲԱԳԱՆԻ** նախաձեռնութեամբ հրաւեր դրկեց ազգային երկու կուսակցութիւններուն՝ միասնաբար ժողով գումարելու համար: Ժողովի ընթացքին համաձայն գտնուեցանք սկսելու աճիւնին փոխադրութեան աշխատանքին եւ ձեռնարկեցինք գործնական միջոցներու: Մինչ այդ, սակայն, կարգ մը ազդարարութիւններ եղան բոլորիս անհատներու կողմէ, որոնք կը բողոքէին Զերոսին աճիւնին Զայաստան փոխադրութեան դէմ: Բոլոր միջամտութիւններն ու ազդարարութիւնները անարժէք նկատելով եւ անտեսելով, մենք շարունակեցինք մեր աշխատանքը Առաջնորդ Սրբագան Զօր հետ: Մեր կատարած քայլերէն տեղեակ պահեցինք Զայաստանի պատկան իշխանութիւնները եւ Երեւանէն պատուիրակութիւն մըն ալ եկաւ աճիւնին փոխադրութիւնը պաշտօնապէս կազմակերպելու համար:

90ականներուն Զայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահ **ԼԵՆՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ** յաճախակի այցելութիւններ կու տար Ֆրանսա: Ան տեսակցութիւններ կ'ունենար նախագահ **Ֆրանսուա Միթերանի**, խորհրդարանի նախագահ **Ֆապիուսի**, արտաքին գործոց նախարար **Տիւմայի**, ընդդիմադիր ճակատէն **Շիրաքի** եւ ուրիշներու հետ: Ֆրանսայի հայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ գաղութի անդամներուն հետ հանդիպումներուն պրն. **ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ** կը յայտարարէր թէ պետական մարդոց հետ իր հանդիպումները դրական արդիւնք կ'ունենային եւ մենք գոհունակութիւնը

կ'ունենայինք թե ֆրանսական կառավարության տուած խոստումներն ան ընդհանրապես գոհ կը մնար:

Տէր-Պետրոսեանի հետ մեր կուսակցութեան պատուիրակութիւնը, կազմուած ընկերներ **Արշալիր Կեօնճեանէ, Զայկաշէն Ուզունեանէ, Լեւոն Քեպապճեանէ, Արթօ Զամբարձումեանէ** եւ ինձմէ, 23 Մայիս 1991ին Փարիզի «Ռաֆայէլ» պանդոկին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ մօտ մէկ ժամ տեւողութեամբ: Տեսակցութեան ընթացքին Նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեան** ըսաւ թէ Վրաստան եւ Ատրպէյճան մեզմէ առաջ պատրաստ են անկախութեան գաղափարին ու երբ անկախութեան պատեհութիւնը ստեղծուի, Զայաստան գոնէ տնտեսական իր ոյժով պէտք է կարենայ իր պետութիւնը կանգնել: Այդ տնտեսական ուժի կազմակերպման մէջ կարելոր դեր մը վստահուած է Զայ Սփիւռքին, Զայաստանի մէջ առեւտրական շուկաներ ստեղծելով, ճարտարարուեստական ձեռնարկներով եւ միջազգային առեւտրական կապեր հաստատելով: Այսինքն՝ որպէս գործարար մարդիկ, հայեր Զայաստանի մէջ առեւտրական ձեռնարկութիւններ հիմնեն, իրենց հետ բերելով Արեւմուտքի իրենց փորձառութիւնն ու *թեքնոլոճի*ն: Այս առնչութեամբ, պրն. **Տէր-Պետրոսեան** շատ գոհ էր, որ լաւագոյն օրինակ հանդիսացան ընկեր **Ռուբէն Թերզեանի** նման ճարտարարուեստականներ, որոնք արդէն յաջողութիւն կ'արձանագրեն Զայաստանի մէջ: Նախագահին յանձնեցինք ազգային-քաղաքական հարցերու շուրջ Ռ.Ա.Կ.-ի տեսակետները արտայայտող յուշագիր մը:

Յայտնեցինք նաեւ մեր կարծիքը, որ Զայաստանի Խորհրդարանի Նախագահին արտասահման տուած այցելութիւնները կազմակերպուին տեղւոյն կարելոր հայ կազմակերպութիւններուն կողմէ, որպէսզի ան արժանանայ համազգային ընդունելութեան: Օրինակ տուինք իր վերջին այցելութիւնը, որ կազմակերպուած էր պրն. **Քրիստիան Տէր Ստեփանեանի** կողմէ, որ ունենալով լայն կապեր ֆրանսական քաղաքական իշխանութիւններու հետ, կրցած էր լաւագոյնս կազմակերպել իր շրջապատոյտը: Ամէն պարագայի, մեր կողմէ յանձնախումբ մը մէջտեղ բերինք, պրն. **Ճազմատարեանէ**, տկն. **Ադամեանէ** եւ ուրիշներէ բաղկացած, որ զբաղեցաւ նաեւ Նախագահին այցով: Այս առթիւ Զ.Բ.Ը.Միութիւնը իր միջոցները լայն բացաւ Նախագահին այցելութիւնը բարձր մակարդակի վրայ պահելով: Նախագահը խոստացաւ հետզհետէ անպաշտօն հիւպատոսներ դրկել Ուաշինկթըն, Փարիզ ու այլ կարելոր մայրաքաղաքներ ու անոնց միջոցով կազմակերպել նման քաղաքական տեսակցութիւններ ու ժողովրդային հաւաքներ:

Բացի պզտիկ ու տեղական գոյն ունեցող ցոյցերէ, որոնք կը կազմակերպուէին Զ.Յ.Դ.-ի կամ Պարոյր Զայրիկեանի խումբին կողմէ, Արցախի



Հայաստանի Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ մեր հանդիպումը: Ձախէն աջ՝ ընկերներ Հայկաշէն Ուզունեան, Արշալիր Կեօնճեան, Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյան, ես եւ ընկ. Լեւոն Բեպապճեան, Փարիզ, Ռաֆայէլ պանդոկ, 1991:

Նուիրուած յաջորդական ցոյցերը կը կազմակերպուէին մեր երեք ազգային կուսակցութիւններուն Նախաձեռնութեամբ: Ու մեր կուսակցութիւնը, ըլլա՛յ Նախաձեռնութեան, ըլլա՛յ կազմակերպութեան թէ մասնակցութեան մէջ, իր մեծ բաժինը բերած է միշտ: Ըսեմ Նաեւ թէ միայն Փարիզի մէջ չէ որ կը կազմակերպէինք ցոյցեր, այլեւ՝ միացեալ ձեւով աշխատանք կը տանէինք Ֆրանսայի ուրիշ քաղաքներու՝ Լիոնի, Վալանսի եւ Մարսելի մէջ: Ասիկա միասնականութեան գեղեցիկ պատկեր մը ցոյց կու տար յաչս օտարներուն ու Նաեւ՝ մեր ժողովուրդին:

Ֆրանսայի Նման երկրի մը համար 2,000-5,000 մասնակիցներով ցոյց մը մեծ արձագանգ չ'ունենար: Բայց եւ այնպէս Հայկական Հարցը, Սպիտակի երկրաշարժին թէ Արցախի դէպքերուն առիթներով, սկսած էր հետաքրքրել օտար թղթակիցները եւ այսպիսի ցոյցերու առիթներով կարելոր թերթեր, ինչպէս՝ «Ֆիկարօ», «Լը Մոնտ» կամ «Լիպերասիօն», գոնէ յաջորդ օրը մի քանի պարբերութեամբ արձագանգ կու տային: Երբեմն ալ հեռատեսիլը ցոյց կու տար պատկերներ ցոյցերէն:

Հետագայ տարիներուն, իբրեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան

ատենապետ եւ Լիբանանի խորհրդարանի անդամ, Ֆրանսա կատարած յաճախակի այցելութիւններու ընթացքին հանդիպումներ կ'ունենայի նաեւ Ֆրանսայի քաղաքական շրջանակներուն հետ: Յատկանշական էին հանդիպումներս Ֆրանսայի պաշտպանութեան նախարարուհի **Միշէլ Ալիօ-Մարիի**, Էր. Փէ. Էր.-ի ընդհանուր քարտուղար **Ատրիէն Կոսթէրոյի** եւ ուրիշներու հետ: Մեր քաղաքական շփումները ֆրանսական կողմին հետ առաւել կ'ընդլայնէին: Ասոր իբր արդիւնք, 13 Յոկտեմբեր 2001ին, հովանաւորութեամբ Ֆրանսայի Ծերակոյտի (Սենատ) նախագահ **Քրիսթիան Փոնսէլիէի**, Ռ.Ա.Կ.-ի հիմնադրութեան 80 ամեակին առիթով Սենատին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, ուր որպէս Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եւ Լիբանանի խորհրդարանի անդամ ճառ մը արտասանեցի Ծերակոյտին առջեւ: Հանդիսութեան աւարտին, 80 ամեակի առիթով ընթրիք-ընդունելութիւն մը տրուեցաւ Ծերակոյտի ճաշարանին մէջ: **Քրիսթիան Փոնսէլիէ** կարեւոր դեր ունեցած էր Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գծով Սենատի ընդունած որոշումին մէջ:

ԹԵՔԵՏԱՆ ԿԵՂՐՈՆԻ ՄԵՐ ՅՐԱՅԵԱՅ ՍԵՂՐԱԿԵԱՆ ՍՐԱԽԻ ԲԱԳՈՒՄ

Թեքեան Կեղրոնի սրահին անուանակոչումը Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Յ.Բ.Ը.Մ.-ի եւ Յ.Ե.Ը.-ի երկարամեայ առաջնորդներէն Մեր Յրաչեայ Սեղրակեանի անունով յարգանքի տուրք մըն էր անոր յիշատակին: Մերըը սփիւռքի եւ մանաւանդ լիբանանահայութեան ազգային-քաղաքական կեանքին մէջ ծանրակշիռ դերակատարութիւն մը ունեցած էր տասնամեակներ շարունակ:

Սրահին բացումը տեղի ունեցաւ 15 Յոկտեմբեր 1998ին, նախագահութեամբ Յ.Բ.Ը.Մ.-ի ատենի փոխ-նախագահ Մեր **Պերճ Սեղրակեանի**: Յոճ բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցած բացման հանդիսութեան կը մասնակցէին նաեւ հայ հոգեւոր պետեր, երեսփոխաններ **Նայիլա Սուաուատ, Պահաւետոս Իթանի, Պըշարա Մըրիէժ, Շաքեր Ապու Սլէյման, Ժորժ Զասարժի**, Մեր **Ժաք Զուխատարեան**, Տոքթ. **Սեպուհ Յովնանեան, Ատնան Արաքժի**, Դոկտ. **Յիւսէյն Եաթիմ**, Հայաստանի նախագահի խորհրդական **Արամ Սարգսեան**, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան **Արման Նաւասարդեան**, Մ.Ա.Կ.-ի Ընդհանուր Զարտուղարի օգնական **Պենոն Սեւան**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Յ.Բ.Ը.Մ.-ի, Յ.Ե.Ը.-ի, Յ.Յ.Դ.-ի, Ս.Դ.Հ.Կ.-ի, մշակութային միութեանց ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Սուրիայէն, Ամերիկայէն, Եւրոպայէն եւ այլ գաղութներէ Լիբանան ժամանած Յ.Բ.Ը.Մ.-ի Ընդհանուր Ժողովի մասնակիցներ, Մեր Յրաչեայ Սեղրակեանի հարազատներ եւ շատ ուրիշներ:

Բացման առիթով ելոյթներ ունեցան Թ.Մ.Մ.-ի Լիբանանի Վարչութեան կողմէ ընկ. **Լեւոն Բարսեղեան** եւ Թ.Մ.Մ.-ի ատենապետ ընկ. **Աւետիս Տազետեան**: Իրենց սրտի խօսքը ըսին Մեր Յրաչեայ Սեղրակեանի այրին՝ ընկ.հի **Մարլէն Սեղրակեանը** եւ Մեր **Պերճ Սեղրակեանը**, որ ի միջի այլոց ըսաւ. «Երախտաւոր միջոցառում է նշել անցաւորներու յիշատակը, մանաւանդ ոգեկոչելու այնպիսի անձնաւորութեան մը յուշը, որ հիմքերէն է հանդիսացած լիբանանահայ գաղութի մեծ ընտանիքին, իր նուիրումով ու ծառայութեամբ հանդէպ իր հայրենիքին, ժողովուրդին, ընկերութեան եւ կուսակցութեան, բարձրագոյն արժանապատուութեամբ, թէ՛ որպէս անհատ եւ թէ՛ որպէս ղեկավար Ռ.Ա.Կ.-ի եւ Թ.Մ.Մ.-ի, շուրջ կէս դար տեւող երկարատեւ ժամանակաշրջանով»:

Սրահին ամբողջական նորոգութիւնը կարելի եղած էր **Պերճ Սեղրակ-**

Եանի եւ Նազար Նազարեանի, ինչպէս նաեւ Լիբանանէն կարգ մը ազգայիններու նուիրատուութեանց շնորհիւ: Յատուկ յանձնախումբ մը կազմած էի այս նպատակին համար, ապահովելով կարգ մը նուիրատուութիւններ: Սրահին յարակից արդիական խոհանոց մըն ալ նուիրած էր պրն. **Վրեժ Սապունճեան**:



Ռ.Ա.Կ.-ի Հրաչեայ Սեդրակեան սրահի բացում: Աջէն ձախ՝ Ես, տէր եւ տիկին Պերճ եւ Վերա Սեդրակեաններ, այրի տիկին Մարլէն Սեդրակեան, Կարապետ Պապահէքեան եւ տիկինս, Պէյրութ, 1998:

Ռ.Ա.Կ. ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով

Ռ.Ա.Կ. ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Աթէնքի մէջ՝ 27-28 եւ 29 Նոյեմբեր 1998ին: Ընդհանուր Ժողովը միաձայնութեամբ զիս ընտրեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ: Կեդրոնի անդամներ ընտրուեցան հետեւեալ ընկերները.- Տոբթ. **Գրիգոր Ատանալեան, Մայք Խարապեան, Տոբթ. Գեորգ Զէշիշեան, Ասատուր Տէվլէթեան, Արտաւազդ Մելքիսեթեան, Յակոբ Վարդիվառեան, Փանոս Զէշիշեան, Զրաչ Պոյաճեան:** Իմ առաջարկով Պատուոյ անդամներ ընտրուեցան ընկերներ Կարապետ Պապահէթեան, Նահապետ Նահապետեան եւ Զամբարծում Պերպերեան: Կեդրոնի փոխ-անդամներ ընտրուեցան ընկերներ **Վազգէն Էսքիճեան, Յակոբ Անդրեասեան եւ Սերխիօ Նահապետեան:** Ընդհանուր Ժողովը յատուկ յանձնախումբ մը կազմեց պատրաստելու կուսակցութեան վերամշակուած Ծրագիր-Կանոնագիրը:

Առաջնորդուելով կուսակցութեան գերագոյն շահերէն, բայց մանաւանդ ներքին միասնականութեան վերականգնման մտահոգութեամբ, Ժողովը որոշեց Կեդրոնական Վարչութիւնը լիազօրել որ միւս կողմին հետ բանակցութիւններ վարէ հաշտութեան հասնելու նպատակով:

Կուսակցության Միասնականության Վերականգնման ճիգեր եւ Ռ.Ա.Կ. ԻԲ. (22րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով

Կուսակցության միասնականության վերականգնման հարցը միշտ ալ մեր օրակարգին վրայ եղած էր, նոյնիսկ պառակտումի եւ պայթարներու ամենէն թեժ օրերուն: Այս ուղղութեամբ կարելոր նախաձեռնութիւն մըն էր «Երեւանեան հաշտութիւն»ը, որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր 1999ին, Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովի օրերուն, Հայաստանի իշխանութիւններուն ալ քաջալերանքով: Բանակցութիւններու աւարտին համաձայնագիր մը ստորագրուեցաւ այդ մասին: Ահաւասիկ այդ համաձայնագիրը.-

Սեպտեմբեր 22-24, 1999 թուին Երեւանի մէջ կայացող Հայաստան-Սփիւռք համաժողովին մասնակցող Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցիչները, կողմերու իրաւասու մարմիններու տուած լիազօրութեամբ, ձեռնարկեցին խորհրդակցութեանց շարքի մը՝ վերջ տալու համար կազմակերպութեան ծոցին մէջ յառաջացած ներքին պառակտումին, որ իր բացասական անդրադարձը ունեցած էր ոչ միայն կուսակցութեան գործունեութեան եւ առաքելութեան վրայ, այլ նաեւ սփիւռքի քաղաքական իրականութեան հաւասարակշռութեան վրայ:

Թելադրուած Ռ.Ա.Կ.-ի վաղուան հայրենանուէր առաքելութեան հրամայականէն՝ կողմերը որոշեցին տուեալ պայմանաժամի մը ընթացքին առնելու միացեալ ու գործնական քայլեր՝ փութով իրականացնելու համար շարքերուն համար այնքան ցանկալի միասնականութիւնը:

Իբրեւ առաջին գործնական նախաձեռնութիւն՝ Ռ.Ա.Կ.-ը միացեալ պատուիրակութեամբ եւ միացեալ զեկոյցով հանդէս եկաւ Հայաստան-Սփիւռք համաժողովին:

Աւելի եւս ամրապնդելով միացման գործընթացը, որոշուեցաւ ներկայ թուականէն սկսեալ վերջ տալ մամուլի եւ այլ միջոցներով տարուող փոխադարձ քննադատութեանց եւ խժժանքներուն եւ իրենց լիիրաւ անդամի իրավիճակին մէջ վերահաստատել բոլոր այն ընկերները, որոնք ներկայ տազնապին պատճառաւ ենթարկուած էին հաւաքական թէ անհատական պատժամիջոցներու:

Կողմերը վճռած են ամենէն կարճ պայմանաժամի ընթացքին ամբողջացնել բանակցութիւնները, վերականգնել կուսակցութեան

կառույցը եւ օժտելով զայն շարքերուն եւ հանրութեան վստահութիւնը վայելող ղեկավարութեամբ մը, հաւաքական ուժերով դիմել դէպի կուսակցութեան սրբազան նպատակները:

Ռ.Ա.Կ.-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

Այս համաձայնագրին շուրջ բանակցութիւններու նախաձեռնողներէն եղած էր նաեւ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան փոխ-ատենապետ ընկ. Տոքթ. **Գրիգոր Ատանալեան**, առանց Կեդրոնի ամբողջական համաձայնութիւնը ունենալու: Կեդրոնը թէեւ սկզբունքօրէն դէմ չէր ատոր, սակայն լուրջ վերապահութիւններ եւ առարկութիւններ ունէր համաձայնագրի կարգ մը կէտերուն առնչութեամբ: Այս համաձայնագիրը թէեւ հետագային կարելի չեղաւ գործադրել, բայց համերաշխական յաջորդ քայլերու հիմը հանդիսացաւ:

Փարիզի Հաշտության Ժողովը

Ռ.Ա.Կ.-են ներս խմորումները սկիզբ առած էին արդեն տասնամեակ մը առաջ: Այդ խմորումներուն պատճառները բազմաթիւ էին, որոնցմէ կարելի է նշել համաշխարհային համակարգի փոփոխութիւնները, նոր օրերու հրամայականները, Հայաստանի եւ մանաւանդ մեր ազգին թեւակոխած նոր հանգրուանը՝ հայրենիքի անկախացումով: Սերնդափոխութեան դժուարութիւններն ու մանաւանդ անձնական դրդապատճառները դեր ունեցան պառակտիչ շարժումներու ի յայտ գալուն մէջ: Կուսակցութեան ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը փոխանակ լուծումներ բերելու ուրուագծուող տազնապին, յառաջացուց երկուութիւն՝ կուսակցութիւնը ղնելով առաւել բարդ իրավիճակի մը մէջ, որմէ ետք փոխանակ հարցերուն խորքը ուսումնասիրելու եւ ատոնց պատշաճ լուծումներ գտնելու, ամէն ինչ եւ բոլորին կողմէ անձնականացուեցաւ, ծնունդ տալով զգացական բարդ մթնոլորտի մը:

1998ի Պատգամաւորական Ժողովին կողմէ Կեդրոնական Վարչութեան ատենապետ վերընտրուելէս ետք, նոր թափ առաւ մեր աշխատանքին ծիրը եւ մենք կ'ընթանայինք այն ուղիէն, որ գծած էին մեր պատկառելի հիմնադիրները: Երբեք չգոհացանք միայն մեզի կտակուած արժէքները պահպանելով, այլեւ զանոնք յղկեցինք, մշակեցինք ու թարմացուցինք ժամանակին հետ քայլ պահելով. մէկ բառով՝ երիտասարդ աւիւն ներարկելով շարքերուն:

Նկատի ունենալով որ կուսակցութեան վերամիաւորման աշխատանքները անարդիւնաւետ էին, որոշեցի անձնական նախաձեռնութեամբ տազնապին «կրակէ օղակը ճեղքել» միտող այցելութիւն մը տալ ընկ. **Հայկաշէն Ուզունեանին**, առանց նախօրոք տեղեակ պահելու Կեդրոնը: Իբրեւ վաստակաւոր ղեկավար, ընկ. **Հայկաշէն Ուզունեան**էն կ'ակնկալէի երկու կողմերը քով-քովի բերողի եւ հաշտեցնողի ծանրակշիռ դերակատարութեան մը ստանձնումը եւ ո՛չ թէ միայն մէկ կողմի մը առաջնորդի դերակատարութիւնը:

Այս մտածումով ալ ընկ. **Մայք Խարապեանի** հետ հանդիպեցանք ընկ. **Հայկաշէն Ուզունեանին**: Կիպրոսի մէջ տեղի ունեցած այդ հանդիպումը դրական էր:

Հաշտութեան աշխատանքները շարունակուեցան Ռ.Ա.Կ. ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն ետք, որ գումարուած էր 27-29 Նոյեմբեր

1998ին, հասնելով մինչեւ Երեւանի մէջ Սեպտեմբեր 1999ին եւ Փարիզի մէջ Փետրուար 2000ին ձեռք բերուած «համաձայնագիր»ը:

Երկու կողմերուն միջեւ առաջին բանակցութիւնները տեղի ունեցան 26-28 Փետրուար 1999ին, Փարիզի Trocadero շրջանի պանդոկի մը մէջ, որուն մեր կողմէ մասնակցեցանք ընկերներ **Գրիգոր Ատանալեան, Յակոբ Վարդիվառեան** եւ ես, իսկ միւս կողմէն՝ **Երուանդ Ազատեան, Նար Խաչատուրեան** եւ **Յակոբ Աւետիքեան**: Բանակցութիւններու արդիւնքով Ռ.Ա.Կ.-ը Հայաստանի մէջ որպէս իրաւաժառանգորդ կը ճանչնար Հ.Ռ.Ա.Կ.-ը, որուն ղեկավարութեան եւ սփիւռքէն անոր ետին կանգնող կարգ մը ընկերներու հետ տարակարծութիւններու մէջ էինք, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան կը թելադրէր վերստին բանաձեւել Երեւանի մէջ գործող Ռ.Ա.Կ. ներկայացուցչական գրասենեակի իրաւավիճակն ու դերը, որուն գործադրումը վստահուեցաւ ընկերներ **Մայք Խարապեան**ին եւ **Յակոբ Աւետիքեան**ին:

Բանակցող կողմերս նաեւ որոշեցինք տագնապի հետեւանքով կատարուած փոխադարձ արտաքսումներու եւ կանոնադրական այլ պատժամիջոցներու ենթարկուած ընկերներուն համար անյապաղ կիրարկել Ռ.Ա.Կ. ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին որոշումը՝ յետս կոչելով եւ վերահաստատելով այդ պատժամիջոցներուն ենթարկուած բոլոր ընկերներուն կուսակցական իրաւավիճակը: Կարելոր որոշումներէն էին ինծի տրուած լիազօրութեամբ ընկերներ **Կարապետ Պապահէքեանի** եւ **Նար Խաչատուրեանի** հետ խորհրդակցաբար Թ.Մ.Մ. Հիմնադիրներու Նոր մարմնի մը կազմումը, կանոնադրութեան պատշաճեցումը Լիբանանի օրէնքներուն, Թ.Մ.Մ.-ի Ամերիկայի եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան կանոնադրութեան փոփոխութիւնը, մանաւանդ ցկեանս անդամակցութեան վերացումը, երաշխաւորելու համար միութեան կալուածներուն եւ ինչքերուն ապահովութիւնը, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ. Լիբանանի երկու Շրջանային Վարչութիւններուն հրաժարումը եւ Նոր, միացեալ վարչութեան մը կազմութիւնը:

Մինչեւ վերջնական համաձայնութեան հասնիլը, հաղորդագրութիւն մը հրապարակեցինք մեղմելու համար լարուած մթնոլորտը եւ հող նախապատրաստելու վերամիաւորման: Ստորեւ այդ հաղորդագրութիւնը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռամկավար Ազատական Կուսակցութենէն Ներս ստեղծուած անբաղձալի իրավիճակին վերջ մը դնելու բարի կամեցողութեամբ՝ կուսակցութեան ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը լիազօրած էր Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը բարուք լուծում մը

գտնելու այս տագնապին, օրինականության հովանիին տակ եւ կուսակցության գերագոյն շահերէն առաջնորդուած:

Վերոնշեալի լոյսին տակ, Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան եւ միւս հատուածի ներկայացուցիչները յաջորդական հանդիպումներ ունեցան Փարիզի մէջ: Այդ հանդիպումները հասարակ յայտարարներ բերին շարք մը հարցերու, որմէ մեկնելով՝ ժողովականները որոշեցին մինչ այդ դրական եւ շինիչ մթնոլորտի մը մէջ ու կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին գումարել այլ ժողով մը, լաւատեսութեամբ յուսալով որ կարելի կ'ըլլայ վերջնական եզրայանգումներու հասնիլ այդտեղ:

Առ այդ, կ'ակնկալենք կուսակցութեան բոլոր շրջանակներու մէջ գործող մարմիններէն, շարքայիններէն եւ մամուլէն՝ գիտակից ինքնազսպուածութեամբ վարուիլ տագնապը մատնանշող շարք մը երեւոյթներուն եւ իրավիճակներուն հետ:

Պէյրուք, 8 Մարտ 1999

Ի վերջոյ հաւաքական մեր ճիգերը արդիւնաւորուեցան եւ Փարիզի Զ.Բ.Ը.Մ.-ի գրասենեակին մէջ 13 Փետրուար 2000ին գումարուած Բ. հանդիպումի ընթացքին ստորագրուեցաւ կուսակցութեան միասնականութիւնը վերականգնող համաձայնագիրը: Զաշտութեան ժողովին մասնակցեցանք ընկերներ Մայք Խարապեան, Գրիգոր Ատանալեան, Յակոբ Վարդիվառեան, Փանոս Զեշիշեան, Արտաւազ Մելքիսեթեան, Տոքթ. Գեորգ Զեշիշեան, Զայկաշէն Ուզունեան, Երուանդ Ազատեան, Վարդան Ուզունեան, Յակոբ Աւետիքեան, Լեւոն Զեպապճեան, Ռուբէն Միրզախանեան եւ ես: Ստորեւ պատմական այդ վաւերագիրը:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԶԱՍՏԱՏՈՒՄ

Կիրակի, 13 Փետրուար 2000ին, Փարիզի մէջ ստորագրուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան վերամիացումը աւետող համաձայնագիրը:

Կողմերու ղեկավար ընկերները, գլխաւորութեամբ ընկ. Զայկաշէն Ուզունեանի եւ ընկ. Յակոբ Գասարճեանի, այդ օրը ստորագրած եւ ի լոյս բերած եղան Ռ.Ա.Կ.-ի կարեւորագոյն վաւերագրերէն մին, որ ոչ թէ դուրս կը հանէ կուսակցութիւնը իր երկփեղկուած իրավիճակէն՝ այլեւ կ'առաջադրէ հիմքերը եւ մեկնակէտերը նոր հանգրուանին, ուր Ռ.Ա.Կ.-ը կ'ունենայ հին ու նոր ուժերու համախմբում եւ ուր ան կը

դասաւորէ օրերու հրամայականին հետ ներդաշնակ ընթացող քաղաքական եւ ազգային գործնական աշխատանք:

Վերջին տասնամեակին հայկական իրականութեան մէջ արձանագրուած Նոր զարգացումները իրենց հետ բերին նաեւ բացասական հետեւանքներ, որոնցմէ դժբախտաբար գերծ չմնաց Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, ենթարկուելով խոր ցնցումներու, որոնց պատճառով խախտեցաւ կազմակերպութեան միասնականութիւնը: Այդ անբաղձալի կացութիւնը բառնալու նպատակով՝ վերջին ժամանակաշրջանին հաստատուած շփումներն ու բանակցութիւնները արդիւնաւորուեցան 11-13 Փետրուար 2000 թուականին՝ Փարիզի մէջ կայացած բանակցութիւններուն ընթացքին: Բանակցող կողմերը, գերագոյն նպատակ ունենալով Կուսակցութեանս մէկութեան գաղափարը, խորաչափելով ուժերու վատնումի ու ջլատման յոռի հետեւանքները ոչ միայն Կուսակցութեանս, այլեւ հայութեան առջեւ ծառացած ազգային-քաղաքական հրամայականներու դիմագրաւման տեսակէտէն, յանգեցան օրակարգի վրայ դրուած հարցերու շուրջ հասարակ յայտարարներու եւ ստեղծեցին ներքին համաձայնագիր մը, որով վերջ կը գտնեն մի քանի տարիէ ի վեր գոյութիւն ունեցող տարակարծութիւնները:

Վերոյիշեալ համաձայնագրով յետս կը կոչուին վերջին տազնապին ընթացքին երկուստեք կատարուած պատժական տնօրինումները եւ կը վերահաստատուի բոլոր ընկերներուն կուսակցական իրաւավիճակը: Միաժամանակ կը նախաձեռնուի շրջանակներու վերակազմակերպումը, նպատակ ունենալով կուսակցութեանս գործունէութեան հեզասահ ընթացքին ապահովումը:

Որոշուեցաւ յետայսու խիստ բծախնդիր կերպով հետեւիլ Կուսակցութեան Ծրագիր-Կանոնագրով նախատեսուած կարգապահական կանոններու կիրարկումին, ապահովել կարգ ու կանոնը, վճռականօրէն զսպել արտաքին թէ ներքին բոլոր ոտնձգութիւնները:

Բանակցող կողմերը որոշեցին այս տարուան ընթացքին Ռ.Ա.Կ.-ի բոլոր շրջանակներու մասնակցութեամբ գումարել ԻԲ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, որուն կազմակերպման համար ստեղծեցին միացեալ յանձնախումբ մը:

Սոյն յայտարարութեամբ, Կուսակցութիւնս կը վերահաստատէ իր համոզումը, թէ այսուհետեւ, բոլոր տեսակի խանգարիչ հանգամանքներէն ձերբազատ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր բոլոր շրջանակներով, մամուլով, ուղեկից կազմակերպութիւններով,

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

շարքային թե համակիր զանգուածներով, ձեռք-ձեռքի տուած Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության հետ, վերստին պիտի ստանձնէ իր պատմական առաքելութիւնը:

Կուսակցութեան վերամիաւորումը, վստահ ենք, խանդավառութեամբ պիտի դիմաւորուի Նաեւ սփիւռքի եւ մայր հայրենիքի մեր բովանդակ ժողովուրդին կողմէ եւ Նոր թափ պիտի հաղորդէ ազգին ու հայրենիքին Նորանոր ծառայութիւններ մատուցանելու Կուսակցութեանս Նուիրական առաքելութեան:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ
Փարիզ, 13 Փետրուար 2000**

Փարիզի երկկողմանի խորհրդակցական ժողովը, համերաշխութեան եւ իրերհասկացողութեան մթնոլորտի մը տակ անկիւնադարձ կը նկատենք մեր կուսակցական պատմութեան համար: Նոր վերածնունդ մը ապրեցաւ Ռ.Ա.Կ.-ը: Վաստակաւոր ընկերներու վտարումները յետոս կոչուեցան:

Կուսակցութեան վերամիաւորման համաձայնագիրը ներկայացուցի Լիբանանի մեր Շրջանակին՝ 28 Փետրուար 2000ին Թեքեան Կեդրոնին մէջ



Ընկ. Հայկաշէն Ուզունեանի հետ հաշտութեան համաձայնագրի ստորագրութեան պահուն, Փարիզ, Փետրուար 2000:

տեղի ունեցած անդամական ժողովի մը ընթացքին, ուր ելոյթ ունենալով ի միջ այլոց ըսի. «... *Տասնեակ մը վայրկեաններու մէջ ջանացի համապարփակ ձեւով ներկայացնել ձեզի այն աննախընթաց ալեկոծումը, որուն ենթարկուեցաւ մեր կուսակցութիւնը անցնող տասնամեակին: Բաղձալի իրավիճակ մը չէր, բայց թերեւս անխուսափելի էր ան, որովհետեւ դիմակալեցինք ժամանակաշրջան մը, ուր արձանագրուեցան ազգային մարդկային հիմնական եւ արագընթաց փոփոխութիւններ, զորս դիմակալելու պատրաստ չէինք: Թերեւս կարելիութիւնը կար այդ ճահիճին մէջ չմտնելու, թերեւս ալ իրերու դրուածքը կրնար մեզ դնել այլ իրավիճակներու մէջ, որոնք կրնային աւելի մեծ եւ անբուժելի աւերներ գործել: Ծիշդ է թէ մեր կուսակցութիւնը, ինչպէս ազգային այլ կառոյցներ, ենթակայ եղաւ ցնցումներու, բայց կրնամ ըսել թէ մեր կուսակցութիւնը հաւանաբար յաջողեցաւ նուազագոյն վնասով դուրս գալ այդ աննախընթաց իրավիճակէն, աւելին՝ անցնող տազնապին բերումով կարելի եղաւ գործնական գետնի վրայ ճշդորոշել մեր կուսակցութեան զօրութեան կէտերը եւ խոցելի մասերը, հասնելու համար համապարփակ համաձայնագիրի մը, այլ՝ մեր կուսակցութեան համար նոր ուխտի մը, որ ոչ թէ վերամիաւորում կը բերէ միայն, այլեւ անցեալի դառն փորձառութենէն օգտուելով, կը գծէ Ռամկավար Ազատական Կուսակցութեան վաղուան նոր կառոյցը եւ անոր ղեկավարութեան որդեգրելիք նոր գործելակերպը:*

Այդ բոլորին լոյսին տակ, մեզի կը մնայ վերանորոգ հաւատքով փարիլ այս կուսակցութեան եւ յետ այսու օրինակելի կարգապահութեամբ գործել անոր դրօշին ներքեւ: *Վերամիաւորումը նոր պարտաւորութիւններու առջեւ կը դնէ մեզ թէ՛ ազգային ու հայրենական առումներով մեզի կը մնայ առաջին հերթին հիմնաւորել եւ ամրացնել վերամիաւորման այդ ոգին եւ միաժամանակ անցնիլ ազգանուէր աշխատանքի»:*

Կուսակցութեան միասնականութիւնը վերականգնելու եւ հաշտութիւնը ամրապնդելու տեսակետէ կարելոր կը նկատեմ նաեւ այցելութիւնս Կիպրոս, Օգոստոս 2000ին, հանդիպելու ընկ. **Յայկաշէն Ուզունեանին**: Դրական մթնոլորտի մէջ խօսակցութիւններ ունեցայ վաստակաւոր ընկերոջ հետ մեր կուսակցութեան միասնականութեան ամրապնդման մասին: Այդ օրերուն, հարազատներու եւ ընկերներու կազմակերպութեամբ, Լառնաքայի **Palm Beach** պանդոկին մէջ հաւաքոյթով մը նշուեցաւ ընկ. եւ ընկ.հի **Յայկաշէն եւ Մարի Ուզունեան**ներու ամուսնութեան 50րդ տարեդարձը, որուն մասնակցեցայ նաեւ ես:

Աւելի քան 160 հայրենակիցներու մասնակցութեամբ տեղի ունեցած տարեդարձի այդ երեկոյին ընթացքին արտասանած շնորհաւորանքի խօսիս

մեջ ըսի. «...Մեր կուսակցության վերականգնումի եւ միասնականության ճանապարհին շատ աւելի խորունկ իմաստ մը կը ստանայ այս հաւաքոյթը եւ բազմաթիւ կերպերով կ'անդրադառնայ մեզմէ իւրաքանչիւրիս զգացումներուն վրայ»: Շարունակելով խօսքս, ըսի. «Սիրելի ընկ. Հայկաշէն, Դուք Բարունակ Թովմասեաններու, Գերսամ Ահարոնեաններու, Յակոբ Դաւիթեաններու եւ Հրաչեայ Սեդրակեաններու շքերթին ռահվիրաներէն էք ու կը հանդիսանաք ճառագայթող վերջին ջահը, որուն վրայ կը գուրգուրանք բոլորս՝ ինչպէս կէս դար ամբողջ գուրգուրացած է տիկին Մարին...»:

Լիբանանի Ռ.Ա.Կ. Շրջանակի Միասնականության Վերականգնում

Հակառակ Փարիզի մեջ տեղի ունեցած հաշտության, Լիբանանի մեր Շրջանակեն ներս ներքին կուսակցական պայքարները շարունակուեցան տակալին քանի մը տարի, ի վերջոյ սակայն հաշտութիւն մը գոյացաւ: Կուսակցութեան Լիբանանի միասնականութիւնը վերականգնելու, ինչպէս նաեւ ապագայ գործունեութիւնը միասնաբար յառաջ տանելու ուղղութեամբ գործադրուած շարունակական ճիգերը ի վերջոյ արդիւնաւորուեցան Օգոստոս 2003ին Թեքէեան Կեդրոնին մեջ տեղի ունեցած ժողովին գոյացած համախոհութեան եւ հաշտութեան **աքթով**: Տարիներ տեւած անխմաստ եւ հիւժիշ պայքարը վերջ գտաւ, երբ կուսակցութեան ղեկավարութիւնը եւ ընդդիմադիր «Վերանորոգումի Շարժում»-ի անդամները կրցան ընդհանուր յայտարարի հասնիլ, հիմք ունենալով կուսակցութեան գերագոյն շահերը եւ նպատակները, որոնք հիմնուած են հաւասարութեան եւ ռամկավարութեան վրայ: Այս առթիւ, խօսք առնելով, հրապարակային ձեւով ընդունեցի մեր գործած բազմաթիւ սխալները իբրեւ Կեդրոնական Վարչութիւն, յայտնելով նաեւ որ միւս կողմը երբեք նոյն ազնուութիւնը չունեցաւ ընդունելու նաեւ իր գործած սխալները: Ժողովը վերջ գտաւ բոքթելով եւ սիրալիր ողջագուրումներով:

Իմ ատենապետութեամբ կազմուած Ռ.Ա.Կ. Լիբանանի նորընտիր Շրջանային Վարչութիւնը կուսակցական կառոյցը միասնական դարձնելու եւ լիբանանեան ներքին քաղաքական կեանքին մեջ զգալի ներկայութիւն մը ապահովելու ուղղութեամբ հսկայական ճիգեր գործադրեց: Նոյեմբեր 2003ին, Ռ.Ա.Կ. նորընտիր Շրջանային Վարչութիւնը շնորհաւորելու համար Թեքէեան Կեդրոն այցելեցին նախկին նախագահ **Ամին ժեմայէլ**, գիւղատնտեսութեան նախարար **Ալի Հասան Խալիլ**, երեսփոխաններ **Պըշարա Մըրհէժ**, **Պասէլ Ֆլէյհան**, **Միշէլ Ֆարաոն**, **Աթէֆ Մաժտալանի**, **Նեպիլ տը Ֆրէյժ**, **Նազեմ Խուրի**, **Սերժ Թուրսարգիսեան**, **Եղիկ ճերեճեան**, **Ժորժ Գասարժի**, **Պասէմ Եամմուր**, **Մուհամմատ Զապպանի**, **Ուալիտ Իյոս**, **Ժան Օղասափեան**, **Ատնան Արաբժի**, **Նասեր Զանտիլ**, **Նասիպ Լահուտ**, **Մուհամմատ Պըրժաուի**, Պէյրութի քաղաքապետ **Ապտըլմընէմ Արիս**, Մուֆթիին ներկայացուցիչը, լիբանանեան կուսակցութիւններու, քաղաքապետարաններու, միութիւններու եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Զաղաքական այս այցելութիւնները եւ կապերու ամրա-

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

պնդումը տեղական կուսակցություններու եւ շրջանակներու հետ լիբանանեան ներքին քաղաքական կեանքին մէջ Ռ.Ա.Կ.-ի զօրաւոր ներկայութեան ապահովման լաւ սկիզբ մը եղան:

Երեսփոխանություն և Լիբանանեան Ներքին Զաղաքական Կեանքի Մասնակցություն

1996 թուականի լիբանանեան երեսփոխանական ընտրություններուն, Ռ.Ա.Կ.-ը որոշում կայացուցած էր Հ.Բ.Ը.Մ.-ի թեկնածու **Յակոբ Տեմիրճեան**ին զօրավիզ կանգնելու, որպէս գաղափարական եւ միութենական ուղեգիծի պատկանող անձնաւորութիւն: Այդ տարի, երբ մենք կը նշէինք Ռ.Ա.Կ.-ի 75 ամեակի յոբելեանը, վարչապետ **Ռաֆիք Յարիրի** իր ներկայութեամբ պատուեց մեզ եւ ականատես դարձաւ Ռ.Ա.Կ.-ի շարքերու պատկառելի ներկայութեան, որոնք կենդանի կը պահեն հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութիւնը՝ ապրելով ասպնջական Լիբանանի մէջ իրբեւ խաղաղ, շինարար եւ օրինական հաւաքականութիւն:

1998ին, երբ կը վարէի Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնի ատենապետութիւնը, վարչապետ **Ռաֆիք Յարիրի** իր հրաժարականը ներկայացուց Լիբանանի Խորհրդարանին: Մենք, որպէս Ռ.Ա.Կ., ընկ. **Յովսէփ Էմիրեան**ի հետ **Յարիրի**ին



Անտրէ Թապուրեանի հետ, 1998:

տրուած այցելութեան ընթացքին յատնեցինք, թէ ան Լիբանանի վարչապետի պաշտօնը եթէ Նոյնիսկ չստանձնէ, կրկին իր կողքին ենք, յանուն ազատական գաղափարախօսութեան:

Հանդիպման ընթացքին **Հարիրի** կէս կատակ կէս լուրջ հարց տուաւ թէ ունի՞ արդեօք Ռ.Ա.Կ.-ը երեսփոխանի սեփական թեկնածու մը, որուն ի պատասխան ընկ. **Էմիրեան** կատակեց, ըսելով թէ **Գասարճեան**էն զատ կա՞յ ուրիշ անձ մը:

Նոյն տարին տեղի ունեցաւ երեսփոխան **Խաչիկ Պապիկեան**ի մահուընէ ետք թափուր մնացած երեսփոխանական աթոռի փոխարինողի նշանակումը: Այդ աթոռին իր թեկնածութիւնը առաջադրեց **ԱնտրէԹապուրեան** եւ Ռ.Ա.Կ. պաշտպանեց զինք:

Թապուրեան այցելեց Թեքեան Կեդրոն եւ շնորհակալութիւն յայտնեց իր թեկնածութեան պաշտպանութեան համար: Մեր միջեւ ստեղծուած ջերմ եւ բարեկամական յարաբերութիւնները շարունակուեցան այնքան որ ան հետագային դարձաւ նաեւ իսնամիս:

2000 թուականին վարչապետ **Հարիրի** ազնուական մտայղացումը ունեցաւ իր քաղաքական դաշտի ծիրէն ներս ընդգրկելու Ռամկավար թեկնածու մը, զիս նկատի ունենալով: Եթէ ես Ռ.Ա.Կ.-ի արժանաւոր ուխտեալ



Ելոյթ կ'ունենամ Սամըրլենտ սրահին մէջ տեղի ունեցած ընտրական հանդիսութիւն-ճաշկերոյթի ընթացքին, Պէյրութ, 2000:



Վարչապետ Հարիրիի հետ՝ Սամըլլենտ-ի սրահին մէջ տեղի ունեցած ընտրական հանդիսութիւն-ճաշկերոյթին՝ ի պատիւ Պէյրութի Արժանապատուութիւն ցանկը գլխաւորող Հարիրիի, 2000:



Ելոյթ կ'ունենամ Թէքեան կեդրոնին մէջ տեղի ունեցած ընտրական հաւաքին, 2000 : Աջէն ձախ՝ Ժան Օղասապեան, Ատնան Արաբժի, Ղազի Արիտի, Ղընուա Ժալլու, Մուհամմատ Զապպանի, Սերժ Թուրսարգիսեան:




Յոյն ուղղափառ եկեղեցւոյ Պէրոուքի Առաջնորդ Իլիաս Առւտէ եպս.ի հետ, Պէրոուք 2000:



Հանրապետութեան Նախագահ Էմիլ Լահուտի հետ տեսակցութիւնս Պաապտայի Նախագահական ապարանքին մէջ, 2000:

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

զաւակը չըլլայի եւ իմ անձնական պետական յարաբերութիւններս չըլլային քաղաքական դաշտին մէջ եւ անձամբ վարչապետին հետ, Ռ.Ա.Կ.-ի երեսփոխան չէի կրնար ըլլալ:



Վարչապետ Ռաֆիք Չարիրիի հետ Մեր Դաշինքը

Լիբանանի նահատակ վարչապետ **Ռաֆիք Չարիրիի** հետ մեր դաշինքը դրուած էր փոխադարձ համոզումներու եւ գաղափարական ամուր հիմերու վրայ: Մենք ողջունած էինք Թայէֆի համաձայնագիրը, որ Լիբանանը պատերազմէն դուրս բերելով, դէպի խաղաղութիւն, համակեցութիւն եւ ազգային համերաշխութիւն առաջնորդած էր մեզ: Վարչապետ **Չարիրի** Թայէֆի Ազգային Համերաշխութեան ճարտարապետներէն էր՝ Լիբանանի ինքնիշխանութեան, անկախութեան եւ ազատութեան ջատագովը: **Չարիրի** անսահման սէր եւ յարգանք կը տածէր լիբանանահայութեան հանդէպ:

Ան մեծ ջատագով էր Լիբանանի ներքին քաղաքական կեանքին մէջ լիբանանահայ քաղաքական բոլոր ոյժերու ներկայութեան եւ մասնակցութեան, առանց որեւէ կողմի մենատիրութեան: Ան նաեւ շատ անկեղծ տրամադրութիւն ցոյց կու տար Լիբանան-Հայաստան երկկողմանի



Վարչապետ Չարիրիի հետ, վարչապետարանին մէջ տեղի ունեցած հանդիպումի մը ընթացքին, 2001:

յարաբերությանը զարգացումին ուղղությամբ, բոլոր բնագաւառներուն մէջ: Ատոր ապացոյցը Հայաստան կատարած իր երեք այցելութիւններն էին: Առաջին այցելութիւնը տեղի ունեցաւ 20 Հոկտեմբեր 1997ին, իսկ երկրորդ այցելութիւնը՝ 5 Մայիս 1998ին: Անոր երրորդ եւ վերջին այցելութիւնը տեղի ունեցաւ 1 Ապրի 2004ին, ընկերակցութեամբ հայ երեսփոխաններու: Այս այցելութեան ընթացքին էր որ յայտարարուեցաւ Հայաստան-Լիբանան միջ-կառավարական յանձնախումբի մը ստեղծումը, զոր Լիբանանի կողմէ գլխաւորեց ինք: Այցելութեան ընթացքին ստորագրուեցան կարեւոր համաձայնագրեր:

Հարիրի իր բազմաթիւ ելոյթներուն ընթացքին միշտ շեշտած է լիբանանահայութեան գործադրած ճիգերը Լիբանանի իւրայատուկ քաղաքական հաւասարակշռութեան պահպանման ուղղությամբ: Ան բարձր գնահատած է լիբանանահայութեան օրինակելի կեցուածքը եւ բարոյական նկարագիրը Լիբանանի միասնականութեան ու խաղաղ գոյակցութեան ուղղությամբ, մանաւանդ քաղաքացիական պատերազմի տարիներուն:

2000ի խորհրդարանական ընտրութիւններուն թեկնածութիւնս ներկայացուց Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, որ պաշտօնական Յայտարարութիւն մը հրապարակեց այդ առթիւ: Ստորեւ այդ Յայտարարութիւնը.

Առաւել եւս գործօն դերակատարութիւն ունենալու համար Լիբանանի քաղաքական կեանքէն ներս, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Շրջանային Վարչութիւնը որոշեց մասնակցիլ Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն, ի խնդիր լիբանանեան հայրենիքի բարգաւաճումին, անոր ժողովուրդին բարօրութեան եւ լիբանանահայութեան գերագոյն շահերուն պաշտպանման: Այդ բոլորին իրագործման հեռանկարով՝ Ռ.Ա.Կ.-ը վերոնշեալ ընտրութիւններուն կը կառչի հայ ժողովուրդի բարեկամ եւ միասնականութեան ջատագով նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած «Պէյրութի Արժանապատուութիւն» ցանկին, մայրաքաղաքի երեք ընտրաշրջաններուն մէջ:

Մեկնելով վերոնշեալ տուեալներէն, Ռ.Ա.Կ.-ը Պէյրութի 3րդ ընտրաշրջանին համար իր թեկնածուն կը ներկայացնէ՝ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝

ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՃԵԱՆԸ

Նախանձախնդիր մնալով մեր ազգային միասնականութեան, Ռ.Ա.Կ.-ը կը շարունակէ իր ցարդ տարած աշխատանքները, որոնց

լոյսին տակ պիտի բիրտեղացնէ իր կեցուածքները այլ ընտրաշրջաններու պարագային:

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը հաւատայ թէ որոշուած խորհրդարանական ընտրութիւնները պիտի լաւագոյնս դրսեւորեն Լիբանանի ժողովուրդին նախընտրութիւնները, որովհետեւ ատոր համար կայ երաշխիքը Լիբանանի վստմաշուք նախագահ՝ Չօրավար Էմիլ Լահուտի:

**Ռ.Ա.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Պէյրութ, 15 Յուլիս 2000**

Իմ նախաձեռնութեամբ եւ յանուն Ռ.Ա.Կ.-ի, 21 Օգոստոս 2000ին, Սամըրէնտ շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ ընտրական հանդիսութիւն-ճաշկերոյթ մը՝ ի պատիւ Պէյրութի Արժանապատուութիւն ցանկը գլխաւորող **Յարիրիի**, որուն ներկայ գտնուեցան նախկին նախարարներ եւ երեսփոխաններ **Յակոբ Տէմիրճեան, Եղիկ Ճերեճեան, Անտրէ Թապուրեան, Միշէլ Ֆարաոն, Ատնան Արաքժի, Սելիմ Տիապ, Պըշարա Մըրիէժ**, Արժանապատուութիւն ցանկին հայ թէ արաբ թեկնածուները, Մերթի հայ թեկնածու **Ռաֆֆի Մատեան**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Ե.Ը.-ի Ս.Դ.Հ.Կ.-ի ներկայացուցիչներ, Պէյրութի քաղաքացիներ, Պէյրութի քաղաքապետը եւ Քաղաքապետական Խորհուրդի անդամները, քաղաքական այլ դէմքեր:

Օրուան հանդիսավարն էր ընկ. Մերթ **Վիզէն Պայրամեան**: Աւելի քան 600 հանդիսականներու ներկայութեամբ տեղի ունեցած աննախընթաց այս ընտրական հանդիսութիւնը բացառիկ յաջողութեամբ պսակուեցաւ: Վարչապետ **Յարիրի** դրուատանքով խօսեցաւ հայութեան մասին եւ յիշեց, թէ տակաւին Սեուտական Արաբիոյ մէջ սերտ յարաբերութիւններ ունեցած է հայերու հետ: Ան ըսաւ թէ իրեն համար պատիւ է իր ցանկին վրայ ունենալ երիտասարդ, գործօն եւ բարեփոխիչ անուններ, որոնց մաս կը կազմեն նաեւ հայ թեկնածուներ:

2000ի ընտրութիւններուն իմ ընտրական կարգախօսն էր «Մենք լիբանանցիներ ենք հայկական ծագումով»ը, որ արտայայտութիւնն էր իմ այն համոզումին, թէ լիբանանահայերը այս երկրին լիիրաւ քաղաքացիներն են, առանց ազգային թէ յարանուանական խտրութեան, եւ իբր քաղաքացիներ, պէտք է ամբողջական մասնակցութիւն ունենան երկրի քաղաքական եւ ընկերային կեանքին: Այս կարգախօսը շատերու կողմէ քննադատութեան արժանացաւ, մանաւանդ **Հ.Յ.Դ.-ի**, որ Նոյնիսկ զիս դաւաճան յայտարարեց: Հետագային, սակայն, Նոյն միտքը արտայայտեցին շատեր, Նոյնիսկ՝ **Արամ Ա.** Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, խորհրդաժողովի մը ընթացքին: Այս



Խորհրդարանի նիստերեն մեկուն ընթացքին, վարչապետ Յարիրիի պլոքին հետ, 2004:

միտքը իմ կարծիքով երբեք չէր հակասեր ազգային մեր ամուր պատկանելության եւ հայկականության:

Սամրըլենտի ընտրական հանդիսություն-ճաշկերոյթին յաջորդեց Ռ.Ա.Կ. Ընտրական Կեդրոնական Մարմնին կազմակերպած ժողովրդային ընտրական հաւաքը, որ տեղի ունեցաւ Օգոստոս 24ին, Թեքեան Կեդրոնի մէջ: Խուռներամ բազմութեան մասնակցութեամբ տեղի ունեցած հաւաքին ելոյթ ունեցան Պեյրուքի Արժանապատուութիւն ցանկին թեկնածուները, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Օհան Պոտրումեան** եւ Ընտրական Մարմնին կողմէ ընկ. **Յրայր Յովիւեան**:

Ռ.Ա.Կ.-ի արձանագրած ընտրական յաղթանակը աննախընթաց ոգեւորութիւն եւ ցնծութիւն յառաջացուց: Սեպտեմբեր 4ին, խուռներամ բազմութիւն մը հաւաքուած էր Թեքեան Կեդրոն՝ տօնախմբելու յաղթանակը: Ամբողջ շրջանը տօնական տրամադրութիւններու մէջ էր: Ժամանելու, մուտքին երկու ոչխար գէնուեցաւ եւ հրավառութիւն տեղի ունեցաւ: Ռ.Ա.Կ.-ի երիտասարդները զիս ուսամբարձ տարին դէպի սրահ, ուր հարիւրաւոր կուսակցականներ, համակիրներ ու բարեկամներ զիս կը սպասէին շնորհաւորելու:

Խօսքիս մեջ շնորհակալութիւն յայտնեցի բոլոր հայրենակիցներուն իրենց վստահութեան համար, ողջունեցի Պէյրութի Արժանապատուութիւն ցանկէն ընտրուած պաշտօնակիցներս՝ **Եղիկ Ճերեճեան, Ժան Օղասափեան եւ Սերժ Թուրսարգիսեան**, ինչպէս նաեւ Մեթնի թեկնածու **Ռաֆֆի Մատեանը**, որ թէեւ չէր ընտրուած, բայց յանդուգն մասնակցութիւն ունեցած էր ընտրութիւններուն եւ մեծ ժողովրդականութիւն ապահոված: Անդրադարձայ նաեւ **Ջարիրիի** արժանիքներուն եւ որդեգրած քաղաքականութեան, խօսեցայ **Յ.Բ.Ը.Ս.-ի** եւ **Յ.Ե.Ը.-ի** շրջանակին՝ ընտրութիւններուն աշխոյժ մասնակցութեան մասին ի նպաստ մեզի, յատուկ շնորհակալութիւն յայտնեցի **Ս.Դ.Յ.Կ.-ին** եւ Արարատ Մարզական Միութեան համագործակցութեան, ինչպէս նաեւ **Ռ.Ա.Կ. Ընտրական Գրասենեակի** ղեկավար ընկ. **Ջրայր Յովիւեանին**: Խօսք առին նաեւ **Եղիկ Ճերեճեան, Սերժ Թուրսարգիսեան, Ռաֆֆի Մատեան** եւ ընկ. **Գրիգոր Ատանալեան**:

Թեքեան Կեդրոնի տօնախմբութենէն յետոյ, մեծաթիւ ընկերակիցներով այցելեցինք Խալիլ Պետեուլիի **Յ.Ս.Ս.** ակումբ, ուր հաւաքուած բազմութիւնը խանդավառութեամբ կը տօնախմբէր յաղթանակը եւ մեծ ոգեւորութեամբ ընդունեց մեզ ծափահարութիւններով եւ զօրակցական արտայայտութիւններով: Հոս ալ շեշտեցի **Ռ.Ա.Կ.-ի** եւ **Ս.Դ.Յ.Կ.-ի** միջեւ համագործակցութեան կարեւորութիւնը:

Ռ.Ա.Կ.-ի արձանագրած ընտրական յաջողութիւնը ոգեւորեց մեր աշխարհատարած շրջանակները, մանաւանդ որ յաջողած էինք վերականգնել **Ռ.Ա.Կ.-ի** ներքին միասնականութիւնը: Շնորհաւորական հեռագրեր եւ շնորհաւորագրեր կը յաջորդէին իրարու: Տասնամեակներ շարունակ Լիբանանի խորհրդարանի մէջ ներկայացուած ըլլալու իրաւունքէն զրկուած գաղափարական մեր ընտանիքը արդար հպարտութեամբ լեցուած էր: Շնորհաւորանքներ կը ստանայի նախագահ **Էմիլ Լահուտէն, Արամ Ա. Կաթողիկոսէն, Լիբանանահայոց Առաջնորդ Գեղամ Շապ. Խաչերեանէն**, հայ թէ արաբ ղեմքերէն, քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, պետական բարձրաստիճան գործիչներէն, հոգեւորականներէն, մտաւորականներէն, լրագրողներէն եւ աշխարհատարած մեր շրջանակներէն: Բարեկամ եւ համակիր կազմակերպութիւններ Նոյնպէս կը շնորհաւորէին զիս: Անոնց մէջ էր նաեւ **Յ.Բ.Ը.** Միութեան նախագահ **Լուիզ Մանուկեան Սիմոնը**, որ կը գրէր.

*Յարգելի Պրն. Յակոբ Գասարճեան,
Լիբանանեան երեսփոխանական ընտրութեանց Ձեր փայլուն յաջողութեան առիթով ընդունեցէք մեր բիւրաւոր շնորհաւորութիւնները:*

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

Մեզի մեծ հրճուանք կը պատճառէ Ձեզ տեսնել խորհրդարանին մէջ, ներկայացնելով հայութիւնը, Զ.Բ.Ը. Միութիւնն ու Ռամկավարները: Որոշապէս ասիկա Ռ.Ա.Կ.-ին համար յառաջդիմական քայլ մըն է, քաղաքական առաջին եւ իսկական յաջողութիւն մը:

Լաւագոյն մաղթանքներով՝

**Զ.Բ.Ը. Միութեան Նախագահ
Լուիզ Մանուկեան Սիմոն
Նիւ Եորք
27 Սեպտեմբեր 2000**

Խորհրդարանի մէջ Ռ.Ա.Կ.-ի արձանագրած յաջողութիւնը իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ նաեւ կուսակցութեան վարկին վրայ: Լիբանանեան քաղաքական դէմքեր յաճախ այցելութիւններ կու տային Թեքէեան կեդրոն, որ տարիներ շարունակ կարծես հեռու մնացեր էր ներքին քաղաքական կեանքէն: 2003ին, երբ գլխաւորեցի Նոր ընտրուած Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, լիբանանեան քաղաքական, կուսակցական, պետական եւ հոգեւոր դէմքեր շնորհաւորանքի այցելութիւններ տուին Թեքէեան կեդրոն: Ասիկա ապացոյցն էր որ օրըստօրէ կը բարձրանար Ռ.Ա.Կ.-



Վարչապետ Զարիրի կը ծանօթանայ «Չարթօնք»ի արարերէն յաւելուածին, 2004:

ի հեղինակությունը լիբանանեան քաղաքական կեանքէն ներս: Մեզի կ'այցելէին Ամալ Շարժումի, Մարոնի Լիկայի, Մուֆթիի, Մամլոյ Սենտիքայի, Դովմի, Տեմոքրաթական Վերանորոգման, Թատամոն, Յառաջդիմական Ընկերվարական, Լիբանանեան ճակատ, Փաղանգաւոր, Զըզպալլա, Լիբանանեան Ոյժեր եւ այլ կուսակցութիւններու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ:

Հակառակ **Ռաֆիք Հարիրիի** գլխաւորած «Պեյրութի Արժանապատուութիւն» ցանկին մեր անդամակցութեան, միշտ ալ նախանձախնդիր եղայ լիբանանեան այլ ոյժերու հետ երկխօսութեան եւ յարաբերութիւններու սերտացումին: Խորհրդարանի նախագահ **Նեպիի Պըրրիի** եւ իր գլխաւորած Ամալ Շարժումի հետ բազմաթիւ հանդիպումներու ընթացքին քննարկած ենք միջազգային, շրջանային եւ լիբանանեան ներքին հարցեր, մանաւանդ՝ պաղեստինցի ժողովուրդի արդար դատի պաշտպանութիւնը, իսրայելեան բռնարարներու դատապարտումը, լիբանանցիներու միասնականութեան եւ համերաշխութեան անհրաժեշտութիւնը եւ Հայոց Ցեղասպանութեան դատապարտումը:

Ռ.Ա.Կ.-ի հանդէպ լիբանանեան մամուլը նոյնպէս մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեց: Այս եւ յաջորդող տարիներուն հարցազրոյցներ, թղթակցութիւններ եւ անդրադարձներ կ'ըլլային «Ալ-Հաուատես», «Ալ Պայրաք», «Ալ Սայյատ», «Ալ Տիյար», «Ալ Պալատ», «Ալ Նահար», «Ալ Աֆքար» «The Daily Star», «La Revue Du Liban», «L'orient Le Jour», «Magazine» եւ լիբանանեան բազմաթիւ այլ թերթերու եւ ամսագրերու մէջ, լրատուական գործակալութիւններուն կողմէ, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի կայաններէն, որոնք տասնամեակներ շարունակ գրեթէ անտեսած ըլլալով Ռ.Ա.Կ.-ը, սկսած էին լուսաբանել մեր գործունեութիւնները:

Այցելություն Ֆրանսա եւ Հանդիպումներ Զաղաքական Դեմքերու Հետ

Դեկտեմբեր 2000ին, քաղաքական, ազգային, ընկերային եւ միութենական հանդիպումներով հարուստ տասնօրեայ այցելություն մը տուի Ֆրանսա: Բարեկամներու հետ առաջին հանդիպումս տեղի ունեցաւ ընկ. **Արա Ահարոնեանի** եւ իր տիկնոջ կազմակերպած ճաշկերոյթին ընթացքին, որուն ներկայ էին Ռ.Ա.Կ.-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի ամբողջ շրջանակը: Ներկայ էին նաեւ Ֆրանսայի մօտ Հայաստանի դեսպան **Էդուարդ Նալբանդեան**, Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ **Գիւտ Արք. Նազգաշեան**, Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Ֆրանսայի Առաջնորդ Գերապայծառ **Կապրոյեան**, Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Վարուժան Սիրապեան**, Հ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակային Յանձ-



Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Շրջանակի ակումբներու միացեալ ժողով: Նկարին մէջ երկու կողմերուս կ'երեւին Անդրանիկ Զէշիշեան, Վարուժան Սիրապեան, Կարապետ Փալթոպետրոսեան եւ ուրիշ ընկերներ, Լիոն, 2000:

ՆաԺողովի ատենապետ ընկ. **Էտի Ադամյան**, Ապրիլ 24 Կազմակերպության Նախագահ ընկ. **Լեոն Զեպապճեան**, «Յառաջ» թերթի խմբագրուհի **Արփի Միսաքեան** եւ ուրիշներ: Լիբանանի խորհրդարանի երեսփոխան ընտրուելու առիթով զիս շնորհաւորելու եկած ազգայիններու հետ առիթ ունեցայ միտքեր փոխանակելու ազգային-քաղաքական հարցերու մասին: Զ.Բ.Ը. Միութեան Փարիզի շրջանակը Նոյնպէս ճաշկերոյթ մը կազմակերպեց այցելութեանս առիթով:

Լիոնի Ռ.Ա.Կ. Միիւրան Տէր Ստեփանեան ակումբի կազմակերպութեամբ, Դեկտեմբեր 20ին տեղի ունեցաւ Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանակի պատասխանատուներու հետ հանդիպում մը, որուն ներկայ եղան ղեկավար ընկերներ Լիոնէն, Վալանսէն, Մարսէլէն, Կրէնոպլէն եւ Վիէնէն: Հիմնական օրակարգի հարցերու շարքին քննարկուեցան Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանակին գործունեութիւնը եւ Ռ.Ա.Կ. ԻԲ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին հետ առնչուող հարցերը: Խօսեցայ այդ ժողովին կարեւորութեան մասին եւ թելադրեցի ընկերներուն բոյր շրջանակներու հետ լաւապէս պատրաստուիլ ժողովին:

Նոյն օրը, Զ.Բ.Ը. Միութեան Լիոնի մասնաճիւղին կազմակերպութեամբ, Ալէք Մանուկեան Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն մը, ուր խօսեցայ լիբանանեան վերջին երեսփոխանական ընտրութիւններուն, կուսակցութեան տարած աշխատանքներուն, Զ.Բ.Ը. Միութեան ցուցաբերած աջակցութեան եւ գործակցութեան, ինչպէս նաեւ այդ ընտրութիւններու արդիւնքներուն եւ անոնց ունեցած հետեւանքներուն մասին, լիբանանեան թէ հայկական առումով: Անդրադարձայ այն իրաւունքներուն, զորս ունի լիբանանահայութիւնը: Շեշտեցի թէ Ռ.Ա.Կ.-ը եւ Զ.Բ.Ը. Միութիւնը կոչուած են գործնական դերակատարութիւն մը ունենալու Լիբանանի քաղաքական կեանքէն ներս, որ ուժականութիւն մը կու տայ կուսակցութեան եւ միութեան, միեւնոյն ատեն լուրջ պարտաւորութիւն մը՝ գալիք մարտահրաւերներուն ընդառաջ: Դասախօսութեան ավարտին պատասխանեցի ներկաներուն քաղաքական թէ ազգային բնոյթի հարցումներուն:

Ֆրանսա գտնուած օրերուս կարեւոր այցելութիւններ տուի ֆրանսական պետական քաղաքական ղեմքերու, որոնց հետ ունեցայ շատ արդիւնաւոր հանդիպումներ: Ֆրանսայի Նախկին արտաքին գործոց Նախարար եւ երեսփոխան **Էվրէ Տէօ Շարէթի** հետ քննարկեցինք Միջին Արեւելքի շրջանը յուզող հարցերը, որոնք իրենց անդրադարձը կ'ունենան Լիբանանի վրայ: Ան ըսաւ թէ Եւրոպան ընդհանրապէս եւ Ֆրանսան մանաւանդ կը շարունակեն դուրս մնալ շրջանի խաղաղութեան գործընթացէն: Ես ընդգծեցի Ֆրանսայի կարեւոր դերը եւ գործնական մասնակցութիւնը արաբ-իսրայէլեան

տազնապի լուծման գործընթացին մեջ, յատուկ ուշադրություն դարձնելու որ Լիբանան չտուժե շրջանային խաղաղության մը գոյառումի պարագային:

Տեսակցութեան աւարտին, պրն. **Շարէթին** շնորհակալութիւն յայտնեցի ցուցաբերած ջերմ ընդունելութեան համար եւ փափաք յայտնեցի որ Ֆրանսան շարունակէ իր կարելիութիւնները ի սպաս դնել ի նպաստ խաղաղութեան եւ Լիբանանի զօրացումին:

Յաջորդ հանդիպումը RPR կուսակցութեան նախագահուհի, նախկին նախարարուհի **Միշէլ Ալիօ-Մարիի** հետ էր, որուն մասնակցեցան կուսակցութեան ընդհանուր քարտուղար **Ատրիէն Կուլէյրօ**, Ֆրանսայի խորհրդարանի անդամ պրն. **Փաթրիք Տելէճեան**, կուսակցութեան գերագոյն ղեկավարութեան մաս կազմող այլ անձնաւորութիւններ, Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Վարուժան Սիրապեան**, Յ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի անդամ **Վահէ Ճազմատարեան** եւ Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ վարչութեան անդամ ընկ. **Գեղամ Թորոսեան**: Տեսակցութիւնը տեղի ունեցաւ RPR-ի կեդրոնին մէջ:

Լիբանանի խորհրդարանի անդամ ընտրուելու առիթով շնորհաւորանքի խօսքերէն ետք, գործնական խօսակցութիւն ունեցանք Լիբանան-Ֆրանսա բարեկամական յարաբերութիւններուն եւ RPR-ի ու Ռ.Ա.Կ.-ի միջեւ համագործակցութեան հարցերուն շուրջ: Տեսակցութիւնը առիթ էր աւելի ամրապնդելու երկու կուսակցութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները եւ գործակցութիւնը, որոնք դրական արդիւնքներ տուած էին թէ՛ Ֆրանսայի մէջ եւ թէ՛ Ֆրանսա-Հայաստան յարաբերութիւններու գծով:

Ռ.Ա.Կ. ԻԲ. (22րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով

Ռ.Ա.Կ. ԻԲ. (22րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը պատմական առիթ մը եղաւ կուսակցութեան ներքին միասնականութեան վերահաստատման տեսակէտէ: Ժողովը գումարուեցաւ Աթենքի մէջ, Ապրիլ 6-8, 2001ին: Երկար ժամանակ եւ ճիգ պահանջեց պատգամաւորականին պատրաստութիւնը: Յունաստանի մեր Շրջանակին հիւրընկալութեամբ գումարուած Ընդհանուր Պատգամաւորականին մասնակցեցան մեր բոլոր Շրջանակները: Համերաշխական եւ խանդավառ մթնոլորտի մը մէջ ընտրուեցաւ Նոր Կեդրոնական Վարչութիւն մը, որ կը ներկայացնէր բոլոր կողմերը:

Հինգ տարի տեւած ներքին տազնապը վերջ կ'ունենար այսպիսով, միացեալ Կեդրոնի մը ընտրութեամբ: Նորընտիր Կեդրոնական Վարչութեան մաս կազմեցին հետեւեալ ընկերները.- **Հայկաշէն Ուզունեան** (պատուոյ Նախագահ), **Յակոբ Գասարճեան** (ատենապետ), **Երուանդ Ազատեան** (փոխ-ատենապետ), **Վարդան Ուզունեան** (փոխ-ատենապետ), **Գրիգոր Ատանալեան** (փոխ-ատենապետ), **Արտաւազդ Մելիքսեթեան** (ատենադպիր), **Դոկտ. Յարութիւն Արզումանեան** (փոխ-ատենադպիր), **Մայք Խարապեան** (գանձապահ), **Յակոբ Վարդիվառեան**, **Փանոս Զեչիշեան**, **Խաչիկ Ֆապրիքաճեան**, **Ռուբէն Թերզեան**, **Կարպիս Եազըճեան** եւ **Լեւոն Զեպապճեան** (խորհրդականներ):

Կուսակցութեան պատմութեան, մանաւանդ անոր միասնականութեան վերականգնման տեսակէտէ կարեւոր այս Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին առիթով հրապարակուած հաղորդագրութեան մէջ ըստուած էր.

...Երկար ատենէ ի վեր Նախապատրաստուող Ռ.Ա.Կ. 22րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կայացաւ Աթենքի մէջ՝ 6-8 Ապրիլ 2001ին, հիւրընկալութեամբ Յունաստանի մեր շրջանակին, մասնակցութեամբ՝ Ռ.Ա.Կ.-ի բոլոր շրջանակներու պատգամաւորներուն:

Գաղտնիք մը չէ, որ հայ իրականութեան մէջ յառաջացան որոշ զարգացումներ, որոնք ազգային քաղաքական վերադասաւորումներ ստեղծեցին սփիւռքի կառոյցներէն ներս. առաջին հերթին ցնցումի ենթարկուեցան սփիւռքի մէջ գործող մեր աւանդական կուսակցութիւնները: Դժբախտաբար, անոնց կարգին Նաեւ Ռ.Ա.Կ.-ը եւս գերծ



Ռ.Ա.Կ.-ի 22րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը Աթէնքի մէջ, 2001:

չմնաց այդ ցնցումներէն, որոնք խախտեցին անոր ներքին միասնականութիւնը եւ ժամանակաւորապէս դանդաղեցուցին անոր գաղափարական առաքելութեան յառաջընթացը:

Երկարատեւ բանակցութիւններէ ետք, կուսակցութեան ղեկավար շրջանակներ, թելադրուած օրուան քաղաքական հրատապ հրամայականներէն, ինչպէս նաեւ կուսակցական շարքերէ արծակուած միասնականութեան սրտառուչ կոչերէն, որոշեցին ի գին ամէն դժուարութեան վերականգնել կուսակցութեան ներքին միասնականութիւնը եւ զայն վերադարձնել իր առաքելութեան պատմական հունին:

Պատգամաւորական Ժողովը առաջին հերթին առիթ ընծայեց առողջ քննարկումի ենթարկելու կազմակերպութեան կառոյցին անդրադարձող տարակարծութիւնները եւ գործունէութեանց առաջնահերթութիւնները եւ իր նիստերու աւարտին վճռական քայլը առաւ այնքան ցանկացուած միասնականութիւնը իրականութիւն դարձնելու:

Ժողովը ընտրեց կուսակցութեան բոլոր շերտաւորումները եւ հոսանքները հասարակ յայտարարի բերող Կեդրոնական Վարչութիւն մը եւ զայն լիազօրեց վերականգնելու շրջանակները, հիմնական Ծրագիր-կանոնագրի մէջ ներմուծուած նոր բարեփոխումներու լոյսին տակ...:

Մայր Դիւան Ռ.Ա.Կ. 22րդ Ընդհ. Պատգմ. Ժողովի

Արմենականներու Ամմանի Մեծ Բանակումի հովանաւորութիւն

Միջին Արեւելքի երկիրներու մէջ գործող Թեքէեանական կամ Ռ.Ա.Կ.-ի հովանաւորութիւնը վայելող միութեանական երիտասարդութեան համար բանակումները միշտ ալ կարելոր եղած են: Այդպիսի կարելոր բանակում մըն էր 17էն 22 Յուլիս 2001ին, Ամմանի մէջ տեղի ունեցած մեծ բանակումը, որուն հովանաւորութիւնը ստանձնեցի տիկնոջս հետ:

Արդարեւ, Արմենական Արիական Շարժման Գ. Մեծ բանակումը, որ կազմակերպուած էր Ամմանի Ազգային Մարզական Միութեան կողմէ, մեծ յաջողութիւն ունեցաւ մասնակցութեամբը 110 արիներու, որոնք եկած էին Երուսաղէմի Զ.Ե.Ս.-էն, Զալէպի Թ.Մ.Ս.-էն, Գահիրէի Գեղարուեստասիրաց Միութենէն, Աղեքսանդրիայի Տիգրան Երկաթ Միութենէն, Ամմանի Ազգային Մարզական Միութենէն եւ Աքքապայի հայ գաղութէն՝ բարձր պարգած իրենց դրօշները:

Մեր երիտասարդութիւնը համախմբելու, ազգային առողջ դաստիարակութիւն ջամբելու, ինչպէս նաեւ զիրենք գաղափարապէս պատրաստելու ուղղութեամբ այս բանակումը իրապէս անմոռանալի էր: Բանակումի յաջողութեան իրենց կարելոր նպաստը բերած էին Ա.Մ.Ս.-ի, Զ.Ե.Ս.-ի եւ Անթիքաճեան ակումբի պատասխանատուները եւ ընկերներ **Ներսէս Ներսէսեանը, Յակոբ Յակոբեանը, Ճոնի Եսայեանը** եւ ուրիշներ:

Ռ.Ա.Կ.-ի 80 եւ Զ.Ռ.Ա.Կ.-ի 10 Ամեակի Հանդիսութիւնները Պէյրուքի եւ Երեւանի Մէջ

Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակի յոբելեական ձեռնարկները սկսանք Պէյրուքի մէջ, 11 Նոյեմբեր 2001ին, Թէքէեան Կեդրոնի Հրաչեայ Սեդրակեան սրահին մէջ տեղի ունեցած հանդիսութեամբ եւ ճաշկերոյթով, որուն ներկայ գտնուեցան պետական թէ ազգային դէմքեր, կուսակցութեանց ներկայացուցիչներ եւ հիւրեր: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան հովանաւորեամբ եւ ընկ. **Կարապետ Պապահէքեանի** նախագահութեամբ տեղի ունեցած հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր ընկերուհի **Մայտա Զելեշեան**, ինչպէս նաեւ Եգիպտոսէն յատուկ հրաւիրուած ընկ. **Գեորգ Երզնկացեան**, որ արաբերէն լեզուով տպաւորիչ ելոյթ մը ունեցաւ:

Հանդիսութիւնը առիթ էր պարգեւատրելու վեթերան, վաստակաւոր եւ



Ռ.Ա.Կ.-ի 80 եւ Զ.Ռ.Ա.Կ.-ի 10 ամեակին նուիրուած օփերայի հանդիսութեան ելոյթի պահուն, Երեւան, 2001:



Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կը յանձնեմ Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակի յուշանուէրը, Ս. Էջմիածին, 2001:

երախտաւոր ընկերներ **Կարապետ Պապահէքեանը, Սաթենիկ Մանուկեանը, Եսայի Տատուրեանը, Անդրանիկ Պոզոյեանը, Կարապետ Ճերեճեանը, Գրիգոր Զիւրեճեանը, Յակոբ Զեօրողեանը, Կարախ Ուզունեանը, Աւետիս Բարդիեանը, Վարդգէս Իւրնէշեանը եւ Արթիւր Վայեճեանը:** Ինծի համար հպարտութիւն էր որ այս հանդիսութեան ընթացքին ոչ միայն պարգեւատրած էինք իրապէս արժանաւոր ընկերներ, այլ նաեւ երեսուն նորագիրներ միացած էին Ռ.Ա.Կ.-ին, ուխտելով ծառայել հայրենիքին եւ ազգին:

Կուսակցութեան վերամիաւորման խանդավառ մթնոլորտին յաջորդեցին ոգեւորիչ ձեռնարկներ: Նոյեմբեր 24էն մինչեւ 2 Դեկտեմբեր 2001, Երեւանի մէջ տեղի ունեցան Ռ.Ա.Կ.-ի 80 եւ Հ.Ռ.Ա.Կ.-ի 10 ամեակի յորելենական հանդիսութիւնները, որոնց մասնակցելու համար Երեւան ժամանած էին Ռ.Ա.Կ. Կեդրոնական եւ Լիբանանի Շրջանային Վարչութեանց պատուիրակութիւնները, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Եգիպտոսէն, Սուրիայէն եւ այլ երկիրներէ երեսունէ աւելի ընկերներ:



Տեսակցութիւն Նախագահ Ռոբերտ Զոհարեանի հետ, Երեւան, 2001:

Յորելեական փառաշուք ձեռնարկներուն փակումը կատարուեցաւ Երեւանի Ալեքսանդր Սպենդիարեանի անուան Օփերայի եւ պալէի թատրոնի շքեղ սրահին մէջ Նոյեմբեր 27ին տեղի ունեցած եզրափակիչ տօնակատարութեամբ, որուն ներկայ գտնուեցան Հայաստանի Նախագահ **Ռոբերտ Զոհարեան**, Ն.Ս.Օ.Տ.Տ. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանի Ազգային Ժողովի Նախագահ **Արմէն Խաչատրեանը**, ինչպէս նաեւ պետական, քաղաքական եւ հասարակական այլ դէմքեր:

Բարձր մակարդակի եւ անմոռանալի համերգին **Յովհաննէս Չեփճեանի** ղեկավարութեամբ Հայաստանի ազգային պետական ակադեմական երգչախումբը քառաձայն կատարեց կուսակցութեան քայլերգը: Ելոյթներ ունեցան Հայաստանի Սիմֆոնիք Նուագախումբը եւ երգչախումբը, **Ռոբերտ Ամիրխանեան**, **Արա Գեորգեան** եւ ուրիշներ: Ռ.Ա.Կ.-ի 80 եւ Հ.Ռ.Ա.Կ.-ի 10 ամեակի զոյգ առիթներով այդ օրը հանդէս եկայ բանախօսութեամբ: Ելոյթ ունեցաւ նաեւ ընկ. **Ռուբէն Միրզախանեան**:

Երեւանի Թեքէեան Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Ռ.Ա.Կ.-Յ.Ռ.Ա.Կ. խորհրդակցական ժողով մը: Հայաստանի նախագահին, Վեհափառ Հայրապետին եւ բարձրաստիճան այլ ղեկավարներու հետ հանդիպումներ, կուսակցական քննարկումներ, նորագիտներու երդմնառութիւն, «Ռ.Ա.Կ. 80 Ամեակ-2001» յուշատախտակով ծառատնկում Ծիծեռնակաբերդի «Յիշողութեան Պուրակ»ին մէջ եւ այլն: Նախագահ **Քոչարեանի** հետ հանդիպման ընթացքին ընկ. **Երուանդ Ազատեան** պարզեւատրուեցաւ «Մովսէս Խորենացի» մետալով:

Այցելութիւններ տուինք նաեւ Շիրակի եւ Արարատի մարզերը: Հայաստանի տնտեսական վիճակին մօտէն ծանօթանալով, մի քանի առիթներով յայտարարեցի թէ հակառակ անոր որ տնտեսական վիճակին բարելաւումը նկատելի է, յաջողութեան հասնելու համար երկրին պէտք են քաղաքական կայունութիւն եւ ներդրումներու համար պայմաններու բարելաւում:

Խանդավառուելով Արարատի մարզի կուսակցական կառոյցի գործունեութեամբ, Ռ.Ա.Կ. Ֆրանսայի Շրջանային Վարչութեան անդամներ ընկերներ **Վարուժան Սիրապեան, Լեւոն Զեպապճեան** եւ **Գրիգոր Փալթոպետրոսեան** երկարկանի շէնք մը գնելով նուիրեցին Հ.Ռ.Ա.Կ.-ի ակումբներուն, որպէս հաւաքավայր: Մենք նոյնպէս նիւթապէս մասնակցեցանք այդ շէնքին գնումին: Շատ խանդավառիչ օրեր էին:



Ծառատունկ՝ Ծիծեռնակաբերդի «Յիշողության Պուրակ»ին մեջ, 2001:

Համահայկական Բ. Խորհրդաժողովի Մասնակցություն

27-28 Մայիս 2002ին, Երեւանի մէջ գումարուած Համահայկական Բ. Խորհրդաժողովին մասնակցելու նպատակով եւ գլխաւորելով Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը, մեկնեցայ Երեւան: Պատուիրակութեան մաս կը կազմէին Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ ընկ. **Երուանդ Ազատեան**, ատենադպիր ընկ. **Արտաւազդ Մելքիսեթեան**, անդամներ՝ ընկերներ **Կարպիս Եազըճեան** եւ **Լեւոն Զեպաճեան**:

Խորհրդաժողովի աշխատանքներն սկսելէ առաջ, Հ.Ռ.Ա.Կ.-ի ատենապետ ընկ. **Ռուբէն Միրզախանեան**ի հետ պատուիրակութիւնը մեկնեցաւ Իջեւան, ուր տեղի ունեցաւ նորագիրներու երդմնառութիւն եւ Ընդհանուր Անդամական Ժողով: Տաւուշի մէջ կազմուեցաւ Շրջանային Վարչութիւն մը: Իջեւանի քաղաքապետին ներկայութեամբ բացումը կատարուեցաւ կուսակցութեան



Համահայկական երկրորդ խորհրդաժողովի ելոյթիս պահուն, Երեւան, Մայիս 2002:



Կարլեն Դալլաբեան կը մակագրէ Ռ.Ա.Կ.-ի պատմութեան իր գիրքը, Երեւան, 2002: Նկարին մէջ կ'երեւայ Ռոմէն Կոզմոյեան:

Նոր գրասենեակին: Մայիս 25ին, Երեւանի մէջ, ընկերներ **Երուանդ Ազատեան** եւ **Արտաւազդ Մելքիսեթեան** ներկայ եղան Երեւանի Կոմիտաս պողոտային վրայ գտնուող Հ.Ռ.Ա.Կ. գրասենեակի բացումին: Այդ առթիւ Նոյնապետ կատարուեցաւ կուսակցականներու երդմնառութիւն: Կուսակցական երդմնառութիւն կատարուեցաւ նաեւ Արմաւիրի մէջ, որուն քաղաքապետը Նոյնապետ ներկայ գտնուեցաւ կուսակցական գրասենեակի բացումին:

Ռ.Ա.Կ.-Հ.Ռ.Ա.Կ. յարաբերութիւններու հետ կապուած հարցեր քննարկելու համար կարելոր ժողով մը ունեցանք Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Ռ.Ա.Կ. Հանրապետական Վարչութեան միջեւ: Երեւանի Թէքէեան Կեդրոնին մէջ տեղի ունեցած այդ հանդիպումը օգտակար եղաւ համագործակցութիւնը սերտացնելու ուղղութեամբ: Խօսեցանք նաեւ Հայաստանի խորհրդարանական գալիք ընտրութիւններուն Հ.Ռ.Ա.Կ.-ի մասնակցութեան հարցերու մասին: Նոյն օրը հանդիպեցանք նաեւ Հ.Ռ.Ա.Կ.-ի Երեւանի Վարչութեան անդամներուն հետ: Շուրջ 200 կուսակցականներու ներկայութեամբ տեղի ունեցած այդ հանդիպումին կատարուեցաւ նաեւ Նորագիրներու երդմնառութիւն: Յանուն Հ.Ռ.Ա.Կ.-ի, ընկ. **Ռուբէն Միրզախանեան** պարգևատրեց ընկ. **Երուանդ Ազատեանը**, առ ի գնահատանք անոր Հ.Ռ.Ա.Կ.-ին մատուցած



Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսներուն հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանին մէջ, 2002:

ծառայութիւններուն: Խօսք առինք ընկերներ **Արտաւազդ Մելքիսեթեան, Արմէն Ստեփանեան, Երուանդ Ազատեան** եւ ես:

Նոյն օրը առաւօտուն տեղի ունեցած էր Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նիստը, որուն ի պաշտօնէ մասնակցած էի նաեւ ես: Նիստին գլխաւոր նիւթը Հայաստանը Արցախին կապող Հիւսիս-Հարաւ մայրուղիի շինութեան ծրագիրն էր:

Հայաստան-Սփիւռք Բ. Խորհրդաժողովին առջեւ ունեցած ելոյթիս մէջ ազգային-քաղաքական զանազան հիմնահարցերու կողքին, անդրադարձայ նաեւ Հայաստանի ազգային քայլերգի փոփոխութեան հարցին: Առաջարկս ծափահարութիւններով ընդունուեցաւ մասնակիցներուն կողմէ: Նախագահ **Քոչարեանի** հետ հանդիպման ընթացքին կրկնեցի առաջարկս: Ան համամիտ էր մեզի հետ, յայտնելով որ յառաջիկային տեղի ունենալիք Նոր Սահմանադրութեան հանրաքուէով հարցը լուծուած պիտի ըլլայ: Թէեւ Սահմանադրութենէն հանուեցաւ «Մեր Հայրենիք»ը, սակայն մնաց որպէս Հայաստանի ազգային քայլերգ՝ սպասելով օրէնքին:

Յաջորդող օրերուն խիստ շահեկան տեսակցութիւններ ունեցանք Հայաստանի նախագահ **Ռոբերտ Զոհարեանի** եւ **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ: Նախագահ **Զոհարեանի** հետ տեսակցութիւնը տեւեց շուրջ մէկուկէս ժամ: Տեսակցութեան կը մասնակցէին նաեւ ընկերներ **Երուանդ Ազատեան, Ռուբէն Միրզախանեան, Արտաւազդ Մելիքսէրեան:** Խօսեցանք Արցախի եւ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական կացութեան եւ եկեղեցական հարցերու մասին: Անդրադառնալով գալիք Ապրիլ ամսուան տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն, **Զոհարեան** շատ յստակ կերպով փափաք յայտնեց Հ.Ռ.Ա.Կ.-ը խորհրդարանէն ներս տեսնելու մասին:

Մայիս 26ին, Ս. Էջմիածնայ մէջ ընկերներ **Երուանդ Ազատեանի** եւ **Արտաւազդ Մելիքսէրեանի** հետ ներկայ գտնուեցանք կարեւոր ժողովի մը, որուն կը մասնակցէին **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ **Արամ Ա.** Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի եւ Ս.Դ.Հ.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները, **Զօրի Բալայեանը** եւ **Զօր. Արթուր Աղաբէկեանը:** Ժողովին գլխաւոր նիւթը Դաշտային Ղարաբաղի ազատագրուած հողերու վերաբնակեցման առաջարկն էր:

Առաջարկը ատենին ներկայացուած էր Հ.Յ.Դ. Բիւրոյին: **Զօրի Բալայեան** եւ **Զօր. Արթուր Աղաբէկեան** Պէյրութ այցելութիւն մը տուած էին եւ մեզի ալ ներկայացուցած այդ առաջարկը: Իմացած էինք թէ Հայաստանի նախագահը վերապահութիւն ունէր այս առաջարկին նկատմամբ: Ժողովը զոյգ Կաթողիկոսներուն լիազօրութիւն տուաւ հանդիպելու նախագահին հետ եւ անկէ ստանալու լուսաբանութիւններ: Երկու օր յետոյ նոյն կազմով դարձեալ հանդիպեցանք: Վեհափառ Հայրապետները ներկայացուցին նախագահին հետ այդ նիւթին մասին իրենց ունեցած խօսակցութեան արդիւնքը: Որոշուեցաւ անորոշ ժամանակով սառնեցնել այդ ծրագրին հրապարակումը:

Յաջորդող օրերուն Ռ.Ա.Կ. եւ Հ.Ռ.Ա.Կ. պատուիրակութիւններու մասնակցութեամբ երկարատեւ հանդիպում մը ունեցանք Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, ուր քննարկեցինք ազգային-եկեղեցական հարցեր, մանաւանդ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ ստեղծուած Գանատայի նոր Թեմի պարագան: Վեհափառը շատ վճռական էր Մայր Աթոռի նուիրապետական իրաւունքներուն եւ նախամեծարութեան պահպանման հարցերու առնչութեամբ:

Փաթրիք Տելեճեանի Հետ Հանդիպումս

Սեպտեմբեր 2002ին, Փարիզի մէջ տեսակցութիւն մը ունեցայ **Փաթրիք Տելեճեանի** հետ, որ այն ատեն Ֆրանսայի տեղական ազատութիւններու քարտուղարի կարգով Նախարարի պաշտօնը կը վարէր: **Տելեճեանը** կը ճանչնայի 1996ին Լիոնի մէջ գումարուած կուսակցական մեր ժողովի օրերէն, երբ հանդիպում ունեցած էինք հետը: Յատուկ ժամադրութեամբ մը, ընկ. **Վարուժան Սիրապեանի** մասնակցութեամբ, **Տելեճեանի** գրասենեակին մէջ տեղի ունեցած այդ հանդիպումին քննարկեցինք Լիբանան-Ֆրանսա յարա-



Փաթրիք Տելեճեանի հետ, Փարիզ 2002:

բերութիւններու, ամիս մը յետոյ Պէյրութի մէջ տեղի ունենալիք Ֆրանքոֆոն երկիրներու գերաստիճանի եւ Լիբանանի տնտեսութեան զօրակցութեան «Փարիզ-2» համագումարին առնչուող հարցեր:

Բնականաբար հայութեան հարցերը նոյնպէս մեր խօսակցութեանց նիւթն էին: Քննարկեցինք Ֆրանսայի եւ Լիբանանի հայութեան միջեւ յարաբերութիւնները ամրապնդելու, Ֆրանսայի իշխող RPR կուսակցութեան եւ Ռ.Ա.Կ.-ի, ինչպէս նաեւ UMP-ի (Նախագահական Մեծամասնական Միութիւն) եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ կապերը ամրապնդելու եւ գործակցութիւնը զօրացնելու հարցերը: Շատ դրական եւ օգտակար տեսակցութիւն մըն էր: Որոշեցինք շարունակել մեր միջեւ հաղորդակցութիւնը եւ աշխատիլ մեր երկու կուսակցութիւններու գործակցութիւնը զարգացնելու ուղղութեամբ:

Վահան Թեքեան Վարժարանի 50 Ամեակի Հանդիսություն

Վահան Թեքեան Վարժարանի 50 ամեակին նուիրուած հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Կրթութեան Նախարար **Ապտըլ Ռահիմ Մուրատի**, տեղի ունեցաւ 9 Դեկտեմբեր 2002ին, Յովհաննէս Պօղոսեան հանդիսասրահին մէջ: Անոր ներկայ գտնուեցան Նախարարներ եւ երեսփոխաններ **Պըշարա Մըրիէժ, Ուալիտ Իյտօ, Եղիկ Ճերեճեան, Պասէմ Եամմուր, Սերժ Թուրսարգիսեան, Մուհամմատ Քապպանի, Ժան Օղասափեան, ԱթէՖ Մաժտաւանի, Ղաթթաս Խուրի, Նասէր Քանտիլ, Լիբանանահայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Խաչերեան, Հայ Կաթողիկէ Առաջնորդ Վարդան Ազգարեան, Լիբանանի Կեդրոնական Դրամատան փոխ-Նախագահ Յարութիւն Սամուէլեան, Հայկազեան Համալսարանի Նախագահ Փոլ Հայտոսթեան, ինչպէս նաեւ լիբանանահայ թէ լիբանանցի քաղաքական դէմքեր:**

Նախարարը վեր առաւ կրթութեան ասպարեզին մէջ մեր դպրոցին կատարած դերը: Խօսքիս մէջ բարձր գնահատեցի Նախարար **Մուրատի** գործադրած ճիգերը դպրոցական թէ համալսարանական կրթութեան բարելաւումին ի նպաստ: Առիթն օգտուելով Յուշատախտակ մը նուիրեցի Նախարարին՝ վարժարանի եւ Թ.Մ.Մ.-ի կողմէ: Իր կարգին Նախարարը Ուսուցչի Յուշամետալով պարգեւատրեց վարժարանի երկարամեայ տնօրէն ընկ. **Երուանդ Պապայեանը**, որ յատուկ այդ նպատակով Պէյրութ ժամանած էր:

Ռ.Ա.Կ. ԻԳ. (23րդ) Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, Փարիզ

24-26 Հոկտեմբեր 2003ին, Փարիզի մէջ գումարուեցաւ Ռ.Ա.Կ.-ի 23րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի Շրջանակին հիւրընկալութեամբ:

12 երկիրներ ներկայացնող 8 Շրջանակներու եւ առանձին ակումբներու պատգամաւորներու մասնակցութեամբ տեղի ունեցած ժողովին, որուն կը մասնակցէի իբր Կեդրոնի ատենապետ, ընտրուեցաւ նոր վարչութիւն մը, զոր գլխաւորեցին համաատենապետներ՝ ընկերներ **Երուանդ Ազատեան** եւ **Ասատուր Տէվլէթեան**: Վարչութեան մաս կազմեցինք ընկերներ **Մայք Խարապեան**, **Տոբթ. Գրիգոր Ատանալեան**, **Արտաւազդ Մելքիսէթեան**, **Յակոբ Վարդիվառեան**, **Վարուժան Սիրապեան**, **Փանոս Զէշիշեան** եւ ես:

Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի աւարտին, վերադառնալով Լիբանան, ընտրուեցայ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ: Առաջին պարտականութիւնս եղաւ համերաշխական մթնոլորտի վերականգնումը եւ կուսակցական գործունեութեան ծրագրի մը որդեգրումը, որ դրական արդիւնքներ ունեցաւ կուսակցական կառոյցի աշխուժացման վրայ: Նիւթապէս ալ օգտակար ըլլալու համար, տարեկան շուրջ 25 հազար տոլար յատկացուցի կուսակցութեան:



Ռ.Ա.Կ.-ի 23րդ ընդհանուր Պառզամարդական ժողովի կողմէ ընտրուած Կեդրոնական
Վարչութեան անդամներս երբման արարողութեան ընթացքին: Ձախէն աջ՝ ընկերներ Սայթ
Խարապեան, Փանոս Բէշիշեան, Գրիգոր Ատամայեան, Երուանդ Ագատեան, Ես, Արտաւազդ
Մելքիսեթեան, Ասատուր ՏԷՎԷԹԵԱՆ, Վարուժան Սիրապեան եւ Յակոբ Վարդիկաթեան:
Նկարին մէջ կ'երեւան նաեւ Զոյր Դովիեան եւ Յարութիւն Առաքեւան, Փարիզ, 2003

Վարչապետ Ռաֆիք Չարիիրի Պատմական Այցելությունը Թեթեան Կեդրոն

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանակին համար պատմական օր մը եղաւ 11 Դեկտեմբեր 2003ը: Վարչապետ **Չարիիրի**, Պէյրուքի Որոշում Համախմբումի երեսփոխաններու եւ բարձրաստիճան պաշտօնատարներու պատկառելի խումբով մը այցելեց Թեթեան Կեդրոն, հովանաւորելու Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպած պաշտօնական ճաշկերոյթը, որ տեղի ունեցաւ մեր կեդրոնի Հրաչեայ Սեդրակեան սրահին մէջ:

Խումբին մաս կը կազմէին Արդարադատութեան նախարար **Պահիժ Թապպարա**, երեսփոխաններ **Պահիյա Չարիիրի**, **Ղընուա Ժալլու**, **Պշարա Մըրիէժ**, **Միշէլ Ֆարաուն**, **Ղաթթաս Խուրի**, **Ատնան Արաբժի**, **Սերժ Թուր-սարգիսեան**, **Եղիկ Ճերեճեան**, **Ժան Օդասափեան**, **Ուալիտ Իյոս**, **Պասէմ Եամմուք**, **Պասէլ Ֆլէյհան**, **Զօր. Ղասսան Պալաա** (Պաշտպանութեան Գերագոյն Խորհուրդ-զինուորական հարցերու խորհրդական), **Զօր. Ուխսամ Հասան** (վարչապետի գրասենեակի տնօրէն, կառավարական պահակագունդի հրամանատար), **Ղազի Եուսէֆ** (Սեփականաշնորհումի Վերին Խորհուրդի պետ), **Ֆատի Արամունի** (Տեղահանուածներու Սնտուկի պետ), **Ֆատի Ֆաուազ** (վարչապետի բարգաւաճումի հարցերու խորհրդական), **Մուհամմատ Սամմաք** (Իսլամ-Զրիստոնեայ Երկխօսութեան Միութեան նախագահ), **Մաարուֆ Տաուք** (վարչապետի տեղեկատուական գրասենեակի պատասխանատու), **Մուհամմատ Մընէյմէ** (վարչապետի արարողակարգի պատասխանատու), **Արա Սիսեռեան** (վարչապետի մօտ հայ համայնքի հարցերու պատասխանատու), **Մահէր Ապու Խըտուտ** (Պէյրուքի Բարգաւաճման Միութեան ծառայութեանց պատասխանատու), **Ուալիտ Զըպպէ** (Պէյրուքի ընտանիքներու կապի փոխ-նախագահ), **Հրայր Տանձիկեան** (Տեղահանուածներու Սնտուկի անդամ), **Վարուժան Զանթարճեան** (Պէյրուքի քաղաքապետարանի անդամ), Հայաստանի դեսպան **Արեգ Յովհաննիսեան**, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Ե.Ը.-ի եւ Ս.Դ.Հ.Կ.-ի պատասխանատուներ, ձեռնարկատէրեր, մտաւորականներ եւ անդամ-անդամուհիներ: ճաշկերոյթին ներկայ գտնուեցան նաեւ լիբանանեան եւ լիբանանահայ մամուլի ղեկավարներ, որոնք լայնօրէն անդրադարձան այցելութեան եւ լիբանանեան քաղաքական կեանքէն ներս Ռ.Ա.Կ.-ի ուշադրաւ ներկայութեան:



Թեթեան կեդրոնին մէջ Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպած ճաշկերոյթը: Ձախէն աջ՝ տէր եւ տիկին Պահիժ Թապպարա, վարչապետ Յարիրի, ես եւ տիկինս, Պահիյա Յարիրի եւ Յայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Դեկտեմբեր 2003:

Պաշտօնական խօսքիս մէջ ըսի. «...Վարչապետը մեզ պատուեց արձանագրելով երկու նախընթացներ, զորս թանկագին շքանշաններ կը նկատենք մեր կուրծքին վրայ: Առաջինը այն է, որ վարչապետ Ռաֆիք Յարիրին այսօր մեզի այցելելով, առաջին անգամ ըլլալով կ'ընդառաջէ հրաւերի մը լիբանանեան կուսակցութեան մը կեդրոնատեղիին մէջ, Ռ.Ա.Կ.-ի ընտանիքին ընկերակցութեամբ: Երկրորդ նախընթացը այն է, որ այս այցելութիւնը առաջինն է, զոր լիբանանցի վարչապետ մը կու տայ մեր կուսակցութեան կեդրոնատեղիին»:

Անդրադառնալով Լիբանանի քաղաքական ներքին կեանքին եւ լիբանանահայութեան կեցուածքներուն, ակելցուցի. «Մեզ՝ իբր լիբանանահայեր, կ'այսպանէին, որ մենք ոտքի կանգնողին հետ ենք, եւ որ մենք իշխանութեան հետ ենք՝ անկախաբար անոր քաղաքականութեան եւ կեցուածքներուն ճշդութենէն ու առողջութենէն: Շատ յաճախ այդ բանը շահագործուեցաւ այլանդակելու համար մեր դերը լիբանանեան մեր հայրենիքին մէջ, որուն համար անձնագոհ կը դառնանք գործով ու ոգիով:

Ն.Վ. Վարչապետ, Ձեր շնորհիւ կրցանք սրբագրել այդ այլանդակուած

պատկերը՝ Ձեզի հետ զինակցելով ընդդիմության թե կառավարության մեջ միասնաբար: Այլեւ երեսփոխանական խորհուրդ մտանք Ձեր ընդդիմադիր ընտրացանկին վրայ, եւ այդ աննախընթաց էր լիբանանահայերու քաղաքական գործունեության պատմության մեջ: Մենք ոտքի կանգնողին հետ չենք: Մենք իրաւունքին հետ ենք...»:

Վարչապետ **Յարիրի** ոգեշունչ ելոյթ մը ունեցաւ այդ օրը, դրուատելով Ռ.Ա.Կ.-ի հետ դաշինքը եւ շեշտելով թէ այդ գործընկերութիւնը շարունակական պիտի ըլլայ ի ծառայութիւն լիբանանեան հայրենիքին: **Յարիրի** յաճախ կը կրկնէր թէ հայկական կուսակցութիւններուն մէջ Ռ.Ա.Կ.-ը ազնուագոյնն է:



Վարչապետ Հարիրի ելոյթ կ'ունենայ Թէքէեան կեդրոնին մէջ տեղի ունեցած Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպած ճաշկերոյթին, Դեկտեմբեր 2003:

Վարչապետ Զարիրի Այցը Հայաստան

Լիբանանի վարչապետ **Ռաֆիք Զարիրի** երկօրեայ պաշտոնական այցելութեամբ Հայաստան մեկնեցաւ Ապրիլ 2004ին, գլխաւորելով պատուիրակութիւն մը, որ կը բաղկանար նախարարներ **Մարուան Համատէ, Ֆուատ Սինիորայէ, Սամիր Ալ ժըսըրէ, Ալի Հասան Խալիլէ, Ղազի Ալ Արիտիէ, Էլի Սքաֆէ**, ինչպէս նաեւ երեսփոխաններ **Սերժ Թուրսարգիսեանէ, Եղիա Ճերեճեանէ, Ժան Օղասափեանէ** եւ ինծմէ: Պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար **Մուհամմատ Իսա**, «Իտալ» ներդրումներու քաջալերումի պետական հաստատութեան նախագահ **Սամիի Ալ Պարպիր**, ինչպէս նաեւ «Չարթօնք»ի խմբագիր **Պարոյր Աղպաշեան**:

Երկու օր տեւած այդ այցելութիւնը մեծապէս օգտակար եղաւ Լիբանան-Հայաստան միջ-պետական յարաբերութիւններու սերտացումին եւ տնտեսական համագործակցութեան: Այցելութեան ընթացքին կրթութեան եւ մշակոյթի բնագաւառներու մէջ համագործակցութեան երկու համաձայնագիրներ ստորագրուեցան: Այդ առիթով վարչապետ **Զարիրի** յայտարարեց թէ ես պէտք է գլխաւորեմ Լիբանանի խորհրդարանի Լիբանան-Հայաստան բարեկամութեան խորհրդարանական խումբը:

Վարչապետ **Զարիրի** յատուկ կարեւորութիւն կու տար Հայաստան-Լիբանան յարաբերութիւններուն եւ այդ յարաբերութեանց ջերմացումին ջատագովն էր: Հայաստանի պետական դէմքերու հետ իր երրորդ այցելութեան ընթացքին ունեցած խօսակցութեանց ընթացքին **Զարիրի** կը շեշտէր հայութեան դրական եւ հաւասարակշռուած դերակատարութիւնը լիբանանեան քաղաքական կեանքին մէջ: Ան բարձր կը գնահատէր ընդհանրապէս լիբանանահայութեան եւ մասնաւորապէս համախոհ լիբանանահայ քաղաքական կուսակցութիւններու հետ իր համագործակցութիւնը:

Թ.Մ.Մ. Գերսամ Ահարոնեան Սրահի Բացում

Թեթեան Մշակութային Միության Պեյրուֆի կեդրոնի 7րդ յարկի երկար տարիներ չնորոգուած եւ գրեթէ քանդուած վիճակ մը ունեցող սրահին նորոգութեան ծրագիրը շատոնց ունէինք մեր մտքին մէջ: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ու Թեթեան Մշակութային Միության Հիմնադիրներու Մարմնին նախաձեռնութեամբ, ի վերջոյ իրականութիւն դարձաւ սրահին վերանորոգութիւնը, զոր անուանակոչեցինք Ռ.Ա.Կ.-ի մեծագոյն երախտաւորներէն **Գերսամ Ահարոնեանի** անունով:

Սրահին վերանորոգութիւնը իրականացաւ անձնական ներդրումովս եւ այլ նուիրատուներու միջոցներով: Այս առթիւ 50,000 տոլարի նուիրատուութիւն մը կատարեցի, որուն 25,000 տոլարը տրամադրեցի կուսակցութեան, իսկ 25,000 ալ սրահի նորոգութեան: Ընկ. **Յակոբ Վարդիվառեանի** նուիրատուութեամբ սրահին մուտքին զետեղեցինք **Գերսամ Ահարոնեանի** կիսանդրին, որուն հեղինակն էր քանդակագործ **Մոսիկ Կիւլոյեան**, ինչպէս նաեւ՝ նուիրատուներու ցուցատախտակ մը:

Վերանորոգուած սրահին բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 30 Յունուար 2004ին: Գեղեցիկ ձեռնարկ մըն էր, որուն ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ **Արամ Ա.** Կաթողիկոսի ներկայացուցիչ Լիբանանի Թեմի Առաջնորդ **Գեղամ Եպս. Խաչերեան**, պետական երեսփոխաններ **Ժան Օղասափեան**, **Սերժ Թուրսարգիսեան**, Հայաստանի դեսպան **Արեգ Յովհաննիսեան**, Հայկազեան Համալսարանի տնօրէն **Փոլ Հայտոսթեան**, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի ղեկավարներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, կուսակցական ընկերներ, ինչպէս նաեւ **Գերսամ Ահարոնեանի** թոռը՝ **Արի Ահարոնեան**: Այս առթիւ ելոյթներ ունեցան ընկերներ **Հրայր Հովիւեան**, **Պարոյր Աղապաշեան**, Տոթթ. **Յակոբ Փափազեան**, որ փոխանցեց **Գերսամ Ահարոնեանի** այրիին՝ **Սոնա Ահարոնեանի** ողջոյնի խօսքը, **Յակոբ Վարդիվառեան** եւ **Արտաւազդ Մելիքսեթեան**:

Մեծ Եղեռնի 89-Ամեակի Հրապարակային Ոգեկոչում

25 Ապրիլ 2004ին, Թեքեան Կեդրոնին մեջ, Մեծ Եղեռնի 89-Ամեակին առիթով տեղի ունեցած տպաւորիչ հրապարակային ոգեկոչումը անսահմանափակ երեւոյթ մըն էր հայ-արաբ բարեկամութեան եւ եղբայրութեան իբր արտայայտութիւն:

Արդարեւ, ոգեկոչումի այդ ձեռնարկին մասնակցեցան Լիբանանի Հանրապետութեան նախագահին, խորհրդարանի նախագահին եւ վարչապետին ներկայացուցիչները, ինչպէս նաեւ երեսփոխաններ, Մամլոյ Սենտիքայի նախագահը եւ կուսակցութիւններու ներկայացուցիչները: Արաբերէն լեզուով բացման խօսքիս մէջ արագ ակնարկ մը նետելէ ետք Ցեղասպանութեան արարքին վրայ, ի միջի այլոց ըսի. «...Այսօրուան հաւաքը, հայ եւ լիբանանցի, կոչումն է յարգելու յիշատակը նահատակներուն... Մենք հաւատարիմ կը մնանք մեր Դատին, մայր հայրենիքին, լեզուին եւ մշակոյթին, բայց միեւնոյն ժամանակ կը հաստատենք որ մենք լիբանանցիներ ենք հայկական ծագումով եւ եկած է ժամանակը դուրս գալու մեր պարունակէն եւ սերօտէն ապրելու արաբական աշխարհին հետ, ոգեկոչելով մեր դատին յիշատակը, առանց դառնալու գերին անոր»: Ապա անելցուցի. «Ուզեցինք որ մեր կուսակցութիւնը ըլլայ լիբանանեան՝ հայկական խորքով, իսկ մեր անդամները՝ լիբանանեան ընկերութեան լրացուցիչ տարրեր»:

Հանդիսութեան ելոյթ ունեցաւ նաեւ երեսփոխան **Նասեր Զանտիլ**, որ դիմելով ներկաներուն ըսաւ. « Ինչ որ պատահեցաւ ձեր նախնիներուն, մենք պատասխանատու ենք անոր համար, որովհետեւ ջարդերու ոճրագործները կը պատկանէին իսլամական աշխարհին, իսկ նահատակները՝ քրիստոնեաներուն»:

Օրուան բանախօսն էր արաբական թէ իսլամական աշխարհի մէջ յարգանք եւ հեղինակութիւն վայելող կրօնագէտ, գրող եւ բանաստեղծ **Ալ Ալլամա ալ Շէյխ Մուհամմատ Հասան ալ-Ամինը**: Իմաստասիրական եւ փիլիսոփայական յառաջադեմ հայեացքներով յայտնի Շէյխ **ալ-Ամին**, բարձրօրէն գնահատելով հայ մշակոյթը եւ գրականութիւնը, ինչպէս նաեւ **Վահան Թեքեան**էն բանաստեղծական հատուած մը ընթերցելով, խօսեցաւ Մեծ Եղեռնի պատմական իրողութեան մասին, շեշտելով. «Հայկական Հարցը Լիբանանեան Հարց է նաեւ»: Ան ըսաւ. «Հայերը լիբանանցի են հայկական ծագումով եւ կ'ուզենք որ իրենց դատը ըլլայ բոլոր լիբանանցիներուն դատը»:

Շեյխ Ամին շեշտեց թե արաբական եւ իսլամական աշխարհը նոյնպէս զոհը դարձած են Օսմանեան բռնատիրութեան, որ իսլամի անունով ոճիրներ գործած է հայութեան թէ արաբներու դէմ: *«Իսլամը անմեղ է այդ ոճրագործութենէն եւ հայերը, արաբներուն հետ միասին, զոհն են համաշխարհային անիրաւութեան»:*

Ռ.Ա.Կ.-ի Պետական Արձանագրությունը

Երբ Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետն էի 2003ին, խորհեցայ թէ ժամանակն է որ կուսակցութիւնը պետականօրէն արձանագրուի եւ օրինական գոյավիճակ մը ունենայ Լիբանանի մէջ: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան համաձայնութեամբ որոշում առինք եւ պետականօրէն կուսակցութիւնը արձանագրուեցաւ իբրեւ քաղաքական կազմակերպութիւն: Հակառակ այս հարցով իմ դէմ ուղղուած բազմաթիւ քննադատութիւններուն, պէտք է շեշտեմ թէ արձանագրութեան որոշումը արժանացած էր նաեւ Ընդհանուր Պատգամաւորականի վաւերացումին:

Ռ.Ա.Կ.-ի պետական արձանագրութիւնը դիւրին չեղաւ անշուշտ: Որոշ ընկերներ կտրականապէս դէմ արտայայտուեցան այդ գաղափարին: Ներքին կուսակցական վեճերուն մէջ այս նիւթը նոյնպէս շահագործուեցաւ: Ի վերջոյ, սակայն, բոլոր մտահոգութիւնները փարատեցան եւ արձանագրութեան ընդդիմացող ընկերներ գիտակցեցան անոր առաւելութիւններուն: Արձանագրուած կուսակցութեան օրինավիճակը լուծումներ տուաւ նաեւ մեր միւս կառոյցներուն օրինականութեան:

Կուսակցութեան աւանդական Ծրագիր-Կանոնագիրը եւ մեր ազգային մտահոգութիւնները նոյնութեամբ պահպանուեցան արձանագրուած կուսակցութեան Կանոնագրին մէջ, ուր կը շեշտուէր Հայկական Պահանջատիրութիւնը, Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչման մեր անտեղիտալի պայքարը, ազգային դիմագիծի, ժառանգութեան եւ հայ մշակոյթի պահպանման մեր նուիրումները, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական, մշակութային, տնտեսական եւ ընկերային յարաբերութիւններու պահպանումը: Գաղափարական գետնի վրայ Կանոնագիրը կը բանաձեւէր մեր հաւատարմութիւնը եւ յանձնառութիւնը ժողովրդավարական եւ ազատական գաղափարախօսութեան հանդէպ:

Առ այդ, ընդհանուր անդամական ժողովին, Լիբանանի նոր Շրջանային Վարչութիւն մը ընտրուեցաւ՝ ըստ լիբանանեան օրէնքի: Հակառակ այս բոլորին եւ յաջորդական Կեդրոնական Վարչութիւններու ցուցումներուն, Լիբանանի մեր շրջանակի որոշ անդամներ հակառակեցան եւ պնդեցին թէ պետականօրէն արձանագրուած կուսակցութիւնը հակաօրինական է եւ պէտք է նոր վարչութիւն մը կազմել՝ համաձայն կուսակցութեանս Ծրագիր-Կանոնագրի տրամադրութիւններուն:

Իր վաւերականութեան համար, ստորել Լիբանանի մէջ կուսակցութիւնը արձանագրելու որոշումին առիթով Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան հրապարակած Հաղորդագրութիւնը.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ռ.Ա.Կ.-Ը ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԱՄՐԱԳՐՈՒԵՑԱԻ

Աւելի քան չորս տարիներու հետեւողական հետապնդումներէ ետք, ուրախ ենք յայտնելու, որ վերջապէս Լիբանանի մէջ մեր կուսակցութիւնը պետական արձանագրութեամբ ամրագրուեցաւ: Պետական արձանագրութիւն ձեռք ձգելով, Ռ.Ա.Կ.-ը այսուհետեւ օրինաւորապէս պիտի կարենայ ունենալ իր զանազան կառոյցները: Մեր քաղաքական գործունեութիւնը, միւս կողմէն, երկրէն ներս աւելի բարենպաստ պայմաններու մէջ առաջ պիտի կարենայ ընթանալ:

Հոս կ'արձանագրենք թէ կուսակցութիւնը արժանացաւ տեղական քաղաքական շրջանակներուն մեծ յարգանքին, մանաւանդ որ Ռ.Ա.Կ.-ը այն միակ հայկական կուսակցութիւնը եղաւ արձանագրուող, որ պահելով հանդերձ իր արմատները եւ իր ժողովուրդին հոգեւոր ու մտաւոր ժառանգութիւնն ու հողային պահանջատիրութիւնը, կ'ընդելուզուի լիբանանեան քաղաքական կեանքէն ներս՝ համոզում գոյացնելով լիբանանցիներուն մօտ թէ մեր կուսակցութիւնը կը պատրաստուի յառաջիկայ հանգրուանին ծաւալել դրական աւելի լայն գործունեութիւն ի նպաստ լիբանանահայութեան եւ Լիբանանին:

Այսօր Ռ.Ա.Կ.-ը Լիբանանի մէջ աւելի պաշտօնական ձեւով կը հետապնդէ Հայկական Դատը: Վերջերս արաբերէն բաժինով լոյս տեսնող «Չարթօնք»-յաւելուածով Լիբանանի մեր շրջանակը կը ներկայացնէ Հայ Դատն ու հայոց իրաւունքները արաբ հանրութեան:

Վերջապէս քաղաքական նոր զարթօնք մըն է որ կ'ապրի Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի մեր շրջանակը, արժանանալով յարգանքին տեղացի ժողովուրդին: Կարելոր է Լիբանանի միջոցաւ հասնիլ արաբ ժողովուրդի լայն զանգուածներուն, որոնք ունին քաղաքական իրենց կշիռն ու ազդեցութիւնը այն տարածաշրջանին մէջ, ուր կը գտնուին Հայաստանն ու Արցախը:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
26/9/2004

Ռ.Ա.Կ.-ի 83 Ամեակի Շրջադարձային Հանդիսությունները Թեթեան Կեդրոնի եւ «Պիել»ի Համալիրին Մէջ

Ռ.Ա.Կ.-ի հիմնադրութեան 83 ամեակի հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Թեթեան Կեդրոնին մէջ, 1 Յոկտեմբեր 2004ին, կարելոր իրադարձութիւն մը եղաւ մեր կուսակցութեան Լիբանանի կառոյցին համար՝ շարքերու խտացումի եւ նոր ոգեւորութեան ստեղծման տեսակէտէ:

Արդարեւ, այդ հանդիսութեան ներկայ եղան Լիբանանի Հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ **Միշէլ Մուսան**, խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ **Ալի Պըզզի**ն, վարչապետի ներկայացուցիչ **Պահիժ Թապպարան**, Հայաստանի դեսպան **Արեգ Յովհաննիսեան**ը, լիբանանեան գրեթէ բոլոր կուսակցութիւններու ներկայացուցիչներ, **Գեղամ Եպս. Խաչերեան**, Վեր. **Սողոմոն Զիլադպեան**, Ս.Դ.Հ.Կ.-ի, Հ.Յ.Դ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեծ թիւով երեսփոխաններ: Այդ առթիւ ունեցած ելոյթիս մէջ անգամ մը եւս շեշտեցի Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ մեր պահանջատիրութեան, հայկական ինքնութեան պահպանման, Հայաստանի եւ Լիբանանի միջեւ բարեկամութեան ամրապնդման եւ ժողովրդավարական ու ազատական սկզբունքներուն մեր նուիրումներուն:

Անդրադարձայ նաեւ **Հարիրիի** գործունեութեան եւ ելոյթիս մէջ ըսի. *«Այն գոհողութիւնները, զորս ըրաւ ան ու կ'ընէ ի խնդիր հայրենիքի կենսունակութեան ու միասնութեան, կը գերազանցեն իրենց ծաւալով ու կարեւորութեամբ անոնց, որոնք տուաւ ու կու տայ երկրի վերակառուցման ու վերականգնման: Այդ բոլորը մեզի կը յիշեցնեն Ամերիկայի նախկին նախագահ Ճոն Զենետիի մէկ խօսքը. «Մի հարցնէք թէ հայրենիքը ի՞նչ կրնայ տալ ձեզի, բայց հարցունք թէ դուք ի՞նչ կրնաք տալ ձեր հայրենիքին»: Արդարեւ, Հարիրի ինք դպրոց մըն է ազգային պարունակին մէջ, քանի ինք տուաւ ու կու տայ իր հայրենիքին անհաշիւ, նոյնիսկ ի գին իր անձնական շահերուն եւ առողջութեան»: Լիբանանեան մամուլը եւ լատենտղական ցանցերը լայնօրէն անդրադարձան կուսակցութեան տարեդարձին:*

Կուսակցութեան 83 ամեակին առիթով, 27 Նոյեմբեր 2004ին, «Պիել» համալիրի «Փաւիյոն» շքեղ հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն-ճաշկերոյթ մը, որ պարզ ձեռնարկէ մը աւելի էր: Հանդիսութիւնը, որ կը վայելէր նահատակ վարչապետ **Ռաֆիք Հարիրիի**



Վարչապետ Հարիրի, ես եւ տիկինս՝ Ռ.Ա.Կ.-ի 83 ամեակի հանդիսութեան ընթացքին, Պիէլի համալիր, 2004:

հովանաւորութիւնը, կուսակցութեան պատմութեան մեջ շրջադարձային նշանակութիւն ունեցաւ՝ լիբանանեան հանրային կարծիքին մօտ կուսակցութեան ճանաչման, ասոր քաղաքական կշիռին բարձրացման իմաստով:

Իմ ղեկավարութեամբ, Ռ.Ա.Կ. գործադիր պատասխանատու մարմնին ու Թ.Մ.Մ. Տիկնանց Վարչութեան բացառիկ կազմակերպութեամբ տեղի ունեցած այդ հանդիսութեան ներկայ գտնուեցան երեսփոխաններ **Պըշարա Մըրիէժ, Միշէլ Ֆարաոն, Ղազի Արիտի, Պասէլ Ֆլէյհան, Ատնան Արաբժի, Ղաթթաս Խուրի, Նեպիլ տը Ֆրէյժ, Մուհամմատ Զապպանի, Աթէֆ Մաժտալանի, Ղընուա Ժալլուլ, Պասէմ Եամմուր, Նասիպ Լահուտ, Նիքուլա Ֆաթթուլ, Ռոպերթ Ղանէմ, Ժորժ Գասարժի, Նապիլ Պուսթանի, Ղասսան Մուխայպեր, Ժան Օղասափեան, Եղիկ Ճերեճեան, Սերժ Թուրսարգիսեան, Նախկին Նախարարներ Ծահէ Պարսումեան, Անտրէ Թապուրեան, Նախկին երեսփոխաններ Պահաւետտին Իթանի, Զիւսէյն Եաթիմ, Պէյրութի քաղաքապետ Ապտըլմընհէմ Արիս, Դոկտ. Ղազի Եուսէֆ, Մամլոյ Սենտիքայի Նախագահ Մուհամմատ Պաալպէքի, Էրնեսթ Զարամ, կուսակցապետեր Էմիլ Ռահմէ եւ Ժըպրան Արէյժի: Ներկայ էին նաեւ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի պատասխանատուներ:**



Ռ.Ա.Կ.-ի հիմնադրութեան 83 ամեակի պաշտօնական հանդիսութիւն-ճաշկերոյթը, «Պիէլ» համալիր, 2004:

Հանդիսութեան, վարչապետ **Հարիրի** յայտարարեց յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն Ռ.Ա.Կ.-ի հետ դաշինք կազմելու մասին: Իր ճառին մէջ ան ըսաւ. *«Ինչ որ պաշտօնակիցս՝ Յակոբ Գասարճեանը նշեց, Ռամկավար Ազատական Կուսակցութեան դիրքորոշումին մասին՝ ընտրութեանց առիթով, մերն ալ նոյնն է, հիմնուած հաւատարմութեան վրայ՝ մարդոց, հաստատութեանց ու կուսակցութիւններու նկատմամբ, որոնք անցնող տարիներուն մեր կողքին կանգնեցան ու մեզի զօրակցեցան, հետեւաբար, մենք եւ դուք, Աստուծոյ արտօնութեամբ, ձեռք-ձեռքի տուած պիտի մղենք այս ընտրութիւնները, ինչ ալ ըլլան պայմանները, ինչ ալ ըլլան ճնշումները, եթէ կարելի է այդպէս ըսել:*

Իրականութեան մէջ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ընդհանրապէս, եւ իմ պաշտօնակից Յակոբը մասնաւորապէս, այն անձնաւորութիւններէն է, որ ծագումով հայ լիբանանցի եղբայրները դրին լիբանանեան ընկերութեան գնացքին մէջ, յստակ եւ անկեղծ ձեւով մը, առանց խտրութեան, եւ անոնք անցնող տարիներուն իսկական ընդելուզումի մէջ գտնուեցան լիբանանեան իրականութեան մէջ, ինչ որ մեծապէս ողջունելի նկատուեցաւ լիբանանցիներու կողմէ:

Խորքին մէջ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը այս առումով

ջահակիրն էր, եւ շատեր, մեր եղբայր հայերէն, քալեցին այդ ուղիէն եւ ասիկա բարենիշ մըն է այս կուսակցութեան, առանց դոյզն կասկածի, քանի ներկայ հանգրուանին մենք կը դիմագրաւենք մեծ մարտահրաւերներ Լիբանանի եւ Սուրիոյ, ինչպէս նաեւ Իրաքի եւ Պաղեստինի մէջ, յաղթահարելու զանոնք ազգային միասնականութեամբ»:

Ռաֆիք Չարիրիի Սպանությունը

Համաշխարհային ընտանիքը, արաբական աշխարհը եւ յատկապես Լիբանանը ցնցուեցան վարչապետ **Ռաֆիք Չարիրիի** անարգ սպանութեան լուրով: Ան զոհ դարձաւ ահաբեկչական ոճրագործութեան մը՝ 14 Փետրուար 2005ին: **Չարիրի** Լիբանանի վարչապետի պաշտօնը վարած էր 1992էն մինչեւ 1998, եւ կրկին այդ պաշտօնը ստանձնած էր 2000էն մինչեւ իր նահատակութիւնը: Ան երկրին յետպատերազմեան շրջանի քաղաքական եւ գործարար աշխարհի ամենէն ազդեցիկ դէմքն էր: 15 ամեայ պատերազմէն ետք **Չարիրի** ձեռնարկեց Պէյրութի վերակառուցումի աշխատանքներուն, որոնք հետագայ տարիներուն յաջողութեամբ պսակուեցան: **Չարիրիի** սպանութիւնը քաղաքական փոփոխութիւններ յառաջացուց Լիբանանի մէջ, ծնունդ տալով «Մայրիներու Յեղափոխութիւն»ին, ինչպէս նաեւ սուրիական ուժերու հեռացումին Լիբանանէն:

Ազգային երկխօսութեան, հանդուրժողականութեան, չափաւորութեան եւ հաւասարակշռութեան ջատագով, բայց մանաւանդ լիբանանեան բոլոր յարանուանութիւններուն միջեւ համերաշխութեան ձգտող այս մարդը, որուն հետ դաշինք կազմելու եւ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ միասին գործելու պատիւը ունեցած եմ, լիբանանահայութեան անկեղծ բարեկամն էր նաեւ: Բարձր գնահատելով լիբանանահայութեան դերը երկրին քաղաքական, ընկերային, տնտեսական եւ մշակութային ասպարեզներուն մէջ, **Չարիրի** վերջ տուաւ նաեւ քաղաքական այն մենատիրութեան, որ աւելի քան կէս դար իշխած էր լիբանանահայ կեանքէն ներս: **Չարիրի** մեծապէս օգտակար եղած էր լիբանանահայութեան եւ Հայաստանի՝ նիւթական կարելոր յատկացումներ ընելով լիբանանահայ դպրոցներուն եւ հաստատութիւններուն, ինչպէս նաեւ խոշոր նուիրատուութեամբ նպաստելով Հայաստանի երկրաշարժի գօտիի վերականգնումին:

Վարչապետ **Չարիրիի** կորուստով մենք զրկուեցանք անկեղծ բարեկամ, հաւատարիմ դաշնակիցէ ու համախոհէ մը: **Չարիրիի** հետ մեր բարեկամութիւնը եւ քաղաքական համագործակցութիւնը հիմնուած էր հաստատուն եւ հիմնական սկզբունքներու վրայ, որոնք են ազատութիւնը, ժողովրդավարութիւնը եւ Լիբանանի գերիշխանութիւնն ու անկախութիւնը:

2005ի խորհրդարանական Ընտրություններ

2005ին Սաատ Չարիրի իր հոր կազմած երեսփոխանական հայկական համախմբումը վերստին ներկայացուց խորհրդարանի ընտրություններուն (ընտրուիլ առանց քուէարկութեան՝ անմրցակից): Հակառակ անոր որ Հ.Յ. Դաշնակցութիւնը մեծ պայքար տարաւ *պոյթոթելու* ընտրությունները, այդուհանդերձ մեծ թիւով հայեր մասնակցեցան ընտրություններուն եւ Ռ.Ա.Կ.-ը կրկին մնաց Լիբանանի քաղաքական բեմահարթակին վրայ եւ խորհրդարանին մէջ:

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը պաշտպանեց թեկնածութիւնս Պէյրուքի Գ. ընտրաշրջանէն Հայ Առաքելական աթոռին համար: Պատմութեան համար կու տամ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան Ընտրական Ցայտարարութիւնը:

Լիբանանի համայնքային կառոյցի բերումով, մեր գաղութը, երկրի անկախութենէն ի վեր, իրաւունքը ստացած էր, համեմատական ըսկզբունքով, իր անձը ունենալու երկրի խորհրդարանէն ներս: Սակայն տասնամեակներ ամբողջ, ցուրտ պատերազմի հետեւանքով, կաշկանդուած էր լիբանանահայ համայնքին ձայնը եւ բռնաբարուած էր իրաւունքը արժանաւորապէս ներկայացնելու Լիբանանի խորհրդարանէն ներս: Ցուրտ պատերազմի, ինչպէս նաեւ Լիբանանի քաղաքացիական կռիւներու վախճանը Նոր պայմաններ ստեղծեց վերարժեւորելու համար լիբանանահայութեան քաղաքական դիմագիծը, սահմանափակելով մենատիրական կուսակցութեան մը վարքագիծը:

Լիբանանի երեսփոխանական վերջին ընտրությունները Նոր իրադարձութիւն մը ստեղծեցին եւ խորհրդարանի դիրքերուն արժանացուցին ժողովրդային արդար քուէներով ընտրուած թեկնածուներ, որոնք եկան ներկայացնելու տարբեր քաղաքական հոսանքներ: Այդ երեսփոխաններու կարգին իր արժանի տեղը ունեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան թեկնածու ընկ. Յակոբ Գասարճեան: Աւելի քան չորս տարիներու անոր քաղաքական իրապաշտ գործունէութիւնը եւ հայ համայնքին իրաւունքներու պաշտպան կանգնելու անոր խիզախ ընթացքը արժանացան ընտրողներու միահամուռ գնահատանքին:

Իր պետական երեսփոխանի արդար վաստակին ապաւինած, այսօր ընկ. Գասարճեան դարձեալ կը ներկայանայ Մայիսին կայանալիք երեսփոխանական ընտրութեանց: Ան վաստակած է վստահութիւնը Լիբանանի հայ եւ այլ ծագումով քուէարկողներու, ինչպէս նաեւ համակրանքը աշխարհատարած մեր շրջանակներուն:

Լիբանանի շրջանակի միակ իրաւասու մարմինը Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնն է եւ ուրիշ ոչ մէկ անձ կամ խմբաւորում լիազօրութեամբ է արտայայտուելու կամ գործելու կուսակցութեան անունով:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը վստահ է թէ ընկ. Գասարճեանի ընտրական պայքարը դարձեալ պիտի պսակուի վայելուչ յաղթանակով մը: Առ այդ, իր ամբողջական նեցուկը կը յղէ ընկ. Յակոբ Գասարճեանին եւ Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանակի ղեկավարութեան:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(Պոսթոն)**

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնը 13 Մայիս 2005ին արդէն պաշտօնապէս յառաջադրած էր թեկնածութիւնս Պէյրութի Գ. Շրջանի Հայ Առաքելական աթոռին համար՝ մաս կազմելով **Սաատ Հարիրիի** գլխաւորած «Նահատակ Ռաֆիք Հարիրիի Ցանկ»ին:

Ընտրութիւններու առիթով իրապարակեցի ընտրական Ուղերձ-Ծրագիրս, զոր կու տամ ամբողջութեամբ: Ծրագիրը արտայայտութիւնն էր իմ քաղաքական թէ գաղափարական համոզումներուս եւ նպատակներուս:

Ընտրական Ուղերձ-Ծրագիր 2005

Կը հաւատամ՝ որ լիբանանեան պետութիւնը, իր ինքնութեամբ ու պատկանելութեամբ, արաբական է: Ունի պատմական ու խոր արմատներ արաբական աշխարհին հետ: Համոզուած եմ, որ այդ կապերը արաբական բոլոր երկիրներուն հետ պէտք է մնան ու շարունակուին մշակութային, տնտեսական ու քաղաքական մարզերէն ներս:

Հիմնուելով իմ համոզումներուս ու հայեացքներուս վրայ, այսօր կը դիմեմ պէյրութցի ընտրողներուն, ներկայացնելով իմ ընտրական յայտագիրս:

1) Կոչ կ'ողողեմ լիբանանցի հայերուն, լիբանանեան հայրենիքին

հետ իրենց ինքնությունը ամրացնելու, ինչ որ պահանջած եմ 2000ի ընտրությանց, նաեւ՝ որ իրենք զիրենք զգան լիբանանեան քաղաքացիներ հայկական ծագումով եւ ոչ թէ հայ լիբանանցիներ, որոնք կը կրեն լիբանանեան հպատակութիւն:

Պարզուեցաւ որ, այս շրջանին, հայերուն մեծամասնութեան շաղախումը լիբանանեան ընկերութեան մէջ զանոնք աւելի հզօրացուց իրենց լիբանանեան ինքնութեամբ, հետեւաբար, համայնքներու եւ յարանուանութիւններու միջեւ սահմանները վերացան:

Ըիշդ է, ձգտումս Լիբանանի մէջ հասանելիութիւնն է համաշխարհայնացումի, սակայն այնքան ատեն որ քաղաքական վարչակարգը հիմնուած է համայնքային դրութեան վրայ, կը պահանջեմ որ մեծ թիւով լիբանանցիներ՝ հայկական ծագումով, մաս կազմեն պետութեան հաստատութիւններուն ու ստանան իրենց ներկայացուցչական իրաւունքները, յար եւ նման միւս համայնքներուն:

2) Կը հաւատամ Լիբանանի ազատութեան, գերիշխանութեան եւ անկախութեան, ուր բոլորը գործեն ի նպաստ ապագայի կերտումին: Կը վստահեցնեմ շարունակել որդեգրել նահատակ Ռաֆիք Յարիրիի տեսիլքը եւ յանձնառու մնալ անոր «Ապագայի Հոսանք» ուղեգիծին, նաեւ շարունակել նահատակին պատմական երթուղին:

3) Կողմակից եմ կանանց աւելի մեծ իրաւունքներու ձեռք բերման, ի բարօրութիւն հայրենիքի բարգաւաճումին ու ծաղկումին:

4) Տնտեսապէս զօրավիգ եմ ազատ եւ անկախ տնտեսութեան մը ու վստահութիւն ունիմ անձնական նախաձեռնութիւններու կարողութեան վրայ, որոնք կրնան հիմնական դեր մը խաղալ հայրենիքի բարգաւաճումին մէջ ու կը հաւատամ, որ Լիբանան իր աշխարհագրական տարածքէն աւելի մեծ դեր մը կրնայ ունենալ, ի տես աշխարհի մէջ լիբանանցիներու գոյակեցութեան, ուստի անհրաժեշտ է անոր դերակատարութիւնը աւելի զօրացնել՝ տնտեսական, մշակութային ու քաղաքական բնագաւառներէն ներս, քաջալերելով նոր սերունդին մասնակցութիւնը այդ մարզերուն մէջ:

5) Ինչ կը վերաբերի բարեկարգումներուն, ժամանակը հասած է գործնապէս եւ ամբողջապէս մաքրագատելու պետական հաստատութիւններն ու կառոյցները նեխածութենէն, որպէսզի Լիբանան կարենայ մուտք գործել միջազգային ոլորտներէն ներս, իր տարբեր արդիւնաբերութիւններով, որոնք կը նկատուին հիմնական գործօնները մրցակցութեանց:

Է) Հիմնական առաջնահերթութիւնն է կրթութեան մարզը, որ կը

պատրաստե առողջ ընկերությունն ու զարգացած սերունդը, հետեւաբար, անհրաժեշտ է բարեկարգել նաեւ կրթական ծրագիրը, որպէսզի նոր սերունդը կարենայ դիմագրաւել կեանքի մարտահրաւերներն ու պահանջները:

Իսկ այս ճիգերուն հիմամբ, պատրաստելով զարգացած սերունդներ, կը պնդեմ որ անոնց տրուի առիթ, իրագործելու իրենց ծրագիրներն ու մասնակցելու նոր Լիբանանի կերտումին՝ ի խնդիր անոր պայծառ ապագային:

24 Մայիս 2005ին, **Ռաֆիք Յարիրիի** Զրեյթիմի բնակարանին մէջ պէյրութահայութիւնը հանդիպում մը ունեցաւ «Նահատակ Ղեկավար Ռաֆիք Յարիրիի Ցանկ»ի հայ թեկնածուներուն հետ: Մեծ թիւով պէյրութահայեր իրենց աջակցութիւնը եւ զօրակցութիւնը արտայայտեցին **Սաատ Յարիրիի** ցանկին եւ իրեն դաշնակից Պէյրութի հայ թեկնածուներուն: **Սաատ Յարիրիի** շեշտեց, որ իր նահատակ հայրը մեծ վստահութիւն ու հաւատք ուներ հայութեան վրայ: Ան դրուատեց Պէյրութի Որոշում Երեսփոխանական Խմբակցութեան չորս հայ երեսփոխաններու հաւատարմութիւնը իր հօր եւ անոր որդեգրած ուղեգիծին: Ան նաեւ բարձր գնահատեց լիբանանահայութեան դերը Լիբանանի մէջ անկախութենէն ի վեր:


Այս առթիւ ըսի. «*Մեզի համար, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ ազատականութեան գաղափարախօսութեան հասկացութիւնը գերակշիռ խորհուրդ ունի: Մենք կը հաւատանք ժողովրդավարութեան եւ ազատ գործելակերպի գաղափարին, հետեւաբար այդ սկզբունքներէն մեկնելով մենք հաւատարիմ գտնուեցանք Մարտ 14ի ուժերուն, որովհետեւ իբրեւ լիբանանցի քաղաքացի մեզ կը խանդավառեն ու կը հետաքրքրեն Լիբանանի գերիշխանութիւնը, անկախութիւնը եւ ազատութիւնը, որոնք ինքնին Մարտ 14ի սկզբունքներն են: Այնպէս որ մենք նախքան Մարտ 14ի կազմուիլը, այս սկզբունքներուն հիման վրայ գործակցած ենք հանգուցեալ վարչապետ Յարիրիին հետ եւ համաձայնած իր որդիին՝ Սաատ Յարիրիին հետ: Այժմ ես համոզուած եմ եւ հետագային նաեւ կրնամ բարձրաձայն ըսել, որ մենք պետք է շարունակենք կառչիլ մեր սկզբունքներուն եւ որեւէ ատեն ընտրական խուլ հաշիւներէ մեկնած չշեղինք մեր սկզբունքներէն»:*

2005ի խորհրդարանական ընտրութիւններուն «Պէյրութի Արժանապատուութիւն» ցանկը արձանագրեց ջախջախիչ յաղթանակ մը, որով ես, **Ժան Օդասափեան, Սերժ Թուրսարգիսեան** (Պէյրութի Գ ընտրաշրջան) **եւ Եղիկ Ճերճեան** (Պէյրութի Բ ընտրաշրջան) երեսփոխան ընտրուեցանք:

Իմ նախաձեռնութեամբ, Մայիս 30ին Թեքէեան Կեդրոնի Զ. Սեդրակեան

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՐՈՎ

սրահին մեջ ընդունելութիւն մը կազմակերպեցինք ի պատիւ **Հարիրիի** ցանկով ընտրուած հայ երեսփոխաններուն: Ելոյթով մը ողջունեցի բոլոր անոնք, որոնք մայրաքաղաքի ընտրութիւններուն զօրավիգ կանգնեցան ընտրարշաւին, իրենց գործօն մասնակցութեամբ, քուէարկութեամբ թէ քարոզչական աշխատանքով, յատուկ շնորհակալութիւն յայտնելով Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան, Ռ.Ա.Կ. ընտրական գրասենեակի պատասխանատուներուն, Ռ.Ա.Կ. կազմակերպիչ եւ ընկերային յանձնախումբերուն, Թ.Մ.Մ.-ի բոլոր մարմիններուն, «Չարթօնք»ի խմբագրութեան եւ անձնակազմին, ինչպէս նաեւ Թէքէեան Կեդրոնի պաշտօնեութեան:



Սաառ Հարիրիի հետ, 2005:

Երեսփոխանական Գործունեություններ

Երեսփոխանական գործունեության տարիներուն յատուկ կարեւորություն տուած են լիբանանահայության բաղաքական իրաւունքներու հարցին, մանաւանդ վարչական նշանակումներու ծիրին մէջ: Իբրեւ Լիբանանի մէջ պաշտօնապէս ընդունուած եօթը գլխաւոր համայնքներէն մէկը, լիբանանահայութիւնը յաճախ զրկուած էր այդ իրաւունքներէն: Երկրին Նախարարաց Խորհուրդի կազմին մէջ լիբանանահայութիւնը Նախարարական երկու պաշտօններ ունենալու փոխարէն, յաճախ անոր տրուած է միայն մէկ պաշտօն: Լիբանանահայեր զրկուած են բանակին, ներքին ապահովութեան ուժերուն, վերակառուցումի եւ բարգաւաճումի խորհուրդին, ինչպէս նաեւ դիւանագիտական անձնակազմին մաս կազմելու իրաւունքէն: Եթէ անցեալին լիբանանահայեր, լեզուական թէ այլ պատճառներով, խուսափած են պետական հաստատութիւններու մէջ գործի անցնելէ, ապա վերջին տասնամեակներուն, առանց բարդոյթներու եւ լեզուական խոչընդոտներու, լիբանանահայեր ամբողջապէս ընդգրկուած են լիբանանեան



Մարոնիներու Պատրիարք Նասրալլա Սֆէյրի հետ, Պէրքէ, 2003:



խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ հանդիպում՝ վերջնոյն Մըսայլէի ապարանքին մէջ:

ընկերային կեանքին մէջ: Անընդունելի է որ լիբանանահայութիւնը նման պատկերով ներկայացուած ըլլայ պետութեան մէջ:

Երկրին մէջ ընկերային դժգոհութիւններ յառաջացնող տնտեսական տագնապներու եւ թղթածրարներու մասին խորհրդարանին մէջ կառավարութեան ուղղուած բազմաթիւ հարցապնդումներ կատարած են: Մամուլին եւ լրատու գործակալութիւններուն տուած են բազմաթիւ յայտարարութիւններ եւ հարցազրոյցներ լիբանանցիները յուզող հարցերու մասին, իսկ նախարարներու հետ հանդիպումներու ընթացքին շարունակ արծարծած են քաղաքական, տնտեսական եւ ընկերային հրատապ հարցեր: Գործազրկութեան, էլեկտրականութեան, վառելանիւթի, բջիջային հեռահաղորդակցութեան, սպառողներու իրաւունքներու պաշտպանութեան, զինեռու բարձրացումի, Յաւելեալ Արժեքի հարկի, կենսոլորտի, Զարանքինայի աղբերու, ծովային հանրային կալուածներու, Պէյրութի գետի ապականութեան եւ այլ հարցեր միշտ ուշադրութիւնս գրաւած են եւ անոնց բարուք լուծումը հետապնդած են:

Լիբանանեան քաղաքական, մշակութային եւ ընկերային տեղական կեանքին աւելի մօտէն առնչուելու, ինչպէս նաեւ զուտ հայկական պարունակէն դուրս գալու ուղղութեամբ բազմաթիւ ծրագիրներ իրականացուցած

ենք, յատկապես Թեթեան Մշակութային Միության Տիկնանց Յանձնախումբին միջոցաւ, զոր կը գլխաւորէր տիկինս՝ **Անի Գասարճեան**: Այդ Յանձնախումբը բարեսիրական ձեռնարկներ կազմակերպած է իսլամական տօներու առիթով՝ Իսլամական Մաքասետ եւ Մոհամմատ Խալէտ ընկերային բարեսիրական հաստատութեանց երախաներուն եւ որբերուն համար: Իմ նախաձեռնութեամբ ստեղծուած Ռ.Ա.Կ. Ընկերային Ծառայութեան Գրասենեակը, որ թէ՛ 2000ին եւ թէ՛ 2005ին կը գործէր Թեթեան Կեդրոնէն ներս, կարելոր ծառայութիւններ մատուցած է լիբանանահայ բազմաթիւ հայրենակիցներու: Խորհրդարանի գրասենեակիս մէջ նոյնպէս քաղաքացիներու համար ընդունելութեան օրեր նշանակելով, կը փորձէի օգտակար ըլլալ անոնց զանազան հարցերով:

Չուտ ընտրական-քարոզչական արշաւներէն անդին, հանդիպումներ ունեցած եմ ընդհանրապէս Պէյրութի բնակիչներու, մանաւանդ Պասթայի, Մտաուուարի, Քարանթինայի, Մասլախի, ինչպէս նաեւ քիւրտ բնակչութեան հետ, մօտէն ծանօթանալու անոնց դիմագրաւած ընկերային հարցերուն եւ զանոնք ներկայացնելու պատկան մարմիններուն: Բազմաթիւ շփումներ եւ քննարկումներ ունեցած ենք նաեւ լիբանանեան ընկերային, կրօնական, համայնքային եւ մշակութային հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու հետ, ինչպէս Մարոնիթ Խորհուրդի, Արաբական Մշակութային Ակումբի եւ այլ հասարակական կազմակերպութիւններու եւ միութիւններու հետ:

Որպէս Խորհրդարանի Գաղթականաց Յանձնախումբի նախագահ, կառավարութեան ուղղուած հարցապնդումներու միջոցով հետապնդած եմ անոնց տուն դարձի կնճռոտ թղթածրարը: Յունուար 6ի Հայկական Ս. Ծննդեան Տօնը լիբանանեան պաշտօնական տօնացոյցին մէջ յաջողութեամբ անցընելու հարցերով գործակից երեսփոխաններու հետ հետապնդումներ ընելով, ի վերջոյ յաջողութեան հասած ենք պետական տօնացոյցին մէջ ընդգրկելով Յունուար 6ը:

Ֆրանսայի Ազգային Ժողովին կողմէ 1915ին հայութեան նկատմամբ Օսմանեան կայսրութեան կատարած Ցեղասպանութիւնը ճանչցող օրինագիծի ստորագրութեան վաղորդայնին, Լիբանանի Խորհրդարանի Արժանապատուութիւն Համախմբումի իբրեւ անդամներ, երեսփոխաններ **Եղիկ Ճերեճեանի**, **Ժան Օղասափեանի** եւ **Սերժ Թուրսագիսեանի** հետ այցելութիւն մը տալով Լիբանանի մօտ Ֆրանսայի դեսպան **Ֆիլիփ Լըբուրթիէին**, անոր յանձնած ենք Ֆրանսայի նախագահ **ժաք Շիրաքին** ուղղուած շնորհակալագիր մը օրինագիծին առիթով:

Այս առիթով, Հ.Բ.Ը.Մ.-ի հետ միասին Լիբանան հրաւիրած էինք ընկերներ

Ալեքսի Կեօվճեանը եւ **Վարուժան Սիրապեանը**, որոնք Թեքեան Կեդրոնին մէջ տեղի ունեցած հանդիպում-քննարկումին ընթացքին, որուն ներկայ գտնուեցան քաղաքական թէ կուսակցական դէմքեր, ներկայացուցին Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններուն կատարած դերը ի նպաստ Ֆրանսայի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման: Ձեռնարկը տեղի ունեցաւ Ապրիլ 21ին: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը Հաղորդագրութեամբ մը ողջունած էր Ֆրանսայի Ազգային Ժողովին եւ Ծերակոյտին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը:

Իբրեւ երեսփոխան եւ Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցիչ, զանազան հանդիպումներ ունեցած եմ ոչ-լիբանանցի քաղաքական դէմքերու հետ, որոնցմէ կը յիշեմ մանաւանդ Յունիս 2008ի հանդիպումը Ռումանիոյ փոխ-վարչապետ **Վարուժան Ոսկանեանի** հետ, մասնակցութեամբ նախարար **Ժան Օղասափեանի**, երեսփոխաններ **Եղիկ Ճերեճեանի** եւ **Սերժ Թուրսարգիսեանի**, ինչպէս նաեւ Ռումանիոյ Ազգային Ժողովի տնօրէն եւ Ռումանիոյ Միութեան փոխ-ատենապետ Տոքթ. **Ջարեհ Նազարեանի** եւ Լիբանանի մօտ Ռումանիոյ դեսպան **Փոն Մոկոսի**: Յաջորդ օրը տեղի ունեցաւ **Վարուժան Ոսկանեանի** հանդիպումը Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան հետ: **Ոսկանեան**, որ ազատական-ռամկավարութեան ջատագով է, գնահատեց մեր կուսակցութեան գործունեութիւնը եւ համագործակցութեան ծրագիրներ առաջարկեց: Ռ.Ա.Կ.-ի պատուիրակութիւնը **Ոսկանեանին** նուիրեց **Կարլէն Դալլաքեանի** «Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն» հատորը:

Հայաստանի խորհրդարանի հիմնադրութեան 15 Ամեակ

Հայաստանի խորհրդարանի հիմնադրութեան 15 ամեակին առիթով Հոկտեմբեր 2005ին, իբրեւ Լիբանանի խորհրդարանի Լիբանան-Հայաստան Բարեկամութեան Խումբի նախագահ, Հայաստան այցելեցի զխաւորելով Լիբանանի խորհրդարանը ներկայացնող պատուիրակութիւնը, որ բաղկացած էր պետական երեսփոխաններ **Եղիկ Ճերեճեան**է եւ **Ճորճ Գասարժի**է:

Հայաստանի նախագահ **Ռոբերտ Քոչարեանի**, խորհրդարանի նախագահ **Արթուր Բաղդասարեանի**, վարչապետ **Անդրանիկ Մարգարեանի** եւ բազմաթիւ երկիրներու խորհրդարաններու նախագահներու եւ պատուիրակութիւններու մասնակցութեամբ տեղի ունեցած հանդիսութեան խօսք տրուեցաւ նաեւ Լիբանանին: Ողջոյնի պաշտօնական ելոյթներու թարգմանութեան պատճառով հանդիսութիւնը կ'երկարեր: Ստիպուեցայ արարողակարգի պզտիկ խախտում մը ընել եւ հայերէնով ելոյթ ունենալ, հակառակ անոր որ իբրեւ Լիբանանի խորհրդարանը եւ անոր նախագահ



Հայաստանի խորհրդարանի հիմնադրութեան 15 ամեակին նուիրուած նիստի ընթացքին, 2005:



Երեսփոխաններ Եղիկ Ճերեճեանի (ձախին) և Յակոբ Բազրատունիի հետ:

Նեպիի Պըրրին ներկայացնող հայազգի երեսփոխան, արաբերենով պետք է արտասանելի խօսքս: Գրաւոր արաբերեն եւ հայերեն ելոյթս յանձնեցի Հայաստանի խորհրդարանի նախագահութեան:

Ողջունելէ ետք Հայաստանի խորհրդարանի ստեղծման 15 ամեակը, անդրադարձայ Լիբանան-Հայաստան միջ-խորհրդարանական կապերուն եւ երկու բարեկամ երկիրներու միջեւ քաղաքական, տնտեսական, մշակութային ու մարդկային յարաբերութիւններու ամրապնդման ուղղութեամբ խորհրդարաններու կատարելիք աշխատանքներուն:

Միջ-Լիբանանեան Ազգային Երկխոսութիւն

2006ին Լիբանանի խորհրդարանի նախագահ **Նեպիի Պըրրի** նախաձեռնեց ազգային երկխոսութեան մը խորհրդարանէն ներս: Մի քանի հանգրուաններով ընթացած նիստերու օրակարգին վրայ էին ազգային հիմնահարցերը, որոնց կարգին՝ **Յարիրիի** սպանութեան դատավարութեան, պաղեստինեան զինեալ ներկայութեան եւ երկրին համար ճակատագրական նշանակութիւն ունեցող այլ հարցեր:

Հայ երեք կուսակցութիւններով որոշած էինք թէ իւրաքանչիւր նիստին մէկ հայ ներկայացուցիչ մասնակցի խորհրդակցութիւններուն, ինչ որ գործադրուեցաւ կանոնաւոր ձեւով: Խորհրդարանի նախագահ **Նեպիի Պըրրի** արդարօրէն որոշած էր որ խորհրդարանին մէջ տեղի ունեցող երկխոսութեան նիստերուն երեք կուսակցութիւնները ներկայացնող երեսփոխանները փոխն ի փոխ ներկայացնեն լիբանանահայութիւնը: Այս սկզբունքը կիրար-



Խորհրդարանի նախագահին նախաձեռնած ազգային երկխոսութեան նիստերու ընդմիջումին. զրոյց Ուալիտ Ճումայլաթի եւ Սամիր Ժաաժայի հետ, 2006:



Խորհրդարանի նախագահին նախաձեռնած ազգային երկխոսության նիստերէն մէկուն ընթացքին, 2006:

կուած էր նաեւ Փարիզի Սան Զլու արուարձանին մէջ 2007ին տեղի ունեցած երկխոսութեան նիստերուն:

Մայիս 2008ին, երբ Տոհայի մէջ տեղի կ'ունենային լիբանանեան տագնապին վերջ տուող համաձայնագրի բանակցութիւնները, հայ համայնքի մասնակցութեան ձեւին շուրջ գոյացած էր համախոհութիւն մը, ըստ որուն փոխնիփոխ պիտի ներկայացուէին հայ քաղաքական ոյժերը: Այդպէս ալ եղաւ, երբ բացման նիստին ես ներկայացուցի լիբանանահայութիւնը: Հետագայ օրերուն այդ սկզբունքը խախտեցաւ եւ մեր բողոքներուն ի պատասխան, արարողակարգային սխալը սրբագրուեցաւ ու մենք փոխն ի փոխ ներկայացուեցանք Տոհայի բանակցութեան սեղանի յաջորդական նիստերուն:

Սակայն երկխոսութեան աւարտին հրապարակուած համաձայնագրի ստորագրութեան վերջին պահուն միայն մեր գործընկեր **Յակոբ Բագրատունի**ն ներկայացուց լիբանանահայութիւնը եւ ստորագրեց պատմական համաձայնագիրը, որուն հակառակեցայ, սակայն ապարդիւն եղաւ: Ասիկա եղաւ 8 Մարտի ուժերուն դրդումով եւ ճարակութեամբ, որոնք քաթարցիները համոզեցին թէ **Յակոբ Բագրատունի**ն է որ կը ներկայացնէ լիբանանահայութիւնը:



*Փարիզի Սան Զյու արուարձանին մեջ 2007ին տեղի ունեցած երկխոսության
նիստերուն:*

Տոհային յաջորդեցին Նախագահական ապարանքի մեջ կազմակերպուած երկխոսութեան կլոր սեղանի նիստեր, որոնց ընթացքին Նոյնպէս չարգուեցաւ հայ համայնքի ամբողջական ներկայացուցչութեան իրաւունքը: Զանի մը անգամ հրապարակային կերպով յայտնեցի թէ լիբանանահայութիւնը լիարժէք ներկայացուած չէ Նախագահական ապարանքին մեջ տեղի ունեցող երկխոսութեան կլոր սեղանին, քանի որ Հ.Յ.Դ-ով չէ սահմանափակուած հայկական ներկայացուցչութիւնը եւ երեսփոխան **Յակոբ Քազրատունին** չէ որ կը ներկայացնէ խորհրդարանի հայ երեսփոխանները, որոնցմէ չորսը Դաշնակցականներ չեն: Պահանջեցի յարգել հայ համայնքի ամբողջական ներկայացուցչութեան իրաւունքը եւ սրբագրել Տոհայի մեջ տեղի ունեցած սխալը: Մենք միշտ կը շեշտէինք թէ հակառակ պատմական թիւրիմացութեան, ըստ որուն լիբանանահայութիւնը միայն Հ.Յ. Դաշնակցութիւնն է, պէտք է վերականգնի լիբանանահայութեան քաղաքական բոլոր հոսանքներուն իրաւունքը, որոնք բոլորն ալ, ինչպէս Նաեւ անկախներ, ներկայացուած են խորհրդարանին մեջ:

Պաապտայի Նախագահական պալատին մեջ տեղի ունեցած ազգային երկխոսութեան առիթով հրապարակեցի յայտարարութիւն մը, զոր կու տամ ստորեւ.



Միջ-լիբանանեան ազգային երկխոսութեան նիստը Տոհայի մէջ, 2008ին: Աջէն ձախ՝ եւ, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի, Քաթարի արտաքին գործոց նախկին նախարար Համատ պըն ժասէմ եւ Արաբական Լիկայի նախկին նախագահ Ամրո Մուսա:



Նախագահ Միշէլ Սլէյմանի հետ Պաապտայի ապարանքին մէջ, 2008:

**Ռ.Ա.Կ.-Ի ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Պաապտայի նախագահական պալատի դաիլիծին մէջ տեղի ունենալիք ազգային երկխօսութեան երկրորդ նիստին առիթով հարկ կը սեպենք լիբանանեան հանրութիւնը լուսաբանել Տոհայի համա-ծայնութեան ստորագրութենէն ետք երկխօսութեան սեղանին շուրջ հայ համայնքը ներկայացնող անձնաւորութիւններու վերաբերեալ շարունակուող անընդունելի իրականութեան մասին, յատկապէս յամեցող սխալմուկքը սրբագրելու ուղղութեամբ մեր թափած ապարդիւն ճիգերէն ետք:

Այս առթիւ կը յայտարարենք, թէ այս երկխօսութեան ընթացքին հայկական համայնքը չէր ներկայացուած իսկական, ամբողջական եւ բաւականաչափ ձեւով, հետեւեալ պատճառներով.

- Հայերը երեսփոխանական եւ կուսակցական ներկայացուցիչ-ներով չեն կրնար Հ.Յ.Դաշնակցութեան պիտակին տակ միաւորուած ներկայացուիլ, հետեւաբար անկարելի կը նկատուի, որ այս պատ-մական սխալ ընկալումը շարունակուի թէ՛ հայկական, թէ՛ լիբանան-եան հանրային կարծիքին մօտ, եւ թէ՛ ալ երկխօսութեան սեղանին շուրջ: Հայերը կը բաղկանան երեք հաւասարազօր կուսակցութիւն-ներէ՝ հիմնուած 1880-1890 թուականներուն՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը, Ռամկավար Ազատական եւ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութիւնները: Հայ համայնքը խորհրդարանին մէջ ներկայացուած է վեց երեսփոխան-ներով, որոնք կամ կը ներկայացնեն վերոյիշեալ կուսակցութիւնները եւ կամ ալ անկախ են. հետեւաբար խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրին երկխօսութեան նիստէն առաջ որոշում կայացուց, որ հայ երեսփոխանները ներկայացուին իրենց երեք կուսակցութիւններու կարգով, այն հիման վրայ թէ իւրաքանչիւր երեսփոխան ներկայացնէ որոշ քաղաքական եւ կուսակցական հոսանք մը եւ ոչ թէ քաղա-քական եւ կուսակցական խմբաւորում:

- Անցեալին հայ երեսփոխաններ ներկայացուցած են իրենց կուսակցութիւնները եւ քաղաքական հոսանքները՝ սկսելով խոր-հրդարանի մէջ գոյացած երկխօսութեան ժողովներէն, անցնելով Ֆրանսայի Սէն Զլուի ժողովէն, հասնելով Տոհա, ուր տեղի ունեցաւ մեծ յուսախաբութիւնը: Արդարեւ, «8 Մարտ»ի ուժերը յառաջ քշեցին իրենց հայ ներկայացուցիչը՝ Հ.Յ.Դաշնակցութեան երեսփոխան Յակոբ Բագրատունեանը որպէս հայութեան միակ ներկայացուցիչ, քաթարցիները մոլորեցնելով, թէ ինք է միակ ներկայացուցիչը հայ

համայնքին ընդհանրապես Լիբանանի մէջ եւ այլուր: Մեր կողմէ այս պատկերը պատկան պատասխանատուներու մօտ յստակացուելէ եւ փորձաքուլային սխալը սրբագրուելէ ետք, հայկական մասնակցութեան հարցը բնականոն ընթացք ստացաւ եւ յաջորդական երեք նիստերու ընթացքին հերթաբար ներկայացուցին հայ համայնքը ներկայացնող երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները Տոհայի սեղանին շուրջ: Սակայն խորամանկութեամբ Տոհայի համաձայնութեան պատմական փաստաթուղթի ստորագրութեան պահուն, երեսփոխան Յակոբ Բագրատունեանին անունը անարդարօրէն դրուեցաւ որպէս հայ համայնքի ներկայացուցիչ, մեր միւս կուսակցութիւնները ներկայացնող երեսփոխաններուն պնդումին հակառակ:

- Հայերը կը նկատեն, թէ նախագահական պալատի երկխօսութեան սեղանին լիովին ներկայացուած չեն, որովհետեւ Հ.Յ.Դաշնակցութիւնը երբեք չէր կրնար ներկայացնել հայ համայնքը իր ամբողջութեամբ եւ ո՛չ ալ երեսփոխան Յակոբ Բագրատունեան կրնայ ներկայացնել հայերը խորհրդարանին մէջ, ուր վեց երեսփոխաններէն չորսը Դաշնակցականներ չեն:

Այս պատկառելի համայնքը ունի իր իւրայատկութիւնը, որ յստակացուցած է խորհրդարանի նախագահը, որ իրաւացիօրէն խորհրդարանի անցեալ երկխօսութեան նիստերուն որդեգրեց հայերու յաջորդաբար զիրար փոխարինելու սկզբունքը: Հետեւաբար մեր պահանջքը այսօր նոյն դրութեամբ հայերուն ներկայութեան եղանակին վերաբերեալ սեղանը լայնցնելու նպատակով չէ, այլ իրաւունք մըն է, որ մեզմէ առնուեցաւ:

Ուստի կը պահանջենք, որ քուէարկող հանրութիւնը իր ներկայացուցիչը ունենայ այս սեղանին շուրջ, այնպէս ինչպէս ներկայ էինք անցեալին խորհրդարանին մէջ եւ այլուր, վերջին շրջանին աշխարհի չորս կողմերը շրջելով քաղաքական լուծում մը գտնելու լիբանանեան հարցին առնչութեամբ մեր պաշտօնակից երեսփոխան Բագրատունեանին հետ համահաւասար իրաւունքներով, որ միշտ անձամբ եւ իր ներկայացուցած կուսակցութեամբ միասնաբար կը պահանջէին հաւասարապէս մասնակցութեան իրաւունքը:

7 Նոյեմբեր 2008

«Չարթօնք»ի դադրեցումը եւ վերահրատարակութիւնը

Ռ.Ա.Կ.-ի պատմութեան մէջ «Չարթօնք»ը ծնունդն է հերոսական պայքարներու եւ անհամար զոհողութիւններու: Ան իր հրատարակութեան առաջին օրէն ի վեր, հպարտօրէն կը շարունակէ իր յաղթական ընթացքը եւ լիովին կը կատարէ իրեն վստահուած ազգանուէր առաքելութիւնը: «Չարթօնք»ը մեր կուսակցութեան խօսափողն է, որ միշտ ընթացած է իր հիմնադիրներու գծած ուղեգիծով: Մեր ազգային-կուսակցական կեանքին եւ գործունեութեան մէջ «Չարթօնք» իր կարեւորագոյն դերը կատարած է: Իսկ լիբանանեան ու հայրենական քաղաքական կեանքին մէջ իր ուրոյն ուղեգիծը ունեցած է եւ անվարան կ'ընթանայ այդ նոյն ճանապարհով:

Ինչպէս Սփիւռքի բազմաթիւ թերթեր, «Չարթօնք»ը եւս միշտ ունեցած է զանազան տեսակի դժուարութիւններ, սակայն միշտ ալ լուծումներ գտնուած են յաղթահարելու զանոնք եւ ապահովելու անոր գոյերթը՝ ի գին մեծ զոհողութիւններու:

Կուսակցական ներքին հակառակութիւններու եւ պառակտումներու ընթացքին, մենք նաեւ մասնաւոր դժուարութիւններ ունեցանք Լիբանանի մէջ: Դատական զանազան հարցերու կողքին կարգ մը ընկերներ, դիմելով պետական համապատասխան մարմիններու, պահանջեցին որ Թ.Մ.Ս. Զիմնադիրներու Մարմինը իր յանձանձումներու վերաբերեալ պաշտօնական հաշուետուութիւններ ներկայացնէ: Զիմնադիրներու Մարմնի ատենի ատենապետը, մտավախութիւն ունենալով որ հաշուետուութեանց ներկայացման ընթացքին կը պարզուի թէ Թ.Մ.Ս.-ը, որպէս մշակութային միութիւն, քաղաքական թերթի մը նիւթական մատակարարումը կատարած է, դադրեցուց թերթին նիւթական օժանդակութիւնը: Ասոր իբր հետեւանք, մեր թերթը դադրեցաւ լոյս ընծայուել: Ասոնք էին «Չարթօնք»ի խափանումին հիմնական պատճառները: Թերթին դադրեցումը տխուր երեւոյթ էր, անշուշտ, եւ Ռ.Ա.Կ.-ի պատմութեան մէջ մռայլ շրջան մը, որով անոր հաւատարիմ ընթերցողները մօտաւորապէս մէկուկէս տարի, 12 Յունուար 2007էն մինչեւ 1 Մայիս, 2008 զրկուեցան թերթէն:

Սկզբնական շրջանին թերթին արտօնատերը ղեկավար ընկեր **Բարունակ Թովմասեանը** եղած էր, իսկ անոր Ամերիկա տեղափոխուելէն ետք, ութսունական թուականներուն, ստեղծուած էր Չարթօնք Ընկերակցութիւն մը, որ կազմուած էր անհատներէ: Անոնցմէ շատ սիրելի ընկերներ մահացան,

ուրիշներ մնացին եւ Չարթօնք Ընկերակցութիւնը կաղաց, որովհետեւ ոչ մէկ օրինական հիմք ուներ:

Այդ ընթացքին խորհեցայ Չարթօնք Ընկերակցութեան իրաւական կարգավիճակը փոխելու մասին: Թեքեան Մշակութային Միութիւնը արդէն արձանագրուած էր վաթսուն տարիէ ի վեր: Նկատի առնելով, որ Թ.Մ.Մ. Զիմնադիրներու Մարմնի քանի մը անդամներ մահացած էին արդէն, որոշեցինք ընդհանուր վերատեսութեան ենթարկել թէ՛ Թ.Մ.Մ.-ի եւ թէ՛ «Չարթօնք»ի օրինական կարգավիճակը: Մանաւանդ Ռ.Ա.Կ.-ի պետական արձանագրութենէն ետք, որ պաշտօնապէս իրականութիւն դարձած էր Յուլիս 2004ին, այլեւս կարելիութիւնը կար փոխելու միայն անհատներու անուններով արձանագրուած մեր կառոյցներուն օրինավիճակը եւ «Չարթօնք»ի սեփականատէր եւ հրատարակիչ արձանագրելու Ռ.Ա.Կ.-ի եւ Թ.Մ.Մ.-ի ներկայացուցիչներէն կազմուած մարմին մը՝ Շիրակ Առեւտրական Ընկերակցութիւն անունով, որուն բաժնետոմսերը Թ.Մ.Մ. Զիմնադիրներու Մարմնին եւ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան կը պատկանին իբրեւ կազմակերպութիւններ եւ ոչ թէ անհատներ:

Շիրակ Առեւտրական Ընկերակցութեան տնօրէնի պաշտօնը սկզբնական շրջանին վարեցի ես, ապա զիս փոխարինեց ընկ. **Վազգէն Ժամկոչեան**, որմէ ետք այդ պաշտօնը ստանձնեց ընկ. **Արտաւազդ Մելքիսեթեան**: Նախորդ մարմինները լուծարքի ենթարկելու եւ նոր գոյավիճակով մարմիններ ստեղծելու նպատակով պետական համապատասխան ատեաններու մօտ ձեւակերպումներու գործը երկար ժամանակ խլեց մեզմէ, մինչեւ որ կրցանք «Չարթօնք»ը ամուր հիմերու վրայ դնել եւ հրատարակել: Այսպիսով, կրցանք մեր կառոյցները հաստատուն հիմերու վրայ դնել եւ օրինակ ըլլալ ուրիշներու, որոնք տակաւին կը շարունակեն մեր կառոյցները պահել անհատներու անունով:

Ամէն ճիգ ի գործ դնելով ո՛չ միայն յաղթահարեցինք, այլ վերստին իր արժանի պատուանդանին վրայ զետեղեցինք թերթը: «Չարթօնք»ի այս նորագոյն շրջանը շնորհաւորելի է՝ որովհետեւ նախ ան թեքեանապատկան օրաթերթ մը եղաւ, Շիրակ Առեւտրական Ընկերակցութեան բաժնետէրեր նկատուելով Թ.Մ.Մ. Զիմնադիրներու Մարմինը եւ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութիւնը: Այս իրագործումէն ետք ոչինչ խնայեցի «Չարթօնք»ին համար, որ նախ լոյս տեսաւ որպէս երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Սկիզբի շրջանին, անոր խմբագրութիւնը ստանձնեց ընկ. **Յրայր Կարապետեան**, այնուհետեւ ան հրատարակուեցաւ Զիմնադիրներու Մարմնի ատենադպիր ընկ. **Արտաւազդ Մելքիսեթեանի** տնօրինութեամբ ու ընկ.հի **Պայծիկ Գալաճեանի** խմբագրութեամբ: Ի վերջոյ խմբագիր նշանակուեցաւ

ընկ. **Սեւակ Յակոբեան**: Ուրախ եմ այսօր տեսնելու, որ «Չարթօնք»ը ապահով ձեռքերու մեջ է, թե՛ որպես խմբագրական կազմ եւ թե՛ որպես վարչական մարմին: Համացանցի միջոցով թերթը այսօր կը հասնի որքան Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան, Նոյնքան եւ ամէլի հայրենի ու սփիւռքահայ մեր ընթերցող հասարակութեան:

«ՉԱՐԹՕՆՔ» օրաթերթը արժանավայել կերպով գնահատանքի արժանի դարձաւ թե՛ Հայրենիքի, թե՛ Սփիւռքի տարածքին: Այս կապակցութեամբ մասնաւոր շնորհակալութիւններու արժանի են ամերիկաբնակ մեր հաւատաւոր ընկերները, որոնք հաւատալով մեր օրաթերթի առաքելութեան, ընդառաջեցին մեր խնդրանքին եւ նիւթաբարոյական միջոցներով օգտակար եղան «Չարթօնք»ի վերահրատարակութեան աշխատանքին

«Չարթօնք»ի վերահրատարակութիւնը ողջունեցին բոլորը՝ Լիբանանի թե՛ Սփիւռքի տարածքին:

Թ.Մ.Մ. Հիմնադիրներու Մարմինը հրապարակեց հետեւեալ «Ողջոյնի Գիր»ը այդ առթիւ.

«Չարթօնք» օրաթերթի տասնվեցամսեայ ցաւալի կատեցումը, ցաւ պատճառեց առաջին հերթին, անոր անմիջական պատասխանատու ազգային դէմքերուն, ապա համայն Հայ Ժողովուրդի զաւակներուն, ի մասնաւորի Լիբանանահայութեան ու յատկապէս Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Թէքէեան Մշակութային Միութեան եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամներու ու համակիրներու աշխարհացրիւ հսկայ բանակին:

Ոմանք իսկապէս մտահոգ, ուրիշներ հիւանդագին մոլուցքով ենթադրեցին թէ «Չարթօնք» կ'անցնի պատմութեան էջերուն առ յաւետ եւ այլեւս կը դառնայ միայն անցեալ: Սակայն ի յագեցում առաջիններուն եւ ի հեծուկս վերջիններուն, այսօր ահա արդէն Վահան Թէքէեաններու ու Գեղսամ Ահարոնեաններու «Չարթօնք»ը ոտքի է ու պատնէշի վրայ, ազգային գերխնդիրներու եւ Հայ Ժողովուրդի մաքառումներու ու նուաճումներու որպէս խօսափող:

Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինը այսու կ'ողջունէ «Չարթօնք»ի վերահրատարակումը եւ իր երախտիքի խօսքը կ'ուղղէ այն տքնաջան նուիրաբերումին, որու որպէս հետեւանք, յաղթահարուեցան ամեն տեսակի արգելք ու դժուարութիւն, «Չարթօնք»ի վերազարթօնքի եւ վերյառնումի իրականացման ի խնդիր:

Մենք փորձեցինք վերակենդանացնել նաեւ Թեքէեան Մշակութային Միութեան «Շիրակ» գրականութեան եւ արուեստներու ամսագիրը, որուն վերահրատարակումը իրագործեցինք 2004ին: Վերահրատարակութեան տօնախմբութիւնը տեղի ունեցաւ 28 Սեպտեմբեր 2004ին Թ.Մ.Մ. Գերսամ Ահարոնեան սրահին մէջ: «Շիրակ»ի խմբագրութիւնը ստանձնեց բանաստեղծ **Արա Ճուհարեան**, օգնական ունենալով **Զեփիւռ Թամերեանը**: **Արտաւագդ Մեքիսէթեանի** հետեւողական ճիգերուն, բայց մանաւանդ Յ.Բ.Ը. Միութեան նախագահ **Պերճ Սեդրակեանի** բերած գործնական նեցուկին շնորհիւ կարելի եղաւ ամսագրին վերահրատարակումը: Հանդիսաւոր գինեծօսին առիթով արտասանած խօսքիս մէջ ըսի. *«Ես հպարտութեամբ կը շնորհաւորեմ Թեքէեան Մշակութային Միութեան մեծ ընտանիքը, իր այս յաղթանակին համար: Կը շնորհաւորեմ Թեքէեանի Վարչական Խորհուրդը եւ իր ատենապետ՝ ընկ. Արտաւագդ Մեքիսէթեանը, որուն ունեցած տեսիլքին եւ հետեւողականութեան շնորհիւ, այսօր դարձեալ ունեցանք «Շիրակ»ը: Յատկապէս կը շնորհաւորեմ «Շիրակ»ի նոր խմբագիրը՝ Արա Ճուհարեանը: Մեր առաջին հանդիպումէն իսկ, Արա Ճուհարեան մեծ տպաւորութիւն ձգեց վրաս ու ես իր այլ արժանիքներու կողքին իր մէջ տեսայ անկեղծ մարդը»:*

Դժբախտաբար «Շիրակ» ամսագրի հրատարակութիւնը կարելի չեղաւ շարունակել հետագային, զանազան պատճառներով, բայց մանաւանդ մէկ կողմէ ընկ. **Նար Խաչատուրեանի** եւ **Ժիրայր Դանիէլեանի** եւ միւս կողմէ՝ ընկ. **Արտաւագդ Մեքիսէթեանի** միջեւ առաջացած անձնական հարցերու պատճառով: Համոզուած եմ որ պայմաններու գոյութեան պարագային դարձեալ պիտի հրատարակուի գրական այս ամսագիրը:

2009ի խորհրդարանական ընտրություններ

Յունուար 2009ին, Թեթեան Կեղրոնին մեջ Ռ.Ա.Կ. քաղաքական գրասենեակի կազմակերպությամբ եւ աւելի քան երկու հարիւր յիսուն կուսակցականներու ներկայութեամբ տեղի ունեցաւ մեծ հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուեցան լիբանանեան քաղաքական կեանքի եւ երեսփոխանական ընտրութիւններու հարցեր:

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. Տոթթ. **Աւետիս Տազետեան**ի բացման խօսքէն ետք, խօսք առի նաեւ եւ: Անդրադարձայ յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն եւ մանաւանդ գործունեութեանը կարգ մը կուսակցականներու, որոնք օրինական կառոյցէն դուրս եւ որդեգրուած քաղաքական կեցուածքին հակառակ, մեկուսի կը գործակցէին լիբանանեան քաղաքական կարգ մը կողմերու հետ: Անոնք լիբանանեան տեղական մամուլին մէջ յայտարարութիւններ կու տային եւ կը խեղաթիւրէին կուսակցութեան քաղաքականութիւնն ու ղեկավարութեան գործունեութիւնը: Խօսքիս մէջ ի միջ այլոց ըսի. «Մենք Հայկական Ծագումով Լիբանանցիներ ենք» եւ աւելցուցի թէ կուսակցութիւնը հաւատարիմ մնացած է լիբանանեան սկզբունքներուն, որոնք կը վերաբերին ազատութիւններու պաշտպանութեան, Լիբանանի անկախութեան եւ գերիշխանութեան, ինչպէս նաեւ Լիբանանի Սահմանադրութեան պահպանութեան:

«Մենք Հայկական Ծագումով Լիբանանցիներ ենք» սկզբունքը գործնականացնելու ճամբուն վրայ, կուսակցութիւնը աշխատանք տարաւ գործակցելու լիբանանեան ազգային այլ ուժերու եւ քոյր յարանուանութիւններու հետ եւ այդ ուղղութեամբ ընտրեց «քաղցր խօսքերով երկխօսութեան» ուղին: Խօսելով Նահատակ վարչապետ **Հարիրիի** հետ մեր գործակցութեան մասին, ըսի. *«Նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան միջեւ գործակցութիւնը սկսած էր 1996էն ի վեր, երբ կուսակցութեան մօտ գոյացաւ այն կատարեալ, խոր ու վերջնական համոզումը Նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի քաղաքական ուղիին նկատմամբ, իսկ երբ 2000ին կուսակցութիւնը խորհրդարան մուտք գործեց անձիս ընդմէջէն, կուսակցութեան նպատակն էր միասնաբար աշխատանք տանիլ ի խնդիր Դեմոկրատ Լիբանանի վերականգնումին՝ զանազան մակարդակներու վրայ: Կուսակցութեան կողմէ Նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիին տրուած խոստումը հիմնուած է հաւատարմութեան վրայ»:* Շարունակելով



Իմ նախագահությամբ գումարուած Լիբանանի խորհրդարանի գաղթականաց յանձնախումբի նիստերէն մէկը:

խօսքս, աւելցուցի. «2000 թուականէն ի վեր Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ուխտ մը կնքած էր Մուսաթապալ Յոսանքին հետ, այդ ուխտը կը շարունակուի Շէյխ Սաատ Յարիրիի հետ: Մեր կուսակցութիւնը նշեալ Ուխտին միջոցաւ միացաւ 14 Մարտի շարքերուն. մեր կուսակցութիւնը համոզուած է գերիշխանութեան խմբակցութեան շարքերուն միացման, որովհետեւ մենք սկզբունքի տէր ենք. մենք համոզուած ենք եւ հաւատարիմ կը մնանք 14 Մարտի քարոզած ժողովրդավարութեան, Գերիշխանութեան եւ Ազատութեան սկզբունքներուն:

Հետեւաբար, մենք կանք ու կը մնանք 14 Մարտի խմբակցութեան մէջ: Մենք կուսակցութեան մէջ որոշում գոյացուցինք մասնակցելու ընտրապայքարին՝ մեր գտնուած վայրերուն մէջ, եւ այս անգամ մենք գործօն ներկայութիւն պիտի ըլլանք՝ ընդլայնելով մեր ընտրական մեքանիզմը Պէյրութի, Մէթնի եւ Միջին Պէքաայի մէջ: Այս ուղղութեամբ, Կուսակցութիւնը կ'ուզէ վերանորոգել իր հաստատումը՝ ինչ կը վերաբերի Նահատակ վարչապետ Ռաֆիք Յարիրիի ուղիով ընթանալուն, եւ միեւնոյն ուղիին ընդմէջէն անոր որդիին՝ Շէյխ Սաատ Յարիրիին հետ միատեղ, հաստատ մնալով անոր լայնախոհ ժողովրդավար ուղիին ու չափաւորական քաղաքականութեան, որպէսզի միասնաբար իրականացնենք Անկախութեան, Գերիշխանութեան

եւ Ազգային Միասնականության ու Թայեֆի Համաձայնագրին երդիկին տակ Համակեցության առնչությամբ Նահատակ վարչապետին երազն ու ծրագիրը»:

Երեսփոխանական ընտրություններու հետ կապուած հաւաք մը եւս տեղի ունեցաւ 24 Յունուար 2009ին, Թեքէեան Կեդրոնի Հրաչեայ Սեդրակեան սրահին մէջ, մասնակցութեամբ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանակի ակումբներու վարչականներու եւ անդամակցութեան, կազմակերպութեամբ Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Հաւաքին նպատակը երեսփոխանական ընտրութիւններէն առաջ կուսակցական միասնականութիւնը ապահովելը եւ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն պատրաստուիլն էր: Հանդիպումին խօսք առին Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ ընկ. **Յակոբ Փափագեան** եւ ընկ. **Հրայր Հովիւեան**: Յանուն Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան, ընկ. **Հովիւեան** բոլոր ներկաներուն պաշտօնապէս յայտարարեց թէ Ռ.Ա.Կ.-ի 2009ի Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն կուսակցութեան թեկնածուն **Յակոբ Գասարճեան** է:

Խօսքիս մէջ ողջունեցի ընկերներուն ցուցաբերած յանձնառու ոգին եւ անդրադարձայ կուսակցութեան կառոյցը զօրացնելու եւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններու պատրաստութեան համար անհրաժեշտ աշխատանքներուն: Այս առիթով ըսի. «2009ի ընտրական պայքարը ամէն քանէ առաջ անհրաժեշտութիւն մը կը թուի ըլլալ նախ համահայկական առումով եւ ապա Ռամկավար Ազատական Կուսակցութեան գաղափարախօսութեան առումով, որովհետեւ ժամանակը ցոյց տուաւ թէ լիբանանահայութիւնը խորհրդանշող քանակական տուեալներու մեծամասնութիւնը հատուածականութենէ անդին է եւ այսօրուայ լիբանանեան քաղաքականութիւնը ապացուցած է թէ 14 Մարտի հայկական ուժերը յստակօրէն կը ներկայացնեն համահաւասար քանակական ուժ:.. Այս անգամ մեր աշխատանքային կորիզը միայն Ռամկավար թեկնածու մը ընտրելու մէջ չի կայանար, այլ կը պահանջէ առաւելագոյն թափով գործի լծուիլ, յանուն լիբանանահայութեան, ի մասնաւորի պէյրութահայութեան պատկերի յստակացման: Մենք զմեզ որպէս ռամկավարներ շատ ազատ ու համոզուած կը զգանք պատկանելով 14 Մարտի հոսանքի շարքերուն, որովհետեւ գաղափարական առումով կը հաւատանք Ազատ, Անկախ եւ Դեմոկրատ Լիբանանի»:

20 Փետրուար 2009ին հաւաք մը եւս տեղի ունեցաւ, այս անգամ մասնակցութեամբ Վահան Թեքէեան Միջնակարգ Վարժարանի հոգաբարձութեան, ուսուցչական կազմին, ծնողներու եւ սանուց միութեան անդամներու: Հաւաքը իր զօրակցութիւնը յայտնեց թեկնածութեանս յառաջիկայ երես-

փոխանական ընտրություններուն:
Ը ն տ ր ա կ ա ն - ա ն դ ա մ ա կ ա ն
հաւաքները շարունակական էին:
13 Մարտ 2009ին, Թեքեան
Կեդրոնի Հրաչեայ Սեդրակեան
սրահին մէջ բազմամարդ հաւաք
մըն ալ տեղի ունեցաւ:

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային
Վարչութեան ու կազմակերպիչ
մարմնի անդամներ հիւրընկալեցին
հաւատաւոր ընկերներ ու համա-
կիրներ: Ռ.Ա.Կ. Շուշանիկ, Չար-
թօնք, Պայքար, Եկարեան, Ոսկեան,
Յովսէփեան, Մերճանեան եւ Փոր-
թուգալեան ակումբներու վարչա-
կաններ եւ անդամներ ոգևորու-
թեամբ մասնակցեցան զօրակոչի այս հաւաքին, որ շեշտեց կուսակցութեան
միասնականութեան վերականգնման եւ տարիներու անհասկացողութիւն-
ները եւ տարակարծութիւնները յաղթահարելու անհրաժեշտութիւնը,
մանաւանդ որ ընտրական արշաւին նախորդող այս ժամանակաշրջանին
կուսակցական կարգ մը ընդդիմադիրներ կազմակերպութեան օրինական
կառնոյցէն դուրս ընդդիմադիր շարժում մը կազմակերպած էին երեսփո-
խանական թեկնածութեանս դէմ: Ես կոչ ըրի հաւաքի ներկաներուն խոր
հաւատքով դուրս գալու սրահէն եւ ցոյց տալու մեր շրջապատին թէ կու-
սակցութիւնը ոչ միայն միակամ է, այլեւ ունի մէկ ղեկավարութիւն, մանաւանդ
որ մի քանի ամիս յետոյ պիտի գումարուէր Ռ.Ա.Կ. Ընդհանուր Պատգա-
մաւորական Ժողովը:

Հակառակ կուսակցական շարքերու, համակիրներու ու բարեկամներու
քաջալերանքին եւ զօրակցութեան, աւելի ուշ, կշռադատելով իրավիճակը,
որոշեցի հանել թեկնածութիւնս ընտրութիւններէն: Երեսփոխանական
ընտրութիւններուն չմասնակցելու որոշումս տարբեր պատճառներ ունէր:
Կուսակցական մեր ներքին խնդիրները եւ նախորդ երեսփոխանական
շրջանին 14 Մարտի երեսփոխաններու հետ շուրջ երկու տարի պանդոկի մը
մէջ արգելափակուած մնալս ազդած էին տրամադրութեանս վրայ:

Փակագիծերը բանալու համար արձանագրեմ նաեւ հետեւեալը: Իմ թեկ-
նածութեան ընդդիմադիր ընկերներ՝ **Մայք Խարապեան, Նար Խաչա-
տուրեան եւ Էտի Պահատրեան**, ինչպէս նաեւ **Պօղոս Աստուրեան (Միշէլ**



*Լիբանանի նախկին փոխ-վարչապետ
Միշէլ Մըրրիի հետ:*

Ֆարանի պաշտոնեայ) հանդիպում մը ունեցած էին **Միշէլ Ֆարանի** հետ՝ յայտնելու համար թէ կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, գլխաւորութեամբ ընկ. **Մայք Խարապեանի**, դէմ է թեկնածութեանս եւ թէ ես կուսակցութիւնը չեմ ներկայացներ: Հանդիպման մասնակցած էր նաեւ **Նատեր Հարիրի**: Բանակցութիւններու մէջ մտնելով Հ.Յ.Դ.-ի հետ, Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարած էր թէ Ռ.Ա.Կ. թիկունք կը կանգնի Հայկական Համախմբում (իմա՝ Դաշնակցական) ստեղծելու ծրագրին, որ յայտնապէս իմ պաշտօնական թեկնածութիւնս ձախողնելու կը միտեր:

Միւս կողմէ, Տոհայի մէջ **Սաատ Հարիրիի** կողմէ ինծի խոստացուած էր թէ, ըստ համաձայնութեան, առանց ընտրութեան երեսփոխան պիտի նշանակուիմ Պէյրութի երկրորդ ընտրաշրջանէն: Հարցումիս ի պատասխան թէ ի՞նչ պիտի ըլլայ **Ժան Օղասափեան**, **Սաատ Հարիրի** ըսած էր թէ **Օղասափեան** նախարար պիտի նշանակուի, իսկ ես եւ **Սերժ Թուրսարգիսեան** երեսփոխան պիտի ըլլանք: **Սաատ Հարիրի**էն խնդրած էի **Միշէլ Ֆարան**ը համոզել որ ան իր ցանկէն դուրս հանէ **Սեպուհ Միսնեանի** թեկնածութիւնը, քանի որ արդէն իսկ յառաջադրած էի թեկնածութիւնս: **Հարիրի** դէմ չէր թեկնածութեանս, բայց կը փափաքէր որ Պէյրութի Առաջին Շրջանէն յառաջադրուիմ, իսկ ինծի նախապէս խոստացուած երկրորդ շրջանը տրուի Ս.Դ.Հ.Կ.-ին: **Հարիրի**, սակայն, տարբեր պատճառներով չարգէց տրուած խոստումը:

Կուսակցութեան մէջ յառաջացած ճեղքը աւելի չխորացնելու համար, որոշեցի ուրիշ կուսակցական թեկնածու մը նկատի ունենալ, սակայն անսալով **Սաատ Հարիրիի** խնդրանքին, որոշեցինք **Օղասափեանի** թեկնածութիւնը յառաջադրել: Ասոր իբր հետեւանք, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան 6 Ապրիլ 2009ի լիակազմ նիստին իմ ներկայութեամբ պաշտօնապէս որոշուեցաւ թէ 2009ի Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն Ռ.Ա.Կ.-ի Պէյրութի Ա. ընտրաշրջանի Հայ Առաքելական աթոռի թեկնածուն պիտի ըլլայ նախարար **Ժան Օղասափեան**:

Երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակին, 29 Մայիս 2009ին, Թեքէեան Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային պատմական հաւաք մը, որուն մասնակցեցան 14 Մարտի ուժերուն եւ կուսակցութիւններուն երեսփոխանական թեկնածուները, ղեկավարները եւ Պէյրութի առաջին ընտրաշրջանի բազմահարիւր ընտրողներ: Ներկաները ողջունեցին պետական նախարար եւ Ռ.Ա.Կ.-ի թեկնածու **Ժան Օղասափեանը**, **Եղիկ Ճերեճեանը**, ընտրեալ երեսփոխան **Սեպուհ Գալիաքեանը**, **Սերժ Թուրսարգիսեանը**, **Նայլա Թուէյնին**, **Նետիմ Ժըմայէլը**, Լիբանանեան Ուժերու

Նախկին թեկնածու **Ռիշար Գույումճեանը** եւ **Զօր. Նարեկ Աբրահամեանը**: Ոգեւորիչ եւ գալիք ընտրութիւններուն յաղթելու վստահութեան հաւաք մըն էր այս մէկը, զոր բոցաշունչ ելոյթով եզրափակեց Ռ.Ա.Կ.-ի թեկնածու **Ժան Օղասափեանը**, որ ի միջի այլոց շնորհակալութիւն յայտնեց ինծի երեսփոխանական առաքելութիւնս իրեն վստահելու համար:

Ընտրութիւններուն մեր արձանագրած փայլուն յաղթանակը տօնախմբելու եւ ընտրուած երեսփոխաններ **Ժան Օղասափեանը**, **Սեպուհ Գալփաքեանը**, **Սերժ Թուրսարգիսեանը** եւ **Շանթ Զինչինեանը** շնորհաւորելու համար ընդունելութիւն մը կազմակերպեցինք 11 Յունիս 2009ին: Իսկ յաջորդ օրը մեր ընտրական մարմինն ի պատիւ ճաշկերոյթ մը սարքեցինք Թեքեան Կեդրոնի Զրաչեայ Սեդրակեան սրահին մէջ: Բազմամարդ սրահը ծափերով ողջունեց յաղթած երեսփոխաններ **Ժան Օղասափեանը** (Ռ.Ա.Կ.), **Շանթ Զինչինեանը** (14 Մարտի ուժեր), զիս, **Զօր. Նարեկ Աբրահամեանը** (Ազատ Զայեր-14 Մարտի ուժեր), Ռ.Ա.Կ. Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. **Աւետիս Տազեսեան**ն ու վարչութեան պատասխանատու ընկերները:

Խօսքիս մէջ գնահատեցի 14 Մարտի ուժերու ազատական գաղափարախօսութիւնը եւ սկզբունքները եւ կոչ ըրի այդ սկզբունքները արժեւորելու համար ներքին միասնականութիւն եւ հանդուրժողութիւն ցուցաբերելու, նաեւ զօրացնելու Ռ.Ա.Կ.-ի, Ս.Դ.Յ.Կ.-ի, Զ.Բ.Ը.Մ.-ի, Զ.Ե.Ը.-ի, Ազատ Զայերու եւ անկախներու միջեւ համագործակցութիւնը: Շնորհակալութիւն յայտնեցի Ռ.Ա.Կ.-ի շարքերուն, որոնք հակառակ իրենց կամքին, ոչ կուսակցականի մը թեկնածութիւնը պաշտպանեցին իբրեւ Ռ.Ա.Կ.-ի երեսփոխան: Շեշտեցի թէ համոզումով եւ հաւատքով որոշած էի չմասնակցիլ երեսփոխանական ընտրութիւններուն եւ Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան հետ համախորհուրդ որոշած էինք **Ժան Օղասափեանը** յառաջադրել ներկայացնելու Ռ.Ա.Կ.-ը: Վերջապէս ներողութիւն խնդրեցի բոլոր անոնցմէ, որոնք թէեւ չէին համոզուած այս ընտրութեան, բայց շարունակեցին իրենց գործունեութիւնը:

Պատմութեան համար ցաւով պիտի արձանագրեմ թէ՛ ընկերներ **Մայք Խարապեան**, **Էտի Պահատրեան** եւ **Նար Խաչատուրեան** իրենց այդ ընթացքով կամայ թէ ակամայ կուսակցութիւնը զրկեցին խորհրդարանին մէջ Ռ.Ա.Կ.-ի անդամ երեսփոխան ունենալու պատեհութենէն: Տարդ չեմ հասկցած թէ ինչո՞ւ այդպիսի քայլ կատարեցին յիշեալ ընկերները:

Իտալիոյ Հանրապետութեան Սպայից Կարգի Արժանեաց Շքանշանով Պարգևատրում

Ի գնահատում Լիբանանի եւ Իտալիոյ միջեւ բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման ուղղութեամբ գործադրած ջանքերու եւ Իտալիոյ նկատմամբ տածած բարեկամական զգացումներու, Լիբանանի մօտ Իտալիոյ Հանրապետութեան դեսպան պրն. **Կապրիէլ Զիքիան**, առաջնորդուելով Իտալիոյ Հանրապետութեան Նախագահ **Ճիորճիօ Նափոլիթանոյ**ի հրամանագրով, 18 Մայիս 2009ին իր նստավայրին մէջ կազմակերպեց մեծարման եւ պարգևատրման հանդիսութիւն մը, որուն ընթացքին զիս արժանացուց Իտալիոյ Հանրապետութեան Սպայից կարգի Արժանեաց Շքանշանին եւ մագիստրոսական վկայականին:

Հանդիսութեան իրենց ներկայութեամբ զիս պատուեցին Լիբանանի մօտ հաւատարմագրուած դիւանագիտական ներկայացուցչութիւններու ընտրանին, լիբանանցի Նախարարներ, երեսփոխաններ, ազգային եւ մշակութային դէմքեր, գործարարներ եւ հարազատներ: Դեսպան **Զիքիա** այս առթիւ ըսաւ. *«Մենք այստեղ ներկայ կը գտնուինք կարելոր իրադարձութեան մը՝ յանձնելու համար բարձր պատուանշան մը երեսփոխան Յակոբ Գասարճեանին՝ ընկերակցութեամբ իր տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն, որոնք Ձեզի հետ միասին ուրախ եմ հիւրընկալելու այս նստավայրին մէջ, Գասարճեան բարեկամը պարգևատրելու Իտալիոյ Հանրապետութեան Սպայից կարգի շքանշանով: Այս, ինչպէս գիտէք, անկեղծ ճանաչում է Լիբանանի եւ Իտալիոյ միջեւ կապերու ամրապնդման ուղղութեամբ իր գործադրած ջանքերուն, ինչպէս նաեւ իր նուիրումներուն եւ զգացումներուն իմ երկրին հանդէպ, որուն բարեկամութիւնը Լիբանանի հետ, ամուր եւ հինաւուրց՝ իր կարգին լաւապէս ծանօթ է: Իրեն այս պատուաբեր շքանշանի շնորհումը Իտալիոյ Վսեմաշուք Նախագահ Ճիորճիօ Նափոլիթանոյի կողմէ յարգանքի արտայայտութիւն մըն է հանդէպ իր արհեստավարժի եւ մարդկային յատկութիւններուն, իր Նախաձեռնութեան ու ոգեւորութեան... իր վճռակամութեան եւ համոզմունքին, բազմակողմանի գործունէութեան, որ յառաջ կը տանի քաղաքական, ընկերային եւ գործարարական բնագաւառներուն մէջ»:*

Բնականաբար շոյուած էի մեծարանքի այս արտայայտութենէն: Արդարեւ, տակաւին 90ական թուականներէն սկսեալ, Լիբանանի թէ Ֆրանսայի մէջ մեր Սեդրակ Գասարճեան եւ Որդիք Ընկերութեան միջոցով առեւտրային կապեր հաստատած ենք իտալական ընկերութիւններու հետ՝



Լիբանանի մօտ Իտալիոյ դեսպան Կապրիէլէ Քիքիան կը պարգևատրէ զիս Իտալիոյ Հանրապետութեան Սպայից Կարգի Արժանեաց Շքանշանով, Պէյրութ, 2009:

մետաղագործութեան բնագաւառին մէջ: Մենք նպաստած ենք նաեւ Լիբանանի թէ Ֆրանսայի մէջ իտալական ընկերութիւններու գործունեութեան ընդլայնումին:

Հանդիսութեան աւարտին արտասանած խօսքիս մէջ խորին շնորհակալութիւն յայտնեցի Իտալիոյ Հանրապետութեան նախագահին, Լիբանանի մօտ Իտալիոյ նախկին եւ այժմու դեսպաններուն եւ բոլոր ներկաներուն: Շարունակելով հօրս կողմէ հիմնուած Իտալիոյ հետ առեւտրական յարաբերութիւնները, ինչպէս նաեւ ղեկավարելով Լիբանանի խորհրդարանէն ներս Լիբանան-Իտալիա խորհրդարանական Յանձնաժողովը, գոհունակութիւնը ունեցած եմ, որ կրցած եմ նպաստս բերել երկու երկիրներու տնտեսական եւ առեւտրական կապերու աշխուժացումին:

Լիբանանեան Զրետի Պանքը Հայաստանի Մէջ

Հակառակ անոր որ Հայաստանի տնտեսութեան զարգացումին մասնակցելու եւ ներդրումային ծրագիրներ իրականացնելու բազմաթիւ առաջարկներ եւ առիթներ եղած էին անցեալին, միայն 2009ին էր որ նման ծրագրի մը մասնակցեցայ: Արդարեւ, իմ նախաձեռնութեամբ լիբանանեան Զրետի Պանքը մուտք գործեց Հայաստանի դրամատնային շուկայ, ձեռք բերելով Անեյիբ Պանքի 51 առ հարիւր բաժնետոմսերը, որով յիշեալ դրամատան դրամազուխը հասաւ 45 միլիոն տոլարի: Ասիկա Հայաստանի մէջ լիբանանեան ներդրումային ծրագրի մը իրականացնելու փափաքիս գործնականացումն էր:

Անեյիբ Պանքի հին եւ նոր բաժնետէրերու ժողովին ընտրուեցաւ նոր Գերագոյն Խորհուրդ մը, որուն մաս կազմեցին **Թարեք Խալիֆէ, Ֆրետի Զրեյք, Յակոբ Գասարճեան**, որպէս ներկայացուցիչներ Զրետի Պանքի, իսկ **Սամուէլ Ճգմաճեան, Արմէն Ղազարեան եւ Կալինա Վորոնովա**, որպէս Անեյիբ Պանքի ներկայացուցիչներ: Միաձայնութեամբ Գերագոյն Խորհուրդի նախագահ ընտրուեցայ: Հայ-լիբանանեան դրամատնային այս գործարքը կարելոր ներդրում մըն էր Հայաստանի տնտեսական կեանքին մէջ, ինչպէս նաեւ լիբանանահայութեան մասնակցութեան արտայայտութիւն մը այդ բնագաւառին մէջ:

Այս առթիւ այցելութիւններ տուինք Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսեանին, Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Կեդրոնական Դրամատան նախագահ **Արթուր Զաւատեանին**, որոնք բոլորն ալ շնորհաւորեցին մեզ այս նախաձեռնութեան առիթով: Գործունեութեան ընթացքին հանգրուանային ձեւով մնացեալ բաժնետէրերէն գնուեցան իրենց բաժնետոմսերը եւ Զրետի Պանքը դարձաւ 100 տոկոս բաժնետէր, որ այսօր յաջողութեամբ կը շարունակէ իր գործունեութիւնը Հայաստանի դրամատնային շուկային մէջ:

Հայաստանի Հանրապետության «Մխիթար Գոշ» Մետալոլ Պարզեւատրումս

Մայր Հայրենիքի եւ սփիւռքի միջեւ ամուր եւ սերտ յարաբերութիւններ հաստատելու, բայց մանաւանդ Հայաստանը տնտեսապէս զօրացնելու ուղղութեամբ կարելոր ճիգեր գործադրած եմ տարիներ շարունակ: Հայաստանի եւ Լիբանանի միջեւ առեւտուրի եւ տնտեսական յարաբերութիւններու հարցը միշտ ալ իմ հետաքրքրութեան եւ երեսփոխանական գործունեութեան կարելոր մասը կազմած են:

Ազգային-քաղաքական գործունեութեան ընթացքին հայրենիքին ծառայելը եղած է իմ հաւատամքս՝ անկախաբար հոն տիրող վարչակարգերէն: Ի գնահատումս իմ աշխատանքներուս, մանաւանդ բերած նպաստիս Հայաստանի տնտեսութեան, Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսեան** զիս պարգեւատրեց «Մխիթար Գոշ» մետալով: Այդ մետալը 2012 Ապրիլի 27ին, Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան մէջ տեղի ունեցած պաշտօնական արարողութեան մը ընթացքին յանձնեց Սփիւռքի Նախարարուհի **Հրանոյշ**



Նախագահ Սերժ Սարգսեանի հետ:



Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարարուհի Հրանոյշ Յակոբեան Մխիթար Գօշի անունան շքանշանը ամրացնելու պահուն:

Յակոբեան: Մետալը տրուած էր Հայաստանի Հանրապետության անկախութեան 20րդ տարեդարձին առթիւ Հայաստանի Նախագահին հրամանագրով՝ «հայապահպանութեան գործում ներդրած ծանրակշիռ աւանդի, Հայրենիքին մատուցած ծառայութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրեայ պետութիւնների միջեւ բարեկամութեան ամրապնդմանը մեծապէս նպաստելու համար»: Առաջին անգամ էր որ պարգեւ կը ստանայի մեր անկախ Հայրենիքի Նախագահի մը կողմէ: Հպարտ էի եւ ուրախ: Թէեւ մետալներու սիրահար չեմ եղած, բայց այս մէկը իրապէս յուզած էր զիս:



Մխիթար Գօշի անուան շքանշանի տուչություն արժիթով ելույթիս պահուն:

ԵԼՈՅԹՆԵՐ

Երջանիկ օր մըն է այսօր ինծի համար: Երջանիկ՝ բայց միեւնոյն ժամանակ յուզումնալից:

Երջանիկ եմ որովհետեւ առիթը կ'ունենամ հրապարակաւ երախտագիտութիւնս յայտնելու ինծի համար շատ սիրելի անձի մը, որուն շատ բան կը պարտիմ: Իրեն կը պարտիմ նախ կեանքս, ապա ստացած դաստիարակութիւնս՝ թէ՛ ընտանեկան յարկի տակ եւ թէ՛ լաւագոյն ուսումնարաններու մէջ: Իրեն կը պարտիմ նաեւ գործի ասպարեզին մէջ ունեցած յաջողութիւններուս մէկ կարեւոր մասը եւ, ինչ որ իմ աչքիս ամենաեականն է, իրմէ ստացած ազգային ծառայութեան ոգին:

Արդարեւ, ծնած մէկ օրէս տեսած եմ թէ ան ինչպիսի անձնագոհութեամբ Նուիրուած է ազգին եւ իր ազգակիցներուն օգտակար ըլլալու Նուիրական գործին, իր ազգին ծառայելը համարելով գիտակից անձի մը աւագ պարտականութիւններէն մին:

Այդ անձը, որու ազգային-հասարակական գործունեութեան մասին ուրիշներ քիչ յետոյ աւելի մանրամասնօրէն պիտի արտայայտուին, հայրս՝ բոլորիդ ծանօթ Սեդրակ Գասարճեանն է:

Դժբախտաբար անխառն չէ երջանկութիւնս այս պահուս, հակառակ հարազատներու եւ բարեկամներու հոծ բազմութեամբ մը շրջապատուած ըլլալուս, որովհետեւ ուրիշ հարազատներ եւ բարեկամներ, որոնց հոս ներկայութիւնը բոլորիս մեծ ուրախութիւն պիտի պատճառէր, Լիբանանի դժբախտ կացութեան բերմամբ չեն կրցած մեր մէջ գտնուիլ: Բայց ես վստահ եմ որ անոնք եւս մտածումով ու սրտով մեզի հետ են այս պահուս ու կը մասնակցին մեծարանքի այս երեկոյին:

Բոլոր անոնք որոնք քիչ թէ շատ կը զբաղին ազգային գործունեութեամբ, չեն կրնար բոլորանուէր ծառայել՝ եթէ չվայելեն աջակցութիւնը իրենց կողակիցներուն: Նոյնը եղած է Սեդրակ Գասարճեանի պարագային: Իր կեանքի ընկերը ամեն կերպով քաջալերած է զինքը շարունակելու իր ազգանուէր գործունեութիւնն ու անտրտունջ համակերպած՝ ժողովականի մը կնոջ բաժին ինկած բոլոր զրկանքներուն:

Արդար է, հետեւաբար, որ զինք ալ շնորհաւորենք այս գիշեր ու մանաւանդ շնորհակալութիւն յայտնենք իրեն, մօրս՝ Վալենթին Գասարճեանի, իր ամուսնոյն թեւ ու թիկունք հանդիսացած ըլլալուն համար:

Վերջացնելէ առաջ այս բանի մը սրտաբուխ խօսքերը, կ'ուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատուիրակ եւ Փարիզի Հայոց Առաջնորդ Տ. Գիւտ Եպս. Նազգաշեանի, որ Սեդրակ Գասարճեանի ազգային ծառայութիւնները գնահատողներուն առաջիններէն եղաւ: Սրտագին շնորհակալութիւն նաեւ տէր եւ տիկին Ալեք Մանուկեանի, որոնք բարի եղան իրենց բարձր ներկայութեամբ պատուելու մեր այս մեծարանքի երեկոն: Կարծեմ բոլորիդ թարգմանը հանդիսացած կ'ըլլամ, եթէ մասնաւոր գոհունակութիւն յայտնեմ տկն. Մարի Մանուկեանի մեր մեջ ներկայութեան համար:

Վերջին շնորհակալական խօսքս ձեզի է ուղղուած սիրելի հիւրեր, որ բարեհաճեցաք պատասխանել տիկնոջս եւ իմ հրաւերին ու մասնակցիլ Սեդրակ Գասարճեանի ի պատիւ տրուած այս մեծարանքի ճաշկերոյթին: Կը յուսամ որ բոլորս միասին հաճելի երեկոյ մը կ'անցնենք:

Բարի եկաք եւ շնորհակալութիւն:

*(Արտասանուած՝ Սեդրակ Գասարճեանի ծննդեան 75 ամեակին եւ
ազգային գործունէութեան 50 ամեակին նուիրուած հանդիսութեան,
Փարիզ, 1986)*

Յոյժ երջանիկ են այսօր Ռամկավար Ազատական Կուսակցության եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մեծ ընտանիքները:

Երջանիկ են, որովհետեւ արժանի յարգանք եւ պատիւ կ'ընծայուի իրենց ամենէն սիրելի եւ անձնուէր ղեկավարներէն Հայկաշէն Ուզունեանի, որ ազգային-հասարակական գործունեութեան յիսնամեայ պատկառելի վաստակ մը ունի իր ետին:

Թրծուած Մելգոնեան Կրթական Հաստատութեան ազգային դարբնոցին մէջ, Վահան Թէքեաններու, Յակոբ Օշականներու, Վահէ Վահեաններու եւ Բարունակ Թովմասեաններու շունչին տակ, Հայկաշէն Ուզունեան պատանի տարիքէն իր մէջ զգացած է ազգային ծառայութեան նուիրելու կոչումը: Իր սիրտը ամէն տեղ եւ ամէն ժամանակ բաբախած է վասն հայրենեաց եւ վասն հայ ժողովուրդի:

Գաղափարապաշտ երիտասարդ, ան կանուխէն մուտք գործած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերէն ներս, ուր իր մշակուած միտքին, անկեղծ հայրենասիրութեան եւ զոհաբերութեան օրինակելի ոգիին շնորհիւ դարձած է ամենէն երիտասարդ ղեկավարներէն մին:

Բազմակողմանի եւ անգնահատելի են Հայկաշէն Ուզունեանի մատուցած ծառայութիւնները հայ ազգին:

Ինք որ միշտ համեստութիւնը գերադասած է փառամոլութենէն, թող ներէ ինծի որ այս հանդիսաւոր առիթով գէթ քանի մը բառով անդրադառնամ իր արժանիքներուն եւ իր բազմաբեղուն գործունեութեան:

Պէյրութի Սէն Ժոզէֆ Համալսարանը ճարտարագիտութիւն ուսանած տարիներուն, Հայկաշէն Ուզունեան ուսողութիւն դասաւանդած է Դարուի Յակոբեան վարժարանի եւ Անթիլիասի Դպրեվանքի աշակերտութեան, գիտութեանց եւ ճշմարիտին հանդէպ սերը դրոշմելով անոնց մատողաշ միտքերուն մէջ:

Եղած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պէյրութի օրկան «Չարթօնք» օրաթերթի առաջին աշխատակիցներէն, 1940ական թուականներէն սկսեալ: Այնուհետեւ շարունակած է իր գնահատուած եւ փնտռուած աշխատակցութիւնը ռամկավար մամուլին, քաղաքական եւ հրապարակագրական յօդուածներով:

Հայկաշէն Ուզունեան նաեւ փնտռուած ատենախօս մըն է, որ ելոյթ

ունենալու հրաւեր կը ստանայ շատ մը գաղութներէ: Փարիզի մէջ, քանի մը տարի առաջ, ինք էր որ Արմենական Կուսակցութեան 100 ամեակի հանդիսութեան խնամուած ճառախօսութեամբ մը ներկայացուց հայ ազատագրական շարժումին նուիրուած առաջին հայկական կազմակերպութեան կատարած նշանակալի դերը:

Իր պատանի տարիքէն Յայկաշէն Ուզունեան զինուորագրուած է Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, սկսելով Զ.Ե.Ը.-ի շարքերէն, անցնելով Լիբանանի շրջանակի ղեկավարութեան եւ հուսկ Կեդրոնական Վարչական Ժողովի կազմէն ներս, որուն փոխ-նախագահն է ներկայիս:

Չեմ ուզեր աւելի ծանրանալ Զ.Բ.Ը. Միութեան ծիրէն ներս իր ունեցած վաստակաշատ գործունեութեան վրայ, որովհետեւ այդ մասին քիչ առաջ արդէն խօսեցաւ Կեդր. Վարչական Ժողովի անդամ Տոքթ. Էտի Ադամեանը:

Թեքեան Մշակութային Միութեան հիմնադրութիւնը Յայկաշէն Ուզունեանի ամենէն կարեւոր եւ պատուաբեր իրագործումներէն մին է անկասկած: Արդարեւ, ազգային տեսիլք եւ մշակութային գործի նկատմամբ հաւատք ունենալ պէտք է Բ. համաշխարհային պատերազմի վաղորդայնին զգալու համար սփիւռքի մէջ մշակութային միութիւն մը հիմնելու պահանջը: Այսօր, իր դպրոցներով, մշակութային կեդրոններով եւ բազմատեսակ մասնաճիւղերով, Թեքեան Մշակութային Միութիւնը սփիւռքի ամենէն կենսունակ կազմակերպութիւններէն մին դարձած է եւ իր կարեւոր նպաստը կը բերէ հայապահպանման վսեմ գործին:

Ջերմեռանդ հաւատացող մը հայ մշակոյթին, Յայկաշէն Ուզունեան Թեքեան Մշակութային Միութեան մօտ հաստատած է իր անունը կրող գրական մրցանակ մը, որ ամէն տարի մէկ-երկու հազար տոլար կը յատկացնէ քաջալերելու համար հայերէն լեզուով գրուած վէպերու, բանաստեղծութիւններու կամ թատերախաղերու հեղինակները:

Համալսարանը աւարտելէ ու շուրջ քառորդ դար ճարտարարուեստի կարեւոր վարիչ դառնալէ ետք իր աներօր՝ ազգային բարերար Մարտիրոս Տարազճեանի Ատիս Ապեպայի հսկայ գործարանին մէջ, երբ յեղափոխական շարժումը 1970ական թուականներուն սկիզբը գլխավայր շրջեց Եթովպիոյ տնտեսական կեանքը, Յայկաշէն Ուզունեան շրջան մը վերադարձաւ Պեյրութ եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմին Պեյրութը ձգելով դարձաւ տեսակ մը աշխարհաքաղաքացի, բնակելով փոխն ի փոխ Կիպրոս, Ժընեւ եւ Ֆրանսա:

Իր յաճախակի ճամբորդութիւնները մէկ ցամաքամասէն միւսը զինք դարձուցած են Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Բարեգործա-

կանի շրջուն դեսպանը: Չկայ մեկը որ այնքան մօտեն ծանօթ ըլլայ սփիւռ-
քահայ գաղութներու կեանքին, իրագործումներուն ու դժուարութիւններուն,
Եւրոպայէն մինչեւ Ամերիկաները եւ Միջին Արեւելքէն մինչեւ հեռաւոր
Աւստրալիա, որքան Հայկաշէն Ուզունեանը որ մշտական կապի մէջ է բոլոր
գաղութներու Բարեգործականի եւ Ռամկավար կուսակցութեան վարիչնե-
րուն հետ:

Իր զօրաւոր անհատականութեամբ, իր մտաւորական խորունկ պա-
շարով եւ իր գաղափարախօսական անխախտ համոզումներով, Հայկաշէն
Ուզունեան շահած է իր ընկերներուն եւ գործակիցներուն համակրանքը:
Նորահաս սերունդներ իր անձին մէջ տեսնելով եւ գնահատելով կուսակ-
ցական անբասիր ղեկավարը՝ վստահութեամբ կը մօտենան Ռամկավար
կուսակցութեան:

Տասնամեակներ շարունակ, Հայկաշէն Ուզունեան եղած է ու կը մնայ
թունդ հայրենասէր, Հայ Դատի զինուոր եւ ջերմ պաշտպան Սուրբ Էջմի-
ածիկի:

Ինք անոնցմէ է որ չհամակերպեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ արուես-
տական բաժանումին: Չընդունեցին fait accompli-ն եւ մինչեւ այսօր կը
պայքարին որպէսզի վերահաստատուին հայ եկեղեցւոյ միասնականութիւնն
ու Ս. Էջմիածնի գերակայութիւնը:

Իր ճառերով եւ յօդուածներով Հայկաշէն Ուզունեան միշտ պաշտպան
կանգնած է Հայ Դատին եւ հաւատացած՝ անոր անժամանցելիութեան: Օր
մը չէ օր մը, հայ ժողովուրդը անպայման ետ պիտի առնէ Թուրքիոյ կողմէ
բռնագրաւուած իր պապենական հողերը: Գալիք սերունդները պարտին
պահանջատէր մնալ մեր արդար իրաւունքներուն:

Հայաստանի նկատմամբ իր հաւատքը միշտ վառ մնացած է: Մեր
հայրենիքի ամենադժուար օրերուն, Ռամկավար ղեկավարները կ'ըսէին ու
կը կրկնէին որ քաղաքական վարչակարգերը անցաւոր են, բայց հայրենիքը
յաւերժական է:

Ահա մի քանի տարիէ ի վեր եռեւեփի մէջ է Հայաստան աշխարհը,
համայնավար ռեժիմը պատմութեան անցաւ եւ ռամկավարական ու ազա-
տական գաղափարները պարարտ հող կը գտնեն այնտեղ:

Ընկ. Հայկաշէն Ուզունեան ամենէն աւելի խանդավառ է այս փոփոխու-
թիւններով եւ կը քաջալերէ Հայաստանի իշխանութիւնները որ շարունակեն
դէպի ռամկավարացում եւ անկախութիւն տանող իրենց գործընթացը:

Ռամկավար ղեկավարները, որոնց կարգին Հայկաշէն Ուզունեան,
քանիցս տեսակցութիւններ ունեցան Հայաստանի Նախագահ Լեւոն Տեր-
Պետրոսեանի եւ միւս գլխաւոր պատասխանատուներուն հետ:

Ռամկավար կուսակցությունը որոշած է զօրավիճ կանգնիլ Հայաստանի ներկայ իշխանություններուն: Առ այդ կոչ ըրած է հայ ժողովուրդին որ «ԱՅՈ» քուէարկէ ճիշդ շաբաթ մը ետք տեղի ունենալիք հանրաքուէին:

Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցությունը շօշափելի յաջողություններ արձանագրած է Հայաստանի մէջ, բացուած են բազմաթիւ ակումբներ եւ իր պաշտօնաթերթ «Ազգ»ը, որուն խմբագիր ընկ. Յակոբ Աւետիքեան այսօր մեր մէջ կը գտնուի, իր 25.000 տպաքանակով Հայաստանի ամենէն փնտռուած թերթերէն մին է:

Այս բոլոր յաջողությունները մեծապէս կ'ուրախացնեն Ռամկավար ղեկավար ընկ. Հայկաշէն Ուզունեանը, որ սրտի անհուն գոհունակութեամբ կը տեսնէ իր դաւանած սկզբունքներուն տարածումը Մայր Հայրենիքի մէջ:

Կարելի է տակաւին երկար խօսիլ ընկ. Հայկաշէն Ուզունեանի բարեմասնություններուն եւ կատարած հազար ու մէկ ազգաշէն գործերուն մասին, սակայն ինծի յատկացուած խօսքի ժամը չի թոյլատրեր այդ ընել:

Պիտի չուզէի սակայն խօսքս աւարտել առանց յիշելու ընկ. Հայկաշէնին շնորհալի կողակիցը՝ տիկին Մարին, որ ոչ միայն քաջալերած է իր ամուսինը, այլ նաեւ խորհրդակից ու բառին ազնիւ իմաստով մեղսակիցը եղած է անոր գործունեութեան:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի շքանշանը եւ Ալեք Մանուկեան մրցանակը, որոնց այսօր կ'արժանանայ մեր սիրելի յոբելեարը, արժանի գնահատանքն են անոր յիսուն տարիներու վրայ երկարող զոհաբերություններուն եւ երախտաշատ գործունեութեան:

Բոլորիս սրտագին մաղթանքն է որ Տերը քաջառողջութիւն եւ արեւշատութիւն պարգեւէ ընկ. Հայկաշէն Ուզունեանին, որպէսզի հայ ժողովուրդը կարենայ տակաւին երկար տարիներ օգտուիլ իր բոլորանուէր ծառայութիւններէն:

Վարձքդ կատար սիրելի ընկ. Հայկաշէն:

(Արտասանուած՝ Հայկաշէն Ուզունեանի ազգային ծառայութեան 50 ամեակի յոբելենական հանդիսութեան, Փարիզ, 1991)

ՊԱՆԾԱԼԻ 70 ԱՄԵԱԿ

1991ին, երբ Հայաստան անկախություն կը հռչակէ, երբ Հայաստանի ժողովուրդը կ'ընտրէ իր առաջին ազգընտիր նախագահը, երբ Ռ.Ա.Կ. իր հիմնադրութեան 70 ամեակը կը նշէ, Նոր արշալոյս մը կը բացուի մեր հայրենիքին վերեւ ու Նոր արշալոյս մըն ալ կը ծագի Ռամկավար Ազատական Կուսակցութեան առաքելութեան վերեւ: Նոր ժամանակներու մէջ կ'ապրինք եւ պատմութիւնը սրընթաց կը քալէ, եւ ազգեր, պետութիւններ, դեկավարներ ու քաղաքագետներ, որոնք քայլ չեն կրնար պահել պատմութեան այդ գնացքին հետ, դուրս կը մնան պատմութենէն եւ միայն կրնան վնաս հասցնել իրենց պատկանած ազգին կամ կազմակերպութեան, եթէ Նոյնիսկ ուզեն բարիք կամիլ անոնց:

Ատենն է հիմա ժամանակի հոսանքները ճիշդ կարդալու եւ արագ եւ շիտակ որոշումներ եւ ուղղութիւններ որդեգրելու: Ամէն կուսակցութիւն քննութիւն պիտի տայ մեր ժողովուրդին առջեւ, կարենալ իր տեղը ապահովելու համար մեր պատմութեան մէջ:

Մենք միշտ հաւատացած ենք թէ հայրենիքը եւ սփիւռքը տարբեր միաւորներ ըլլալով հանդերձ կը ներկայացնեն մէկ ամբողջութիւն. անոնց գոյութիւնը իրարմով պայմանաւորուած է: Մինչեւ Հայաստանի վերջին ժողովրդավարական յեղափոխութիւնը, մեզի համար դժուար էր իրականացնել միասնականութեան եւ ամբողջականութեան գաղափարը, որովհետեւ սփիւռքը եւ Հայաստանը կը գտնուէին հակամարտ ճակատներու վրայ գաղափարապէս, տնտեսապէս ու զինու. զօրութեամբ իրարու հակադրուող ազգերու համադրութեան մէջ:

Դժուար եւ գրեթէ անհնար էր ցուրտ պատերազմի դաժան պայմաններուն ներքեւ մնալ սկզբունքային՝ պահելով հանդերձ մեր կապը հայրենի ժողովուրդին հետ: Աւելի դիւրին պիտի ըլլար նետուիլ հոսանքին մէջ, գերադասել խմբակցական ու կուսակցական շահը եւ Նիզակ ճօճել Հայաստանի դէմ, դառնալ Պապէն աւելի պապական՝ առանց Նկատի առնելու այդ վարքագիծին աղիտալի հետեւանքները, պահ մը մոռնալով այն խզումը որ կրնար յառաջանալ մեր ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ:

Ռամկավար Ազատականներս ընտրեցինք դժուար ճանապարհը եւ այսօր եկաւ պատմութիւնը հաստատելու թէ ճիշդ էր մեր ընտրութիւնը, ուղիղ էր մեր քաղաքական վարքագիծը: Արդարեւ, մենք ամենէն վտանգաւոր

Ժամանակներուն, կողքին կանգնեցանք հայրենիքին եւ հայրենի ժողովուրդին, միշտ բարձրաձայն յայտարարելով որ համաձայն չէինք այնտեղ տիրող վարչակարգին: Այդպիսի արի եւ խոհեմ քաղաքականութեան շնորհիւ է որ մենք կարողացանք սփիւռքի զանգուածները կապուած պահել հայրենիքին: Այսօր, երբ Հայաստան կը բացուի աշխարհին՝ իր դիմաց կը գտնէ պատրաստակամ եւ հայրենասուէր զանգուած մը, որ առանց մեր պայքարին՝ այլասերած պիտի ըլլար կամ՝ թշնամացած հայրենիքին:

Միւս կողմէ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր մամուլի լայն ցանցով եւ կազմակերպութիւններով տարածեց եւ գործադրութեան դրաւ ռամկավարական սկզբունքները՝ ընդդէմ բոլոր մենատիրական ախորժակներու: Մենք կրկնակիօրէն հպարտ ենք որ հայրենասիրութիւնը պահած ենք անաղարտ եւ ռամկավարական սկզբունքները վերածած ենք կեանքի՝ սփիւռքի դաժան պայմաններուն ներքեւ:

Այսօր ժողովրդավարութեան եւ ռամկավարութեան օրն է Հայաստանի մէջ: Այսօր մեր օրն է Հայաստանի մէջ:

Բազմակուսակցութեան եւ ժողովրդավարութեան վերադարձը Հայաստան հսկայական կարելիութիւններ կը բանայ սփիւռքի կուսակցութեանց դիմաց: Հեռանկարներ կը բանայ նաեւ արտասահմանի դիմաց: Արտասահմանը արագօրէն քաղաքականանալու ու ծխական համայնքներու վիճակէն քաղաքական միաւորի վերածուելու հնարաւորութեան առջեւ կը գտնուի:

Պէտք է գիտակցինք այս պատեհութեանց եւ պէտք է ձեռնհասօրէն եւ իմաստութեամբ դիմաւորենք մեր պարտաւորութիւնները հայրենիքի մէջ թէ սփիւռքի բովանդակ տարածքին:

Մինչ Դաշնակցութիւնը թիւր ենթադրութեան տակ կը գտնուէր թէ համայնավար դրութեան անկումով ասպարէզը լայն պիտի բացուէր իր դիմաց՝ Հայաստանի ճակատագիրը իր ձեռքը առնելու եւ տիրանալու Հայաստանի իշխանութեան, հայ ժողովուրդը տարբեր տնօրինում մը յայտարարեց, ան իր ծոցէն ծնաւ իր սեփական ղեկավարները եւ երկրին ճակատագիրը յանձնեց անոնց: Հ.Յ.Դ.-ի եօթնասուն տարուան հակա-համայնավար պայքարի վաստակը բաւարար չեղաւ տիրանալու Հայաստանի իշխանութեան, որովհետեւ Հայաստանի ժողովուրդը քաղաքական առողջ բնագոյով մը ուզեց ինք տէրը կանգնիլ իր սեփական ճակատագրին: Միւս կողմէ ան անդրադարձաւ թէ ընկերվարական իշխանութեան մը տապալումէն ետք, հրաւիրած պիտի ըլլար ընկերվարական ուրիշ կուսակցութիւն մը, որ համայնավարներէն նուազ ծայրայեղութիւն ցոյց չէր տուած 1918էն 1920, երբ ձեռք առած էր Հայաստանի իշխանութիւնը: Ան նոյնպէս ջանացած էր Արեւմուտքի ազատ երկիրներուն մէջ իսկ հաստատել իր մենատիրութիւնը

մեր ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ:

Նախագահական վերջին ընտրութիւնները եկան կտրուկ կերպով մերժելու Դաշնակցութիւնն ու անոր մենատիրական գործելակերպը:

Այսօր ատենն է որ վերաքննութեան ենթարկէ Դաշնակցութիւնը իր վիժած քաղաքականութիւնը եւ հաշուետուութեան հրաւիրէ իր ղեկավարութիւնը:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը երբեք տուեալ չառաւ իր 70 տարուան հայրենասուէր քաղաքականութիւնը՝ իր սեփական տեղը գրաւելու Զայաստանի քաղաքական կեանքին մէջ, այլ փոխաց Զայաստան՝ իր նոր գործունեութեամբ եւ առաքելութեամբ տիրանալու քաղաքական այդ դիրքին: Ռ.Ա.Կ.-ը հետեւեալ միջոցներով արդարացուց ու կը շարունակէ արդարացնել իր ներկայութիւնը Զայաստանի մէջ:

ա) Ան հիմնական կերպով սատարեց ու կը շարունակէ սատարել Զայաստանի քաղաքական կեանքէն ներս ռամկավարական դրութեան հաստատման եւ ամրապնդման: Այս նպատակով ան երեւանի մէջ սկսաւ հրատարակել իր «Ազգ» թերթը, որ մեր հայրենիքի ամենէն փնտռուած թերթն է եւ կը յափշտակուի ձեռքէ ձեռք: «Ազգ»ը իր առարկայական եւ ամբողջական լրատուութեամբ, առողջ մեկնաբանութիւններով եկաւ Զայաստանի իրական քաղաքականութիւնը զետեղելու միջազգային քաղաքականութեան պարունակին մէջ: Բան մը՝ որ պիտի նպաստէ ռամկավարական ազատութեամբ մտածելու եւ քաղաքական առողջ որոշումներ առնելու:

բ) Զայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր գործունեութիւնը ներդաշնակեց Զայոց Զամազգային Շարժման հետ, որ ռամկավարական դրութիւնը վերահաստատած էր Զայաստանի մէջ, եւ թիկունք կանգնեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահական թեկնածութեան: Լեւոն Տէր-Պետրոսեան կարճ ժամանակամիջոցի մը մէջ յաջողած էր դառնալ միջազգայնօրէն ճանչցուած քաղաքական ղեկավար մը, շնորհիւ իր խոհեմ ու հեռատես քաղաքականութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը յաջողեցաւ կանուխէն հաստատել Լեւոն Տէր-Պետրոսեանի մէջ ճշմարիտ քաղաքագէտը, որ առանց վնասարար բախումներու կը ջանար խաղաղութիւն հաստատել դրացիներու հետ եւ բարօրութիւն ստեղծել երկրին մէջ: Կարգ մը կուսակցութիւններ Լեւոն Տէր-Պետրոսեանի ընտրութենէն ետք միայն, վերաքննելով իրենց վարքագիծը, կուգան հաւատարմութիւն յայտնելու Զայաստանի առաջին ազգընտիր նախագահին:

Տէր-Պետրոսեանի տրուած քուէներուն վրայ նշուած էր թէ ան թեկնածուն էր Զ.Յ.Շ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի: Զետեւաբար, Տէր-Պետրոսեանի յաղթանակը յաղթա-

Նաևն է ողջախոհության եւ ժողովրդավարության: Ան յաղթանակն է մանաւանդ Ռամկավար Ազատական Կուսակցության:

զ) Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ճառի, խօսքի սահմանին մէջ չմնաց, երբ յայտարարեց թէ մեր երկիրը տնտեսական օժանդակութեան պէտք ունէր՝ կարենալ վերականգնելու եւ երաշխաւորելու համար իր քաղաքական անկախութիւնը եւ դիմեց գործնական քայլերու, իր խօսքին միացնելով նաեւ գործը: Այսօր միայն Ռ.Ա.Կ.-ի պատասխանատուններուն կողմէ նախաձեռնուած համատեղ ձեռնարկութիւններն են որ իրականութեան վերածուած են եւ ազդու կերպով կը սատարեն Հայաստանի տնտեսութեան:

Սակայն այդ առանձին ձեռնարկները կ'ամբողջանան ու կ'ընդարձակուին տնտեսական այն լայն ծրագիրով, որ Ռ.Ա.Կ.-ի կողմէ հիմնուած Հայաստանի Տնտեսական Չարգացման Խորհուրդը յայտարարեց վերջերս Երեւանի մէջ:

Այսօր Հայաստանի մէջ ամենէն աւելի յարգանք վայելող գաղափարաբանութիւնը ժողովրդավարութիւնն է, մեր գաղափարաբանութիւնն է, մեր սկզբունքներն են որ արմատ կը նետեն հայ հողի մէջ ու կը ծլարծակին արագօրէն:

Այսօր մենք հպարտութեամբ կը տեսնենք թէ հազարաւոր հայեր Հայաստանի մէջ կը դիմեն Ռամկավար Ազատական Կուսակցութեան՝ անոր շարքերուն զինուորագրուելու եւ զայն վերածելու իրական ու տիրական քաղաքական ուժի մը: Եւ այս կերպով գրեթէ ամէն օր կուսակցական նոր մասնաճիւղ մը կը հաստատուի Հայաստանի մէջ եւ տակաւ կ'ընդարձակուին ծաւալն ու տարողութիւնը մեր կուսակցութեան:

Նման արագ թափով մը կ'աճին մեր կուսակցութեան մշակութային թելին՝ Թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղերը, ուր կուգան գործել ամենէն ընտիր մտաւորականներն ու մշակոյթի գործիչները:

Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը արդէն ներկայացուած է վեց ականաւոր երեսփոխաններով եւ ի մօտոյ շատ աւելի լուրջ կշիռ մը պիտի ստանայ անոր ներկայութիւնը Հայաստանի խորհրդարանէն ներս:

Այս բոլոր յաջողութիւնները արձանագրուեցան մեր երկրին մէջ, որովհետեւ արդէն ստեղծուած էր պարարտ հողը եւ Հայաստան պատրաստ էր ընդունելու ռամկավարական սկզբունքներով գործող մեր կազմակերպութիւնը: Սակայն որեւէ քաղաքական կազմակերպութեան համար ներելի պիտի չըլլայ առանց պատրաստութեան սպասել դէպքերու թաւաքին: Այսօր մեր առջեւ կը պարզուին լուրջ պարտաւորութիւններ, որովհետեւ այսօր Ռ.Ա.Կ.-ը միայն գաղութային կուսակցութիւն մը չէ. ան դարձած է պետական

կուսակցությունն եւ պետք է խորհի ու գործէ պետական չափանիշերով:

Մեր հայաստանեան քաղաքականությունը լրացումն է մեր սփիւռքի քաղաքականութեան, եւ փոխադարձաբար: Այսօր վերակառուցման, վերակազմակերպման եւ պատմական նոր ժամանակներու հետ քայլ պահելու հարկադրանքին առջեւ կը գտնուի մեր կուսակցությունը:

Քաղաքական ներկայ իրականութեան մէջ կուսակցութեան Եւրոպայի Շրջանակի Պատգամաւորական Ժողովը պատմական նշանակություն կը ստանայ: Քաղաքական հսկայ ծրագիրներ եւ առաջադրություններ կը պարզուին մեր դիմաց: Իւրաքանչիւր անդամ եւ կուսակցական, իւրաքանչիւր Շրջանակ պարտականություն ունի խոհեմ եւ ամբողջական կերպով սատարելու Կուսակցութեան վերականգնումի աշխատանքներուն, որպէսզի կարողանանք գիտակցութեամբ, լրջութեամբ եւ ամբողջական յանձնառութեամբ վերցնել մեզի վերապահուած քաղաքական վճռական դերը:

Թեքեաններ, Զօպանեաններ, Տամատեաններ ու Գերսամ Ահարոնեաններ իրենց պայքարին մէջ եւ պատմութեան ամենէն դժնդակ պայմաններուն ներքեւ երազեցին անկախ եւ ռամկավարական Հայաստան մը, որպէսզի մեր կուսակցությունը դառնար քաղաքական ուժ մը եւ մանաւանդ գաղափարական դարբնոց մը՝ ռամկավարութեան գաղափարականին տեսականը վերածելու իրականութեան:

Այսօր արդէն գոյութեան եկած է այդ Հայաստանը, իբրեւ ազատ եւ մարտնչող ռամկավարական երկիր: Հետեւաբար անցած է երազի ժամանակը եւ հասած է գործի պահը: Այն ինչ որ երազ էր մեր ռահվիրաներուն համար, քաղաքական իրականություն է մեզի համար:

«Տարբեր ես դուն մեր երազէն»-պիտի ըսեր Թեքեան եւ ապա՝ անմիջապէս ւաւելցնէր «աւելի լաւ...»:

Իր բովանդակ կեանքին ընթացքին Գերսամ Ահարոնեան երազեց ու գոչեց՝ «Գալ տարի՝ Վանի մէջ»:

Ու մենք կը սկսինք մեր գործը գոչելով՝ «Այս տարի Երեւան եւ անպայման գալ տարի Վան»:

Որովհետեւ վաղուան Վանի ճամբան այսօր կ'անցնի Երեւանէն:

Նոյնպէս հայ ժողովուրդի յաւերժութեան ճամբան կ'անցնի անկէ:

Այսօր, Ռամկավարությունը կը հարստանայ Հայաստանով եւ Հայաստանը կը մեծնայ Ռամկավարութեամբ:

*(Արտասանուած՝ Ռ.Ա.Կ.-ի 70 ամեակին նուիրուած հանդիսութեան,
Լիոն, Նոյեմբեր 1991)*

Այս վերջին տարիներուն գեղեցիկ ականդութիւն մը դարձած է ամէն Չատկուայ շաբաթավերջին Յ.Բ.Ը.Մ.-ի դրօշին տակ մարզական փառատօս մը կազմակերպել եւ ի մի համախմբել հայ երիտասարդութիւնը:

Վալանսէն, Լիոնէն, Սէն Շամօսէն եւ Մարսելլէն ետք, որոշուած էր 1993ի Չատկուայ խաղերը կայացնել Լոնտոնի մէջ, սակայն կազմակերպչական ինչ-ինչ դժուարութիւններու պատճառաւ եւ նկատի ունենալով մանաւանդ մեր հայրենիքի ներկայ մտահոգիչ վիճակը, որոշուեցաւ նախ այս տարուայ խաղերը բոլորովին ջնջել, սակայն ի տես երիտասարդութեան մօտ յառաջ եկած յուսախաբութեան զգացումին, վերատեսութեան ենթարկեցինք մեր որոշումը եւ այնպէս տնօրինեցինք որ այս տարուայ խաղերը տեղի ունենան սեղմ շրջանակի մէջ, նախաձեռնութեամբ Յ.Բ.Ը.Մ.-ի Վալանսի մասնաճիւղին:

Ի պատիւ մեր Վալանսի մասնաճիւղին, պէտք է ըսեմ որ սիրով ընդառաջ գացին մեր առաջարկին եւ յանձն առին այս տարուայ մարզական խաղերուն կազմակերպութիւնը: Իսկ շնորհիւ մեր հարաւային Ֆրանսայի գործիչ պրն. Անդրանիկ Զէշիշեանի անխնջ ջանքերուն, սեղմ շրջանակը հետզհետէ ընդլայնելով յանգեցաւ այսօրուայ գոհացուցիչ եւ խրախուսիչ արդիւնքին:

Արդարեւ, մեծ գոհունակութիւն է մեզի համար Եւրոպայի զանազան շրջաններէն՝ Յոլանտայէն, Պելճիքայէն, Գերմանիայէն ու Ֆրանսայի բոլոր հայաշատ վայրերէն եկած բազմահարիւր հայ երիտասարդ-երիտասարդուհիներ ողջունել այս հիւրընկալ քաղաքին մէջ, ուր ամբողջ երեք օր անոնք ոչ միայն մարզական խաղերու մասնակից եղան, այլ նաեւ հայկական-նութեամբ ապրեցան, իրենց տարեկից հայ երիտասարդներու ծանօթանալով ու անոնց հետ լաւ ժամանակ անցնելով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը միշտ քաջալերած է երիտասարդական հաւաքները, ուր ալ տեղի ունենան անոնք: Ներկաներէն շատերու յիշողութեան մէջ թարմ մնացած պիտի ըլլայ անցեալ տարուայ Յուլիսին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած Նաւասարդեան խաղերուն յիշատակը. խաղերը՝ որոնք աշխարհի չորս ծագերէն համախմբած էին մօտ 2000 երիտասարդներ:

Աշխարհի ամէն կողմ Բարեգործականը իր երիտասարդական խումբերը ունի, որոնք աշխոյժ գործունեութիւն կը ծաւալեն եւ ոչ միայն մարզական գետնի վրայ:

Լիբանանի Հ.Ե.Ը.-ը, օրինակի համար, տեղւոյս ամենէն կենսունակ կազմակերպութիւններէն մին է: Նոյնը կարելի է ըսել բազմահարկւր երիտասարդ անդամներ հաշուող Հարաւային Ամերիկայի երիտասարդական լիկաներուն պարագային:

Եւրոպայի մէջ ալ Հ.Բ.Ը.Մ.-ի տեղական մասնաժողովներու կողքին կը գործեն երիտասարդական մարմիններ: Անցեալ տարի Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի երիտասարդական Յանձնախումբին Նախաձեռնութեամբ ստեղծուեցաւ Նուպար Մարգական Միութիւնը որ արդէն իր մասնաճիւղերը ունի Փարիզի եւ Վալանսի մէջ: Յուսով ենք որ ուրիշներ ալ պիտի հետեւին անոնց օրինակին եւ Նուպար Մարգական Միութիւնը մօտ ապագային իր մասնաճիւղերը կ'ունենայ բոլոր հայաշատ շրջաններուն մէջ:

Մեր նպատակը սակայն միայն ու միայն մարգական գործունեութիւն ծաւալել չէ: Առողջ միտք եւ առողջ մարմին ունենալը շատ կարեւոր է, սակայն մարզանքը երիտասարդութիւնը ներգրաւելու միակ միջոցը չէ: Երիտասարդութիւնը եւ մանաւանդ հայ երիտասարդութիւնը ուրիշ ընելիքներ ալ ունի, որոնց մասին պիտի արտայայտուիմ քիչ վերջ:

Բոլորիս ծանօթ է Հայաստանի ներկայ վիճակը: Նախկին Սովետական Միութեան հանրապետութիւններուն մէջ Հայաստանը առաջինը եղաւ որ բռնեց անկախութեան ճանապարհը: Կը խորհէինք որ անկախութիւնը, որուն կը յաջորդէին ռամկավարացումն ու ազատ շուկայի դրութեան որդեգրումը, տնտեսական բարգաւաճում եւ վարդազոյն ապագայ պիտի բերեր: Սակայն ճակատագիրը տարբեր տնօրինեց: Ղարաբաղի ազատագրական պայքարը դուռ բացաւ ատրպէյճանցիներու հետ զինեալ կռիւի եւ տնտեսական անտանելի շրջափակումի մը, որուն հետեւանքները շատ ծանր եղան Հայաստանի ժողովուրդին համար:

Հակառակ այն բոլոր դժուարութիւններուն, որոնք սեւ գիծերով կը պատկերացնեն Հայաստանի ներկան, համոզուած ենք որ օր մը չէ օր մը վերջ պիտի գտնէ մեր ժողովուրդին տառապանքը եւ ան պիտի լծուի երկիրը շէնցնելու եւ իրեն համար պայծառ ապագայ մը կերտելու գործին:

Մինչ այդ շատ գործ կայ կատարելիք թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ սփիւռքի մէջ: Հայրենիքը սփիւռքին կապող կամուրջները բազմացած են մի քանի տարիներէ ի վեր: Սփիւռքահայը օտար մը չէ հայրենիքին մէջ եւ ինք ալ պարտաւորութիւններ ունի ստանձնելիք իր ազգին նկատմամբ:

Կայ մարդասիրական օգնութեան գործը, որուն խիստ կարիքը ունի Հայաստան եւ չենք կրնար մեր կարելի օժանդակութիւնը չբերել անոր:

Հայաստանը կարիքը ունի նաեւ քաղաքական նեցուկի, որովհետեւ Արեւմուտքի մէջ յաճախ սխալ կը մեկնաբանուին հայերու ինքնապաշտպա-

Նույնպե՛ս ու Ղարաբաղի ինքնորոշման պայքարները: Մեր երիտասարդութիւնը այս ուղղութեամբ եւս հսկայ աշխատանք ունի կատարելիք, իր ճիգերը միացնելով հայ քաղաքական կազմակերպութիւններու հասարակաց ճիգերուն:

Ուտքի՛ ել հայ երիտասարդութիւն: Դո՛ւն ես ազգին յոյսն ու ապագան: Ամէն տեղ երիտասարդութիւնն է պայքարի առաջին գիծերուն վրայ: Դո՛ւն ալ, հա՛յ երիտասարդ, գիտակցե՛ ոյժիդ ու գործածե՛ զայն յօգուտ հայրենիքիդ պաշտպանութեան ու վերականգնումին:

Ա՛յդ կը սպասե՛ քեզմէ Զայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Ա՛յդ կը սպասե՛ քեզմէ համայն հայ ժողովուրդը:

Այս առիթով պիտի ուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Վալանսի մասնաժողովին, անոր նախագահ պրն. Ժագ Մարգարեանի ու նախորդ նախագահ Տոքթ. Ժան-Նօել Կօշկարեանի, որոնք անվարան ընդունեցին Զ.Բ.Ը. Միութեան Եւրոպայի 6րդ մարզական խաղերը կազմակերպելու դժուարին աշխատանքը, Զ.Բ.Ը. Միութեան պատասխանատու գործիչ պրն. Անդրանիկ Քէշիշեանի, որուն բացառիկ նուիրումին կը պարտինք այս խաղերուն յաջողութիւնը, բոլոր ազնիւ նուիրատուներուն, որոնք իրենց դրական քաջալերանքը բերին կազմակերպիչներուն եւ վերջապէս ձեզի, սիրելի երիտասարդներ, որ ձեր մարզական օրինակելի ընթացքով բարձր բռնեցիք հայկականութեան դրօշը անցնող երեք օրերու ընթացքին:

Կեցցե՛ հայ երիտասարդութիւնը:

Կեցցե՛ Զ.Բ.Ը. Միութիւնը:

Կեցցե՛ն Զայաստանն ու հայ ժողովուրդը:

(Արտասանուած՝ Զ.Բ.Ը. Միութեան Եւրոպայի Երիտասարդական 6րդ խաղերուն առիթով, Վալանս, 1993)

Քիչեր կան, որոնք իրենց ամբողջ գիտակցական կեանքին մեջ եղած են համակ նուիրում ու զոհողութիւն, ունեցած են անբեկանելի հաւատք ու համոզմունք, դարձած են կորովի առաջնորդ ու տեսլապաշտ:

Այո՛, ընտրանի մըն է այն երախտաւորներուն թիւը, որոնք զրահուած իրենց գաղափարական սկզբունքներով, հայրենասիրական զարկերով, հայապահպանման ոլորտներով ու մարդկայնական զգացումներով, կրցած են ամբօրէն մնալ պատնէշի վրայ, ջերմօրէն պաշտպանելով ազգային-հայրենասիրական ու գաղափարական-մշակութային շահերը՝ բոլոր մակարդակներու վրայ ու բոլոր պայմաններու ընթացքին:

Ահաւասիկ այսօր մենք հաւաքուած ենք մեծարելու ԻՐԱ՛Ւ մարդ մը, ՈՂՋԱՄԻՏ հայ մը, ՆԵՐՅՈՒՆ գաղափարախօս մը ու ԼՈՒՍԱՄԻՏ գործիչ մը, որ կը կոչուի Մեթր Յրաչեայ Սեդրակեան եւ կամ՝ ինչպէս ամէն ոք սովոր է զինք անուանելու եւ նաեւ ճանչնալու՝ ՄԵԹՐը:

Մեթրին մասին խօսիլը կամ արտայայտուիլը հանդիսութեան մը ընթացքին, իրապէս բաւարար պիտի չըլլար, որովհետեւ անոր գործունեութեան դաշտերը եղած են ծաւալուն, բազմատեսակ ու տարաբնոյթ, բայց վերջին հաշուով ծառայելու համար ՄԵԿ Նպատակի՝ իր ժողովուրդին եւ հայրենիքին:

Իր Յ.Ե.Ը.ական մը ըլլալու պատկանելութենէն մինչեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավար մը ըլլալը, անցնելով Յ.Բ.Ը. Միութեան ու Թէքէեան Մշակութային Միութեան պատասխանատու պաշտօններու դիրքէն, Մեթրը անպայման կը պատկանի այն անզուգական ղեկավարներու շարքին, որոնք ունեցած են, եւ ունին, իրենց յատուկ տեղն ու դերը:

Բացարձակապէս պատահական չէ, որ Մեթրը՝ ըլլալով քաղաքական միտք եւ ազատական գաղափարախօսութեան հաւատացող, իր ընտրութիւնը կեդրոնացներ այն քաղաքական կազմակերպութեան վրայ, որ հայ իրականութենէն ներս կար որպէս ազատական հոսանքի ներկայացուցիչ. Ռամկավար Ազատական Կուսակցութեան վրայ:

Մեթր Սեդրակեանի քաղաքական հայեացքները, կողմնորոշումները, դիտարկումներն ու վերլուծումները զինք բերած էին դէպի Ռ.Ա.Կ.ը՝ այն կուսակցական ընտանիքը, ուրկէ կարելի պիտի ըլլար գործով ու բանիւ սպասարկել մեր ժողովուրդին եւ հայրենիքին:

Այսպիսով Մեթրը իր երիտասարդ տարիքին ազգային-քաղաքական հիմ-

Նաքար մը կը դնէր իր կեանքին մէջ, որ հետզհետէ պիտի արդիւնաւորուէր եւ ինք պիտի դառնար մեր իրականութեան տիրական դէմքերէն մէկը:

Մեթր Սեդրակեանի հմայքն ու հեղինակութիւնը աւելի կը շեշտաւորուէին Նաեւ այն պատճառով, որ անոր կողքին կը գտնուէր հոյլ մը, յանձինս՝ Փրոֆ. Բարունակ Թովմասեանի, Գերսամ Ահարոնեանի, Յակոբ Դաւիթեանի ու Հայկաշէն Ուզունեանի: Երիտասարդ, կենսունակ, գործարար, գաղափարապաշտ եւ յարգելի անձնաւորութիւններ, որոնք ձեռք-ձեռքի տուած Նոր շունչ ու ոգի տուին մեր շրջանակներուն, զանոնք տարածելով Նաեւ հեռաւոր ասիեր, այն քաջ գիտակցութեամբ, թէ այս բոլորը պիտի ըլլան գերազանցապէս յօգուտ մեր ընդհանրական հրամայականներուն:

Մեթր Սեդրակեան եւ իր գաղափարակից ղեկավար ընկերները կուսակցական գործունեութիւնն ու հաւատամքը երբեք չուզեցին շփոթել հայրենիքի ատենի վարչաձեւին եւ իրականութեան հետ, ընդհակառակը՝ ոգի ի բռին զօրավիգ կանգնեցան հայրենի հողին ու ժողովուրդին, հայրենասիրութեան կայծը միշտ վառ պահելու առաջադրանքէն մղուած:

Ի՛նչ փոյթ, որ այս կեցուածքին համար անոնք հալածուեցան, ամբաստանուեցան ու պիտակաւորուեցան, կարելորդ՝ հայրենիքին հետ ըլլալն էր, ի՛նչ պայմաններու մէջ ալ գտնուի ան:

Մեթրը այս առումով եղաւ մարտնչող գործիչ մը, վկայ՝ 1946ի Ներգաղթի Կոմիտէի անդամ ըլլալու իր հանգամանքէն մինչեւ իր կուսակցութեան Նախագահ դառնալու ժամանակաշրջանը, ուր ունեցաւ հայրենանպաստ պատմական եւ յիշատակելի Ներդրումներ, որոնք խիստ պերճախօս են ու վաւերական:

Ներկայիս ալ, երբ հայրենիքը անկախացած է, կը դիմագրաւէ բազում մարտահրաւերներ, Ռ.Ա.Կ.ը կը գտնուի հայրենիքի կողքին, սատար կը կանգնի անոր գործընթացին, անկախաբար այն իրողութիւններէն, որ հոն կան թերութիւններ ու կան սրբագրելի հարցեր:

Հայաստանի անկախութիւնը՝ իր Նոր վարչակարգով ու դրուածքով, անտարակոյս, այն միակ ընտրանքն է, որուն ձգտած է Ռ.Ա.Կ.ը, սակայն բնական ու հեզասահ անցումով մը եւ այսօր, վստահ ենք որ Մեթրը այդ հրճուանքն ու բերկրանքը կ'ապրի այն լաւատեսութեամբ, որ տնտեսական, ընկերային ու կենցաղային դժուարութիւնները, շրջափակման խոչընդոտները եւ Արցախեան տագնապը կը վերանան ու կ'ունենան իրենց համապատասխան լուծումները, իսկ հայրենիքի Նոր պետականութեան զօրացումն ու ամրապնդումը կը դառնայ իւրաքանչիւր հայու սրբազան պարտականութիւնը:

Հոս միջանկեալ ըսենք թէ՝ հակառակ ոմանց այն կարծիքին, թէ կուսակ-

ցութիւնները ընելիք չունին այլեւս սփիւռքի մէջ, իրենց տեղը հայրենիքն է, մենք այս հանգրուանին այս մտածումը կը գտնենք անտեղի եւ սխալ, որովհետեւ մասնաւորաբար Ռ.Ա.Կ.ը տակաւին յանձնառութիւններ ունի իր բոլոր միջոցներով սպասարկելու հայրենիքի հզօրացման, մինչեւ որ ժողովրդավարութեան եւ ազատականութեան սկզբունքները լիովին գործադրուին Հայաստանի մէջ:

Նոյն ծիրէն ներս, երբ կը դիտենք հայ եկեղեցւոյ դառն գոյավիճակը, յատկապէս՝ հերձուածին առկայութիւնը, կը տեսնենք թէ՛ Ռ.Ա.Կ.ի դաւանանքէն իսկ մեկնելով, Մեթր Սեդրակեան, իր գործակիցներուն հետ, մնաց մէկ ու միասնական հայ եկեղեցւոյ գաղափարին պաշտպան, գերակայութեամբ Ս. Էջմիածնի աթոռակալին:

Մեթրը միշտ ալ ջատագովը մնաց այս միութեան, իր ելոյթներով, գրութիւններով թէ մեկնաբանութիւններով, իսկ այսօր, երբ աւելի քան երեք անյետաձգելի պահանջքը կայ ատոր, Ռ.Ա.Կ.ի այդ թեզը կը մնայ առաջնահերթային մարտահրաւեր մը:

Արտերկրի կացութեան պարագային, Մեթրը չանտեսելով կամ չարհամարհելով այլ գաղութներու կարեւորութիւնը, դերն ու աշխատունակութիւնը, միշտ ալ նախամեծարութիւնը տուաւ սփիւռքի միջնաբերդ լիբանանահայ գաղութին, որ անվիճելիօրէն եղաւ առաջնորդող մայր գաղութ մը, ողնասիւն մը, ուրկէ մտաւորական թէ այլ բնոյթի սնունդ եւ աւիշ առին հեռաւոր գաղթօճախները:

Նոյնիսկ երկարամեայ քաղաքացիական պատերազմը, որ պատճառ եղաւ քանդումներու, տեղահանումներու, գաղթի ու տարտղնումի, տակաւին ի վիճակի չեղաւ այս գաղութին իւրայատկութիւնը աղարտելու կամ դերը նսեմացնելու եւ Մեթրը լա՛ւ կը գիտակցի այս ճշմարտութեան, կը հաւատայ այս գաղութին անհրաժեշտութեան եւ առաքելութեան:

Իսկ եթէ ան ակամայ ժամանակաւոր կերպով բացակայեցաւ իր սիրեցեալ երկրէն, իր ազգային-հասարակական ու քաղաքական-ընկերային կալուածներէն, փաստն այն է որ ան վերադարձած է եւ ընդմիշտ հոս մնալու վճռակամութիւնը կայ իր մօտ:

Այս առիթով չմոռնալ յիշելու, թէ Մեթրը որքան ալ հանրածանօթ դեմք մը ըլլայ սփիւռքի թէ հայրենիքի մէջ, նոյնքան յայտնի անձնաւորութիւն մըն է լիբանանեան քաղաքական շրջանակներուն մօտ, իր քաղաքական թէ փաստաբանական լայնածիր գործունեութեանց ընդմէջէն:

Երբ Մեթրին անունը կ'առնչենք մասնաւորաբար Ռ.Ա.Կ.-ի հետ, անխուսափելիօրէն կը մտաբերենք Թեքեան Մշակութային Միութիւնը, որուն կարկառուն հիմնադիրներէն մին հանդիսացաւ նաեւ ինք:

Արդարեւ, երբ պաղ պատերազմի օրերը կը թեւածէին ամէնուրեք, քաղաքական թանձր թաթեր կը փնտռէին քաւութեան նոխազներ, երբ զուտ քաղաքական գործունեութիւն ունենալը կ'ենթարկուէր ճշումներու, այլապէս ալ՝ մշակութային կեանք ստեղծելը կը դառնար ազգային առաջադրանք, գլխաւորաբար ի հակադրութիւն սփռուքեան այլասերիչ պայմաններուն, շա՛տ բնական էր, որ ստեղծուէր համապատասխան կառոյց մը:

Այս մեկնակետով ալ, 1947ին, խումբ մը խանդավառ ռամկավար երիտասարդներ, որոնց մէջ էր նաեւ Մեթրը, ստեղծեցին Թէքէեան Մշակութային Միութիւնը Լիբանանի մէջ, որ դարձաւ հայրենասէր, մշակութասէր եւ արուեստասէր զանգուածի մը սեփականութիւնը եւ արտայայտուելու ամպիոնը:

«Բանաստեղծներու իշխան»ին անունով այս մկրտումը երբեք չունէր ինքնանպատակ բնոյթ մը, այլ կը բխէր հայ մշակոյթը, դպրութիւնը, արուեստը, գիրն ու գրականութիւնը անշեշ պահելու միտումէ մը, այդ սկզբունքով ալ դաստիարակելու մեր երիտասարդութիւնը:

Իրաւացի էին մեր երախտաւոր հիմնադիրները իրենց մտայղացումին եւ այդ ծրագիրը իրականացնելուն մէջ, որովհետեւ պայմաններն ու ժամանակները ցոյց տուին, որ Թ.Մ.Մ.ը ունեցաւ իր արժանի տեղը, իր մասնակցութիւնը, իր ներկայութիւնը, հոն ուր կար հայաբեկոր գաղութ մը, հոն ուր կարիքը կը զգացուէր ատոր գոյութեան:

Մեթր Սեդրակեան այս ուղղութեամբ ունեցած է իր վիթխարի դերակատարումը, ոչ միայն Լիբանանի մէջ, այլեւ տարբեր՝ մօտաւոր թէ հեռաւոր գաղութներու մէջ ստեղծելով Թ.Մ.Մ.-ի մասնաճիւղեր:

Մեթրը կը հաւատար, որ քաղաքական թէ կուսակցական կեանքին զուգահեռ, առանց մէկը խաչաձեւելու միւսին, անհրաժեշտ է լծուիլ նաեւ մշակութային արդիւնաւետ գործունեութեան:

Ահա թէ ինչո՛ւ, նոյնիսկ 50ական թուականներէն սկսեալ, Թ.Մ.Մ.ը սկսաւ հայրենիքի հետ կամուրջներ հաստատել, որպէսզի մշակութային կապերը մնան պինդ, սերտ ու մտերիմ, յատկապէս մշակութային խումբերու այցելութիւններով:

Եւ մեզմէ շատերէն որո՞նք չեն յիշեր այդ հոգեպարար օրերը, հայրենասիրական զգացումները, որոնք նոր աւիւն եւ կեանք կու տային մեր ծարաւ հոգիներուն:

Մեթր Սեդրակեան եւ իր գործակիցները այս կապակցութեամբ ունին մեծ եւ անջնջելի աւանդ, մանաւանդ ա՛յդ օրերուն, մռայլ օրերուն, երբ շատեր կը խուսափէին Հայաստանին հետ կապ պահելէ, նկատի ունենալով վարչաձեւի դրութիւնը:

Այսօր, Մեթրին միւս բաղձանքն ալ իրականացած է. հայրենիքի մէջ եւս ստեղծուած է Թ.Մ.Մ., որ սփիւռքի հիմնական թելերուն հետ գործակցելու առաջադրանքին առջեւ կը գտնուի, մի՛շտ այն տեսլականով որ սփիւռք-հայրենիք յարաբերութիւնները մնալու են կենդանի ու շինարար:

Մեթր Սեդրակեան եղաւ այն խոհեմ, լրջամիտ, հաւասարակշռեալ ու չափաւորական ղեկավարը, որ կրցաւ ամենէն փշոտ ու փորձանաւոր հարցերն իսկ լուծել իմաստութեամբ, շրջահայեցութեամբ եւ անկողմնակալութեամբ:

Ասիկա, սիրելիներ, փոքր արժանիք մը չէ, մանաւանդ երբ ոմանք փորձած են ներգաղութային տագնապներ ստեղծել ու հակամարտութեան սերմեր ներարկել: Մեթրը դէմ եղած է նման փորձերու, չէ հանդուրժած այդ տրամադրութիւններուն եւ, ինչ որ կարելոր է, մնացած է անշեղ ու իր սկզբունքներուն վրայ:

Թերեւս ալ աւելին՝ Մեթրը միշտ գերադասած է հաւաքականը՝ անհատականէն, ընդհանրականը՝ անձնակեդրոնութենէն, համագգայինն ու համահայկականը՝ նոյնիսկ նեղ կուսակցականէն ու միութենականէն, որմէ օրինակ առնելու շատ պատճառներ ունին մեր նոր սերունդները:

Մենք այսպէս ճանչցած ենք Մեթր Սեդրակեանը, այսպէս հետեւած ենք իր ազգային-հայրենասիրական ուղղութեան եւ այսպէս հաւատացած ենք իր առաքելութեան:

Եւ երբ այս տրամաբանութեամբ եւ մեկնակետով մասնաւորաբար կը կատարենք հաշուեկշիռն ու գնահատականը Յոբելեարին ազգային-միութենական գործունեութեանց, փոխյարաբերութիւններուն ու մերձեցումներուն, եւ ի մասնաւորի Զ.Բ.Ը.Մ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի փոխ յարաբերութեանց, ինչպէս իր գործակիցները, նաեւ ինք՝ Մեթր Սեդրակեան, կը դառնայ միասնականութեան ու համագործակցութեան ախոյեաններէն, հետեւաբար, աւելի քան երբեք, այսօր եւս մեզմէ կը պահանջուի, մանաւանդ այս շրջանին, փոխադարձ հասկացողութեամբ եւ ըմբռնումով մեր զոյգ կազմակերպութիւնները պահել ամուր եւ սերտ, անխախտ եւ մօտիկ, կամ՝ ինչպէս կ'ըսեր Յկեանս Նախագահ Ալեք Մանուկեանը. «Զ.Բ.Ը.Մ.-ը եւ Ռ.Ա.Կ.-ը միշտ ալ գտնուած են նոյն դերակատարութեան մէջ, պիտի մնան այդպիսին, որովհետեւ Զ.Բ.Ը.Մ.-ը զօրաւոր է Ռ.Ա.Կ.-ով, իսկ Ռ.Ա.Կ.-ը Զ.Բ.Ը.Մ.-ով»:

Եւ երբ այսօր մենք կը նշենք Մեթրին Ոսկեայ յոբելեանը, ատիկա երբեք չի նշանակեր, թէ ան գործօն ղեկավար ըլլալէ դադրած է կամ հանգստեան կոչուած է. քաւ լիցի, մեզի համար ընդհակառակը՝ Մեթրը կը մնայ Մեթր, իր մտորումներն ու խորհուրդները՝ միշտ լսելի, իր ներկայութիւնը՝ միշտ փափաքելի, իր փորձառութիւնը՝ միշտ օրինակելի, իր վաստակը՝ միշտ գնահատելի:

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

Սիրելի Մեթր, յանուն Ռամկավար-Թեքեան մեծ ընտանիքներուն, Զեզի կը մաղթեմ ամենայն առողջութիւն, արեւշատութիւն եւ յաջողութիւն:

Զու դերդ, աւանդդ, վաստակդ ու գործդ մեզի համար թող ըլլան պատգամներ:

Վարձքդ կատար, սիրելի ղեկավար ընկեր:

*(Արտասանուած՝ Մեթր Հրաչեայ Սեդրակեանի Ոսկեայ Յորելեանի
հանդիսութեան, 11 Նոյեմբեր 1994)*

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵԼՈՅԹ

Յաջորդաբար երրորդ օրն ըլլալով, կառավարութեան յայտարարութիւնը մակընթացութեան մէջ է խորհրդարանէն ներս թէ դուրս: Ներսը կողմ մը կը քննադատէ զայն եւ ուրիշ մը կը դրուատէ, իսկ կողմ մը յայտարարութիւնը կը նկարագրէ որպէս երկինքէն ինկած կտոր մը, իսկ ուրիշ մը զայն կը նկատէ թերի եւ բազմաթիւ զգայուն հարցեր անտեսած:

Նկատելին այն է, որ զայն զտեցին հատիկ-հատիկ, չարժեւորեցին աստոր բովանդակութիւնը, այլ զայն չափեցին բառերուն եւ նոյնիսկ գիրերուն քանակով:

Այս՝ դուրսը: Իսկ խորհրդարանի գմբեթին տակ կան երեսփոխաններ ու լրագրողներ, որոնց ականջներն ու աչքերը գամուած են ամենապզտիկ կետի վրայ, զոր ընդգրկած է յայտարարութիւնը կամ չէ ընդգրկած, եւ պատրաստ՝ որեւէ հակազդեցութիւն մեկնաբանելու:

Պրն. Վարչապետ, երկուքին միջեւ հասարակաց յայտարար մը չէ՞ք գտներ, երբ կան ցցուած աչքեր եւ պարզուած գրիչներ, որոնց նպատակն է տկար կետ մը որոնել եւ անոր վրայ խոյանալ: Ինչո՞ւ է այս ամէնը. արդե՞օք դէպի լաւը հասնելու եւ ազատ ու արժանապատիւ կեանք ապրող հասարակութիւն մը կերտելու համար չէ:

Կը գտնուինք ծայր աստիճան զգայուն անկիւնադարձի առջեւ: Երկիրը վատ վիճակի մէջ է, եւ նոյնպէս՝ ինչ որ մնացած է մարգերէն ու հաստատութիւններէն: Երբ երկիրը այս հանգրուանին կը հասնի, շատ դժուար կ'ըլլայ սանձը ձեռքի մէջ պահել: Եւ բոլորս ալ գիտենք հետեւանքները, որոնք կրնան յառաջանալ, եթէ վիճակը այս ձեւով շարունակուի: Չայն կը սահմանեմ մէկ բառով՝ ՓԼՈՒՀՈՒՄ:

Ուրեմն կառավարութիւնը վտանգաւոր անկիւնադարձի մը առջեւ է, իսկ անհաշուենկատ որեւէ քայլ առնուելու պարագային փլուզումը անխուսափելի պիտի դառնայ: Պահանջուածը մեծ է եւ գործադրութիւնը՝ մեծ: Ինչ ալ ըսուի, այս կառավարութեան կեանքը կապուած է իր գործերուն հետ եւ կը գտնուի մանրադիտակի տակ:

Պրն. Վարչապետ, ես տարակուսողներէն չեմ բարի կամքերուն, որոնցմով կը յատկանշուին այս կառավարութեան տարրերը: Ինչպէս նաեւ տարակուսողներէն չեմ այս հայրենիքի ապագային, որուն անբաժանելի մէկ մասը կը նկատեմ ինքզինքս: Կառավարական յայտարարութեան գնահատումին

գծով մեր տեսած վիճակը արտայայտությունն է մեր սերունդներու ապագային վրայ մեր մտավախութեան: Ասոր մէջ մեծ չափով տրամաբանութիւն եւ ժողովրդավարութիւն կը գտնեմ: Այս վիճակը կը խրախուսէ եւ չի վախցներ, կը զօրացնէ եւ չի տկարացներ, որովհետեւ նպատակը մէկ է՝ լաւագոյնը:

Ա՛յս է որ Լիբանանը կը զանազանէ ուրիշներէն եւ ա՛յս է որ Լիբանանին գոյատեւել տուաւ մինչեւ այսօր: Հետեւաբար, պարտինք պահպանել ու յարգել բոլոր կողմերուն կարծիքները եւ ընդառաջել անոնց, որովհետեւ ուզենք կամ չուզենք անոնք գոյութիւն ունին:

Այս խօսքերը ձեր առջեւ կ'ըսեմ, անդրադառնալու համար թերացումի մըն ալ, որ Նկատուեցաւ երբ անարդարութիւն եղաւ կառավարութեան մէջ հայկական ներկայացուցչութեան հարցով: Այդ անարդարութիւնը բաժին չդարձաւ անձերու, այլեւ ամբողջ համայնքի մը, որ ունի իր քաղաքական եւ որակական ներկայութիւնները, տառապած է եւ արտայայտիչ կեցուածքներ ունեցած պատմութեան ընթացքին ըլլա՛յ Լիբանանի մէջ եւ ըլլա՛յ սփիւռքի երկիրներուն:

Բոլորս ալ գիտենք, յարգելի պաշտօնակիցներ, թէ այս համայնքը որքան հարուստ կարողութիւններ ունի ըլլա՛յ մշակութային եւ ըլլա՛յ տնտեսական բնագաւառներուն մէջ:

Մեր պահանջած հայկական ներկայացուցչութիւնը մեր իրաւունքն է: Եւ այդ իրաւունքը նուիրագործուած է Թայէֆի համաձայնագիրով եւ այդ հիման վրայ գործած են այդ համաձայնագրին յաջորդած կառավարութիւնները: Ուրեմն ա՛յդ մեր իրաւունքն է եւ պիտի չլռենք մինչեւ անոր իրականացումը:

Նկատելին այն է, որ այս անարդարութիւնը եղաւ շատ յատկանշական ժամանակի մը, երբ յայտարարեցինք գոյակեցութեան եւ լիբանանեան ընկերութեան բոլոր խմբաւորումներուն բացուելու մեր նշանաբանը, որ ողջունուեցաւ եւ քաջալերանքի արժանացաւ բոլոր համայնքներուն մօտ, որոնք կառչած կը մնան իրենց քաղաքակրթութեան, մշակոյթին եւ սրբութիւններուն: Իսկապէս քաջ քայլ մը, որուն արձակման ձեռնարկեցինք:

Եւ ի՞նչ էր արդիւնքը: Հայ համայնքին վարձատրութիւնը միայն մե՞կ աթոռով: Ա՛յս է գոյակեցութեան եւ բացուածութեան գինը:

Ասկէ մեկնելով, պատասխանատուութիւնը կը բեռնենք բոլոր այն կողմերուն, որոնք մասնակցեցան այս որոշումի որդեգրումին եւ չընդառաջեցին բացուելու մեր կոչին, մեզ նեղ կացութեան մատնելով մեր համայնքի առջեւ: Կը պահանջեմ նաեւ սրբագրել այս անկանոնութիւնը եւ յետոս կոչել զայն, մանաւանդ որ բոլորս ալ գիտենք, թէ այս հանգրուանը որքան համերաշխութեան կը կարօտի այս հայրենիքի վերականգնումին ի խնդիր:

Այս պահանջով կը դիմենք բոլոր պատասխանատուներուն եւ մանաւանդ

հանրապետության նախագահին եւ վարչապետին, որոնց նկատմամբ կատարեալ վստահութիւն ունինք:

Եւ հիմա, իմ եւ ուրիշին նկատմամբ արդար ըլլալու համար, անհրաժեշտ գտայ անդրադառնալ երիտասարդութեան հարցին, ինչ կը վերաբերի հայրենիքներու կերտումին եւ անոնց ինքնութեան սահմանումին:

Շատ խօսեցանք եւ բազմաթիւ խոստումներ տուինք, սակայն բան մը չգործադրուեցաւ անոնցմէ: Ապացոյցը այն է, որ քուէարկութեան տարիքի նուազումին նիւթը չընդգրկուեցաւ կառավարական յայտարարութեան մէջ: Նախընտրելի էր մեզի համար, յարգելի պաշտօնակիցներ, որ այդ խոստումները չտայինք մեր երիտասարդներուն, որպէսզի հետեւանքը աւելի թեթեւ ըլլար անոնց զգացումներուն վրայ:

Ինչ կը վերաբերի կանանց, ապա կինը պայքարող իր դերը չդադրեցուց, ըլլա՛յ խաղաղութեան եւ ըլլա՛յ պատերազմի ժամանակ:

Խաղաղութեան՝ մասնակցութիւն եւ

պատերազմին՝ խաղաղութիւն:

«Խաղաղութեան դաստիարակեց եւ

պատերազմին դաստիարակեց

խաղաղութեան ընծայեց

եւ պատերազմին ընծայեց

խաղաղութեան լուսաւորեց եւ

պատերազմին լուսաւորեց»:

Ամփոփելով՝ կինը խաւար չճանչցող ջահն է, եւ այս յատկանիշներուն դիմաց որքա՛ն փոքր ենք մենք:

Անկեղծ ըսելով, շատ ուշացանք կինը մասնակից դարձնելու քաղաքական գործունեութեան, մանաւանդ որ քաղաքականութիւնը այս օրերուն վստահելիութեամբ յատկանշուող այդ արժանիքներուն կարիքը ունի:

Ի վերջոյ, հարկ է դրուատել քաջարի դիմադրութիւնը, որ Լիբանանին վերադարձուց իր փառքն ու արժանապատուութիւնը, իսրայէլեան թշնամին Լիբանանի հողերէն դուրս մղելուն ընդմէջէն: Նաեւ անոր թիկունք կը կանգնինք ազատագրելու գրաւեալ մնացեալ հողերը: Կը դրուատենք հանրապետութեան նախագահին եւ զինուորական հաստատութեան դերը եւ այս յաղթանակի իրականացման մէջ անոնց նեցուկը:

Յոկտեմբեր 2000

Մեր ժողովուրդի պատմության ամենէն դժուար օրերուն, երբ թրքական բռնապետութիւնը սկսած էր բացայայտօրէն սպառնալ մեր ժողովուրդի ֆիզիքական գոյութեան՝ 1885 թուականին, Վան քաղաքին մէջ մեր ժողովուրդին ծոցէն ծնաւ Արմենական Կուսակցութիւնը, որ կը հանդիսանայ առաջին հայ կուսակցութիւնը մեր ազգային իրականութենէն ներս: Արմենական Կուսակցութիւնը, որ հայրն է Ռամկավար Ազատական Կուսակցութեան՝ տարաւ շնորհակալ աշխատանք հայ զանգուածները կազմակերպելով, եւ դիմեց ինքնապաշտպանութեան, որուն շնորհիւ մեր ժողովուրդին մէկ մասը կարելի եղաւ փրկել ստոյգ բնաջնջումէ:

1915 թուականին եւ անոր յաջորդող տարիներուն գործադրուած Ցեղասպանութենէն եւ տեղահանութենէն ետք ստեղծուեցան Նոր իրավիճակներ, որոնց լոյսին տակ՝ մեր ազգային կեանքը ենթարկուեցաւ որոշ վերադասաւորումներու: Ատոնց շարքին կը համարուի ծնունդը Ռամկավար Ազատական Կուսակցութեան, որ տեղի ունեցաւ 1921ին՝ երբ շարք մը ազատական եւ ժողովրդավարական գաղափարախօսութիւն դաւանող կուսակցութիւններ համախմբուելով ու միաձուլուելով կազմեցին Ռ.Ա.Կ.-ը:

Ամբողջ ութսուն տարիներ եւ յատկապէս՝ Պաղ պատերազմի դժուարին օրերուն, մեր կուսակցութիւնը եղաւ այն հաւասարակշռուած ազգային կառոյցը, որ յաջողեցաւ շատ մը առիթներով հայ ժողովուրդը հեռու պահել միջազգային քաղաքականութեան թակարդներէն եւ կառչած մնալ ազատական եւ ժողովրդավարական իր գաղափարախօսութեան, իսկ միւս կողմէ անհրաժեշտ կապը ստեղծեց Խորհրդային վարչակարգի տակ գտնուող Հայաստանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ: Այսօրուան տուեալներով թերեւս պարզ երեւայ այս մէկը, սակայն երբ վերադառնանք այդ օրերուն, ապա անելի լաւ կրնանք հասկնալ թէ ինչպիսի դժուարութեանց հանդիպիլ կը նշանակէ Ռ.Ա.Կ.-ի որդեգրած սկզբունքը, որ եղաւ անջատել հայրենիք եւ վարչակարգ հասկացութիւնները, որովհետեւ անոնցմէ առաջինը մնայուն է ու յաւիտենական, իսկ երկրորդը՝ անցողակի: Տասնամեակներ ետք ահաւասիկ կայ ու կը շարունակէ մնալ մեր դարաւոր հայրենիքը, իսկ անդին պատմութեան էջերուն յանձնուած է ատենի համայնավար վարչակարգը:

Այս բոլորին քաջատեղեակ՝ այսօր հպարտութեամբ կը տեսնենք Ռամկա-

վար Ազատական Կուսակցության արձանագրած յաղթանակը իր դաւանած գաղափարախօսութեան բնագաւառէն ներս եւ իր որդեգրած հաւասարակշռուած քաղաքականութեան առումով: Արդարեւ, ամբողջ աշխարհը կ'ընթանայ դէպի ժողովրդավարութիւն եւ ազատականութիւն, ներառեալ՝ նոյն ինքն մեր հայրենիքը: Այսօր, բաց եւ դիւրին յարաբերութիւն կայ մեր ժողովուրդի հայրենական եւ արտերկրի զանգուածներուն միջեւ, որովհետեւ այդ կապը տարիներէ ի վեր հաստատուած է հայրենիքին հետ առաւելաբար մեր կուսակցութեան հաստատած ոսկի կամուրջին շնորհիւ:

Այդ բոլորէն ետք, երբ իրականացած է մեր ժողովուրդի Մեծ Երազին մէկ մասը՝ հայրենի հողի մէկ պատառիկը միայն եղող արդի Հայաստանի անկախացումով, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր արձանագրած խնդրութեան զուգահեռ, կարելի ամէն միջոցներով եւ հնարաւորութիւններով կ'աշխատի նախ ամրացնելու եւ հիմնաւորելու համար ժողովրդավարութիւնը մեր հայրենիքէն ներս, ուր արդէն հիմնած է Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը եւ ապա՝ ամէն ճիգ կը թափէ սատարելու համար Նայիրեան երկրի տնտեսական բարգաւաճման ու բարօրութեան: Բնական է չենք յաւակնիր որ իբրեւ կուսակցութիւն պիտի կարենանք առանձինս հասնիլ երկրի մը եւ անոր բնակչութեան անսահման կարիքներուն, բայց կը հաւատանք թէ միեւնոյն անշահախնդիր մօտեցումով իւրաքանչիւր հայ անհատ, իւրաքանչիւր կազմակերպութիւն կամ միութիւն եթէ իր լուրման ներմուծէ հայրենի բունկալին մէջ, ապա իրականութիւն կը դառնայ՝ «կաթիլ կաթիլի վրայ աւելնալով ծով կը դառնայ» հայկական ժողովրդային առածը:

Ինչ կը վերաբերի սփիւռքին, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը շարունակէ իր առաքելութիւնը, որպէսզի սփիւռքը շարունակէ պահել իր ինքնուրոյն գոյութիւնը, որպէսզի տեւականօրէն ուսուցողի ազատական եւ ժողովրդավարական գաղափարախօսութիւնը եւ խարսխուի հայ զանգուածներու եւ մանաւանդ՝ նոր սերունդի մտածողութեան մէջ:

Ազգապահպանման եւ գաղափարական այս առաքելութեան կողքին, Ռ.Ա.Կ.-ը սփիւռքի մէջ կը գործէ ի խնդիր Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ հետեւաբար հայ ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռք բերման:

Այս առիթը պատեհ նկատելով, պրն. Նախագահ, ես յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան երախտագիտութեան խօսք կը փոխանցեմ Ձեզի եւ Ձեր միջոցաւ Ֆրանսայի Ծերակոյտին ու ժողովուրդին՝ Հայկական Յեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունելուն առիթով: Այս մէկը կու գայ անգամ մը եւս վեր առնելու ֆրանսացի ժողովուրդին ունեցած պաշտա-

մունքը արդարության եւ մարդկային իրաւունքներու պաշտպանման նկատմամբ:

Ի վերջոյ, Ռ.Ա.Կ.-ը արտերկրի մէջ կը ծաւալէ նաեւ քաղաքական գործունեութիւն, որուն վերջին դրսեւորումները եղան Ֆրանսայի մէջ տեղի ունեցած քաղաքապետական եւ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւնները: Արդարեւ, Ֆրանսայի մէջ զինակցելով ազատականութիւնը դաւանող գաղափարակից կուսակցութեանց եւ մանաւանդ Էր. Փէ. Էր.-ի հետ, Ռ.Ա.Կ.-ը իր ներդրումը բերաւ այդ զոյգ ընտրութեանց, իսկ Լիբանանի մէջ ընտրելով վարչապետ Ռաֆիք Յարիրիի առաջադրանքները եւ գործակցելով անոր հետ, Ռ.Ա.Կ.-ը կրցաւ տանիլ պատմական յաղթանակ մը երեսփոխանական այդ ընտրութիւններուն մէջ: Վստահ եմ, որ այս զոյգ զինակցութիւնները եւ սերտ գործակցութիւնը պիտի շարունակուին եւ հետզհետէ առաւել եւս արմատաւորուին յառաջիկայ հանգրուաններուն:

Ֆրանսական այս ասպնջական հողին վրայ եւ պատուական այս ներկայութեան դիմաց, կ'ուզեմ անդրադառնալ նաեւ մեր սիրելի Լիբանանին՝ դարերու պատմական խորք ունեցող այս հայրենիքին, որ Յոբի համբերութեամբ եւ գոյատեւելու վճռականութեամբ տարաւ տասնամեակներու վրայ երկարող իր տառապանքը, որ թէեւ զգալիօրէն մեղմացած՝ բայց վերջացած չէ տակաւին: Այստեղ կարեւորութեամբ կ'ուզենք ընդգծել այն դերը, զոր Ֆրանսա ունեցաւ Լիբանանը իր տագնապէն դուրս բերելու մէջ, եւ այն օժանդակութիւնը, զոր լիբանանցի ժողովուրդը կ'ակնկալէ իրմէ ի գոյ դժուարութեանց վերացման առումով:

Արդարեւ, ճիշդ թէ թէ վերջ գտած է եղբայրական կռիւը, ճիշդ է թէ ազատագրուած են հարաւային Լիբանանն ու Արեւմտեան Պեքաան եւ ճիշդ է թէ լիբանանցի ժողովուրդը յամառ դիմադրողականութեամբ կ'աշխատի ամօքել իր վերքերը, սակայն պէտք է ընդունիլ, որ սպիացումը կ'ուշանայ, որովհետեւ այս փոքրիկ երկրին կարողականութենէն վեր եղաւ այն տառապանքը, որ պարտադրուեցաւ իրեն, Մերձաւոր Արեւելքի տագնապին բերումով: Անդին, ամբողջականօրէն չէ հաստատուած Լիբանանի գերիշխանութիւնը, որովհետեւ ամէնօրեայ հերթականութեամբ Իսրայէլ կը բռնաբարէ անոր հողային եւ օդային տարածքը, կը զողնայ անոր ջուրերը եւ գրաւեալ կը պահէ անոր մէկ մասնիկը եղող Շապաայի շրջանը: Այդ բոլորին դիմաց եւ անտեսելով Իսրայէլի զինուորական հսկայ ուժը, լիբանանցին իր բանակով եւ դիմադրութեամբ կ'արհամարհէ ուժի այդ հսկայ մեքենան եւ կը շարունակէ ազատագրման սրբազան պայքարը: Այստեղ փակագիծ մը բանալով կ'ուզեմ ճշդել թէ ոչ մէկ ատեն կարելի է ահաբեկչութիւն նկատել լիբանանեան դիմադրութիւնը: Ի վերջոյ պատմութիւնը հարուստ է ազատագրական պայքարի

օրինակներով, որոնց գլխավորներն կարելի է համարել Չօրավար Շարլ Տը Կոլի գլխավորած ազատագրական շարժումը Նացի Գերմանիոյ դեմ: Այս մեկը կը մատնանշեմ, որովհետեւ յատկապէս այս օրերուն միտքերու մէջ շփոթ ստեղծող եւ իրականութիւնները խեղաթիւրող աշխատանք մը կը տարուի Իսրայելի կողմէ, լիբանանեան այդ դիմադրութիւնը ներկայացնելու իբրեւ ահաբեկիչներու խմբաւորում: Լիբանանցի ժողովուրդը իր բոլոր համայնքներով, գործող ուժերով եւ պետականութեամբ, զօրավիգ է իր դիմադրութեան եւ զայն կը նկատէ հայրենանուէր սուրբ միջոցառում՝ միջազգային օրէնք եւ կանոն ոտնակոխելով ուրիշին իրաւունքները յափշտակող թշնամիի մը դեմ: Իսկ անդին՝ շատ յստակ է Նոյն այդ խաղաղասէր ժողովուրդին կեցուածքը այն ոճրային արարքին նկատմամբ, որուն ենթարկուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգները անցնող Սեպտեմբեր 11ին: Ահաւասիկ այդ է իսկական ահաբեկչութիւնը, որուն հանդէպ Լիբանան իր պետութեամբը եւ ժողովուրդով յայտնեց խոր զայրոյթ եւ ցասում, միաժամանակ պատրաստակամութիւն ցուցաբերելով իրմէ ակնկալուած ամեն տեսակի օժանդակութիւն տրամադրելու, արմատախիլ ընելու համար մարդկային քաղաքակրթութեան հիմքերը խախտել ուզող եւ անմեղներու արեան գնով այլազան շահեր ու նպատակներ հետապնդող այս հրոսակները: Ինչ խօսք որ տասնամեակներու երկայնքին Լիբանան մեծապէս տառապած է այդ անմարդկային արարքներէն եւ իր զաւակներուն նահատակութեամբը ճաշակած է ահաբեկչութեան սահմակեցուցիչ հետեւանքները:

Այդ բոլորէն մեկնելով համոզուած ենք, որ Ֆրանսան, որ միշտ ալ շնորհած է իր գուրգուրանքը Լիբանանին՝ կրնայ Եւրոմիութեան եւ միջազգային համայնքին հետ համադրուած աշխատանք տանելով օգտակար հանդիսանալ, որ Լիբանան վերագտնէ իր անդորրութիւնը, իր հողային ամբողջականութիւնը եւ վերականգնէ իր տնտեսութիւնը: Ասոր առնչութեամբ, կը հաւատանք թէ ա՛լ ժամանակը հասած է, որ միջազգային գործող ուժերը իրենց կշիռքը դնեն Մերձաւոր Արեւելքի տագնապի արդար լուծման ի խնդիր: Բոլորս ալ գիտենք թէ բռնութիւնը բռնութիւն կ'առաջացնէ եւ անարդարութիւնը ըմբոստութիւն կը սերմանէ: Բոլորս ալ գիտենք թէ իրականութիւնները դիմակալելով եւ անոնց արդար լուծումներ որոնելով է որ հարցերը կը լուծուին եւ ոչ թէ շրջանցելով զանոնք: Նոյնն է պարագան արաբ-իսրայելեան տագնապին, որ տասնամեակներէ ի վեր կը շարունակուի, բազմապատկելով մարդկային զոհերուն թիւը եւ յումպետս վատնելով նիւթական եւ մարդկային այն մեծ կարելիութիւնները, որոնք այլապէս իրենց ներդրումը կրնան բերել մարդկային քաղաքակրթութեան բարգաւաճման: Այս պարագային յստակ է ճշմարտութեան ճամբան՝ ամբողջական եւ արդար լուծում տագնապին,

հիմնուած՝ մարդկային իրաւունքներու եւ միջազգային որոշումներու վրայ:

Այս բոլորին զուգահեռ, մեր ակնկալութիւնն ու խնդրանքն է նաեւ՝ որ բազմապատկուի ֆրանսական կառավարութեան եւ յատկապէս հանրապետութեան նախագահ՝ Նորին Վսեմութիւն պրն. Ժազ Շիրաքի ծաւալած շնորհակալ աշխատանքը եւ մեր երկրին տնտեսութեան բարեկարգման նուիրուած Փարիզ-2 ժողովը տայ դրական եւ գործնական արդիւնքներ: Արդարեւ, կայուն, գերիշխան եւ տնտեսութեամբ բարօր Լիբանան մը անպայման կրնայ իր օգտաշատ դերակատարութիւնը ունենալ տարածաշրջանին մէջ կայունութիւն եւ խաղաղութիւն ամրապնդելու գործընթացին մէջ, ինչպէս նաեւ՝ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն յառաջդիմութեան առումով:

Կը վերադառնամ օրուան առիթին եւ կ'եզրափակեմ խօսքս:

Երեք հազարամեակներու պատմութիւն ունեցող ժողովուրդի մը զաւակներն ենք եւ հպարտութեամբ կ'արձանագրենք այն մեծ ներդրումը, որ հայ ժողովուրդը ունեցած է մարդկային քաղաքակրթութեան մէջ: Հետեւաբար՝ ամենախոր համոզումով կը շարունակենք մեր խաղաղասեր եւ շինարար առաքելութիւնը, անտեսելով այն բոլոր եաթաղանները, որոնք ճօճուեցան մեր գլխուն:

Իբրեւ մէկ հարազատ ծնունդը այս պատուական ժողովուրդին, այս բոլորը արմատաւորուած է մեր գիտակցութեան եւ ենթագիտակցութեան խորքը եւ տեղ գտած մեր կուսակցութեան գաղափարախօսութեան եւ հաւատամքին մէջ: Կուսակցութեան հիմնադրութեան 80 ամեակին այս առիթով թող որ իբրեւ Ռամկավար Ազատականներ վերանորոգենք մեր ուխտը՝ ծառայելու հայ ժողովուրդին, հետապնդելու մեր նահատակներուն սրբազան պատգամը, սատարելու մեր հայրենիքին հզօրացման եւ մեր ներդրումը ունենալու ժողովուրդներու բարեկամութեան ամրապնդման մէջ:

Հաւատքով եւ անշահախնդիր աշխատանքով քալենք դեպի յաղթական հարիւրամեակ:

(Արտասանուած՝ Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակի հանդիսութեան, Փարիզ, 2001)

Այսօր պատմական օր մըն է որ կը նշենք հայրենի հողին վրայ: Հայաստանի անկախութեան տասնամեակը կը զուգադիպի Նաեւ Ռ.Ա.Կ.-ի հիմնադրութեան տասնամեակին, ինչպէս Նաեւ Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակին:

Երբ 1921ին գոյութեան կոչուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, զայն բաղկացնող կազմակերպութեանց մէջ մայր հոսանքը կը հանդիսանար Արմենական Կուսակցութիւնը, որ կրկնակի հանգամանքներով պատմական դեր մը ունեցաւ հայ ազատագրական շարժման մէջ: Ան առաջին քաղաքական կուսակցութիւնն էր հայկական իրականութեան մէջ եւ երկրորդ՝ ան միակն էր որ կը հիմնուէր հայ հողի վրայ, որովհետեւ աւանդական միւս կուսակցութիւնները պատմական պայմաններու բերումով կը հիմնուէին հայկական լեռնաշխարհէն դուրս, օտար երկինքներու տակ:

Հետեւաբար, երբ Հայաստան վերստին տիրացաւ իր անկախութեան եւ հիմը դրուեցաւ մեր Երրորդ Հանրապետութեան՝ մեր կուսակցութիւնը ձեռնունայն չվերադարձաւ Հայաստան, այլ՝ Վասպուրականի մայր հողի աւիւնով սնած եւ 70 ամեայ քաղաքական վաստակով իմաստնացած իր գաղափարական դրօշը Վանէն կը բերէր Երեւան:

Այսօր, երբ կը համախմբուինք հարազատ երկինքի տակ՝ այդ ողջունելի իրողութեանց տարեդարձն է որ կը տօնենք միասնաբար:

Ծայրայեղութիւնը, մոլեռանդութիւնը եւ մենատիրական ձգտումները տխուր աւերներ գործած են մեր ժողովուրդի գլխուն ու այդ աղետներու փորձէն օգտուելով մեր կուսակցութիւնը հանդիսացած է չափաւորութեան, հաւասարակշռութեան եւ միասնականութեան հետամուտ քաղաքական կազմակերպութիւն մը, եւ այդ գաղափարները ոչ միայն արձանագրած է իր հաւատոյ հանգանակին մէջ, այլեւ՝ գործնապէս իրականացուցած է իր գործունեութեան դաշտէն ներս. գուցէ ան տուժած է իր հանդուրժողութեան եւ լայնամտութեան մէջ, սակայն անկասկած հայ ժողովուրդը ընդհանրապէս շահած է այդ վարքագիծի կիրարկումէն, քանի այսօր կառոյցներու դեմոկրատական դրութեան մէջ Ռ.Ա.Կ.-ի ներդրումը անուրանալի է:

Յիշեցման կարգով կ'ուզեմ մատնանշել այն պատուաբեր եւ ազգօգուտ կեցուածքը, զոր մեր կուսակցութիւնը որդեգրեց Հայաստանի երկրորդ Հանրապետութեան ժամանակաշրջանին, երբ գաղափարական գետնի վրայ ամբողջովին հակոտնեայ մեկնակետերու վրայ ըլլալով հանդերձ, Ռ.Ա.Կ.-ը

Նպատակայարմար գտաւ անհրաժեշտ գործակցութիւնը ունենալ օրուան իշխանութեանց հետ, ի սեր մեր ժողովուրդին եւ անոր սփիւռքեան ու հայրենական թելերուն օրկանական կապի շարունակման եւ ամրապնդման, ինչ որ եղաւ ու Ռ.Ա.Կ.-ը արդարացիօրէն նկատուեցաւ այն ոսկի կամուրջը, որ Հայրենիքը կապեց Սփիւռքին:

Անցեալ պայմաններու մէջ այս կապը ամրապնդող եւ մեր ժողովուրդին գերագոյն շահերուն համար ամէն զոհողութիւն յանձն առնող Ռ.Ա.Կ.-ը, այսօրուան բարենպաստ պայմաններուն մէջ իր վերահաստատուած միասնականութեամբ շատ ակելի մեծ ուժականութեամբ տրամադրուած է շարունակելու ազգաշէն իր աւանդական աշխատանքը Հայրենիքէն ներս:

Միաժամանակ՝ Ռ.Ա.Կ.-ը կը շարունակէ իր ամբողջական նեցուկը տալ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ անսասանութեան, միշտ համոզուած մնալով, թէ մեր եկեղեցւոյ հզօրութիւնը կ'երաշխաւորուի անոր միասնականութեամբը, որ պետք է իրագործուի Մայր Աթոռի սուրբ հովանիին ներքեւ, անվիճելի եւ անսակարկելի նուիրապետութեանը տակ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան:

Ինչ կը վերաբերի Սփիւռքի մէջ իր ծաւալած քաղաքական գործունեութեան, երկար տարիներ Սփիւռքի մայրաքաղաք նկատուող Լիբանանի մէջ, Ռ.Ա.Կ.-ի ղեկավարութիւնը միշտ փորձած էր տեղ գտնել երկրի պետական կառոյցէն ներս, սակայն բոլորին ծանօթ պատճառներով այդ երազը անկարելի դարձած էր տասնամեակներ ամբողջ: Պատմական այդ պատեհութիւնը վերջապէս շնորհուեցաւ մեր սերունդին, եւ այսօր ես հպարտ եմ որ իբրեւ Ռամկավար Ազատական՝ Լիբանանի հայ համայնքին ձայնը կը ներկայացնեմ Լիբանանի խորհրդարանին մէջ:

Իբրեւ Լիբանանցի՝ մենք ունինք մեր քաղաքական պարտաւորութիւնները հանդէպ այդ հիւրընկալ երկրին. նոյնպէս, մենք ունինք մեր պարտաւորութիւնները մեր նախնեաց հայրենիքին՝ Հայաստանի հանդէպ. բարեբախտութիւն է որ Հայաստան եւ Լիբանան բարեկամ երկիրներ են եւ մենք ի վիճակի ենք, առանց հակասութեանց, այդ պարտաւորութիւնները ներդաշնակելու եւ համադրելու՝ դառնալով ճշմարիտ եւ վստահելի կամուրջ մը մեզի համար սիրելի այդ երկիրներուն միջեւ:

Այդ առումով մեր առաքելութիւնը դիւրացուցին արդէն նախագահներ պրն. Քոչարեանը եւ Չօր. Լահուտը, որոնք ամուր հիմերը դրին զոյգ երկիրներու սերտ յարաբերութեան:

Սիրելիներ,

Այսօր, երբ այս հայրենի բեմէն կու գամ իմ ողջոյնի խօսքը բերելու ձեզի, Ռ.Ա.Կ.-ի աշխարհացրիւ շրջանակները ինծի կը նային եւ իրենց ձայնը

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

փոխանցելով ինձի՝ կու գան միանալու մեր տարեդարձներու այս շքեղ տօնախմբութեան:

Նոյնպէս, իբրեւ մէկ պաշտօնական անդամը լիբանանեան օրէնսդիր մարմնին, պարտք կը զգամ նաեւ ողջոյնի այդ մաղթանքներուն ծիրը ընդլայնելու՝ բերելու ձեզի նաեւ հարազատ զգացումները Լիբանանի մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Թոյլ տուէք այս ողջոյնի խօսքը եզրափակել շնորհաւորելով հայրենիքի մեր գաղափարի ընկերները Յ.Ռ.Ա.Կ.-ի տասնամեակին եւ Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակին առթիւ, մաղթելով, որ իրենց կարգին, իրենք եւս յաջողին տեմբրասիի եւ խոհուն հայրենասիրութեան ծայնը հնչեցնել Հայաստանի խորհրդարանէն ներս:

Կեցցե՛ք Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը,
Կեցցե՛ք Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը,
Եւ փառք յաւերժական հայ ժողովուրդին

*(Արտասանուած՝ Յ.Ռ.Ա.Կ.-ի 10 ամեակի եւ Ռ.Ա.Կ.-ի 80 ամեակի
Հանդիսութեան, Երեւան, Օփերայի դահլիճ, 2001)*

ԶԿԱՅ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՌԹԵԱՆ

Յանուն աշխարհատարած Ռամկավար Ազատական Կուսակցության, կու գանք ողջունել Հայաստան-Սփիւռք այս հաւաքը, որուն նպատակն է իբրեւ ամբողջական ազգ մեր բազում հարցերը գետեղել կիզակետի մը վրայ եւ ջանալ իրականացնել անոնց լուծումները՝ հիմնուելով այս տարածաշրջանի եւ սփիւռքի ընծայած կարելիութեանց վրայ:

Այս հաւաքին, Ռ.Ա.Կ.-ը կը մասնակցի վերահաստատուած կառոյցով՝ ստանձնելու համար մեր կուսակցութեան համար սահմանուած պարտականութիւնը եւ սատարելով՝ մեր հայրենիքի վերականգնումին եւ հզօրացման:

Անցնող ութ տասնամեակներուն ընթացքին, մեր կուսակցութիւնը երազեց եւ քարոզեց ազատական եւ ռամկավարական գաղափարախօսութիւնը, քաջ գիտակցելով միեւնոյն ատեն, թէ նման գաղափարախօսութիւն մը կրնար միս ու ոսկոր ստանալ եւ շօշափելի իրականութիւն դառնալ հարազատ հողի վրայ եւ սեփական պետականութեան պայմաններուն ներքեւ: Այսօր հպարտ ենք որ Հայաստանի մէջ այդ դրօշը փոխանցած ենք Հ.Ռ.Ա.Կ.-ին, որ նոյն սկզբունքները կը կիրարկէ անկախ Հայաստանի հողին վրայ՝ Արմենականներու սրբազան կիրքով եւ Թեքեաններու, Զօպանեաններու եւ Տամատեաններու կիրթ ու պետական մտածողութեամբ:

Պատմութեան դաժան պայմանները կոտորակած են մեր ժողովուրդը եւ զայն ցրած բովանդակ երկրագունդի տարածքին, զրկած են մեզ մեր պատմական հայրենիքի ամբողջականութենէն ու ծանր պայմաններու բերումով՝ մտայնութեանց, հարցերու եւ իրականութեանց տարբերութիւններ պարտադրած մեզի:

Հետեւաբար, մեր բոլոր հարցերուն լուծումները պետք է սկսին շրջադարձովը այդ պայմաններուն, այսինքն՝ վերականգնումովը մեր ներքին եւ արտաքին միասնականութեան:

Մենք պետք է շրջենք բոլոր այն տիտղոս պայմանները, զորս ժամանակներն ու մեր ժողովուրդի թշնամիները պարտադրած են մեզի՝ ստեղծելով ազգային գաղափարախօսութիւն մը, որ անզիջող ըլլալով հանդերձ սկզբունքներու շուրջ, երաշխաւորէ ազատութիւնն ու անկախ մտածողութիւնը իւրաքանչիւր հայ անհատի:

Մասնաւորելով մեր խօսքը միասնականութեան շուրջ, կ'ուզենք այդ միասնականութիւնը իրականացնել՝

- Ազգային կենսական նպատակներու շուրջ
- Ցեղասպանութեան հիմնահարցին, հայկական դատին եւ պահանջատիրութեան շուրջ
- Ղարաբաղեան հարցի խաղաղ ու արդար լուծման իրականացման շուրջ
- Հայ եւ թուրք յարաբերութեանց հեռանկարներուն շուրջ
- Եւ ի վերջոյ Հայաստանի պետութեան, ընդհանրապէս պետականութեան ամրապնդման շուրջ:

Հայրենիքի անկախութիւնն ու պատմական սահմաններու վերականգնումը դարաւոր երազ մըն էին, որ այսօր մասնակիօրէն իրականացած կը գտնենք Հայաստանի Հանրապետութեան անկախացումով: Քաղաքական եւ հողային այսպիսի միաւոր մը պիտի հանդիսանայ կռուանը՝ իրականացնելու ամբողջական Հայաստանի մեր ազգային երազը: Սակայն պէտք է համախմբուինք եւ զօրացնենք այդ կռուանը, որպէսզի մեր ազգային նպատակները դառնան իրական եւ հեռանկարային:

Ինչ կը վերաբերի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ միասնականութեան՝ ապա այդ մէկը կը նկատուի աւելի քան կենսական անհրաժեշտութիւն մը, որ կոչուած է ոչ միայն ամբողջացնելու մեր ազգային միասնականութիւնը, այլեւ՝ սատարելու այդ միասնականութեան ամրապնդման եւ արմատացումին: Ի վերջոյ, լոկ կրօնական հաստատութիւն մը չէ մեզի համար Հայ Եկեղեցին, այլ՝ դարերու երկայնքին մեր ժողովուրդը առաջնորդած եւ առաջնորդող մեր ազգային գլխաւոր կառոյցներէն մին: Ահաւասիկ թէ ինչու համար կրկնակիօրէն կ'ընդգծենք կարեւորութիւնը եկեղեցւոյ միասնականութեան վերահաստատման:

Այդ ընելու համար, սակայն, նպատակայարմար կը գտնենք որ քաղաքական քաշկռտութներէ դուրս ձգուի եկեղեցին, թէկուզ քաջ գիտենք թէ մեր եկեղեցին ազգային եկեղեցի է եւ թէ աշխարհականները իրենց որոշակի խօսքը ունին այնտեղ:

Ատով հանդերձ, սակայն, անհրաժեշտ կը գտնենք որ մինչեւ եկեղեցական տաճնապին լուծուիլը, եկեղեցին ձերբազատուի քաղաքական միջամտութիւններէ, առիթ ընծայելու համար Ամենայն Հայոց եւ Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն, որպէսզի իրենց հայեցողութեամբ լուծումներ գտնեն մեր եկեղեցւոյ տաճնապին վերացման գծով, յատկապէս ինչ կը վերաբերի այդ տաճնապը հրահրող թեմերու հարցին:

Այս առնչութեամբ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր կարելիութիւնները ի սպաս կը դնէ զոյգ հայրապետներուն եւ կ'ակնկալէ անոնցմէ, որ ժամանակի նուազագոյն վատնումով, ջանան հասնիլ լուծումներու, որոնց շնորհիւ կ'իրագործուի այդ օրհնելի եւ օրհնաբեր միասնակա-

Նուրթիւնը Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին՝ Նախամեծարութեամբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Լեռնային Ղարաբաղի ազատագրումը պատմական շրջադարձ մըն էր, որ իրագործուեցաւ այնքան ծանր արեան տուրքով մը: Այդ արեան գինը, այսօր, սակարկութեան դրուած է միջազգային քաղաքական սակարաններու մէջ: Մեր պատմական հայրենիքի ազատագրուած ամէն մէկ քարը սրբազան աւանդ մըն է գալիք սերունդներուն համար եւ հետեւաբար ան անսակարկելի պէտք է պահել բոլոր պայմաններու տակ: Հարցին խաղաղ լուծումը իրականացնելու համար հասկնալի կը մնայ միայն Ղարաբաղի սահմաններէն դուրս գտնուող ու ռազմագիտական նկատառումներով հակակշռի տակ գտնուող հողերուն ճակատագրին քննարկումը, սակայն Ղարաբաղի ժողովուրդի գոյութեան ապահովութեան երաշխաւորութեամբ:

Հայ եւ թուրք յարաբերութեանց մերձեցման պատրուակին ներքեւ կայացած փորձերը միայն հայութեան շարքերը անջատելու եւ իրարու դէմ լարելու ծառայեցին: Հետեւաբար, միասնականութիւնը աւելի քան կենսական է այդ խնդրին շուրջ եւ ոչ մէկ անձ եւ խմբաւորում պէտք է փորձութեան ենթարկուի այդ բանակցութիւնները սեփականացնելու եւ հայ կեանքէն ներս բաժանումները խորացնելու:

Ամենէն ճիշդ ուղին պետութենէ պետութիւն բանակցութիւններն են, որոնք կրնան օրինական հիմքեր ունենալ:

Հայկական Դատի հետապնդումը մենաշնորհը չէ որեւէ կուսակցութեան կամ հատուածի, ան դատն է ամբողջ ժողովուրդի մը, որ ապրած է 20րդ դարու ամենէն ահաւոր Տեղասպանութիւնը:

Մի եւ ամբողջական ըլլալով հանդերձ այդ դատը, ունի երկու հիմնական ու լրացուցիչ բաժիններ.

Առաջինը՝ Տեղասպանութեան ճանաչումն է համաշխարհային չափանիշով եւ անոր պարտադրանքը այսօրուան թուրք պետութեան, որ իրաւական ժառանգորդն է Օսմանեան Կայսրութեան, որ կազմակերպեց ու գործադրեց այս Տեղասպանութիւնը:

Երկրորդ բաժինը՝ մեր պատմական հողերուն պահանջն է միջազգայնօրէն հաստատուած Ուիլսոնեան սահմաններով: Նոյնպէս, մեր մարդկային կորուստներու, ինչքի, մշակութային հարստութեանց արդար հատուցումը:

Կ'ողջունենք մեր պետութեան որոշումը Տեղասպանութեան ճանաչումը իր արտաքին քաղաքականութեան հարց դարձնելու համար: Կը հաւատանք, նոյն ատեն, թէ քաղաքական այդ արի ու խոհեմ քայլը իր դրական հետեւանքները ունեցաւ եւրոպական պետութեանց Նախաձեռնութեանց մէջ:

Քաղաքական այդ իրատեսութիւնը կը թելադրէ, որ հողային պահանջ-

Ներու իրագործումը միայն կարելի պիտի դառնայ խնդրոյ առարկայ ուժերու համեմատութեան շրջումով: Հետեւաբար, իրապաշտութիւն չէ ակնկալել այսօր հողային հատուցում մը. սակայն այդ ժամանակաւոր իրադրութիւնը պատճառ մը պէտք չէ դառնայ սկզբունքային զիջումի, այլ առիթ պէտք է դառնայ քաղաքական եւ սկզբունքային բանաձեւումի մը՝ անոր իրագործումը իբրեւ պարտք փոխանցելով սերունդէ սերունդ:

Այսօր քաղաքական ճնշումները եւ շրջանային ռազմագիտական տուեալները մեզի կը պարտադրեն համազգային ճիգերով նեցուկ կանգնիլ մեր պետութեան, որ շատ ծանր պայմաններ կը դիմագրաւէ: Եթէ օրէնքի արդար գործադրութիւնը եւ ռամկավարական սկզբունքներու կիրարկումը կը մնան պետութեան հաստդութեան տակ՝ տնտեսական դժուարութիւնները եւ անցման շրջանի ցաւերը բոլորովին վեր են պետութեան հաստդութենէն: Այդ պատճառաւ ալ արդէն արտագաղթը ստացած է աղիտալի համեմատութիւններ: Մեզի համար անընդունելի են մանր շահերէ մղուած անպարկեշտ պայքարները երկրին պետութեան եւ անոր ղեկավարութեան դէմ: Մամուլի ազատութիւնը սրբազան ըլլալով հանդերձ, ան պէտք է կիրարկուի գիտակցութեամբ եւ պատասխանատուութեամբ՝ միմիայն ազգային գերագոյն շահերուն նկատումով: Չկայ ազատութիւն՝ առանց պատասխանատուութեան:

Հաւատալով որ այս բոլոր հարցերու լրջութիւնը համակամութիւն կը ստեղծէ սփիւռքի եւ հայրենիքի մէջ, մենք կ'ուզենք մեր խօսքը աւարտել համեմատաբար աւելի համեստ առաջարկով մը՝ փոխել օտար ցնցոտիներով մեր երկրի պետական կարկտան հիմնը, որ հապճեպով որդեգրուեցաւ անկախութեան առաջին օրերուն: Վերահաստատել Արամ Խաչատրեանի հայրենաշունչ հզօր երաժշտութիւնը՝ նոր ժամանակները ցոլացնող բառերով:

Այս հաւաքը իրար ճանչնալու, իրարմով զօրանալու եւ մեր բոլոր հնարաւորութիւնները հայրենիքի տրամադրութեան ներքեւ դնելու առիթ պէտք է ըլլայ:

Մենք եկած ենք այդ հաւատքով եւ կը յուսանք հեռանալ այս քաղաքէն այդ հաւատքին իրականացումով:

*(Արտասանուած՝ Համահայկական Երկրորդ Խորհրդածողովին,
Երեւան, Մայիս 2002)*

**ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ, Ռ.Ա.Կ. ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ
ՊԱՏԱՍԽԱՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ՆԵՊԻՅ
ՊԸՐՐԻՒՆ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԵՋ ԱՐՁԱԿԱԾ ԿՈՉԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ**

Որպես հիմք ընդունելով Լիբանանի Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրիի ակնարկները եւ կոչերը Թուրքիա կատարած այցելութեան ընթացքին՝ Լիբանանի Ռամկավար Ազատական կուսակցութեան Գործադիր Վարչութիւնը յատուկ նիստով մը՝ Սայֆիի մէջ գտնուող կուսակցութեան կեդրոնին մէջ՝ քննարկեց Խորհրդարանի Նախագահին ակնարկները, որոնք արձակած էր Թուրքիոյ մէջ՝ ուշադրութեան հրաւիրելով այն վտանգները, որոնք կրնան բղխիլ այսպիսի կոչերէն:

Ժողովէն ետք, կուսակցութեան ատենապետ Երեսփոխան Յակոբ Գասարճեան հարց տուաւ թէ՛ ի՞նչպէս Խորհրդարանի Նախագահը՝ Թուրքիա այցելութեան ընթացքին, Խորհրդարանի, կառավարութեան, Լիբանանի եւ արաբներուն անունով կը պահանջէ՝ «Թուրք-արաբական համագործակցութեան վերադարձը տարածաշրջանին մէջ եւ թուրք-լիբանանեան յարաբերութիւններու ամրապնդումը»:

Ապա հարց տուաւ թէ՛ արդեօ՞ք Խորհրդարանի Նախագահը մոռցած է այն ռազմավարական յարաբերութիւնը, որ գոյութիւն ունեցած է անցեալին եւ այսօր ալ գոյութիւն ունի Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ, որ հիմնուած է արաբներու եւ լիբանանցիներու հանդէպ թշնամանքի վրայ:

Վերադառնալով պատմութեան, որ շատ ըսելիք ունի թրքական հոգեբանութեան եւ մտածողութեան մասին՝ Գասարճեան հարց տուաւ. «Խորհրդարանի Նախագահը մոռցա՞ծ է այն բազմաթիւ աղետները, որոնք տեղացի արաբական աշխարհին վրայ իբր արդիւնք օսմանեան-թրքական տիրապետութեան, որ 400 տարի շարունակ կոտորածներ, թալան ու անարգանք պատճառեց լիբանանցիներուն եւ մոռցա՞ւ այն կախաղանները, որոնք բարձրացուեցան Նահատակաց հրապարակին վրայ՝ վրէժը լուծելու յանուն ազատութեան եւ անկախութեան Նահատակուած անձնաւորութիւններուն:

Խորհրդարանի Նախագահը մոռցա՞ւ արդեօք Յայոց Ցեղասպանութիւնը, որ ճանչցուած է Լիբանանի ու անոր Խորհրդարանին կողմէ այն նիստին ընթացքին, զոր Նախագահած էր ինք՝ 5/9/2000ին, Թուրքիան մեղադրելով այս ցեղասպանութեան համար: Մոռցա՞ւ արդեօք, որ Խորհրդարանը հայ

երեսփոխաններ ալ կ'ընդգրկէ, որոնք կը ներկայացնեն հայերու մեծ համայնք մը, որ կը կազմէ կենդանի զարկերակը Լիբանանեան հասարակութեան, տնտեսական թէ քաղաքական առումներով:

Գասարճեան հարց տուաւ թէ խորհրդարանի նախագահը ինչպէ՞ս կրնայ իր նեցուկը յայտնել «Եւրոմիութիւն մուտք գործելու Թուրքիոյ ջանքերուն, առանց նախապայմանի», մինչ Ֆրանսայի Արտաքին Գործոց նախարար Միշէլ Պարնիէ, որ իբր ֆրանսացի-եւրոպացի եւ ուղղակիօրէն պատասխանատուն եւրոպական թղթածրարին, որուն երկիրը այս Միութեան հիմնական սիւներէն է, երէկ յայտարարեց թէ՝ «Ֆրանսա պիտի պահանջէ Թուրքիոյ կողմէ 1915-1923 թուականներուն գործադրուած Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը, անմիջապէս որ սկսին բանակցութիւնները այս Միութեան մէջ մուտք գործելու շուրջ»

Գասարճեան ըսաւ. «Խորհրդարանի նախագահին կը յայտնենք թէ ինչ-որ պատահած է թուրք-օսմանցիներու ժամանակաշրջանին, թիւրիմացութիւն կամ սխալ հասկացողութիւն մը չէ եղած, այլ՝ մարդկային եութենէ զրկուելէ ետք իրենց կողմէ ծրագրուած եւ իրագործուած ոճրային գործողութիւններ, որոնց զոհ ինկան արաբները, լիբանանցիները եւ հայերը: Պատմութիւնը էջ մը դարձնել չէ, այլ ապահով ապագայի համար դաս մը»:

Դեկտեմբեր 2004

Խօսքիս սկզբնաւորութեան, իմ խորին շնորհակալութիւնը կ'ուղղեմ Ռաֆիք Զարիրիին, որ սիրայօժար ընդունեց այս ճաշկերոյթին հովանաւորութիւնը, անձամբ ներկայ գտնուելով, ինչ որ մեզի համար փայփայելի է, նաեւ շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք իրենց բարոյական ու նիւթական աջակցութիւնը բերին, եւ ի մասնաւորի Թ.Մ.Մ.-ի Տիկնանց Վարչութեան, որ գործակցեցաւ կուսակցութեան գործադիր մարմնին հետ, որպէսզի այս գիշերը դառնայ յաջող: Շնորհակալութիւն նաեւ Méditerranée-ին, գլխաւորութեամբ Տոքթ. Սուրթաֆա Ռազիանիին, որ որդեգրեց այս երեկոն:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ծնունդին 83րդ տարեդարձը մեզի համար յիշատակելի ու սիրելի թուական մըն է: 1 Դոկտեմբեր 2004ին, նշեցինք այդ տարեդարձը՝ «Կուսակցութեան Օր» կարգախօսին տակ, իսկ այսօր, ահա, երկրորդ անգամ կը հանդիպինք, յիշելու ոչ միայն մեր անցեալի տառապանքները, այլ նաեւ ուրախութիւնները:

Մեր կուսակցութիւնը երիտասարդ չէ, ինչպէս որ կը կարծեն ոմանք, այլ ունի իր խոր պատմական արմատները: Ան ծնունդ առած է 1921ին համախոհ կազմակերպութիւններու միաձուլումով, մտաւորականներու եւ լեզվափոխականներու գլխաւորութեամբ, անոնց նախահիմքը ըլլալով Արմենական Կուսակցութիւնը, 1885ին, Վանի մէջ:

Կուսակցութեան հիմնական նպատակ-սկզբունքը եղած է ու շարունակէ մնալ հայ ժողովուրդին յափշտակուած իրաւունքներուն վերատիրացումը բոլոր միջոցներով, ունենալու իր անկախ պետութիւնը պատմական ամբողջական տարածքով եւ շարունակելու այս գործընթացը, մինչեւ որ յաջողութեամբ պսակուին նպատակները, ինչպէս նաեւ պահպանելու մեր մշակութային ու լեզուական հարստութիւնները եւ նաեւ Թուրքիոյ ընդունիլ տալու Զայոց Ցեղասպանութեան կատարումը:

Այս հիմունքով ալ, Լիբանանի մէջ Ռ.Ա.Կ.-ի գործունեութիւնը հայոց պատմութեան տէր կանգնիլն էր, իսկ քանի որ Լիբանան արաբական հրապարակ մըն է, որ ծանօթ է իր բարեացակամութեամբը ներընդունելու մշակոյթներ, Ռ.Ա.Կ.-ի յանձնառութիւնն է հաւատարիմ մնալ ատոնց եւ յարգել իր այդ սկզբունքները, մուտք գործելով անոր քաղաքական կեանքին մէջ, համագործակցութեամբը հայկական այլ կուսակցութեանց:

Իսկ քանի հայկական մշակոյթն ու լեզուն պահելը իր ռազմավարական

Նպատակներն է, ան հիմնեց Թեքեան Մշակութային Միությունն ու Թեքեան վարժարանը:

Նոյնիսկ նախքան իր պաշտոնական արձանագրությունը, որ կատարուեցաւ ընթացիկ տարուան կիսուն, Ռ.Ա.Կ.-ը գործած էր եւ կը շարունակէ գործել «Լիբանանցիներ ենք հայկական ծագումով» կարգախօսով: Այդ իսկ պատճառով կուսակցութիւնը յանձնառու էր եւ կը շարունակէ յանձնառու մնալ լիբանանեան այն սկզբունքներուն, որոնք կը վերաբերին իսրայելեան բռնագրաւումներուն դէմ դիմադրութեան զօրակցութեան, խօսքի ազատութիւններու պաշտպանութեան, Լիբանանի գերիշխանութեան ու անկախութեան, ինչպէս նաեւ լիբանանեան Սահմանադրութեան յարգումին ու անոր գործադրութեան:

Այդ սկզբունքներուն կառչիլը մեզ մղեց պաշտոնապէս, շուրջ 4 տարի առաջ, համագործակցութիւն սկսելու միւս բոլոր ազգային եւ կրօնական հոսանքներուն հետ, որդեգրելով երկխօսութեան եւ համախոհութեան լեզու մը: Մեր խօսքը հասցնելու համար ալ հիմնեցինք մեր օրաթերթ «Չարթօնք»-ի արաբերէն յաւելումածը, որպէսզի նաեւ մեր Դատը հասնի լիբանանեան հանրութեան, ձեռնարկելով նաեւ քաղաքական, ընկերային եւ մշակութային միջոցառումներ:

Այս ձեւով հաստատեցինք մեր մերժումը քաղաքակրթութեանց առճակատումին, նախընտրելով երկխօսութեան ոճը, որպէսզի քայլ պահենք հայրենիքի շինութեան գոյերթին հետ՝ ամուր հիմքերու վրայ, որուն համար ալ, օրինակ, Թեքեանի Տիկնանց Վարչութիւնը իր օժանդակութիւնը բերաւ «Ֆըթթ»-ի տօնին առիթով բարեսիրական ու մարդասիրական նպաստներ ընծայելով որբերուն ու կարիքաւորներուն. Նոյն ձեւով, ան իր ծառայութիւնները մատուցանեց հայ թէ քրիստոնեայ կարիքաւոր ծերերուն ու երախաներուն:

Քանի որ լիբանանեան քաղաքական կեանքի դերակատարներն ենք, կ'ըսենք վարչապետ Օմար Զարամէի կառավարութեան, թէ չենք ընդդիմաւար անոր պարզապէս ընդդիմացած ըլլալու համար, թեւ որոշ վերապահութիւններ ունինք անոր ներկայացուցչական պատկերին դէմ: Մենք լիայոյս ենք, որ ան դրական արդիւնքներով հանդէս կու գայ, ինչ կը վերաբերի ժողովուրդի ապրուստին ու կենցաղին: Նաեւ կ'ակնկալենք որ ան մշակէ արդար ընտրական օրէնք մը, որուն հանդէպ մեր դիրքորոշումը պիտի հրապարակենք երբ օրէնքի նախագիծը ներկայացուի կառավարութեան կողմէ:

Այս առիթով կը յայտարարենք, որ չունինք բարդոյթներ կամ մտավախութիւններ ընտրական շրջանները ընդհանրապէս բաժնելու ու Պէյրութը մասնաւորաբար: Յամենայնդէպս, մեր կեցուածքը ատենին կը յստակա-

ցնենք այս կառավարության նկատմամբ: Եթե թերանայ՝ կը քննադատենք, եթե յաջողի՝ կը զօրակցինք:

Ինչ կը վերաբերի ընտրական մեր դաշինքներուն, Հարիրիին կը յայտնենք հաւատարմութեան մեր խօսքը, քանի ան կը դասուի իսկական ազգային անձնաւորութիւններու շարքին:

1998ին, երբ կառավարութենէն դուրս եկաք, յարգելի պրն. Հարիրի, մենք առաջինն էինք, որ Ձեր կողքին մնացինք, կառավարութենէն ներս թէ դուրս, իսկ 2000ի ընտրութիւններուն, Ձեզի հետ միասին հասանք խորհրդարան, միշտ Ձեր կողքին մնալով: Մենք գիտենք այն փոթորիկները, զոր դիմագրաւեցիք ու կը դիմագրաւէք, բայց մենք մնացինք Ձեզի հետ, որովհետեւ հաւատացինք Ձեր ազգային-քաղաքական ուղեգիծին եւ այն իսկայ ներդրումներուն, զորս իրականացուցիք վերակառուցանելու երկիրը ու զայն հասցնելու իր շրջանային ու միջազգային յարգելի մակարդակներուն:

Կառավարութենէն դուրս գալու Ձեր որոշումէն ետք, որուն պատճառներուն շատեր ծանօթ են, կ'ըսենք թէ մենք կը մնանք Ձեզի հետ, որովհետեւ հաւատարիմ կը մնանք անոր որուն հետ համագործակցեցանք եւ որուն հետը մնալ որոշած ենք:

Հրապարակայնօրէն կ'ըսենք թէ կը մնանք դաշնակից Ձեզի, հակառակ անոր որ լիբանանահայ համայնքը նշանակումներու ընթացքին կարգ մը պարագաներու անտեսուած մնաց:

Այս բարեպատեհ առիթէն օգտուելով, կ'ըսենք՝ Ռամկավարները որոշած են իրենց ընտրարշաւը մղել Ձեր դաշնակցութեամբ, ինչպէս անցեալին, նաեւ հիմա ու միշտ:

Լիբանանն ու արաբական աշխարհը կը գտնուին վտանգաւոր մարտահրաւերներու դիմաց: Տարօրինակ չէ որ յատկապէս Լիբանանը, հետը նաեւ Սուրիան, կը գտնուին միջազգային թիւ 1559 որոշումի ճնշումին տակ: Այս իրադրութեան լոյսին տակ, կուսակցութիւնը կը զօրակցի նաեւ Սուրիոյ, որովհետեւ լիբանանեան քաղաքական ընտրանքին մէջ, հարկաւոր է ըլլալ միեւնոյն ուղեգիծին վրայ Դամասկոսի հետ, որուն համար անհրաժեշտ է գործել խոհեմութեամբ, դուրս գալու համար ներքին տագնապներէն, որպէսզի հասկացողութեամբ ու համախոհութեամբ քաղաքական բոլոր կողմերուն հետ, ինչպէս անկախութեան տօնին առիթով կոչ ըրաւ հանրապետութեան Նախագահ Էմիլ Լահուդը, որդեգրուի յստակ ռազմավարական դիրք մը, փրկելու Լիբանանը թիւ 1559 որոշումի վտանգներէն:

*(Արտասանուած՝ Ռ.Ա.Կ.-ի 83 ամեակի հանդիսութեան, Պէյրութ, «Պիէլ»
համալիր, 27 Նոյեմբեր 2004)*

Ողջոյն տոկունութեան մայրաքաղաք Պէյրութէն՝ համբերութեան ու դիմադրութեան քաղաքամայր Երեւանին:

Սիրոյ ողջոյն լիբանանցիներէն իրենց հայ եղբայրներուն, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիէն իր հայ պաշտօնակիցին՝ Արթուր Բաղդասարեանին՝ եւ իր միջոցով, հայկական խորհրդարանին:

Լիբանանի խորհրդարանի նախագահը, այս կարելոր ու մեծ իրադարձութեան առիթով, ներկայացուցչական պատասխանատուութիւն յանձնեց ինծի, նախանձախնդիր ըլլալով որ Լիբանանը ներկայ գտնուի Հայաստանի Ազգային Ժողովի հիմնադրութեան 15րդ տարեդարձին, երբ խորհրդային Միութեան կազմալուծումէն ետք Հայաստանը տիրացաւ իր անկախութեան:

Նախագահ Պըրրիի նախանձախնդրութիւնը ձեւականութեան կամ նոյնիսկ քաղաքական սիրալիրութեան մը արդիւնքը չէ, այլ խոր համոզումի մը, որ Լիբանանի խորհրդարանը ըլլայ մնայուն կամուրջը աշխարհի խորհրդարաններուն հետ, որոնցմէ է Հայաստանի խորհրդարանը:

Այս ծիրէն ներս, բազմաթիւ միջոցներ ու կարելիութիւններ գոյացան, որ լիբանանեան ու հայկական խորհրդարանները իրենց բարեկամական, համագործակցական ու մշակութային կապերը արդիւնաւետ կերպով զարգացնեն, որոշապէս զոյգ երկիրներու միջեւ յարաբերութիւնները աւելի զօրացնելով եւ ամրացնելով:

Բազմաթիւ են մեզ միացնող հասարակ յայտարարները, ցաւերէն մինչեւ դիմադրականութիւն, ապա անիրաւութիւնը ու զայն մերժելու վճռականութիւնը, հոսակ՝ յաղթահարումը խոցեցումն եւ, վերջապէս, դէպի ազատ կեանքը:

Պէյրութի եւ Երեւանի միջեւ կայ նաեւ մարդկային հասարակաց գիծ մը, լիբանանցի մարդը՝ հայու ծագումով, զոր լիբանանեան հողը հիւրընկալեց, Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած կոտորածներէն ետք, երբ հազարաւոր լիբանանցիներ փրկուելով անոր լուծէն, ապաստան տուին Ժողովուրդի մը, որ պահանջեց իր իրաւունքը ապրելու՝ չմեռնելու համար, տարագիր չդառնալու համար:

Մեկնելով այս բոլորէն, անհրաժեշտ էր որ հոս գտնուէինք եւ Հայաստանի հետ բաժնէինք անոր խորհրդարանին հիմնադրութեան 15րդ տարեդարձի տօնակատարութեան ուրախութիւնը, եւ, վերջապէս, որպէսզի իրականանայ Ժողովրդավարութիւնը Ձեր յարգելի անձնաւորութիւններուն ընդմեջէն:

Կրկին անգամ Ձեզի կը հաւաստենք փոխադարձ համագործակցութեան մեր ծգտումն ու պատրաստակամութիւնը, որպէսզի ամրապնդենք մեր երկու երկիրներուն միջեւ մշակութային ու զբօսաշրջիկային կապերը:

Արդարեւ, Պէյրութի եւ Երեւանի միջեւ կան ստեղծագործական մտքի ու կեանքի գեղեցիկ եւ աւանդական առնչութիւններ:

Մեր կարծիքով, փոխադարձ համագործակցութեան ճամբով, պէտք է լիբանանեան-հայաստանեան բարեկամական կապերը առաւել եւս զօրացնենք, խորհրդարանական համապատասխան յանձնախումբերու միջոցով:

Այս առումով, Լիբանանի խորհրդարանը պատիւ ըրած է ինծի վստահելու Լիբանան-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան յանձնախումբին նախագահութիւնը, որուն մէջ կան անդամներ, որոնք իրապէ՛ս խանդավառուած են եւ հաւատքով պատրաստ են համագործակցութեան նպատակները իրականացնելու ուղղութեամբ՝ նոր միտքեր ու միջոցներ գտնելու աշխատանքներուն լծուիլ:

Ասկէ մեկնելով, Հայաստանի խորհրդարանի հայաստանեան-լիբանանեան բարեկամութեան յանձնախումբին կոչ կ'ընենք ճիգեր գործադրել առաւել խորացնելու եւ արդիւնաւորելու երկու երկիրներուն բարեկամական կապերը, յուսալով որ տօնական այս արարողութիւններէն դուրս կու գանք շինիչ ծրագիրներով, որոնք յառաջիկային դրականօրէն պէտք է դրսեւորուին:

Առ այդ, Հայաստանի երիտասարդ խորհրդարանին կը մաղթեմ յարատեւութիւն եւ յաջողութիւն, ի բարօրութիւն լաւագոյն եւ առաւել բարգաւաճումի մը:

Կեցցե՛ք հայրենիքով եւ ժողովուրդով

Կեցցե՛ն Հայաստանն ու Լիբանանը:

*(Արտասանուած՝ Հայաստանի խորհրդարանի 15ամեակին առիթով
Երեւան, 1 Նոյեմբեր 2005ին)*

1921 Յոկտեմբեր 1ին, Պոլսոյ մէջ, քաղաքական մի քանի կազմակերպութիւններու միաձուլումով հիմնուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Ռ.Ա.Կ.-ի ծնունդը ազգային եւ միջազգային պայմաններու բնական արդիւնք էր: Ազգային միասնականութեան, իրատես հայրենասիրութեան եւ ազատական ռամկավարութեան ջատագով քաղաքական կուսակցութեան մը գոյառումը անհրաժեշտութիւն էր: Այդ անհրաժեշտութեան գիտակցումով, Ռ.Ա.Կ.-ի տեսլապաշտ հիմնադիրները, հայութեան ծառայութեան ի խնդիր, կեանքի կոչեցին Նոր քաղաքական հոսանք մը, որ ահա՛ արդէն 90 տարի շարունակ կը գործէ հայ իրականութեան մէջ:

Թէեւ Ռ.Ա.Կ.-ը առաւելաբար սփիւռքի ծնունդ է, սակայն անոր հիմնադրութեան Նախապատմութիւնը սկիզբ առած է հայ ազատագրական պայքարի դրօշակակիր Արմենական Կուսակցութենէն եւ ռամկավարական, ազատական ու յեղափոխական տարբեր հոսանքներէն ու կազմակերպութիւններէն: Այդ կուսակցութիւններուն գաղափարախօսութիւնը ժառանգելով հանդերձ, Ռ.Ա.Կ.-ի պատմութիւնը կերտուած է գլխաւորապէս սփիւռքի տարածքին: Գաղթաշխարհի հայութեան ազգային-քաղաքական կեանքի գլխաւոր հիմնահարցերը՝ Խ. Յայաստանի հետ յարաբերութիւններ, Յամաշխարհային Երկրորդ Պատերազմ, հայրենադարձութիւն, եկեղեցական տագնապ, Յայ Դատի հետապնդում, ազգապահպանում եւ ազգային միասնականութիւն, պայմանաւորած են Ռ.Ա.Կ.-ի գործունեութեան հիմնական ուղղութիւնները: Յայրենիքին, հայ ժողովուրդին եւ պետականութեան ծառայելու Ռ.Ա.Կ.-ի անխախտ հաւատամքը, ամբողջ 70 տարի, 1921էն 1991, դիմացած է բոլոր փորձութիւններուն եւ դժուարութիւններուն:

Յակառակ միջազգային աննպաստ պայմաններուն, սփիւռքահայ կեանքի ելեւեջներուն եւ ազգային ներքին պայքարներուն, կուսակցութիւնը բնաւ չէ շեղած իր գաղափարական սկզբունքներէն եւ առողջ հայրենասիրութեան ուղեգիծէն: Յայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան ապահովումը, հայութեան վերապրումի ճիգերուն արդիւնաւորումը, գաղթաշխարհի ազգային կեանքի կազմակերպումը, Յայ Դատի հետապնդումը եւ հայրենիքի հետ աննախապայման յարաբերութիւններու զարգացումը եղած են ու կը մնան Ռ.Ա.Կ.-ի գոյութեան հիմնական շարժառիթը:

Ռ.Ա.Կ.-ը միշտ հաւատացած է, թէ գաղթաշխարհի մեր ցրուածութեան

մեջ, Հայաստանեայց Եկեղեցին՝ իր Մայր Աթոռով, Հ.Բ.Ը. Միութիւնը՝ իր հիմնադրութենէն մինչեւ օրս, յաւերժական անքակտելի կապերով կառչած են իրարու: Պայմաններու բերումով հայրենիքին ունեցած վարչաձեւին մասին որքան ալ տարբեր ըլլան մեր ըմբռնումները, կ'ոգեւորուինք այն փառապանծ իրականութեամբ, թէ մեր ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը այսօր տէրն է իր հայրերու երկրին, որուն համար դարերով պայքարեր են եւրոպական ատեաններուն առջեւ Արշակ Զօպանեանը եւ իր գաղափարի ընկերները, Անդրանիկն ու իր կորիւնները, Պօղոս Նուպար Փաշան եւ իր համախոհ գաղափարակիցները: Ասոնք են մեր բարձրագոյն սրբութիւնները՝ Հայաստանեայց Եկեղեցին՝ իր անսասան Մայր Աթոռով, հայրենի հողը՝ իր վրայ ապրող ժողովուրդով, Հայաստանի Հանրապետութեամբ եւ իր դրօշով:

Յորելեակական հանդիսութիւններուն ընթացքին, բնականաբար, մենք պէտք է ոգեկոչենք մեր հերոսները եւ յարգանքի տուրք մատուցանենք մեր հիմնադիրներուն ու մեզմէ առ յաւետ հեռացած ղեկավար ընկերներուն անմեռ յիշատակին: Բայց պէտք է նաեւ առիթը օգտագործենք վերագնահատելու եւ վերարժեւորելու մեր անցած ուղին, արձանագրելու մեր յաջողութիւնները, ինքնաքննադատաբար ընդունելու մեր սխալները եւ լրջօրէն ծրագրելու ապագայ մեր գործունեութիւնը: Ժողովրդավարական եւ ազատական արժէքներ դաւանող մեր կուսակցութիւնը ջատագովն է խօսքի ազատութեան, հետեւաբար այդ սկզբունքը պէտք է կիրարկէ առաջին հերթին իր ներքին կառոյցին մէջ:

Ինչպէս Ռ.Ա.Կ.-ի պատմութիւնը հաստատած է, իր գործունեութեան առանցքը Նոր սերունդն է, ամենուրեք: Սակայն ազգայնօրէն դաստիարակուած ու մարզուած Նոր սերունդն է, որ կոչուած է կրելու ազգային գոյատեւման ու զարգացման դրօշը ու զայն փոխանցելու իր յաջորդներուն: Դժբախտաբար, որեւէ ատենէ աւելի այսօր բոլորիս ծանօթ պատճառներով խնդրական է սփիւռքահայ Նոր սերունդին համար այլապէս այնքան բնական դերին, պարտականութեան կատարումը:

Առարկայական այս դատումն է, որ մղած է կուսակցութիւնս աւելի քան կէս դար առաջ իր ուշադրութիւնը կեդրոնացնելու Նոր սերունդին ու երիտասարդութեան վրայ՝ հիմը դնելով Վահան Թէքէեան Վարժարանին: Այս է պատճառը, որ իր հիմնադրութենէն ի վեր Թ.Մ.Մ.-ի ղեկավարութիւնը դրական հոգածութեամբ կը հովանաւորէ կուսակցական միակ վարժարանին իւրաքանչիւր հեւքը: Վերջին երեք տասնամեակին գաղափարական քարոզչութիւն զլացուած էր հաղորդել, որուն պատճառով ալ ջահակիրներ չունեցանք, թերութիւններ ալ տեղի ունեցան, սակայն ես կը հաւատամ, որ յետայսու վարժարանին նիւթական եւ բարոյական հոգածութիւնը մեզմէ

իւրաքանչիւրին ճիշտին պարտքը պիտի ըլլայ, յանուն Ռ.Ա.Կ.-ի յառաջիկայ պայծառ ապագային:

Արդ, մեր կուսակցութեան պատմութիւնը պետք է բաժնենք երկու ժամանակաշրջաններու: Առաջին ժամանակաշրջանը՝ 1921էն 1991, իսկ երկրորդ ժամանակաշրջանը՝ 1991էն մինչ այսօր: Առաջին ժամանակաշրջանը կուսակցութեան աշխարհատարած շրջանակներու կազմակերպման ու զօրացման, մամուլի տարածման, գաղափարական բիւրեղացման եւ մանաւանդ հայրենասիրական պայքարի տարիներ էին: Այդ ժամանակաշրջանին ի յայտ եկան համակիր հսկայական զանգուածներուն առաջնորդութիւն տալու Ռ.Ա.Կ.-ի կարողութիւնները: Ռ.Ա.Կ.-ի պատմութեան երկրորդ ժամանակաշրջանը՝ Հայաստանի անկախութեան հռչակման, հայրենիքի մէջ ժողովրդավարական կարգերու ու բազմակուսակցական համակարգի հաստատման, ինչպէս նաեւ մեր կուսակցութեան հայրենադարձութեան տարիներ էին:

Արդարեւ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան 18րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին, որ տեղի ունեցաւ 1991ին Մոնթրէալի մէջ, որոշուեցաւ ստեղծել Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, որուն առաջին տարիներու գործունեութեան տպաւորիչ յաջողութիւններն ու կազմակերպական հզօրացումը դրական ազդեցութիւն թողուցին արտասահմանի մեր շրջանակներուն վրայ: Ստեղծելով Հ.Ռ.Ա.Կ.-ը, մենք համոզուած էինք որ ինչպէս որեւէ գաղափարախօսութիւն, ազատական ռամկավարութիւնը նոյնպէս կիրարկելի է միայն հայրենիքի մէջ: Պետական կեանքին լիարժեքօրէն մասնակցող կուսակցութիւններ, ընտրութիւններու միջոցով, կրնան իրենց գաղափարախօսութիւնը եւ ընտրական ծրագիրը իրականութիւն դարձնել: Մենք արդար հպարտութիւն կ'ապրէինք ու կը շարունակենք ապրիլ տեսնելով մեր գաղափարախօսութեան տարածումը Հայաստանի մէջ, պետական մակարդակի վրայ, ազատ շուկայի տնտեսութեան որդեգրումով:

Դժբախտաբար, 1995ին, Կիպրոսի մէջ գումարուած Ռ.Ա.Կ. 19րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին յաջորդած տարիներուն, ականատեսը եղանք բաժանումներու, երկփեղկումներու եւ խռովութիւններու, որոնք ժխտական անդրադարձ ունեցան հաւաքական մեր աշխատանքին վրայ: Հակառակ անոր որ գաղափարախօսական տարակարծութիւններու մակարդակի վրայ չէին այդ վեճերը, սակայն որոշ իմաստով մեր աւանդական կեցուածքներէն շեղող երեւոյթներ ալ արձանագրուեցան: Փարիզի մէջ 2001ին տեղի ունեցած հաշտութիւնը փորձեց վերջ տալ պառակտումին՝ կուսակցական վերածնունդի յոյսեր ներշնչելով բոլորին: Բայց պետք է

խոստովանինք որ կուսակցութիւնը ի վիճակի չեղաւ դիմակայելու ազգային-քաղաքական նոր կացութիւնները եւ ենթարկուեցաւ կազմակերպական ցնցումներու: Սխալներ գործեցինք բոլորս, անխտիր:

Անհուն հրճուանքով կը յայտնեմ նաեւ, թէ այս տարի յոբելեանական 75 ամեակն է Ռ.Ա.Կ.-ի միակ պաշտօնական օրաթերթ «Չարթօնք»ին: Մեր ընթերցողները քաջածանօթ են, թէ անցեալ 74 տարիներուն, ինչպիսի ճգնաժամեր դիմակալեց թերթը, որուն ընդմէջէն ընթացաւ ճակատաբաց, շնորհիւ Թ.Մ.Մ.-ի Հիմնադիրներու Մարմնի եւ Ռ.Ա.Կ.-ի ղեկավարութեան բազմաթիւ զոհողութիւններուն, որոնք աներեր հաւատքով առաջնորդեցին «Չարթօնք»ը դէպի մերօրեայ պայմանները:

Այսօր, իր հիմնադրութեան 75 ամեակի սեմին, «Չարթօնք»ի տնօրէնութիւնն ու խմբագրութիւնը ոչ միայն վճռած են անսասան հաւատքով շարունակել իրենց առաքելութիւնը առանց տարուելու իրենց դէմ ցցուող խոչընդոտներէն, այլեւ արդիականացած նոր կայքէջով, արաբերէնով «Չարթօնք-Յաւելուած»ի վերահրատարակութեամբ, ինչու չէ նաեւ անգլերէն յաւելուածներով՝ խորխտաբար կը ներկայանան ընթերցասէր հանրութեան:

Սիրելի Ընկերուհիներ եւ Ընկերներ,

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ուժական կառոյցը տասնամեակներ շարունակ գործած է Լիբանանի մէջ եւ այսօր նոյնպէս կը շարունակէ իր քաղաքական գործունեութիւնը: Մեր շրջանակը, մանաւանդ վերջին տասնամեակներուն, շատ մօտէն առնչուեցաւ Լիբանանի ներքին քաղաքական կեանքին: Մենք պէտք է շարունակենք այս ուղղութիւնը:

Իբրեւ Լիբանանի խաղաղ, շինարար եւ օրինական քաղաքացիներ, մենք պիտի շարունակենք գործօն մասնակցութիւն ունենալ ասպնջական Լիբանանի քաղաքական, ընկերային, մշակութային եւ համայնքային կեանքին, իսկ իբրեւ ռամկավար-ազատականներ՝ համաձայն մեր սկզբունքներուն, ազատ պիտի ըլլանք քաղաքական մեր ընտրանքներուն մէջ: Մենք նոյն հետեւողականութեամբ պիտի համագործակցինք գաղափարակից այն բոլոր կուսակցութիւններուն եւ հոսանքներուն հետ, որոնք կը հաւատան Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան եւ ազատութեան: Մենք յանձնառու կը մնանք լիբանանեան համայնքներու համակեցութեան, երկխօսութեան եւ ազգային համաձայնութեան:

Ռ.Ա.Կ.-ի 90 ամեակը կը նշենք շրջադարձային հանգրուանի մը նախաշեմին: Համագգային տազնապները եւ հայութեան դիմագրաւած մարտահրաւերները կը պահանջեն բարձր գիտակցութիւն մեր ստանձնած պատասխանատուութեանց եւ առաքելութեան: Փոխադարձ հանդուրժողականութեամբ եւ իրերհասկացողութեամբ մենք պէտք է վերականգնենք Ռ.Ա.Կ.-ի

Նախկին հմայքը, զօրացնենք ու արդիականացնենք մեր կառույցը: Մենք պետք է վճռականությամբ, համերաշխական ոգիով, միասնականությամբ եւ ամրակուռ շարքերով լծուինք հայրենասուներ գործունեության:

Այս բոլորը կարենալ հնարաւոր դարձնելու համար, Ռ.Ա.Կ.-ը իր ոյժը, իր ներշնչումը առաւ իր բոլոր անդամներէն, ձեզմէ բոլորէդ անխտիր: Դուք բոլորդ ալ երկար տարիներ համոզումով, գիտակցութեամբ, հաւատքով անդամակցած էք Ռ.Ա.Կ.-ին ու բերած ձեր նիւթական ու բարոյական օժանդակութիւնը անոր: Այս միաձոյլ, ներդաշնակ եւ առողջ հաւաքականութիւնն է, որ եղած է անընկճելի ոյժը Ռ.Ա.Կ.-ին եւ ան դիմացած է 90 տարիներ ամէն փորձութեան, ամէն դժուարութեան, որոնք հարուածած են մեր կուսակցութիւնը, սակայն ան միշտ ալ աւելի զօրաւոր, աւելի ուժեղ, աւելի արդիւնաւետ դուրս եկած է մեր կազմակերպութիւնը սարսող բոլոր դէպքերէն:

90 ամեակի առիթով, այս ամպիոնէն ես կոչ կ'ուղղեմ մեր բովանդակ շրջանակներուն եւ հաւատաւոր ընկերներուն, վերանորոգելու իրենց ուխտը եւ դարձեալ համախմբուելու կապոյտ դրօշին ներքեւ՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին:

Կեցցե՛՛ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը

Կեցցե՛՛ն Հայ Ժողովուրդը եւ Հայոց անկախ Հայրենիքը:

*(Արտասանուած՝ Ռ.Ա.Կ.-ի 90 ամեակի հանդիսութեան, Պէյրուք,
Հոկտեմբեր 2012)*

Սիրելի ընկերուհիներ եւ ընկերներ: «Չարթունք»ի յարգելի բարեկամուհիներ եւ բարեկամներ,

Բարի եկած էք ձեր տունը՝ Թեքեան Կեդրոն: Բարի եկած էք միասնաբար տօնելու բոլորիս սիրելի «Չարթունք»ին տարեդարձը:

Ձեր ու մեր թերթը այսօր 78 տարեկան է: Ռամկավար Ազատական Կուսակցութեան «Չարթունք» պաշտօնաթերթի երկունքը եղած է երկար, որպէսզի ան լոյս տեսնէ հաստատ հիմքերու վրայ ու յարատեւէ հասնելով իր այսօրուայ պատուաբեր 78 ամեակին:

Արդարեւ, կուսակցական պաշտօնաթերթ մը ունենալու պահանջը զգացուած է այն առաջին օրէն երբ Կիլիկիոյ աղետէն ու պարպումէն եւ բազմահազար հայերու Սուրիա եւ Լիբանան հաստատուելէն ետք, 1922ին իսկ Ռամկավար Ազատական Կուսակցութեան կորիզ մը կար Պէյրութի մէջ:

1924ին արդէն Յ. Յ. Դաշնակցութիւնը ուներ իր «Փիւնիկ» թերթը: Գոյութիւն ուներ նաեւ այս վերջինին հակադրուող անհատական թերթ մը՝ «Լիբանան», սակայն Ռ.Ա.Կ.-ը չուներ իր սեփական թերթը: Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի շրջանակին մէջ սակայն առկայ էր սեփական մամուլ ունենալու փափաքը:

Հոկտեմբեր 1923ին, Հալէպի մէջ գումարուող Ռ.Ա.Կ.-ի Սուրիոյ Շրջանային Պատգամաւորական Ժողովին Պէյրութի մասնաճիւղը կ'առաջադրէր «Սուրիոյ շրջանին համար մասնաւոր թերթ մը հրատարակել»: 1925ին, Պէյրութի Ռ.Ա.Կ.-ի մասնաճիւղի անդամական ժողովներուն կրկին նիւթ կ'ըլլայ թերթի հարցը:

1926ի սկիզբը Պէյրութ կ'այցելէ Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Հրաչ Երուանդ եւ իր ներկայութեամբ գումարուած Ռ.Ա.Կ.-ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան 29 Յունուար 1926ի նիստին մամուլի հարցը լրջօրէն կը քննուի:

Հարցը օրակարգի վրայ կը մնայ, մինչ կուսակցական վերին մարմիններ նախապատուութիւն կու տան Հալէպին: Արդարեւ, Հալէպի մէջ է որ 1927ին լոյս կը տեսնէ Ռ.Ա.Կ.-ի «Եփրատ» եռօրեան, որ հետագային օրաթերթի կը վերածուի: Ռ.Ա.Կ. Պէյրութի մասնաճիւղը կը ջանայ «Եփրատ»ով լեցնել Լիբանանի շրջանակի իր մամուլի բացը, առանց հրաժարելու սեփական թերթի բաղձանքէն:

1933 թուականին փոթորկած էր սփիւռքահայ կեանքը (դրօշակի խնդիր,

Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութիւն, ցեղակրօններու կազմութիւն, եւայլն):

Լիբանանի մէջ ալ սպաննուած էր Միհրան Աղազարեանը, ինչ որ մղած էր ֆրանսական հոգատար իշխանութիւնը հաշտ աչքով չդիտելու հայ քաղաքական կազմակերպութեանց գործունեութիւնը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Կառավարութեան հրամանով ջնջուեցան կուսակցութիւնները ու շրջան մը Ռ.Ա.Կ.-ը Մերսինի Զայրենակցական Միութիւն անուան տակ հրապարակային եւ ներքին հանդիպումներ ունեցաւ:

23 Յունիս 1935ին, Ռ.Ա.Կ.-ի կեդրոնէն «բացառիկ իրաւասութիւններով» լիազօրուած Միհրան Տամատեան կը կազմէ նշանակովի Ռ.Ա.Կ. Լիբանանի եւ Զարաւային Սուրիոյ Շրջանային Վարչութիւն մը, կեդրոն ունենալով Պէյրութը:

Միհրան Տամատեան եւ ուրիշ գաղափարակիցներ, Պէյրութի իրենց տուններուն մէջ, կ'արծարծէին հրատարակութիւնը ծրագրուած թերթին հիմնադրման, անունի, ուղղութեան եւ անոր տեւականացման ու խմբագրարտօնատէր որոշելու հարցերը: Վերոնշեալ Շրջանային Վարչութիւնն էր, որ խորհրդակցական ժողովի հրաւիրեց մտաւորական եւ ղեկավար ընկերներ, որոնցմէ կազմուեցաւ թերթի մը հրատարակութեան համար հիմնադիր մարմին մը:

Մարմինն նկատի առած հարցերն էին.

Զայթայթում տպագրական կապարէ տառերու (ինչպէս գիտէք այդ օրերուն չկար անշուշտ համակարգիչ եւ այսօրուայ արհեստագիտութիւնը),

Պատրաստել 500 լիթ. ոսկի՝ պետութեան մօտ *սեփոզիթ* դնելու համար, Գտնել թերթին արտօնատէր մը,

Աշխատանքի լծուիլ պետութենէն արտօնագիր ստանալու համար, ճարել խմբագիր մը:

Արդարեւ, արխիւային նիւթերը եւ ատենագրութիւնները կը հաստատեն վերոյիշեալները: Շրջանային Վարչութիւնը 21 Յունիս 1935ին կ'որոշէ դիմել Դոկտ. Յակոբ Թոփճեանին (բոլորիս ծանօթ Զ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան Վարժարանի մեծանուն տնօրէն Արա Թոփճեանի հայրը), որ ստանձնէ ծրագրուած թերթի խմբագրապետի պաշտօնը:

Կը կազմուի հանգանակիչ մարմին մը, որուն մէջ այլ մեծանուն ընկերներու շարքին մեծ դեր կ'ունենայ Մկրտիչ Մսըրլեանը (մեր մէջ գտնուող Զայ Աւետարանական Գոլժնի բազմավաստակ տնօրէն՝ Դոկտ. Չաւէն Մսըրլեանի հայրը):

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը թերթի հրատարակութեան համար պիտի յատկացնէ 500 սուր. ոսկի: Ապա կ'առաջադրէ գոյացումը 2,500 ս.ո.-ի հիմնադրամի մը, որուն 500 ս.ո. կեդրոնէն, 500ական խմբագրապետն եւ

թերթի տնօրենն եւ մնացեալը պիտի գոյանայ հանգանակութեամբ:

30 Մարտ 1936ին Շրջանային Վարչութեան նիստին ծրագիրը ընդունուած է, ըստ որուն թերթին արտօնութիւն պիտի ստացուէր կուսակցականի մը անունով, իբր չէզոք, անկախ թերթ, եւ թերթը իր ձեւին մէջ պիտի ըլլար անհատական ձեռնարկ մը, որուն խմբագրապետը պիտի նշանակուէր Շրջանային Վարչութեան կողմէ, իսկ խմբագրապետն ու թերթին տնօրէնը պիտի գործէին Շրջանային Վարչութեան հաւաքական վերին հսկողութեան տակ:

Խմբագրապետի պաշտօնն այս անգամ առաջարկուած էր Միհրան Տամատեանին, որովհետեւ Դոկտ. Յակոբ Թովմեան Յ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն կը նշանակուի: Ռ.Ա.Կ. Շրջանային Վարչութեան 2 Ապրիլ 1936ի նիստին կ'որոշուի հրատարակուելիք թերթը կոչել «ՉԱՐԹՕՆՔ», որ նախապէս ծրագրուած էր կոչել «Լոյս»:

Ժողովականները կ'որոշեն դիմել ծրագրուած հանգանակութեան: Ըստ Փրոֆ. Բ. Թովմասեանի յուշագրութեան, ի միջի այլոց Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոս՝ 25, Մկրտիչ Մաքրլեան 25 դեղին ոսկի կը խոստանան: Խոստում տուողներուն մէջ էր նաեւ պետական երեսփոխան Վահրամ Լէյլեկեան: Կը մնար արտօնատէր մը գտնել: Յարմարագոյնը կը նկատուի Փրոֆ. Բարունակ Թովմասեան: Արտօնագրի ուղղութեամբ պետական դժուարութիւններ կը ծագին, սակայն ի վերջոյ արտօնագիրը կ'առնուի, շնորհիւ կուսակցական հազարապետ Պօղոս Թուրսարգիսեանի, Օգոստոս 1936ին: Մինչ այդ թերթի հրատարակութեան ծրագիրը հարուած կը ստանայ Միհրան Տամատեանի լուրջ անհանգստութեամբ տառապելուն ու անկողնոյ ծառայելուն պատճառով: Միհրան Տամատեանին գործէ քաշուելով՝ մահացու հարուած մը կը ստանար ծրագիրը: Կը պակսէր նիւթական միջոցը, որուն մէջ Տամատեան մեծ ներդրում պիտի ունենար եւ մանաւանդ պիտի ըլլար մարդը, որ պիտի գլխաւորէր զայն:

1 Հոկտեմբեր 1936ին խորհրդակցական ժողով մը կը գումարուի ներկայութեամբ այդ օրերուն Լիբանան գտնուող Վահան Թէքեանի: Այդ ժողովին Վահան Թէքեան կ'ընդունի խմբագրապետութիւնը: Ծրագիրը չի յաջողիր եւ Թէքեան 27 Հոկտեմբեր 1936ին կը վերադառնայ Գահիրէ: Վ. Թէքեան շուտով կը յայտնէ, թէ չի կրնար Պէյրութ երթալ եւ կեդրոնը կը յետաձգէ տառերուն ապսպրանքը: Հոս է որ արտօնատէր նշանակուած Բարունակ Թովմասեան յաջորդական նամակներ կը գրէր Վահան Թէքեանին՝ համոզել ջանալով ու պնդելով, որ Վահան Թէքեան ստանձնէ խմբագրապետութիւնը, մինչ վերջինը կը ծրագրէր գրական հանդէս մը լոյս ընծայել Եգիպտոսի մէջ, որուն ի տես, առանց վիատելու Բ. Թովմասեան 11 Մայիս

1937 թուականի երրորդ նամակ մը կը գրեր, որմէ կը մեջբերենք հետեւեալը. ««Չարթօնք»ի վերաբերմամբ առած Ձեր որոշումը մեծապէս տխրեցուց զիս: Ինծի համար երկնտութիւն չկայ: Ես պիտի ձեռնարկեմ այդ գործին՝ որքան ալ պակսին յաջողութեան հաւանականութիւնները: Հաւանաբար Հոկտեմբերէն առաջ ամսագրի հրատարակութեան չսկսինք: Եթէ այդպէս է, պիտի խնդրեմ որ նկատի առնէք բարեփոխուած առաջարկս եւ կարգադրէք երկու ամիս Լիբանան անցընել, եթէ կ'ուզէք, ձեռնարկին հիմը ամրացնելու համար»: Ասոր ի տես, Վահան Թեքեան կը պատասխանէր իր 25 Մայիս 1937 թուականի նամակով. «... Կացութիւնը քիչ մը աւելի որոշ ըլլալով, ի վիճակի եմ յայտնելու, թէ անկարելի չէ ներկայութիւնս, այն պարագային ուր «Չարթօնք»ը մօտեւս լոյս տեսնէ: Թէեւ կը փափաքիմ, բայց կը վախճնամ թէ օգուտ պիտի չունենայ Ձեզի անգամ մը եւս խորհուրդ տալ, որ լաւ կշռէք Ձեր որոշումին հետեւանքները: Սկսիլ եւ շուտով կանգ առնելը մահացու հարուած մըն է ապագային համար...»:

Ու այսպէս սիրելիներ լոյս տեսաւ «Չարթօնք»ը 26 Սեպտեմբեր 1937ին առանց շուտով կանգ առնելու եւ հակառակ բոլոր դժուարութեանց քալեց դէպի ապագայ՝ հասնելով մեզի:

Դեպի ապագայ իր երթին ընթացքին «Չարթօնք»ի խմբագրապետի պաշտօնը ձեռնհասութեամբ վարեցին շարք մը մտաւորական ընկերներ, որոնց մէջ յատկանշուեցաւ մեծանուն Գերսամ Ահարոնեանը, որ 31 տարուայ պաշտօնավարութեան ընթացքին «Չարթօնք»ը հասցուց այդ ժամանակի իր ոսկեդարին իր կուռ խմբագրականներով ու գաղափարական յօդուածներով:

Ահարոնեանի այս աշխարհէն անժամանակ մեկնումէն ետք, Լիբանանի քաղաքացիական պատերազմը կը գտնուէր իր թեժ վիճակին մէջ ու արդէն գործած էր իր աւերը լիբանանահայութեան ոչ միայն քանակին վրայ, այլ նաեւ՝ որակին:

Ատենի մեծաթիւ ու մշակութային եռուզեռ ապրող գաղութը նօսրացաւ աներեւակայեցիօրէն, բնականաբար նաեւ ազգային այլ հաստատութիւններու կարգին տկարացաւ նաեւ մեր շրջանակը՝ ապրելով վերիվայրումներ, որոնք բնականաբար ազդեցին նաեւ «Չարթօնք»ին վրայ:

Արտաքին, կամքէ անկախ տուեալները կարծէք չէին բաւեր, անոնց վրայ եկան աւելնալու անձնական խնդիրներ կուսակցական եւ միութենական վերնախաւին մէջ, աւելի եւս ցնցելով մեր այլ կառոյցներու կարգին նաեւ մեր սիրելի «Չարթօնք»ը:

Երկրորդ աշխարհամարտը, Պաղ պատերազմը, 1958ի եղբայրասպան դէպքերն ու Լիբանանի քաղաքացիական պատերազմը վերապրած «Չարթօնք»ին վիճակուած էր նաեւ ապրիլ ներքին պայթար, որուն հետեւանքով

«Չարթօնք» շրջանի մը համար չգործեց: Ներքին խափանարարութիւնը հասած էր այն աստիճանի, որ կարգ մը ընկերներ համարձակած էին զարտուղի միջոցներով կասեցնել «Չարթօնք»ի լոյս ընծայումը:

Բարեբախտաբար, սակայն, մեր համեստ անձին միութենական, կուսակցական եւ Լիբանանեան քաղաքական պաշտօններ ստանձնած ըլլալու պարագային եւ անկէ բխող կապերուն շնորհիւ կրցանք երկու տարի շարունակ անխոնջ ու հետեւողական աշխատանքով փրկել «Չարթօնք»ը՝ անոր օրինական գոյավիճակին մէջ արմատական փոփոխութիւն մը մտցնելով, անոր սեփականութիւնը անհատներէ փոխադրելով հաստատութեան մը հասկացողութեան: Այժմ «Չարթօնք» կը պատկանի Շիրակ Լիբանանեան Առեւտրական Ընկերակցութեան, որուն օրինական բաժնետէրերը Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինն ու Լիբանանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնն են (զորս ատենին մենք դարձեալ խոհեմութիւնը ունեցած էինք օրինաւորապէս արձանագրելու պատկան մարմիններու մօտ), որուն տնօրէնութիւնը ժամանակի ընթացքին վարած են շարք մը վաստակաւոր ընկերներ: Շիրակ Առեւտրական Ընկերակցութեան այժմու տնօրէնն է եւ զայն ձեռնհասութեամբ կը վարէ վարչագիտական մարզի մէջ փորձառու ընկեր Արտեմ Պիլպիլեանը :

Այս կարգադրութեամբ եւ հաստատ ու առողջ հիմերու վրայ «Չարթօնք»ը դարձեալ սկսաւ լոյս տեսնել նա՛խ ամսական, ապա շաբաթական, յետոյ եռօրեայ դրութեամբ, եւ վերջապէս վերադաձաւ իր սովորական օրաթերթի դրութեան:

Այսօր «Չարթօնք» գտած է իր բնական հունը եւ սկսած է թիավարել՝ գտնելով իր առաջուայ տեղը մամուլի աշխարհին մէջ:

Վահան Թէքէանի, Գերսամ Ահարոնեանի, Երուանդ Ազատեանի, Յակոբ Աւետիքեանի, Պարոյր Աղպաշեանի նման վաստակաշատ խմբագրապետերու եւ խմբագիրներու երկար հոլլին որպէս յաջորդ այս տարի մենք ունեցանք նոր գլխաւոր խմբագիր մը, շարունակելու իր նախորդներուն մեզի ձգած սուրբ աւանդը: Այս պատասխանատու պաշտօնին վրայ մենք յարմար տեսանք նշանակել ընկեր Սեւակ Յակոբեանը, որուն գաղափարական պատկանելութեան ու նուիրուածութեան, արհեստվարժութեան եւ ժամանակիս յատուկ արհեստագիտական ունակութեան վրայ մեր դրած յոյսերը մեծ են՝ «Չարթօնք»ը պահելու այն բարձունքին վրայ, որուն արժանի է, եւ միասին քալելու դէպի աւելի եւս փայլուն ապագայ:

Ինչպէս կը տեսնէք, սիրելիներ, որքան դժուար եղած է «Չարթօնք»ի երկունքը, այնքան նաեւ դժուար՝ անոր կտրած ճանապարհը: 78 տարիներ առաջ ան երկար երկունքէ ետք լոյս աշխարհ գալով կտրած է 78 տարիներու

պատուաբեր ճանապարհ մը եւ պիտի շարունակէ ընթանալ դէպի մեր թերթին տեսիլքին իրականացումը, խնայելով ոչ մէկ միջոց, որպէսզի ան ոչ միայն արդիականացման եւ ժամանակի արհեստագիտութեան հետ քայլ պահէ, այլեւ՝ ըլլայ այդ ուղղութեամբ իւրաքանչիւր նորութեան ռահվիրաներէն:

«Չարթօնք» պիտի գոյատեւէ քանի կան Ռամկավար Ազատականներ, որոնք ունին բարձր գիտակցութիւնը ծառայելու մեր ժողովուրդին եւ այդ ուղղութեամբ ունին «Չարթօնք»ին կենսական ըլլալու համոզումը եւ ոչ մէկ խոչընդոտի առաջ տեղի տալու կամքն ու նուիրումի ոգին: «Չարթօնք» պիտի գոյատեւէ քանի կան «Չարթօնք»ին հաւատացող ու անոր նիւթապէս ու բարոյապէս անվարան նեցուկ կանգնող ձեզի նման ընկերներ ու բարեկամներ: Անոնցմով ու ձեզմով եւ այսպէս է, որ «Չարթօնք» պիտի շարունակէ ընթանալ դէպի իր հարիւրամեակը.... դէպի հարիւրամեակներ:

*(Արտասանուած՝ «Չարթօնք»ի 78 ամեակի առթիւ կազմակերպուած
Ընդունելութեան, 30 Սեպտեմբեր 2015)*

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ Ռ.Ա.Կ. ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐԾԵԱՆԻ ՀԵՏ

- Վերջին տարիներուն Ռ.Ա.Կ.-ի Եւրոպայի Շրջանակը կազմակերպական փոփոխութիւններ ապրեցաւ, ինչպիսին է անոր կառոյցը այժմ:

- Հակառակ անոր որ Ռ.Ա.Կ.-ը Ֆրանսայի մէջ գոյութիւն ուներ Արշակ Զօպանեանի օրերէն ի վեր, այդուհանդերձ համաշխարհային քաղաքական զանազան ազդակներու բերումով կուսակցութեան կառոյցը թոյլ վիճակ մը ուներ:

70ականներու աւարտին, առաւելաբար Միջին Արեւելքէն կարգ մը ընկերներու հաստատումովը Ֆրանսա, հոն գտնուող ընկերներու, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ. պատկառելի Կեդրոնական Վարչութեան կողմէ ընկ. ընկ. Մեթր Հրաչեայ Սեդրակեանի եւ Հայկաշէն Ուզունեանի թելադրութիւններուն շնորհիւ, կարելի եղաւ համախմբել Ֆրանսայի եւ Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ ապրող հին ու նոր ընկերները եւ նոր թափ տալ կուսակցութեան գործունեութեան: Յաջորդաբար հիմնուեցան Փարիզի Արշակ Զօպանեան, Լիոնի Միհրան Տէր Ստեփանեան եւ Վալանսի Հրաչ Երուանդ ակումբները:

Նորաստեղծ այս ակումբները շուտով իրենց ներկայութիւնը եւ ազդեցութիւնը զգալի դարձուցին գաղութի ազգային-քաղաքական եւ եկեղեցական ու միութենական կեանքին մէջ: Կուսակցական գործունեութիւնը նոր վերելք մը արձանագրեց Պրիւսելի մէջ հիմնումովը Արմենակ Եկարեան, իսկ Մարսելի մէջ՝ Յակոբ Կօշկարեան ակումբներու: Մինչ այդ կազմուած էր արդէն Ռ.Ա.Կ. Ֆրանսայի եւ Պելճիքայի Շրջանային Վարչութիւնը, որ հետագային Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան որոշումով վերափոխուած էր Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Վարչութեան: Հետեւաբար, Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանակին այսօր մաս կը կազմեն Փարիզի, Մարսելի, Լիոնի, Վալանսի, Պրիւսելի եւ Լոնտոնի մեր ակումբները, ինչպէս նաեւ Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ ապրող մեծ թիւով ընկերներ:

- Վերջերս Ֆրանսայի Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գիտաժողով: Ի՞նչ հարցեր արծարծուեցան հոն եւ ինչպիսի եզրակացութիւններու յանգեցաւ գիտաժողովը:

- Ռ.Ա.Կ.-ի աշխոյժ գործունեութիւնը եւ պատասխանատու ներկայութիւնը

Եւրոպայի հայկական եւ տեղական քաղաքական շրջանակներէն ներս, ինչպէս նաեւ Հայաստանի հետ անմիջական կապը կը պահանջէին լրջօրէն ուսումնասիրել եւ վերլուծել ազգային-քաղաքական նոր կացութիւնները:

Վալանսի մէջ տեղի ունեցած գիտաժողովին, որուն կը մասնակցէին Եւրոպայի զանազան քաղաքներէն ժամանած պատասխանատու ընկերներ, Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան վարիչ-տնօրէն ընկ. Վաչէ Ղազարեան եւ Հայաստանէն ընկ. Վիգէն Խաչատրեան, արծարծուեցան Ռ.Ա.Կ.-ի կառոյցի, գործելակերպի փոփոխութեան, Հայաստանի մէջ անոր հզօրացման, իշխանութիւն-կուսակցութիւններ յարաբերութեանց, ինչպէս նաեւ ազատական ռամկավարութեան կիրարկումին հետ կապուած հարցեր: Գիտաժողովի ընթացքին վերոյիշեալ հարցերուն նուիրուած զեկուցումներ տրուեցան, որոնց քննարկումներուն արդիւնքները պիտի ներկայացուին Ռ.Ա.Կ. յառաջիկայ Ընդհանուր Պատգամաւորական ժողովին:

- 1992էն ի վեր Ֆրանսայի մէջ Էր. ՓԷ. Էր. կուսակցութեան եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ սերտ յարաբերութիւններ ստեղծուած են: Այդ յարաբերութիւնները որքանո՞վ օգտակար եղան Հայաստանի, մանաւանդ որ Էր. ՓԷ. Էր. իշխող կուսակցութիւն է այսօր:

- Էր. ՓԷ. Էր.-ի հետ մեր յարաբերութիւնները սկսած էին նախքան անոր իշխանութեան գալը: Այդ յարաբերութիւններու հիմը դրուած էր կարգ մը ընկերներու եւ Էր. ՓԷ. Էր.-ի ղեկավարութեան, մանաւանդ Փարիզի քաղաքագլուխ Ժաք Շիրաքի հետ համագործակցութեան միջոցով: Էր. ՓԷ. Էր. ջատագովն է ազատական եւ ռամկավարական սկզբունքներուն եւ բնական էր որ հայկական իրականութենէն ներս գաղափարակից գործակիցի մը փնտռտութիւն ընթացքին Ռ.Ա.Կ.-ը գտներ որպէս այդպիսին:

Երկու կուսակցութիւններու ղեկավարութեան միջեւ բազմաթիւ տեսակցութիւններու արդիւնքով Էր. ՓԷ. Էր. իր մասնակցութիւնը բերաւ Հ.Բ.Ը.Մ.-ի բոլոր կարեւոր ձեռնարկներուն՝ Փարիզի, Լիոնի, Վալանսի եւ Մարսելի մէջ: Համագործակցութեան լաւագոյն օրինակներէն էր Էր. ՓԷ. Էր.-ի ընդհանուր քարտուղար եւ այժմու արտաքին գործոց նախարար Ալան Ժիլփէի այցելութիւնը Հ.Բ.Ը.Մ.-ի Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոն, վերջին ընտրութիւններու նախօրեակին, ուր ան պաշտօնապէս ընդունուած էր Ռ.Ա.Կ. Եւրոպայի Շրջանային եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւններու կողմէ: Միեւնոյն ատեն Էր. ՓԷ. Էր.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի միջեւ Փարիզի եւ Ֆրանսայի այլ քաղաքներուն մէջ քաղաքական եւ ընկերային շարժումներու գծով սերտ համագործակցութիւն ստեղծուէր Էր, որով Էր. ՓԷ. Էր.-ի իշխանութեան հասնելէ ետք, մեզի առիթը կը ներկայանար շաղկապը

հանդիսանալու Ֆրանսայի եւ Հայաստանի պետական ներկայացուցիչներու միջեւ:

Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի շրջանակին հետեւողական աշխատանքներուն շնորհիւ իրականացաւ Էր. ՓԷ. Էր.-ի պատուիրակութեան այցելութիւնը Հայաստան՝ գլխաւորութեամբ երիտասարդական եւ մարմնակրթանքի նախարարուհի Միշէլ Ալիօ-Մարիի եւ մարդասիրական հարցերու նախարար Ռեշար Կազընաւի, որ հիմը դրաւ նաեւ Հ.Ռ.Ա.Կ.-ի հետ համագործակցութեան: Այդ համագործակցութեան շնորհիւ իրականացան հայանպաստ բազմաթիւ ծրագիրներ եւ մարդասիրական օգնութիւններու առաքումներ: Երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներ միասնաբար աշխատեցան Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան Հ.Ռ.Ա.Կ.ի տարբերակին վրայ, որ կարելոր կը նկատենք Հայաստանի պետականութեան եւ ռամկավարութեան համակարգի ամրապնդման ճամբուն վրայ:

- Սփիւռքահայ այլ գաղութներէ աւելի, Ֆրանսայի մէջ է որ շեշտուած է հայկական փոքր եւ խայտաբղետ կազմակերպութիւններու գոյութիւնը: Այս երեւոյթը ի՞նչ անդրադարձ կ'ունենայ գաղութի ազգային կեանքին վրայ:

- Ֆրանսահայութեան այս իւրայատկութիւնը ձեւով մը ազդեցութիւնն է Ֆրանսայի մէջ տիրող վիճակին, ուր միութիւններու ստեղծումը շատ դիւրին է: Հակառակ անոր որ այս կացութիւնը համագաղութային ծրագիրներ կամ ձեռնարկներ յաջողցնելու առումով դժուարութիւններ կը ստեղծէ, սակայն միւս կողմէ ալ այդ «խառնիճադանճ»ը, յաչս ֆրանսացիներու, իր յարուցած հայկական աղմուկով, հայկականութեան տուած իր բաժինով, ի՞նչ տոկոսով ալ ըլլայ, դրական անդրադարձ կ'ունենայ:

Թէեւ այդ միութիւնները իրենք գիրենք հաւասար կը նկատեն սփիւռքատարած մեր միութիւններուն, սակայն ինչպէս այլ գաղութներու պարագային, Ֆրանսայի մէջ ալ գլխաւոր դերակատարները Հայց. Առաքելական Եկեղեցին եւ հայկական երեք կուսակցութիւններն են, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ը, Կապոյտ Խաչը եւ Հայ Մշակութային Միութիւնը, որոնք Ֆրանսայի հայաշատ բոլոր քաղաքներուն մէջ մասնաճիւղեր ունին: Ասոնք են որ կարելոր հարցերու շուրջ կը գործակցին եկեղեցւոյ հետ: Հայաստանի ի նպաստ քաղաքական աշխատանքները համակարգելու նպատակով վերջերս կազմուեցաւ նաեւ միջ-կուսակցական մարմին մը, որ յուսանք դրական գործ կը կատարէ գաղութին մէջ:

Ֆրանսայի հայկական միութիւններուն ամենէն աշխոյժն ու տարածունը կը մնայ Հ.Բ.Ը.Մ.-ը անշուշտ: Մանաւանդ վերջին տարիներու իր երիտասարդական շարժումներով, ան այսօր ամբողջ գաղութին համակրանքը կը վայելէ:

Հ.Բ.Ը.Մ.-ը իր միջ-մասնաճիւղային երիտասարդական խաղերով կրցաւ մեծ խանդավառութիւն ստեղծել վերջին տարիներուն: Հոս պէտք է արձանագրել, որ համաերոպական այդ գործունեութեան մէջ մեր երիտասարդ ընկերները ղեկավար դիրքերու վրայ կը գտնուին եւ անշահախնդրօրէն կը ծառայեն միութեան: Ռ.Ա.Կ.-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի արդիւնաւետ այս գործակցութիւնը մեծապէս կը նպաստէ երկու կազմակերպութիւններուն հզօրացման եւ անգամ մը եւս կու տայ ապացոյցը այն ճշմարտութեան թէ՛ ուր որ Ռ.Ա.Կ.-ը զօրաւոր է, հոն զօրաւոր է նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ը եւ հակառակը: Ֆրանսահայ գաղութի ազգային երկու կարեւոր հաստատութիւններու՝ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի մարմիններուն մէջ մեր ընկերները տիրական ներկայութիւն են եւ իրենց նպաստը կը բերեն անոնց գործունեութեան ծաւալումին:

- Սփիւռքահայ բոլոր կազմակերպութիւններուն նման, Ռ.Ա.Կ.-ը նոյնպէս նոր պահանջներու լոյսին տակ իր գործելակերպը բարեփոխելու եւ նոր ժամանակներուն պատշաճելու հրամայականին առջեւ կը գտնուի: Այս առումով, ինչպէս կը պատկերացնէք անոր դերը հայ կեանքէն ներս յառաջիկայ տասնամեակներուն:

- Ռ.Ա.Կ.-ը ազգային ծառայութեան աւելի քան 70 տարուան հարուստ կենսափորձ ունի, որ կը մնայ ուսանելի յառաջիկայ տարիներու իր գործունեութեան համար: Հայ իրականութեան մէջ ռամկավարական եւ ազատական սկզբունքներու տարածումին եւ պահպանումին գծով անոր վաստակը կարելի չէ ուրանալ:

Հայկական պետականութեան շարունակականութեան, սփիւռք-հայրենիք կապերու, Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մեկութեան, Ս. Էջմիածնի գերակայութեան, ինչպէս նաեւ Հայ Դատի ու հայապահպանման Ռ.Ա.Կ.-եան ըմբռնումները ապացուցանեցին իրենց ճշմարտացիութիւնը: Մենք հպարտ ենք նաեւ որ անկախացած մեր հայրենիքը կ'ընթանայ ազատական ռամկավարութեան ուղիով:

Վերոյիշեալ հաստատումները մեկնակետ ունենալով, համոզուած ենք, որ Ռ.Ա.Կ.-ը տակաւին կարեւոր դերակատարութիւն ունի հայ ազգային քաղաքական կեանքին մէջ, սփիւռքի թէ Հայաստանի տարածքին հաւասարապէս: Սփիւռքին քաղաքական առաջնորդութիւն տալու, հայապահպանման աշխատանքները շարունակելու, ինչպէս նաեւ հայկական իրաւունքները պաշտպանելու համար Ռ.Ա.Կ.-ի նորացուած գործունեութիւնը սփիւռքի մէջ անհրաժեշտութիւն է եւ ազգային պահանջ, եւ ճիշդ ատոր համար ալ, նոր ժամանակներուն յարմարելու եւ նոր տուեալներէն ելլելով, մեր կուսակցու-

թիւնը, անփոփոխ պահելով իր դաւանանքն ու ուղեգիծը, կարիքը ունի կառուցային, կանոնադրական եւ ծրագրային փոփոխութիւններու, որոնցմով կարենայ ստանձնել նոր պարտաւորութիւնները: Ես համոզուած եմ որ Ռ.Ա.Կ. 20րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը այս իմաստով անկիւնադարձային կ'ըլլայ մեր կուսակցութեան համար:

- Վերջին շրջանին տեսակետներ կը յայտնուին, ըստ որոնց հայկական կուսակցութիւններու գոյութիւնը սփիւռքի մէջ անիմաստ դարձած է այլեւս: Այս առնչութեամբ յատկանշական էր, զարգացող տեսակետներու ընդհանրական իմաստով, ընկ. Վաչէ Սեմերճեանի՝ հայկական կուսակցութիւններու ամբողջական հայրենադարձութիւնը պահանջող յօդուածը:

Ինչ է ձեր կարծիքը այս մասին:

- Շատ բնական է որ Հայաստանի անկախացումէն եւ հայկական աւանդական կուսակցութիւններու հայրենիք վերադարձէն ետք նման տեսակետներ յայտնուէին: Իր բացարձակութեամբ ճիշդ ըլլալով հանդերձ այդ պահանջը, կը կարծեմ թէ վտանգաւոր կ'ըլլայ այժմէն իսկ եւ անմիջապէս լուծարքի ենթարկել քաղաքական կազմակերպութիւնները սփիւռքի մէջ: Ատիկա բնական գործընթացի մը արդիւնքը պէտք է ըլլայ, որ տակաւին ժամանակ կ'ենթադրէ:

Հայաստանի անկախ պետականութեան շահերը կը պահանջեն որ կազմակերպ սփիւռք մը գոյատեւէ կուսակցութիւններու գլխաւորութեամբ, որոնք քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մարդասիրական օգնութիւն կրնան կազմակերպել Հայաստանի համար: Միւս կողմէ, ազգային մեր կուսակցութիւններուն հայրենական կառոյցները տակաւին երկար ժամանակ պէտք ունին մեր զաղափարական աւանդին, քաղաքական փորձառութեան եւ նիւթական աջակցութեան: Ռ.Ա.Կ.-ը պէտք է շարունակէ իր 70ամեայ կենսափորձը ի սպաս դնել Հայաստանի մէջ ռամկավարութեան եւ ազատականութեան արմատաւորման եւ Հ.Ռ.Ա.Կ.-ի հզօրացման, որպէսզի ան ռամկավարական եւ սահմանադրական ճանապարհով հասնին իշխանութեան՝ գործադրելու համար մեր ծրագիրը՝ յօգուտ հայ ժողովուրդի եւ ի բարգաւաճումն Հայաստանի:

Դժբախտաբար այսօր Հայաստանի եւ սփիւռքի մէջ անհատներ եւ կազմակերպութիւններ կան, որոնք կը բաղձան կուսակցութիւններու անմիջական չքացումը քաղաքական թատերաբեմէն: Անոնք, չես գիտեր ինչի՞նչ պատճառներով, այսօր հրապարակ իջած են քաղաքականութիւն խաղալու եւ կուսակցութիւններուն դերը իրենց ուսերուն վրայ վերցնելու: Հոս պէտք է հարց տալ անոնց թէ՛ ո՞ր էին 70 տարիներու ընթացքին, մանաւանդ

Պաղ պատերազմի դժուարին օրերուն, երբ կուսակցութիւնները հաւաքականութիւններ կ'առաջնորդէին, իսկ իրենք քաղաքականութենէ հեռու եւ քաղաքական գործ ընողները քննադատելով, զուտ մշակութային, հայրենակցական, ընկերային եւ բարեսիրական գործով զբաղած էին: Եւ ինչո՞ւ քաղաքական գործօն դառնալու այս շուտիկութիւնը, երբ չունին անոնք ոչ ալ կոչումը աստոր: Եթէ անոնք կ'ուզէն հայրենիքին օգնել, թող օգնեն եւ մենք առաջին ուրախացողն ենք. իսկ եթէ անոնցմէ ոմանք քաղաքական փառասիրութիւններ ունին, դրական իմաստով, կրնան իրենց յարմար գաղափարական միջավայրը եւ կուսակցութիւններ ընտրել, ծառայելու համար մեր ժողովուրդին:

Հայ ժողովուրդը պէտք ունի իր բոլոր գաւակներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք սակայն պարտին մնալ իրենց դերին եւ առաքելութեան սահմաններուն մէջ:

**Հարցազրոյցը վարեց ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ
«Չարթօնք», Պէյրութ, 10 Մարտ 1994**

**Անկեղծ Եւ Առարկայական Հարցազրոյց Ռամկավար Ազատական
Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ
Ընկ. Յակոբ Գասարճեանի Հետ**

Հ.- Մամուլէն իմացանք, թէ վերջերս կը գտնուէիք Ուաշինկթըն, ուր հանդիպում մը ունեցած էք Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ: Կը հաճի՞ք յայտնել ձեր այցելութեան պատճառը:

Պ.- Միացեալ Նահանգներ գացի հրաւերովը Հայկական Համագումարին, մասնակցելու համար Ուաշինկթընի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան պաշտօնական բացման հանդիսութեան: Այդ առթիւ, Նախօրոք պայմանաւորուածութեամբ մը երկուքով հանդիպում մը ունեցանք Նաեւ Նախագահ Տէր-Պետրոսեանի հետ, հակառակ վերջինիս ծանրաբեռնուած ժամանակացոյցին, Նկատի ունենալով որ Նախագահը միայն 48 ժամ պիտի մնար Ուաշինկթըն:

- Ձեր հանդիպման ընթացքին ի՞նչ նիւթեր քննարկուեցան:

- Թէեւ խօսակցութեան բնոյթը առ հասարակ խորհրդապահական է, սակայն ըսեմ, որ Նախագահը տուաւ ընդարձակ եւ սպառնիչ տեղեկութիւններ Հայաստանի քաղաքական-տնտեսական ներկայ վիճակին եւ Արցախի կացութեան մասին: Նախագահը անդրադարձաւ Նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն, առաւելաբար հիմնուելով մեր անդրանիկ «Յայտարարութեան» ազգային ուղեգիծին վրայ: Մենք մեր հերթին, աւելի մանրամասնեցինք կուսակցութեանս ժԹ. Պատգամաւորական Ժողովին որդեգրած այն քաղաքականութիւնը, ըստ որուն կը վերահաստատուէր հայրենիքի հանդէպ մեր աւանդական ուղեգիծը. այսինքն՝ անվերապահօրէն աջակցիլ հայրենի պետականութեան վերակառուցման եւ ամրապնդման գործընթացին ու Նպաստել հայրենի ժողովուրդին բարօրութեան, միաժամանակ սփիւռքահայութիւնը զօրաշարժի ենթարկելով ի Նպաստ այս Նուիրական Նպատակներուն:

- Խօսեցա՞ք Նաեւ Հայաստանի մէջ ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւններուն տարածման մասին:

- Մենք կը հաւատանք, որ ռամկավարութիւնն ու ազատականութիւնը մարդկային ներկայ քաղաքակրթութեան զարգացման միակ ուղեգիծերն են.

հետեւաբար, պրն. Նախագահին անգամ մը եւս շեշտեցինք մեր գոհունակութիւնը, թէ Հայաստանի այսօրուան իշխանութիւնները այդ ճշմարիտ գաղափարախօսութիւնները կրողներն ու կիրարկողներն են: Այդուհանդերձ, կը հաւատանք, որ զոյգ գաղափարախօսութիւններն ալ, յատկապէս անոնց կիրարկումի եղանակները, տակաւին կարիքը ունին բիւրեղացումի, որ կը կարօտի ժամանակի, մեկնելով երկրին ներքին եւ արտաքին քաղաքական, տնտեսական եւ ընկերային իրավիճակներուն ալ բիւրեղացումէն:

Մեր համոզումն է, որ ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւնները դաւանող բոլոր մեծ թէ փոքր կազմակերպութիւնները հայրենիքի մէջ պիտի համախմբուին եւ պիտի միաձուլուին մէկ կառոյցի մէջ: Նման նախատիպ մըն է Ռ.Ա.Կ.-ի ծնունդը, 1 Հոկտեմբեր 1921ին, երբ միեւնոյն տեսլականով գործող ազգային-քաղաքական տարբեր հոսանքներ ամբողջովին միացան:

- Կը հաճի՞ք մանրամասնութիւններ հաղորդել Ուաշինկթընի դեսպանատան բացման եւ յարակից հանդիսութիւններուն մասին:

- Մամուլը արդէն լայնօրէն անդրադարձաւ անոնց, բայց կ'ուզէի այս պատեհութիւնը օգտագործել, նշելով Հայկական Համագումարի կազմակերպչական հոյակապ աշխատանքը, ըլլայ բացման հանդիսութեան, ըլլայ ճաշկերոյթին, ուր ապահովուած էր ներկայութիւնը Միացեալ Նահանգներու բազմաթիւ ծերակուտականներու եւ քննկրեամբներու, որոնց շարքին Պոպ Տոյ, Զարլ Լեւին, Ճոն Էտուըրտ Փորթըր եւ ուրիշներ: Կը փափաքիմ նաեւ հիացումս արտայայտել պրն. Հրայր Յովնանեանի ձեռնհաս գլխաւորութեամբ Հայկական Համագումարին կատարած ամերիկեան չափանիշով լոպպիինկի հայանպաստ բազմաթիւ աշխատանքներուն մասին, որոնց մէջ մեծ բաժին ունի Ռ.Ա.Կ. Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուհի Անի Թոթաի:

Կը փափաքիմ նաեւ գնահատական խօսքիս կցել շնորհակալութիւնս պրն. Հրայր Յովնանեանին, ինծի հանդէպ ցուցաբերած ջերմ ընդունելութեան համար:

- Կ'իմանանք, թէ Հ.Ռ.Ա.Կ.-ը ներքին տազնապներ կ'ապրի: Ինչ են ձեր բացատրութիւնները այս մասին:

- Հ.Ռ.Ա.Կ.-ը երբ սկիզբ առաւ, նպատակ ուներ հայրենիքի մէջ ամրապնդել ռամկավարական եւ ազատական սկզբունքները: Հասկնալի է, որ կուսակցութեան մը կայացման գործընթացին անխուսափելի է, որ տեղի ունենան սկզբնական խարխափումներ, որոնք վիճակուեցան թէ՛ Հ.Ռ.Ա.Կ.-ին, թէ՛

հայաստանեան յառաջատար բոլոր կազմակերպութիւններուն: Զ.Ռ.Ա.Կ.-էն անջատուեցան նոյն գաղափարախօսութիւնը կրող երեք կարեւոր խմբաւորումներ, դժգոհելով Զ.Ռ.Ա.Կ.-ի որդեգրած ազգային-քաղաքական գործելակերպէն, որուն հիմնական պատասխանատուն էր օրուան ղեկավարութիւնը: Սակայն այսօր լուրջ տուեալներ կան ակնկալելու, որ շուտով տեղի պիտի ունենայ բոլորին վերամիաւորումը մէկ դրօշի տակ:

- Զ.Ռ.Ա.Կ.-ը նախապէս Ազգային Ժողովի մէջ կարեւոր ներկայութիւն մըն էր, մինչ հիմա վերածուած է շատ համեստ ներկայութեան մը: Ինչպէ՞ս կը բացատրէք այս մէկը:

- Զ.Ռ.Ա.Կ.-ի 19 հոգինոց նախկին խորհրդարանական խմբաւորումէն այսօր միայն ընկ. Վարազդատ Աւոյեանն է, որ Ազգային Ժողովի անդամ վերընտրուած է, ան ալ անհատական թեկնածութեամբ: Ասոր պատճառները Զ.Ռ.Ա.Կ.-ի օրուան ղեկավարութեան բազմաթիւ սխալ կողմնորոշումներն էին: Անոնցմէ մէկն ալ մաս չկազմելն էր Զանրապետութիւն պլոքին, հակառակ որ այնտեղ համախմբուած են ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւնները կրող կազմակերպութիւններ:

- Զիչ առաջ ակնարկեցիք վերջերս տեղի ունեցած Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին: Ի՞նչ բաներով կը յատկանշուի այդ Ժողովը:

- Մեր ժողովուրդը իր ամբողջութեան մէջ եւ հայրենիքը մասնաւորաբար կ'ապրին պատմական ճակատագրական հանգրուան մը: Զետեւաբար անխուսափելի էր, որ ժողովն ալ որդեգրէր այս պահուն լրջութեան համապատասխան ազգային-քաղաքական ուղեգիծ, որուն կիրարկման պատասխանատուութիւնը փոխանցուէր կուսակցութեան՝ առաջադրելով, որ ան ստանձնէ իր պատմական առաքելութիւնը:

Պատգամաւորական Ժողովը կարեւորութեամբ քննարկեց Զայաստանի եւ Սփիւռքի ներկայ իրավիճակները: Պատգամաւորները միահամուռ կերպով զօրակցութիւն յայտնեցին Զայաստանի իշխանութիւններուն վարած ներքին թէ արտաքին քաղաքականութեան, Արցախի հիմնահարցի լուծման մօտեցումներուն եւ երկրին մէջ սկիզբ առած ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւններուն եւ ազատ շուկայի տնտեսական յարաբերութիւններու որդեգրման քաղաքականութեան:

Պատգամաւորական Ժողովը վերահաստատեց կուսակցութեան աւանդական դաւանանքը Ս. Էջմիածնի գերագահութեան եւ նախամեծարութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ յայտնեց իր նեցուկը, եւ գործակցութեան ձեռք երկարեց Ամենայն Զայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա.ին: Պատգամա-

ւորական ժողովը ընդգծեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերն ու առաքելութիւնը սփիւռքահայ իրականութենէն ներս, ողջունելով զոյգ հայրապետներու մերձեցման մաղթանքներն ու խօսքերը, միաժամանակ պատրաստակամութիւն յայտնելով աջակցելու այդ խոստումներուն իրագործման աշխատանքներուն, պայմանաւ որ, աստիճանական զարգացումներով, հերձուած թեմերը վերամիաւորուին Ս. Էջմիածինին ու վերջ դրուի «երկգլխանի հաւասարեալ» կաթողիկոսութեան դրութեան:

Պատգամաւորական ժողովը յատկանշուեցաւ կարեւոր այլ որոշումով մըն ալ. **կուսակցութեան կեդրոնը վերադարձաւ Մերձաւոր Արեւելք՝ Լիբանան:** Աշխարհագրականօրէն, բայց նաեւ հոգեբանութեամբ, ապրումով եւ մտածելակերպով հայրենամերձ այս ասիերուն վրայ խարսխելով կուսակցութեան գործունեութիւնը Ռ.Ա.Կ. կ'երաշխաւորէ մեր ազգային հիմնահարցերուն հետապնդման շարունակականութիւնը, նկատի ունենալով որ այստեղ հասակ կ'առնէ սերունդ մը, որ կը դաստիարակուի ազգային շունչով ու ոգիով:

Ղեկավարութեան Լիբանան վերադարձը, յաչս աշխարհին կը միտի նաեւ ներդրում բերած ըլլալ Լիբանանի կայունացող վիճակին, անուղղակիօրէն օժանդակելով երկրին տնտեսական բարգաւաճման հեռանկարներուն:

Ժողովը քննարկեց եւ համապատասխան որոշումներ առաւ սփիւռքահայ կազմակերպութիւններու, սփիւռքը յուզող կարեւոր հարցերու կապակցութեամբ, ինչպէս նաեւ ներքին կանոնագրային եւ կառուցային հարցերու վերաբերեալ:

- Յայկական բաղաքական կազմակերպութիւններու հանդէպ ի՞նչ էր Պատգամաւորական ժողովին դիրքորոշումը:

- Ժողովը բազմակողմանիօրէն քննարկելէ ետք Ռ.Ա.Կ.-հայկական բաղաքական կազմակերպութիւններ յարաբերութիւնները, մեկնելով այսօրուան իրականութիւններէն որոշեց եղբայրական ձեռք մեկնել բոլոր այն կազմակերպութիւններուն, որոնք հայրենի պետականութեան ամրապնդման գործընթացին եւ հայ ժողովուրդի բարօրութեան ի խնդիր կը ցուցաբերեն միեւնոյն ազգաշէն տրամադրութիւնները:

Իսկ ինչ կը վերաբերի Յայ Դատի հետապնդման աշխատանքներուն, ժողովը վերահաստատեց, որ Ռ.Ա.Կ.-ը ինչպէս անցեալին, նաեւ յետայսու պատրաստ է համագործակցելու հայ բաղաքական կազմակերպութիւններու հետ մեր ժողովուրդի գերագոյն շահերուն հետապնդման գծով, եւ մասնաւոր պատմական մեր պահանջատիրութեան իրականացումին եւ մեր արդար իրաւունքներուն վերատիրացման համար:

- *Իսկ Յ.Բ.Ը.Մ.-ի նկատմամբ...*

- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը որոշեց եւ պարտականութիւն տուաւ Նորընտիր Կեդրոնական Վարչութեան ամրապնդել Ռ.Ա.Կ.-Յ.Բ.Ը.Մ. աւանդական եւ պատմական սերտ համագործակցութիւնը: Այս առթիւ կը փափաքիմ մատնանշել, որ Ռ.Ա.Կ.-ի ներկայ ղեկավարութիւնը ամէն ձեւով պատրաստ է օժանդակելու այս համազգային մեծագոյն միութեան ազգօգուտ նպատակներուն իրագործման աշխատանքներուն:

- *Կուսակցութեան շրջանակները ինչպէ՞ս ընդունեցին Նոր որոշումները:*

- Ընդամենը երկու ամսուան կարճ այս ժամանակամիջոցին իսկ, կուսակցական եւ համակիր աշխարհասփիւռ մեր բոլոր շրջանակները անխտիր, իրենց գոհունակութիւնը եւ զօրակցութեան պատրաստակամութիւնը յայտնած են մեզի կուսակցութեան որդեգրած Նոր արեւելումին նկատմամբ: Այս իրողութիւնը խոր հաւատք կը ներշնչէ եւ առաւել եւս կը պարտաւորեցնէ մեզ:

- *Սակայն ընկ. Գասարճեան, կ'իմանանք որ Նախկին ղեկավարութեան կարգ մը անդամներ դժգոհութիւններ կը յայտնեն որդեգրուած Նոր քաղաքականութեան նկատմամբ: Ինչպէ՞ս կարելի է բացատրել այս երեւոյթը:*

- Իւրաքանչիւր կազմակերպութեան մեջ, երբ կ'առնուին արեւելումի փոփոխութեան կամ վերանորոգումի մասին որոշումներ, անպայման կը գտնուին անձեր, որոնք կը դժուարանան պատշաճիլ ժամանակներու հետ քայլ պահելու անհրաժեշտութեան. ինչու չէ՞ կը դժկամին Նաեւ զիջիլ իրենց ունեցած հանգամանքները:

Ռ.Ա.Կ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը Հայաստանի իշխանութիւններուն եւ Ժողովուրդին նկատմամբ քուէարկեց **վերադարձ դէպի Ռ.Ա.Կ.-ի աւանդական ուղեգիծը**, եւ խստիւ քննադատեց Հ.Ռ.Ա.Կ.-ի վերջին քանի մը տարիներու դիրքորոշումները այդ Ժողովը լիազօրեց Նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը հետեւողականօրէն գործադրելու ազգային այս քաղաքականութիւնը: Յատկապէս այս որոշումներէն է որ դժգոհ են Ռ.Ա.Կ.-ի Նախկին Կեդրոնական Վարչութեան քանի մը անդամներ, որոնք մաս չեն կազմեր այսօրուան գերագոյն ղեկավարութեան, որ միաձայնութեամբ ընտրուեցաւ Պատգամաւորական Ժողովին կողմէ:

Այդ անձերը, այլապէս յարգելի, դժբախտաբար դիմած են իրենց համար ոչ պատուաբեր եւ կուսակցականօրէն անընդունելի եւ ապօրինի միջոցներու, արտայայտելու համար զիրենք տագնապէցնող յուսախաբութիւնը:

Հրապարակուած են անճշդութիւններով բեռնաւորուած թուուցիկներ,

որոնց ստորագրողներն յատկապես մեկը, չի վարանիր շրջանակներու մէջ մինչեւ իսկ կուսակցութենէն վտարուած անձերու հետ գործակցելու եւ անոնց միջոցով տարածելու այդ թերթիկները:

Մթնոլորտը ապականել փորձող յերիւրանքները որեւէ ձեւով իրականութեան չեն համապատասխաներ. մեր նպատակները, համոզումները եւ ազգային ուղղութիւնը կը մնան յստակ եւ աներեր:

Տիտուր Է երեւոյթը, բայց բարեբախտաբար իրականութիւն Է նաեւ որ դժգոհողները չունին հետեւորդներ: Այս եւ նման ոտնձգութեան փորձեր չեն կրնար արգելք հանդիսանալ մեր վճռակամութեան, լիովին գործադրելու ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին առնուած որոշումները:

- Ի՞նչ մտածումներով կը փափաքիք եզրափակել այս գրոյցը:

- Կեդրոնական Վարչութիւնը ինքզինք ՅԱՆՁՆԱԴՌՈՒ կը նկատէ իր գործունեութեամբ յաջողցնելու պատմական այս օրերուն իրեն վստահուած դժուարին բայց իրագործելի ազգային առաքելութիւնը: Մենք վստահ ենք մեր շարքայիներուն նուիրումին եւ հաւատարմութեան. իրենցմէ կը պահանջենք ուժերու ամբողջական լարում եւ կեդրոնաձիգ միահամուռ կեցուածք կուսակցութեան միջոցով ծառայելու ազգին եւ հայրենիքին:

Շնորհակալութիւն ընկ. Գասարճեան այս համապարփակ եւ սպառիչ հարցազրոյցին համար:

Հարցազրոյցը վարեցին ԱՐՄԷՆ ԻԻՐՆԵՇԼԵԱՆ ԵՒ

ՀՐԱՉ ՍԵՓԵԹՅԵԱՆ

«Ձարթօնք», 16 Նոյեմբեր 1995

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՐԻՐԻԻ ՑԱՆԿԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՀԵՏ

ՊՐՆ. ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՏԵԱՆ. «ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼՈՒ ԻԲՐ ԱՅՍ ԵՐԿՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐ»

53 տարեկան այս ճարտարագործը անակնկալ ստեղծեց, պայմանագրուելով ընդդիմության ցանկի մը, մինչ գիտենք թե միշտ հայերը անպայման օրինականության հաւատարմականներ են, կազմելով խորհրդարանին մէջ միացեալ պլոք մը:

Իր տեսակցութեան ամբողջ տեւողութեան, պրն. Գասարճեան շեշտեց այն իրողութիւնը, թէ ինք «ցաւ կը յայտնէր Դաշնակցական կուսակցութեան ներքին անմիութեան» համար եւ մեզի հաստատեց թէ անոր փոխարէն «այդ խզումը հայերուն առիթ կ'ընծայէր հակազդելու իբր ամբողջական բաժինի տէր քաղաքացիներու, խորհրդարանական բեմի վրայ, իրենց քաղաքական ընտրանքին մէջ»:

Պրն. Գասարճեան ուզեց նաեւ հաւաստել հայկական ընտրամարմին, թէ ինք պատրաստ է «ընտրութիւններու յաջորդ օրն իսկ կիրարկելու ձեռք երկարելու քաղաքականութիւնը, վերակազմելու համար միացեալ հայկական պլոք մը, որ համայնքի պահանջքը առաջնորդէ եւ անոր արժէքները պաշտպանէ»:

Հ. Ինչո՞ւ Ռամկավար կուսակցութիւնը չմասնակցեցաւ հայկական միասնականութեան եւ ուզեց շեղիլ քաղաքական գիծէ մը, որ սակայն ընդ միշտ կը կիրարկուէր երեք կուսակցութիւններու կողմէ:

Պ. Բնաւ չորոշեցինք «խզել» հայկական միասնականութիւնը: Ամիսներէ ի վեր, երեք կուսակցութիւնները կը խորհրդակցէին, օրինաւոր կերպով ժողովներ կը գումարէին եւ մենք անկեղծօրէն կը մտածէինք համաձայնութեան յանգելու մասին: Ինչ որ պետք է գիտնալ այն է, թէ լիբանանեան քաղաքականութեան պատմութեան մէջ, միշտ կրած ենք Դաշնակցութեան տիրապետութիւնը, ուր ի վերջոյ որոշումները ինք կ'առնէր: Կ'ընդունէինք այս տեսակի «տիրապետութիւնը» իսկութեան մէջ միասնականութիւնը պահպանելու համար: Այս անգամ եւս ճիգ չիւնայեցինք համաձայնութիւն մը գոյացնելու համար...սակայն՝ առանց յաջողութեան:

Տարիներէ ի վեր, Ռամկավար կուսակցութիւնը կը գործակցի Ռաֆիք

Հարիրիի հետ, համոզուած ըլլալով անոր քաղաքական եւ ընկերային գործունեութեան: Դաշնակցականները եւ հնչակները գիտէին Նաեւ, թէ ես հայ առաքելական թեկնածու էի այս ցանկին վրայ եւ ամբողջովին համաձայնած էին թեկնածութեանս: Սակայն առարկելով թէ կ'ուզեն ամէն գնով վերստին ձեռք ձգել Պէյրութի աւետարանական աթոռը, անոնք մեզմէ բաժնուեցան:

Պետք է ամէն մարդ գիտնայ, թէ այս աթոռը մեզի համար եւս կարելորդ է: Ռամկավարը եւս կ'ուզէր զայն պահել: Սակայն յիշեցէք, երբ Պէյրութը բաժնուեցաւ երեք ընտրաշրջաններու, իշխանութիւնները որոշեցին առաջին ընտրաշրջանի այս աթոռը տալ ոչ հայ աւետարանականի մը եւ քուէարկութիւն տեղի ունեցաւ խորհրդարանէն Ներս, ուր հայ երեսփոխաններու պլոքը թեր արտայայտուեցաւ: Այս պատճառաւ, ի դէպ գիտցանք թէ որեւէ հնարաւորութիւն չէր մնացած վերստին ձեռք ձգելու զայն, մանաւանդ որ լիբանանեան Սահմանադրութիւնը չի ճշդեր թէ աւետարանական աթոռը վերապահուած է միայն հայերուն:

Դաշնակցութեան կողմէ առաջադրուած հարցը սխալ է: Ես կը ժխտեմ եւ կը պնդեմ թէ, հակառակ այդ կուսակցութեան կողմէ ի զուր ամբաստանութիւններուն, ռամկավարները որեւէ ժամանակ չփափաքեցան հասնիլ երկպառակութեան: Ռամկավարները միշտ զիջումներ կատարեցին միասնականութեան անունով... Դաշնակցականները՝ բնաւ: Երկրորդ, կը հաւաստեմ թէ Հարիրի որեւէ ատեն մտադիր չէ բաժնելու հայկական շարքերը: Ընդհակառակը: Մինչեւ իր ցանկի յայտարարութեան Նախօրեակը, տակաւին կը յուսար որ անոնք համաձայնութեան մը հասնին:

Այդ օրէն, Հնչակեան կուսակցութիւնը, միանալով ռամկավարներուն, որոշեց հետեւիլ Նախկին վարչապետին առաջարկած քաղաքականութեան:

- Սակայն, Դաշնակցութեան ցանկին վրայ կը գտնուի Հնչակեան Ներկայացուցիչ մը: Այս կուսակցութեան Վարիչ Մարմինը լուծուեցաւ երկպառակութիւններու հետեւանքով եւ մամուլին մէջ կը կարդանք պաշտօնական հաղորդագրութիւն մը, ըստ որուն «Տոքթ. Եղիկ Ճերեճեան կը Ներկայացնէ միայն իր անձը», Ներկայիս պրն. Միհրան Սեֆերեանը օրինական թեկնածու չէ՞:

- Այստեղ կը խօսինք Հնչակեաններու մասին, որոնք բաժանումներ ունեցան: Իրաւ է, դէպքերը ցնցեցին այս կուսակցութիւնը, երբ Տոքթ. Ճերեճեան իր թեկնածութիւնը դրաւ: Կեդրոնական Վարչութիւնը որոշ հարցեր ունեցաւ, զորս գրգռուեցան արտաքին կողմերէ: Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւնը Նշանակեց թեկնածու մը դաշինք կնքելու համար Դաշնակցու-

թեան հետ եւ ըսելու թէ միասնական ճակատ մը գոյութիւն ունի: Ինչ որ ամբողջովին սխալ է:

Դժբախտաբար հայ երեսփոխաններու պլոք գոյութիւն չունի: Սակայն հնչակներու մեծամասնութիւնը դիրքորոշուեցաւ Տոքթ. Ճերեճեանի կողքին:

- Կ'ըսուի նաեւ թէ ձեր թեկնածութեան յայտարարութեամբ, Ռամկավար կուսակցութեան Շրջանային Վարչութիւնը ներկայացուց իր հրաժարականը՝ առ ի բողոք:

- Բացարձակօրէն սխալ է: Ասոնք անհիմն զրոյցներ են: Ես Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան նախագահն եմ եւ հոս կը հաստատեմ թէ իմ կուսակցութեանս բոլոր անդամները միացեալ են: Լիբանանի Շրջանային Վարչութիւնը միշտ համերաշխ եղած է Կեդրոնական Վարչութեան հետ:

Դեկավարները միշտ աչալուրջ էին եւ գիտցան յաղթահարել իրենց փոքր տարակարծութիւնները:

- Հայ երեսփոխանական պլոքը այլեւս գոյութիւն չունի, ինչպէս դուք կ'ըսէք: Սակայն այսօր գոյութիւն ունի հայկական միասնականութեան ճակատ մը:

- Արդեօք իսկապէ՞ս միացեալ ճակատ մըն է, ինչպէս ասոնք կը ձեւացնեն: Առաւել, Դաշնակցականները շահագործեցին պրն. Արթիւր Նազարեանի անունը, որ Յ.Բ.Ը.Մ.-ի անդամ է եւ որուն ես մաս կը կազմեմ: Արդէն Ֆրանսայի, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ պատասխանատու պաշտօններ գրաւեցի այս ապաքաղաքական Միութեան մէջ:

Այն իրողութիւնը թէ պրն. Նազարեան եւ ես թեկնածու ենք, այս Միութեան անդամները չի հարկադրեր որ դիրքորոշում ունենան: Կ.Բ.Ը.Մ.ի եւ Հնչակեաններու անուններու գործածութիւնը պարզապէս քաղաքական խաղ մըն է՝ չուզելով խոստովանիլ թէ այլեւս չկայ հայկական պլոք:

Կը վստահեցնեմ թէ մենք պատրաստ ենք ընտրութիւններու յաջորդ օրն իսկ վերակազմելու պլոք մը, որ պիտի ներկայացնէ հայկական երեք կուսակցութիւններու գաղափարները, բան մը որ մինչեւ հիմա Դաշնակցութեան մենատիրութիւնն էր:

Մենք այլեւս չենք ընդունիր տիրապետութիւն: Զաղաքական տիրապետութիւն գոյութիւն չունի:

- Համայնքը ցնցող բոլոր այս տազնապները անոր չէ՞ն վնասեր:

- Չեմ կարծեր: Վերջապէս, հայկական համայնքը կարելիութիւնը պիտի

ունենայ իր տրամադրության համաձայն քուեարկելու:

Լիբանան դեմոկրատ երկիր մըն է, շարժիւք այս հիման վրայ: Առաջ-
նորդուինք իբր լիբանանցի քաղաքացիներ, ինչ որ չի նշանակեր մոռնալ մեր
հայրենական արժէքները:

- *Ուրեմն դուք ձեզ համայնքէն մեկուսացած չէ՞ք զգար:*

- Ամենեւին: Ռամկավար կուսակցութիւնը բոլորին կողմէ յարգուած կու-
սակցութիւն մըն է: Պէտք էր փոփոխութիւն մը: Ամէն չարիքէ կ'առաջանայ
բարիք:

- *Ինչ կը մտածէք Պէյրութի, Մերնի եւ Պեքաայի մէջ դաշնակցական-
ինչակեան միութեան մասին:*

- Հոս հարցում մը ունիմ կատարելիք: Ինչպէ՞ս Դաշնակցութիւնը կը
մտածէ միութեան մասին եւ Ռամկավար կուսակցութիւնը կ'ամբաստանէ, թէ
խզեց այդ սուրբ դաշինքը, մինչ ան յայտարարեց թէ Պեքաայի մէջ իրենց
թեկնածուն կը ներկայանայ պրն. Սքաֆի ցանկին վրայ:

Եթէ Դաշնակցական ղեկավարները իսկապէս անկեղծ էին, ամէն բան ի
գործ թող դնէին յաջողցնելու համար միութիւն մը Լիբանանի ամէն տեղ:
Անոնք մտածեցին միայն Պէյրութի աթոռներուն մասին: Հետեւաբար, ձեզի
կը ձգեմ դատել իրենց դաշինք, միութիւն, միացեալ ճակատ մտածելակերպի
մասին:

- *Կ'ըսուի թէ Ռամկավար կուսակցութեան նախագահ էք, Զ.Բ.Ը.Մ.-ի եւ
Ֆրանսայի Հանրապետական Համախմբումի անդամ: Ինչպէ՞ս իրար հետ
պիտի հաշտեցնէք այս բազմակողմանի պատկանելութիւնները:*

- Ես բնաւ Ֆրանսայի Հանրապետական Համախմբումի մաս չեմ կազ-
մած: Ֆրանսայի Ռամկավար կուսակցութեան նախագահ հանդիսանալով եւ
Հանրապետական Համախմբումի գաղափարները բաժնելով, այս կուսակ-
ցութեան հետ սքանչելի կապեր ունեցանք: Արդարեւ, Դաշնակցականները
չէ՞ն գործակցիւ սոցիալիստներուն հետ: Սակայն ըսել թէ ես այդ
համախմբումին մաս կը կազմեմ, ամբողջովին սխալ է:

- *Հայ համայնքի կրօնական մեծաւորներու հետ հանդիպում ունեցա՞ք:*

- Բազմաթիւ անգամներ խորհրդակցութիւններ ունեցայ Լիբանանի հա-
յրութեան բոլոր հոգեւոր մեծաւորներուն հետ, որոնք ի սրտէ կը ցանկային
հայկական միութեան իրագործումը: Բոլոր կրօնական իշխանութիւնները կը
մաղթեն որ ընտրութիւնները տեղի ունենան դեմոկրատական մթնոլորտի

ներքեւ եւ ապագայ երեսփոխանները դարձեալ միանան: Այստեղ կ'ուզեմ աւելցնել թէ կրօնական մեծաւորները բոլոր կողմերու հանդէպ հաւասար հեռաւորութիւն կը պահեն:

- Յատուկ բան մը ունի՞ք ըսելու լիբանանցի ժողովուրդին եւ մասնաւորաբար հայերուն:

- Լիբանանցիները պէտք է խիտ շարքերով քուէարկեն: Ընտրութիւնները արդար պիտի ըլլան եւ որեւէ միջամտութիւն պիտի չկատարուի, ինչպէս խոստացաւ նախագահ Չօր. Էմիլ Լահուտ: Մենք իր անձին հանդէպ ամբողջական վստահութիւն ունինք:

Այս ընտրական պայքարը պէտք է տեղի ունենայ լիբանանեան մտածողութեամբ: Հայկական ընտրութիւններ չեն:

- Եթէ ընտրուիք, կը խոստանա՞ք փոփոխութիւններ, որոնք կրնան բարելաւել լիբանանցիներու ճակատագիրը:

- Քաղաքականութիւնը փոխել, հզօր կառավարութիւն մը ունենալ վարչապետի մը հետ, որ շրջանային եւ միջազգային կապեր ունի, ասոնք վստահութիւն պիտի ներշնչեն օտարներու եւ սփիւռքի մէջ հաստատուած լիբանանցիներուն, որպէսզի դարձեալ ներդրումներ կատարեն Լիբանանի մէջ:

Փոփոխութիւն մը կիրարկելով է որ նոր ուժականութիւն կը ներմղենք տնտեսութեան մէջ, ինչ որ կը նուազեցնէ նաեւ անգործութեան համեմատութիւնը, որ 35 առ հարիւրի մրցանիշ մը արձանագրեց:

Հարցազրոյցը վարեց ՍՈՆԻԱ ՆԻԿՈԼԵԱՆ

(Թարգմանութիւն)

«Լա Ռըլիւ Տիւ Լիպան», 19-26 Օգոստոս 2000 թուակիրէն

Երեսփոխան Յակոբ Գասարճեան իր զրոյցին ձեռնարկեց շնորհակալութիւն յայտնելով պէյրութցիներուն, «Արժանապատուութիւն» ցանկին իրենց տուած թանկագին վստահութեան համար: Այս գծով ան ըսաւ. «Պէյրութցիները կ'ողջունեն իրենց շնորհած վստահութեան համար, որ կը բխի երեք ամիսներու տեւողութեամբ անոնց հետ մեր ունեցած բազմաթիւ հանդիպումներէն, որոնց ընթացքին շօշափեցինք փոփոխութեան իրենց ծարաւին տարողութիւնը, ինչ որ փաստեցին քուէատուփերուն արդիւններով: Կ'ողջունեն նաեւ հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուտը, որ երեսփոխանական ընտրութեանց նախապատրաստութիւնները մեկնարկէլէն ի վեր մեզի հաստատեց, թէ անոնք պիտի ըլլան պարկէշտ ու ժողովրդավարական, եւ թէ օրէնքը բոլորէն վեր պիտի ըլլայ»:

Ապա շարունակելով ըսաւ. «Ընտրութիւնները իսկապէս պարկէշտ էին, այնպէս որ ժողովուրդը ամենայն ազատութեամբ իր կարծիքը արտայայտեց: Մարդիկ փաստեցին փոփոխութեան իրենց ցանկութիւնը մէկէ աւելի մարզերու մէջ: Վարչապետ Ռաֆիք Յարիրիին գլխաւորած «Մուսթաքպալ Յոսանք»ի պլոքին մէջ մեր ստացած վստահութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ հաստատումը փոփոխութեան անհրաժեշտութեան: Այս յոյսը չի սահմանափակուիր միայն Պէյրութով. ան կը տարածուի ամբողջ Լիբանանի վրայ: Վարչապետ Յարիրիին պլոքը կ'ընդգրկէ քաղաքական բազմաթիւ դէմքեր լիբանանեան զանազան շրջաններէ, եւ կը յուսանք որ զօրաւոր ըլլայ յուսացուած փոփոխութիւնը իրականացնելու համար: Ինչպէս նաեւ կը յուսանք, եթէ իսկապէս փոփոխութիւն կ'ուզենք, հասնիլ վարչապետի մը որ ներքին, շրջանային եւ միջազգային վստահութիւն կը վայելէ»:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

3. Խօսեցաք փոփոխութեան անհրաժեշտութեան մասին, որուն ծարաւը կը զգայ լիբանանցի ժողովուրդը: Ինչ փոփոխութիւն կը տանիք երեսփոխանական խորհուրդ, եւ այդ փոփոխութիւնը վարչապետ Յարիրիի պլոքէն պիտի ըլլայ:

Պ. Նախ մենք, որպէս «Արժանապատուութիւն» ցանկէն մասնակցած լիբանանահայ երեսփոխաններ, կ'անդամակցինք վարչապետ Յարիրիի պլոքին: Իսկ ինչ կը վերաբերի փոփոխութեան, այն տեղի պիտի ունենայ

«Մուսաբալալ Յոսանք»ի տնտեսական եւ ընկերային ուղեգիծին համաձայն, որ մեզի հնարաւորութիւն պիտի տայ այդ փոփոխութեան մասնակցելու բոլոր բնագաւառներուն մէջ, յուսալով որ երեսփոխանական խորհուրդը մեզի այդ հնարաւորութիւնը տայ:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԷՆ ՆԵՐՍ

Յ. Անցեալին Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը խորհրդարանին մէջ կը ներկայացուէր անուղղակի ձեւով, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամակցող երեսփոխաններու ընդմէջէն: Իսկ այսօր կը ներկայացուի Կեդրոնական Վարչութեան ատենապետին անձով: Ինչ է մեկնաբանութիւնը:

Պ. 40 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով պայքար տեղի կ'ունենայ հայ համայնքէն ներս: Վաթսունական թուականներուն, երբ ընդդիմութեան շարքերուն մէջ էր, Ռ.Ա.Կ.-ը մասնակցեցաւ ընտրութիւններուն եւ չհասաւ խորհրդարան, որովհետեւ իշխանութիւնը (այդ օրուան) կ'որոշէր ընտրութիւնները, որոնք այդ ժամանակ տեղի կ'ունենային այսօր տեղի ունեցածէն տարբեր ձեւով: Մենք միշտ պարտուողներէն էինք: Լիբանանեան պատերազմէն ետք, կուսակցութիւնը չմասնակցեցաւ ընտրութիւններուն: 1996ի ընտրութիւններուն անոր մասնակցութիւնը եկաւ հայկական համախոհութեան ճամբով, եւ այն ժամանակ զայն ուզեցինք Յ.Բ.Ը.Մ.-ի ընդմէջէն, ներկայացուած երեսփոխան Յակոբ Տեմիրճեանով, պայմանաւ որ մեզ ներկայացնէ իբրեւ հոսանք: Այդ ժամանակէն կը գործակցեինք վարչապետ Հարիրիի հետ:

Այս ընտրաշրջանին շատ փորձեցինք հայկական համախոհութիւնը իրականացնել անոր ճիշդ իմաստով եւ ոչ թէ ինչպէս որ ուրիշներ ուզեցին պատկերացնել զայն: Այս գծով, վարչապետ Հարիրի շատ աշխատեցաւ յաջողցնել հայկական համերաշխութիւնը, սակայն բազմաթիւ պատճառներով այդ հարցը չիրականացաւ: Հոս որոշեցինք ընտրապայքարը մղել «Արժանապատուութիւն» ցանկով, Հնչակեան կուսակցութենէն ու անկախ մեր եղբայրներուն հետ, եւ անուղղակի ձեւով Յ.Բ.Ը.Մ.-ի եւ Յ.Ե.Ը.-ին հետ:

Հոս հարկ է նշել, որ ընտրութիւնները Ռամկավար Ազատական Կուսակցութեան, ներկայացուած՝ Յակոբ Գասարճեանով, եւ անկախներուն առիթ տուին, Լիբանանի պատմութեան մէջ իր տեսակին մէջ առաջին անգամ գործնականօրէն գետին իջնելու, մարդոց հետ շփուելու եւ ըսելու, թէ ժամանակը եկած է որ հայ համայնքը բացուի լիբանանեան ընկերութեան:

Ժողովուրդին հետ մեր հանդիպումներուն ընթացքին շեշտեցինք, թէ հայերը իսկապէս իրենք զիրենք լիբանանցիներ կը նկատեն: Ես, որպէս Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ, համոզուած եմ կատարած

քայլերու, մանաւանդ որ հայերը պէտք է իրենք զիրենք ծագումով հայ լիբանանցիներ նկատեն: Անոնք պէտք է շփուին ժողովուրդին հետ եւ անելով միախառնուին լիբանանեան ընկերութեան, կազմելու համար անբաժանելի մէկ մասը լիբանանցի ժողովուրդին: Մեր հանդիպումներուն ընթացքին մեր ըսած այս հարցերը դրական մեծ անդրադարձ ունեցան լիբանանցիներու շարքերուն մէջ եւ մանաւանդ Պէյրութի ժողովուրդին մօտ, որոնք կը սպասէին ժողովուրդին հանդէպ հայոց բացուիլը:

Գալով Ռամկավար կուսակցութեան, ճիշդ է թէ առաջին անգամ ըլլալով անմիջականօրէն կը մասնակցի ընտրութիւններուն, բայց նաեւ առաջին անգամն է որ անմիջականօրէն յաջողութիւն կ'արձանագրէ: Կը խորհիմ որ այս յաջողութիւնը նոր բան մը տուաւ ի մասնաւորի կուսակցութեան եւ հայ համայնքին ընդհանուր առմամբ: Արդարեւ, ի հեճուկս տեղի ունեցած մրցակցութեան, արդիւնքները փաստեցին, թէ այսօր երեսփոխանական խորհուրդին մէջ կայ լիբանանահայութեան ճիշդ միասնականութիւն մը եւ ոչ թէ Զ.Յ.Դ.-ի տիրապետութիւն մը:

3. Կը խօսիք դաշնակներու տիրապետութեան մասին եւ...:

Պ. (Ընդմիջելով) Եւ լաւ գիտես այս հարցը: Պուրճ Զամուտի մէջ պատահածը* ընդունելի չէ երբեք: Բոլոր լիբանանցիները, իրենց զանազան համայնքային պատկանելութիւններով ու քաղաքական հոսանքներով, դատապարտեցին դաշնակցութեան կեղեքումի արարքները: Մենք, որպէս լիբանանահայեր, չենք կրնար ընդունիլ որ Պուրճ Զամուտը ըլլայ կղզի մը, որ կուսակցութեան ենթակայ իր օրէնքները ունենայ: Ասկէ մեկնելով կը նշեմ, որ հակառակ ընտրութեանց պարկեշտութեան Պէյրութի ինչպէս նաեւ լիբանանեան միւս շրջաններուն մէջ, կան մեծ թիւով հայ քաղաքացիներ, որոնք Պուրճ Զամուտի մէջ կ'ապրին կամ առետրական խանութներ ունին հոն եւ կը քուէարկեն Պէյրութի մէջ, եւ որոնք ճշումներու ենթարկուեցան: Այս պատճառով, ընտրութիւններուն մասնակցած հայերուն տոկոսը փոքր էր, եւ այս պէտք է նկատենք պարտութիւն մը ամբողջ հայ համայնքին համար: Զետեւաբար, պէտք չէ ըսել որ կողմ մը հայկական ձայներու մեծամասնութիւնը ստացաւ եւ կողմ մը մեծամասնութիւն չստացաւ: Իմ տեսանկիւնով, ես կը նկատեմ որ հայ համայնքին մասնակցութիւնը պարտութիւն էր մեզի եւ

** Խօսքը կը վերաբերի Պուրճ Զամուտի շրջանին մէջ տեղի ունեցած ընտրութիւններու ընթացքին Զ.Յ.Դ.-ի անդամներու գործադրած ճշումներուն, գրգռութիւններուն եւ բռնարարներուն, ինչպէս նաեւ Արժանապատուութիւն ցանկի անդամներէն ոմանց լուսանկարները պատռելու դէպքերուն, որոնք շարունակուեցան Արարատ Մարզական Միութեան ակումբին վրայ ռումբ նետելու արարքով:*

իրենց համար եւ պատճառը այն էր, որ հայկական մարզին մէջ ընտրութիւնները ազատ չէին: Ուստի, մը մաղթեմ որ թուականէս չորս տարիներ ետք, ըլլա՛յ Պեյրութի թէ Պուրճ Զամուտի մէջ, պայմանները փոխուին այն իմաստով, որ հայ քուէարկողը վայելէ արտայայտելու ազատութիւնը եւ աւելի մեծ ազատութեամբ քուէարկէ, մանաւանդ որ անկախները ջախջախիչ մեծամասնութիւնը կը կազմեն հայերուն մէջ: Ազատ եւ առանց ճնշումներու ընտրութիւններուն լոյսին տակ, կ'որոշուի թէ դաշնակցութի՞ւնը, թե՞ միւս կուսակցութիւնները կը ներկայացնեն մեծամասնութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

3. Պատահածին հետեւանքով, կարիք չկա՞յ որ Լիբանանի մէջ հայկական կուսակցութիւնները վերատեսութեան ենթարկեն իրենց տեղական քաղաքականութիւնը:

Պ. Անշուշտ, եւ ես կը շեշտեմ լիբանանեան ընկերութեան նկատմամբ հայ համայնքին բացուելու անհրաժեշտութիւնը: Այս հիման վրայ, մեր առած քայլը պէտք չէ որ նկատուի «ոսկոր կոտրել» կամ հայկական շարքերու միութեան խախտում: Այլ՝ քայլ մը նոր մտածելակերպի մը ուղղութեամբ, թէ ինչպէս լիբանանահայերը պէտք է միախառնուին լիբանանեան ընկերութեան, այնպէս որ հայերը իրենք զիրենք ազատ զգան եւ իսկապէս մասնակցին լիբանանեան կեանքին: Ազատութիւնը վայելելու հայուն համոզումը զօրացնող կէտերէն մէկն է քաղաքական կեանքին մասնակցելու ազատութիւնը եւ քուէարկել ինչպէս կողմսակիցներուն, նոյնպէս ալ՝ ընդդիմադիրներուն: Եւ այս է որ առաջին անգամ ըլլալով պատահեցաւ Լիբանանի մէջ, մանաւանդ որ հայերը յայտնի են իբրեւ միշտ իշխանութեան հետ եղող եւ կաղապարուած ընտրացանկի մը ծիրէն ներս: Մարդիկ չէին գիտնար իրենց թեկնածուները եւ ոչ ալ թեկնածուները կը գիտնային մարդիկը: Արդիւնքը կ'ըլլար առանց մրցակցութեան յաղթանակ:

Այս վիճակը այսօր փոխուած է: Զայերը, ինչպէս լիբանանցիները, ազատութիւն եւ ժողովրդավարութիւն կիրարկեցին, եւ այս նորութիւն է մեր համայնքին համար: Մեր կողմէն, մեր պաշտօնակիցներուն հետ պիտի աշխատինք զարգացնել այս մտայնութիւնը, որպէսզի յառաջիկայ չորս տարիներուն հասնինք այսօրուան մեր ստացածէն աւելի լաւ արդիւնքի, այնպէս մը որ հայ համայնքին մասնակցութիւնը ըլլայ կատարեալ ու խիտ, ամրապնդուած՝ կարծիքի արտայայտման ամբողջական ազատութեամբ, միւս լիբանանցիներուն նման:

3. Հայկական մթնոլորտէն ոչ հեռու, եւ հայկական շարքերուն մէջ բոլոր

պատահածներէն ետք, դուք եւ պաշտօնակից հայ երեսփոխանները որեւէ նախաձեռնութիւն պիտի ունենա՞ք յատկապէս 3.3.7.-ի ուղղութեամբ, շար-բերը վերամիացնելու համար:

Պ. Հայերը այսօր վեց են երեսփոխանական խորհուրդին մէջ. չորսը՝ «Արժանապատուութիւն» ցանկէն, վարչապետ Հարիրիի պլոքին մէջ: Մենք բաց ենք, որովհետեւ կը հաւատանք, որ հայկական շարքին միասնակա-նութիւնը պէտք է որ իրականանայ: Այս նիւթին շուրջ խօսեցանք մեզի պաշ-տօնակիցի մը հետ, որ Նոյնպէս յաջողեցաւ ընտրութիւններուն: Ընդգծուեցաւ որ հայկական համերաշխութիւնը գործնապէս պէտք է ըլլայ հայկական համերաշխութիւն, մանաւանդ որ հայկական բոլոր կուսակցութիւնները այսօր ներկայացուած են խորհրդարանին մէջ, անկախ երեսփոխաններու ներկայութեան կողքին, որոնք կը ներկայացնեն անկախ հայերէն հատուած մը: Այս պատճառով, որեւէ խնդիր չեմ տեսներ հայկական երեսփոխանական պլոքի իրականացման մէջ, պաշտպանելու համար Լիբանանի մէջ հայերուն իրաւունքները: Մենք ունինք կրօնական, կրթական, մշակութային եւ ընկե-րային բազմաթիւ հաստատութիւններ: Լիբանանեան միւս համայնքներուն նման ունինք նաեւ շատ խնդիրներ, որոնք կը պարտաւորեցնեն որ աշխա-տանք տանինք լուծելու այդ խնդիրները եւ հայկական զօրաւոր ու համա-խումբ ոյժերով ստանալու մեր համայնքային իրաւունքները:

Ասկէ մեկնելով, հայ բոլոր երեսփոխանները կը հրաւիրեմ հանդիպելու եւ համերաշխութիւնը իրականացնելու պլոքի մը ծիրէն ներս, ուր միասնաբար աշխատինք համայնքին իրաւունքները ապահովելու: Նոյն մարզին մէջ, կը հաւատամ որ «Արժանապատուութիւն» պլոքին եւ «Մուսթափալ Հոսան-ք»ին ընդմէջէն, որոնք կրնան աւելի քան 40 երեսփոխան հաշուել, կրնանք մեր խնդիրներուն դարմանումին գծով օգտուիլ երեսփոխանական խոր-հուրդին ծիրէն ներս, տրուած ըլլալով որ 40 երեսփոխաններու գործունեու-թիւնը աւելի կարելոր է 6 երեսփոխաններու աշխատանքէն: Այս է որ պէտք է մեր հայ եղբայրները հասկնան, թէ լաւագոյն միջոցն է Լիբանանի մէջ համայնքի շահերու պաշտպանումին համար:

3. Շնորհաւորանք ստացա՞ք, օրինակի համար, դաշնակ կուսակցութենէն:

Պ. Ո՛չ: Շնորհաւորանք ստացայ Արամ Ա. Կաթողիկոսէն եւ Առաջնորդ Գեղամ Խաչերեանէն, ինչպէս նաեւ մեծ թիւով դաշնակցական շարքային-ներէ, որոնք ինձի բարեկամներ են: Սակայն կը շարունակեմ ղեկավարու-թեան շնորհաւորութեան սպասել, մանաւանդ որ ընտրութիւններէն առաջ պնդեցինք որ ընտրական պայքարին նայուի մրցակցական ոգիով եւ ոչ թէ «ոսկոր կոտրելու» պայքարի ոգիով: Ժողովուրդի ձայները որոշեցին որ

ՆՈՒԻՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄԲՈՎ

հայկական քաղաքական բոլոր հոսանքները ներկայացուած ըլլան խորհրդարանին մէջ: Ինչ ալ ըլլայ, հայ բոլոր երեսփոխաններէն կը յուսամ, եւ ամենայն ազատութեամբ, իրականացնել հայ երեսփոխանական պլոքը, իսկապէս ըլլալու համար գործօն ու իսկական պլոք մը եւ ոչ թէ ինչպէս որ էր անցեալին, կուսակցական կեդրոնի մէջ պլոք մը, մանաւանդ որ բոլոր կուսակցութիւնները ներկայացուած են այսօր: Ուստի, պէտք է ըլլանք անկախ պլոք մը, որովհետեւ կ'ուզենք համայնքին համար աշխատիլ ամէն բանէ առաջ:

Հարցազրոյցը վարեց ՆՈՒՅԱՏ ԹՈՓԱԼԵԱՆ
«Անուար» օրաթերթ, Սեպտեմբեր 2000

Հարցազրույց Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան Ատենայետ Յակոբ Գասարճեանի հետ

*Հ. Պրն. Գասարճեան, ինչպէ՞ս կը գնահատէք երկրորդ Համահայկական
խորհրդաժողովը, ի՞նչ ակնկալիքներ ունէիք նախապէս:*

Պ. Երկրորդ խորհրդաժողովը իմ ակնկալածէս լաւ եղաւ. կը կարծեմ թէ սփիւռքի բոլոր պատասխանատուները համաձայն են այս կարծիքին: Մեծ ակնկալութիւններով չէի եկած, բայց արդիւնքը սպասուածէն աւելի յուսալի էր: Թեւեւ առայժմ գործնական արդիւնքներու չյանգեցանք, բայց կայ տրամադրութիւնը հայրենիքի եւ սփիւռքի պատասխանատուներուն կողմէ: Կար գործակցութեան ոգի, կար նպատակի հասնելու ցանկութիւն: Կը կարծեմ թէ յառաջիկային արդէն իսկ կը կարողանանք արդիւնքներ արձանագրել: Հարկաւոր է շարունակութիւն տալ արծարծուած նիւթերուն եւ գործնական առաջարկներ կեանքի կոչել երրորդ խորհրդաժողովին: Հարկաւոր է հետեւողական ըլլալ:

Քաղաքական տեսանկիւնէն եթէ դիտենք, կեցուածքի միասնութիւն կայ Ղարաբաղի եւ Հայ Դատի հարցերուն մէջ: Այս խնդիրներուն պարագային, կարելի է լուրջ համագործակցութիւն ակնկալել: Անհրաժեշտ է սակայն միասնական կերտուած ծրագիր եւ պետք է բացառել անձնական նախաձեռնութիւնները: Ի հարկէ եղան հարցեր, որոնց վրայ տակաւին հարցական չեշտադրումներ կան, օրինակ, դասական ուղղագրութեան վերադառնալու պարագան: Այսօրինակ խնդիրները կարելի է յաղթահարել ժամանակի ընթացքին. այդ մէկը դիւրաւ կ'իրագործուի եթէ Սփիւռքն ու Հայաստանը աւելի լաւ ճանչնան զիրար:

Խորհրդաժողովի հիմնական հարցը միասնականութիւնն էր: Պետք է ըսել թէ այս խորհրդաժողովին շնորհիւ միասնականութեան ոգին ամրապնդուեցաւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց մէջ:

*Հ. Ձեր նախորդ այցելութեան ժամանակ խոստացաք Շիրակի մարզին
մէջ շաքարի ճակնդեղի աճեցման համար ներդրում կատարող գտնել: Ի՞նչ
յաջողութիւն կայ այդ աշխատանքին մէջ:*

Պ. Աշխատանքները կը շարունակուին: Այս այցելութեան ժամանակ այդ հարցին կապակցութեամբ աւելի բարձր մակարդակի տեսակցութիւններ ունեցանք: Նախնական պայմանաւորուածութիւնները արդէն եղած են, կը

մնայ գործնական գետին տեղափոխել զանոնք: Առայժմ տակաւին վերջ-նական բան մը չեմ կրնար ըսել այդ առնչութեամբ: Կը կարծեմ թէ կարելի է այդ հարցին վերադառնալ մէկ ամիս յետոյ:

Յ. Ինչպիսի՞ն են ձեր տպաւորութիւնները Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան գործունեութեան մասին:

Պ. Ռ.Ա.Կ. եւ Հ.Ռ.Ա.Կ. յոբելեաններուն առիթով, անցեալ տարուան Նոյեմբերին, երբ եկայ, տեսայ որ մեծ աշխատանք կը ծաւալուի: Վեց ամիս անց Նոր, լուրջ զարգացումներ եւ ընդլայնուած աշխատանք կը տեսնեմ: Այսպէս թէ ընթանայ, պետք է յաջորդ խորհրդարանական ընտրութիւններուն մէջ լուրջ յաջողութիւններ ակնկալել: Մենք ալ այդ ուղղութեամբ պետք է աշխատինք մեր աջակցութիւնը բերելով, որ Հ.Ռ.Ա.Կ.-ը յաջորդ խորհրդարանին մէջ գոնէ բաւարար ներկայութիւն ունենայ, որովհետեւ, ռամկավարական գաղափարները անմիջականօրէն կարելի կ'ըլլայ կիրարկել՝ գործնական մասնակցութիւն բերելով երկրի քաղաքականութեան: Հ.Ռ.Ա.Կ.-ի քաղաքական գոյութիւնն ամրապնդելու հարցին մէջ դերակատարութիւն ունի նաեւ Հ.Ռ.Ա.Կ.-ը:

Յ. Ինչպիսի՞ն է արդեօք Ռ.Ա.Կ.-ի իրավիճակը, հարթումը են արդեօք տարակարծութիւնները:

Պ. Տարիներու վրայ կուտակուած տարակարծութիւնները, անշուշտ, հնարաւոր չէ մէկ անգամէն վերացնել: Կան որոշակի տարակարծութիւններ, սակայն ժողովրդավար կուսակցութեան յատուկ է տարակարծութիւնը եւ ընդդիմութիւն ունենալը: Թեւ լուրջ տարակարծութիւններ չեմ տեսներ:

Յ. Ինչ յարաբերութիւններ կան կան Ռ.Ա.Կ.-ի եւ Հ.Ռ.Ա.Կ.-ի միջեւ:

Պ. Մէկուկէս տարիէ ի վեր արդէն մենք միջկուսակցական գործակցութեան մէջ ենք, եւ այդ գործակցութիւնը հետզհետէ աւելի կը սերտանայ: Անհատական տարակարծութիւնները որոշ ընկերներու միջեւ գուցէ նկատուին, սակայն Ռ.Ա.Կ. Կեդրոնական եւ Հ.Ռ.Ա.Կ. Հանրապետական Վարչութիւնները ամբողջական, սերտ գործակցութեան մէջ են բոլոր ոլորտներուն մէջ:

Յ. Հետաքրքրական է, թէ ի՞նչ աշխատանքներ կը կատարէ Լիբանանի մէջ հայազգի պատգամաւորը: Որո՞նք են ձեր պարտաւորութիւնները ընտրողներուն հանդէպ: Կրնա՞ք համեմատել ձեր եւ Հայաստանի խորհրդարանականներուն գործունեութիւնն ու պարտաւորութիւնները:

Պ. Մեր երեսփոխաններուն գործունեութիւնը Հայաստանի մէջ չեմ գիտեր, բայց կը կարծեմ թէ Հայաստանի եւ Լիբանանի մէջ պատգամաւորներս Նոյն առաքելութիւնը ունինք:

Հայազգի պատգամաւորները Լիբանանի խորհրդարանին մէջ վեց հոգի են: Մենք կը զբաղինք Լիբանանի քաղաքականութեամբ, միեւնոյն ատեն կը ներկայացնենք հայ համայնքը: Մենք պարտաւորութիւններ ունինք ընտրողներուն հանդէպ, պետական, առողջապահական, կրթական եւ այլ հարցերու մէջ եւ պարտաւոր ենք աջակցիլ անոնց՝ անկախ կրօնական եւ ազգային պատկանելութենէն:

Յ. Ի՞նչ ծրագիրներ ունի Ռ.Ա.Կ.-ը յառաջիկային:

Պ. Իբրեւ քաղաքական կազմակերպութիւն, մեզի համար անշուշտ Հայ Դատի հետապնդումը կարեւորագոյն ծրագիր է: Կուսակցութենէն ներս հարկաւոր է լրացնել տարիներու բացթողումները, վերադասաւորութեան անհրաժեշտութիւն կայ: Կարեւորագոյն խնդիր կը համարենք Հ.Ռ.Ա.Կ.-ի քաղաքական յաջողութիւնները, որոնք կը գտնուին Ռ.Ա.Կ.-ի շահագրգռութիւններու շրջանակին մէջ:

Աւարտին Յակոբ Գասարճեան խօսեցաւ Հայաստան այցելութեան տպաւորութիւններուն մասին:

Կը վերադառնամ ուրախ եւ խանդավառ: Ակնկալածես ակելին տեսայ թե՛ խորհրդաժողովին, թե՛ Հ.Ռ.Ա.Կ.-ի յաջողութիւններուն առումով: Նոր ակումբներ, գրասենեակներ բացուած են եւ շատ են մեր կուսակցութեան զինուորագրուող նորագիրները: Ինծի համար հպարտութիւն է որ անոնց մէջ կան անուանի անձեր: Ասիկա ոյժ կու տայ շարունակելու հայրենիքը շէնցնելու մեր դժուարին առաքելութիւնը:

ՄԱՌԷՆԱ ՅՈՎՍԷՓԵԱՆ

«Ազգ», Յունիս 2002

«Չարթունք»ի հարցազրույցը ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ ՀԵՏ

Յ. Տնտեսական տազնապը տակաւ կը յուզէ ու կը մտահոգէ լիբանանցիին: Զիչ են այն գործօնները, որոնք զինք կրնան մղել լաւատեսութեան:

Սակայն, եթէ ականջ տանք «Փարիզ-2» ծրագիրին եւ անկէ բխած յուսադրական կոչերուն եւ յայտարարութիւններուն, այն տպաւորութիւնը կը ստեղծուի, թէ իրօք կայ այդ հաւանականութիւնը:

Կրնամք մեր ընթերցողները այս ուղղութեամբ լուսաբանել ու տալ որոշ մանրամասնութիւններ:

Պ. Իրականութիւն ըլլալէ չի դադրիր, որ տնտեսական տազնապը այսօր մղծաւանջ մըն է բոլոր կարգի լիբանանցիներուն համար՝ գործարարէն մինչեւ ամենէն պարզ քաղաքացին:

Լիբանանի երկարամեայ պատերազմը, շրջանային իրադարձութիւնները, Սեպտեմբեր 2011ը, ինչպէս նաեւ վերականգնումի փորձերը ստեղծեցին դժուարագոյն մարտահրաւերներ, որոնց լուծումները կը կարօտէին ժամանակի ու պայմաններու:

Անշուշտ, այս ծրագիրը մեծ յաջողութիւն արձանագրեց: Զանի կառավարութիւնը, յատկապէս «Փարիզ-2»-էն ետք, տնտեսական անհրաժեշտ քայլերը առաւ ու դիմեց նախաձեռնութիւններու, օտար երկիրներուն ցոյց տալու, թէ միայն իրենց միջոցներով եւ օգնութեամբ չէ որ Լիբանան պիտի յաջողցնէ այս ծրագիրը, այլ՝ ինքն ալ իր գործօն ու շօշափելի մասնակցութիւնը պիտի բերէ: Իսկ այսօր այդ նախանշանները սկսած են երեւան գալ: Տարեկան պիւտճէն եւս այդ ցոյց կու տայ:

Այս բոլորը կրնան աւելի մնայուն եւ արդիւնաւետ դառնալ, եթէ ամէն ոք հասկացողութիւն ցուցաբերէ ու քաղաքական համաձայնութիւնն ալ նպաստէ անոր:

TVAN (*աւելցած արժէքի տուրքը*) ու տուրքերը (ուղղակի կամ անուղղակի), պարտադիր պահանջքներ են, որոնք կը նպաստեն պետական գանձարկոյին, որուն դիմաց կան նաեւ ներքին ծախսերը, մսխումներն ու չափազանցութիւնները կանխելու խիստ միջոցառումներ:

Կարելոր է նշել, որ «Փարիզ-2»ի յաջողութեան նպաստեցին նաեւ հոգեբանական ազդակները՝ արաբական ու ֆրանքոֆոնեան խորհրդածողովները, որոնք կայացան Պէյրութի մէջ, մեծ վարկ ապահովելով Լիբանանին ու

վստահություններ չնչելով անոր նկատմամբ:

Նախագահ Շիրաքի ու վարչապետ Հարիրիի սերտ, արդիւնաւետ եւ օգտաշատ համագործակցութիւնը, անտարակոյս, մեծապէս նպաստեց «Փարիզ-2»ի յաջողութեամբ պսակուելուն: Նոյնքան ալ դրական դերակատարութիւն ունեցան Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատն ու Սեուտական Արաբիան, իրենց ամբողջական նեցուկովն ու ներդրումովը:

Մենք վստահ ենք, հետագայ զարգացումները ցոյց պիտի տան, թէ «Փարիզ-2»ը իրապէս կը ծառայէ իր նպատակին եւ արտաքին պարտքը պիտի ենթարկուի հաւասարակշռումի:

Յոռետեսները կամ թերահաւատները եւս պիտի համոզուին, որ կատարուածը դրական է ու կրնայ տնտեսութեան մէջ շօշափելի դեր ունենայ, մանաւանդ երբ բոլոր կողմերէն կան վստահութեան տրամադրութիւններ ու համագործակցութեան պատրաստակամութիւններ:

11 Յունուար 2003

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԴԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐԾԵԱՆԻ ՀԵՏ

Հ.- Լիբանանի մէջ տիրող ապահովական-քաղաքական անկայունութիւնը, աւելի քան տարիէ մը ի վեր, կ'ալեկոծէ լիբանանցիներն ու զանոնք կը մղէ կեցուածքներու զանազան դրսեւորումներով հանդէս գալու:

Ինչպէս կը բնութագրէք քաղաքական ներկայ կացութիւնը եւ ի՞նչ ազդեցութիւն ունին անոր վրայ շրջանային ու միջազգային ոլորտները:

Պ.- Ներկայիս կացութիւնը, համեմատաբար, աւելի յոյս ներշնչող է, մանաւանդ որ՝ ապահովական յիշատակելի խանգարումներ չկան, եթէ բացառենք իսրայելեան սահմանային եւ օդային ոտնձգութիւնները:

Քաղաքական առումով ալ, կարելի է ըսել թէ կայ կայունութիւն մը, սակայն մերթ ընդ մերթ կան բռնկումներ, որոնք, կը կարծեմ, բնական պէտք է նկատել, այնքան ատեն որ Լիբանանի մէջ բազմակարծութեան ընտրանքը ընդունելի չափանիշ է:

Սակայն համոզուած եմ, որ այս բոլորը իրենց ամբողջական կայունութեան կը յանգին, երբ երեւան գայ **ճշմարտութիւնը**՝ նահատակ Ռաֆիք Հարիրիի սպանութեան հարցով, որ ինչպէս Լիբանանի պարագային, պահանջք մըն է նաեւ շրջանային ու միջազգային մակարդակներով, որովհետեւ անոնք եւս առնչուած են կամ հետաքրքրուած Լիբանանի ապահովական-քաղաքական կայունութեամբ:

Հ.-Ազգային երկխօսութեան ընտրանքը բոլոր կողմերուն համար ընդունելի միակ ելքը նկատուեցաւ, լիբանանեան հարցերը ներքին համաձայնութեամբ լուծուած տեսնելու: Ցարդ համաձայնուած հարցերը՝ պաղեստինեան զէնք, լիբանանեան-սուրիական յարաբերութիւններ, եւ այլն, կարծեք թէ ժամանակի ընթացքին պիտի իրագործուին, իսկ դիմադրութեան զինաթափութեան խնդիրը ինչի՞ կրնայ յանգիլ:

Պ.-Շատ ճիշդ է: Նախ պէտք է շնորհաւորել խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի այս նախաձեռնութիւնը: Ազգային երկխօսութիւնը միակ փրկութիւնն է, միակ միջոցն է ներլիբանանեան եւ նաեւ միջարաբական հարցերը լուծուած տեսնելու, մանաւանդ անոնք որոնք առնչութիւն ունին պաղեստինեան ներկայութեան, լիբանանեան-սուրիական յարաբերութեանց, միջազգային ատենանի մը կազմութեան:

Լիբանանցիները վստահ են, որ այս եւ այլ հրատապ հարցերու շուրջ կրնան համաձայնիլ, գէթ սկզբունքային առումով, սակայն կարելորդ այն է, որ այդ բոլորը թոյլատու ըլլան նաեւ միջին արեւելեան տագնապներու մեղմացումի ծիրէն ներս եւ արաբական խնդրոյ առարկայ կողմերու համաձայնութեամբ:

Այս տրամաբանութեամբ ալ, ինչպէս գիտէք, երկխօսութեան խորհրդա-ժողովը գրեթէ բոլոր հարցադրելի կետերուն շուրջ համախոհութեան ու հաւանութեան արժանացաւ, միակ խնդիրը, որ ցարդ կը մնայ առկախեալ վիճակի մը մէջ, դիմադրութեան շարժումի օրակարգն է, որուն շուրջ կայ տարակարծութիւն, բայց երբ ժամանակը գայ, լիբանանցիք կրնան ատոր ալ բարութեւնը մը գտնել:

3.- Լիբանանահայութիւնը, փաստօրէն, երկխօսութեան իր մասնակցութիւնը բերաւ իր երեք կուսակցութիւններու երեսփոխանական ներկայացուցչութեամբ: Այս բարենշեղի համաձայնութենէն զատ, դուք՝ ներկայացուցիչներդ, ինչպէ՞ս կը ներդաշնակէք Ձեր տեսակետները, նախ՝ իրար միջեւ, ապա՝ միւս խորհրդակիցներուն հետ:

Պ.- Լիբանանահայութեան մասնակցութիւնը երկխօսութեան, մէկ ներկայացուցչութեամբ, իսկապէս դիտուեցաւ իբրեւ զնահատելի երեւոյթ մը, ոչ միայն մեր, այլեւ լիբանանեան քաղաքական միւս կազմակերպութիւններուն եւ ընդհանրապէս լիբանանցիներուն կողմէ, որոնք բարի նախանձով դիտեցին զայն:

Օրինակի համար, երեսփոխան Սաատ Յարիրի, երբ իմացաւ լիբանահայութեան այս միասնական կեցուածքին մասին, ամբողջովին համաձայն գտնուեցաւ անոր եւ իր անկեղծ զօրակցութիւնը յայտնեց:

Կը յուսամ եւ ջերմապէս կը մաղթեմ, որ մեր գաղութային ու համայնքային բոլոր հարցերու պարագային ալ այս օրինակելի կեցուածքները որդեգրենք:

Ինչ կը վերաբերի մեր դիրքորոշումներուն, մենք լիբանանեան գերիշխանութեան, մէկութեան ու միասնականութեան ջատագով ենք, իսկ ուր որ կան տարակարծելի սուր հարցեր, մեր ներկայացուցչութիւնը հանդէս կու գայ զանոնք մեղմելու ու վերացնելու միջնորդութիւններով:

3.-Դուք նշանակուած էք Լիբանան-Հայաստան խորհրդարանական յանձնախումբի նախագահ եւ այդ առիթով ալ ատենին այցելած էք Երեւան: Այսօր ի՞նչ վիճակի մէջ կը գտնուին այդ յարաբերութիւնները, ու՞ր յաջողութիւն արձանագրուած է եւ ու՞ր՝ տատանում, իսկ հեռանկարներն ալ ի՞նչ են:

Պ.- Նահատակ Ռաֆիք Յարիրիի օրով, երբ պաշտօնական այցով կը

գտնուելիք Երեւան, Լիբանան-Հայաստան համագործակցութեան հիմերը դրինք, այն վճռակամութեամբ, որ անմիջական յառաջիկային զանոնք ի կատար կ'ածենք:

Եւ իրաւամբ, այդ ուղղութեամբ իմ գլխաւորած յանձնախումբը նախագիծը պատրաստեց անոր, որ արժանացաւ խորհրդարանի ղեկավարութեան գնահատանքին, սակայն Հարիրիի սպանութիւնը որոշ ատեն մը սառեցուց զայն, իսկ Երեսփոխանական վերջին ընտրութիւններէն ետք վերահաստատուեցայ նախագահութեան պաշտօնին:

Պըրրիի կողմէ, իբրեւ անոր ներկայացուցիչը, երբ մեկնեցայ Երեւան, մասնակցելու Հայաստանի Ազգային Ժողովի հիմնադրութեան տարեդարձին, մեր փոխադարձ առաջադրանքներն ու յանձնառութիւնները վերահաստատեցինք, ինչ որ ջերմապէս ողջունուեցաւ խորհրդարանի նախագահ Արթուր Բաղդասարեանի կողմէ, իսկ այս վերջնոյն հրաժարումը դարձեալ առկախեց մեր գործունեութիւնը:

Սակայն վստահ եմ, որ շատ մօտիկ ապագային կը վերահաստատենք մեր համագործակցութեան պարտաւորութիւնները, որոնք, անտարակոյս, թէ՛ Լիբանանի, թէ՛ Հայաստանի, ինչպէս նաեւ զոյգ ժողովուրդներու համար առաջնային ըլլալով, մեծապէս օգտակար պիտի դառնան անոնց:

Ժամանակը պիտի հաստատէ ու պարզէ մեր այս յառաջխաղացքը:

3.- Շուտով կը կայանայ Հայաստան-Սփիւռք Գ. Համաժողովը, որուն առնչութեամբ հայրենի իշխանութիւններն ու զաղթածախները մեծ խանդավառութիւն ցոյց կու տան:

Դուք նախորդ երկուքին մասնակցած ըլլալով, ինչպէ՞ս կը գնահատէք զանոնք եւ ի՞նչ ակնկալութիւններ ունիք այս վերջինէն:

Պ.- Իրաւունք ունիք, ես երկու խորհրդաժողովներուն ալ մասնակցած եմ իբրեւ Ռ.Ա.Կ.-ի ներկայացուցիչ եւ նաեւ լիբանանեան խորհրդարանի անդամ եւ իմ մասնակցութիւնս բերած եմ ղեկավարական թէ յանձնախմբային խորհրդակցութիւններուն:

Կը ցաւիմ ըսելու, թէ երկու խորհրդաժողովներն ալ գործնական գրեթէ ոչինչ տուին մեզի, բացի հաճելի ժամանցներէ, որոնք այլապէս ալ հայրենասիրական առումով յիշարժան էին:

Միակ ուրախութիւնը զոր կ'ապրիմ այսօր այն է, որ Հայաստանի քայլերզը, որուն նկատմամբ ի սկզբանէ ունեինք մեր վերապահութիւնը, հրապարակաւ պահանջած ըլլալով զայն փոխել առաջին իսկ առիթով, արդէն փոփոխութեան ենթարկելու գործընթացի մէջ է:

Իսկ Գ. խորհրդաժողովէն ի՞նչ ակնկալութիւն կրնամ ունենալ, երբ կը

տեսնեմ ու կը լսեմ, թե գրեթե Նոյն ոճով ու յանկերգով քարոզչութիւն կը կատարուի, մաղթեմ որ կը սխալիմ եւ խորհրդաժողովը կ'ունենայ իր գործնական արդիւնքը եւ մանաւանդ հետեւողական ընթացքն ու շարունակականութիւնը:

Յ.- Յ.Բ.Ը. Միութիւնը, իր հարիւրամեայ տարեդարձով, կը կատարէ իր արժեւորումը անցեալի գործունեութեանց եւ ծրագրաւորումը յառաջիկային:

Յ.Բ.Ը.Մ.-ի եւ Յ.Ե.Ը.-ի կեանքին մէջ ունենալով Ձեր գործօն մասնակցութիւնը, ի՞նչ խօսք ունիք անոր վաստակին ու հեռանկարին մասին:

Պ.- Յ.Բ.Ը. Միութիւնը՝ իր համագգային ներկայութեամբ, գործունեութեամբ եւ արդիւնաւետութեամբ, հսկայական դեր ունեցած 1906էն ի վեր, որուն պտուղները քաղած է հայ ժողովուրդը ի սփիւռս եւ ի Հայաստան, Նոյնիսկ Պաղ պատերազմի շրջանին:

Հարիւրամեայ Միութիւնը, սակայն, իր աւանդական ուղեգիծը պահելով հանդերձ, անխուսափելիօրէն կը գտնուի յառաջիկայ հարիւրամեակի ծրագիրներ մշակելու ու գործադրելու պարտաւորութեան առջեւ, վերանորոգուած ու բարեկարգուած քաղաքականութեամբ մը:

Յ.Բ.Ը. Միութիւնը, ո՛չ երէկ, ո՛չ այսօր, ո՛չ ալ վաղը կրնայ շեղիլ իր ազգային, հայրենասիրական, կրթական ու բարեգործական ուղիէն, ինչպէս կը կարծեն կամ կը մեկնաբանեն ոմանք:

Ատիկա բացառուած է եւ մօտիկ ապագան ցոյց պիտի տայ այս ճշմարտութիւնը:

Յ.- Ռ.Ա.Կ.-ը շուտով կը նշէ իր հիմնադրութեան 85 ամեակը, սփիւռքի տարբեր գաղթօճախներու ու նաեւ Հայաստանի մէջ:

Ի՞նչ են Ձեր ակնկալութիւններն ու առաջադրանքները կուսակցութեան հետագայ գործընթացէն եւ ինչպէ՞ս կը տեսնէք անոր վերաշխուժացումը:

Պ.- Ռ.Ա.Կ.-ի 85 ամեակը պէտք է ըլլայ այն հանգրուանը, որ կուսակցութիւնը վերանորոգուի իր բովանդակութեամբ, գործունեութեամբ եւ ապագայակերտումով:

Առաջին կարգին՝ պէտք է Ռ.Ա.Կ.-ի Ծրագիր-Կանոնագիրը հիմնովին բարեփոխուի, առանց անոր սկզբունքային վարքագիծին դաչելու:

Երկրորդ՝ շրջանակները, մանաւանդ անոնք որոնք ունին տեղական, քաղաքական դերակատարութիւն, պէտք է դառնան ինքնավար ու կեդրոնաձիգ, սակայն կառչած մնալով կուսակցութեան ընդհանուր ոգիին ու դաւանանքին, եւ միշտ գործեն կուսակցութեան գերագոյն մարմիններու գիտակցութեամբ ու համախոհութեամբ:

Երրորդ՝ ժամանակն է որ Ռ.Ա.Կ.-ը երիտասարդանայ, այսինքն՝ սերնդափոխություն կատարուի անոր շարքերուն մէջ, անդամակցութեան ու ղեկավարութեան մարզերէն ներս, որուն համար պէտք է տրամադրել մեր բարոյական ամբողջ դրամագլուխը:

Չորրորդ եւ, ըստ իս, ամենէն կարեւորը, Ռ.Ա.Կ.-Թ.Մ.Մ. միասնութիւնն ու կապուածութիւնը դրուին ամուր հիմերու վրայ, որովհետեւ երկրորդը ծնունդն է առաջինին, իսկ առաջինը չի կրնար գոյութիւն ունենալ առանց երկրորդին, հետեւաբար, մեր զոյգ կազմակերպութիւններուն համագործակցութիւնը պէտք է ըլլայ լիակատար եւ ամբողջական, հեռու արուեստական անջատումներէ կամ բաժանումներէ:

3.- Իբրեւ երեսփոխան ու կուսակցական ղեկավար, յատկապէս անցնող տասը տարիներուն, քաղաքական եւ ազգային կեանքին մէջ ունեցաք զանազան փորձառութիւններ:

Այս մասին ի՞նչ կրնաք փոխանցել մեր ընթերցողներուն:

Պ.- 2000 թուականին, երբ խորհրդարանին մէջ ազգային երեք կուսակցութիւնները ներկայացուեցան իրենց երեսփոխաններով, արդէն վերջ գտաւ տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող միագոյն ներկայացուցչական դրութիւնը: Ներկայ վիճակը, վստահաբար, շատ անելի առողջ ու դրական է եւ այդ գոհունակութիւնը կու տայ նաեւ լիբանանահայութեան, լիայոյս ըլլալով որ այս վիճակը կը շարունակուի հետագային, գաղութային կեանքի միւս մարզերուն մէջ եւս ունենալով նոյն համագործակցութիւնն ու ներկայացուցչութիւնը:

Ջերմ փափաքս է, որ լիբանանեան քաղաքական եւ համայնքային կեանքին մէջ ունենանք մեր առաւել գործօն մասնակցութիւնը, հաւատացած ըլլալով որ, ինչպէս այլ շրջանակներ կամ համայնքներ, մենք եւս ունենանք մեր արդիւնաբեր ներկայութիւնը, իբրեւ պարկեշտ քաղաքացիներ, նուիրեալ հայեր եւ աշխատունակ հաւաքականութիւններ:

«Չարթօնք», Պէյրուք, 28 Մայիս 2006

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ՝ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Հարցում.- «Ձարթօնք»-ի այս երկարատև ընդհատումի ընթացքին, ինչպես նաև այսօր, երբ «Ձարթօնք» վերստին լոյս կը տեսնէ, հայ հասարակութեան լայն խաւերուն մէջ անընդհատ կ'արծարծուէր միեւնոյն հարցումը: Ինչո՞ւ դադրեցաւ «Ձարթօնք» եւ մանաւանդ ինչո՞ւ այսքան ձգձգուեցաւ անոր վերահրատարակումը: Եղան բազմաթիւ մեկնութիւններ, եղան բազմաթիւ հաստատումներ ու ժխտումներ, սակայն բոլորն ալ բերանացի, ուրեմն նաեւ ոչ պաշտօնական: Նախքան անցեալի այդ տխուր էջը դարձնելը, կարելի՞ է արդեօք երկու խօսք ըսել այդ պատճառներուն մասին, որոնք «Ձարթօնք»-ի այս անցանկալի խափանումին պատճառ դարձան:

Պատասխան.- Առաջին հերթին կ'ուզեմ շնորհաւորել եւ ողջոյնի խօսք ուղղել «Ձարթօնք»-ի վերահրատարակութեան առիթով, որ երկար ատենէ ի վեր դժբախտաբար դադրած էր: Բայց այսօր կը կարծեմ վերածնունդ մը պիտի տանք «Ձարթօնք»-ին, որպէսզի իր անցեալ հմայքը առնէ կամաց-կամաց, թէւ իր առաջուան իրավիճակին մէջ դնելու համար թեքնիք դժուարութիւններ պիտի ըլլան հաւանաբար, ատիկա բոլորս ալ գիտենք:

Գալով «Ձարթօնք»-ի դադրելուն, ճիշդ է որ դուրսը զանազան անձնական հաշիւներով մեկնաբանութիւններ եղան եւ կուսակցութեան այս վերջին տարիներու անցեալի իրադարձութիւնները իրենց ազդեցութիւնը ունեցան այս կէտին մէջ: Նաեւ, ինչու չէ, տարիներէ ի վեր «Ձարթօնք»-ի նիւթական դժուարութիւնները իրենց տեղը ունէին: Պարզաբանելու համար ըսեմ, որ վերջին տասնեակ մը տարիներու ընթացքին Թեքեան Մշակութային Միութեան հիմնական եկամուտները բոլորն ալ կը գործածուէին «Ձարթօնք»-ի բացերը գոցելու համար: Գաղտնիք մը չէ, որ մեր բոլոր ազգային թերթերը կը ֆինանսաւորուին համապատասխան կուսակցութիւններու պատկան միութիւններու կողմէ: Տարբեր չէր նաեւ «Ձարթօնք»-ի պարագային: Բայց պէտք է ըսել նաեւ, որ «Ձարթօնք»-ի խմբագրութենէն մինչեւ վարչական պատասխանատուները դժբախտաբար պէտք եղած աշխատանքը տարած չէն որպէսզի ուրիշ մուտքեր ապահովեն եւ թերթը մնացած էր միայն ու միայն Թ.Մ.Մ.-ի եկամուտներու յոյսին:

Այս ըսելով պիտի անցնիմ նաեւ երկրորդ կէտին, որ դժբախտաբար իրականութիւն մըն էր մեր կուսակցութեան կեանքին մէջ: 1995էն սկսեալ

կուսակցութիւնը իր վերիվայրումները ունեցաւ, զանազան շրջանակներու մէջ բաժանումներ եղան, խռովութիւններ ծայր առին, հաւաքական աշխատանքը դադրեցաւ, կուսակցականներ յուզուեցան եւ ընդվզեցան եղածէն եւ ասիկա մեզի այնպիսի իրականութեան մը առջեւ դրաւ, որ դժուարութիւններ ունեցանք բոլոր բնագաւառներէն ներս՝ ըլլայ նիւթական, ըլլայ միութենական, ըլլայ կուսակցական: Այս երեւոյթը տեղ մը հասցուց որ այդ զիրար չհասկնալու երեւոյթը աւելի խորացաւ: Ասոնք էին «Չարթօնք»ը խափանուելու հիմնական պատճառները: Անշուշտ մեր բոլոր կուսակցական դժուարութիւններէն բխած մենք նաեւ մասնաւոր դժուարութիւն մը ունեցանք Լիբանանի մէջ: Հոս կ'ուզեմ շեշտել որ կարգ մը կուսակցականներ իրենց անձնական շահերուն, իրենց անձնական «ես»երուն աւելի կարեւորութիւն տալով, կուսակցութիւնը դրին նոր ձեւի դժուարութեան մը մէջ: Ասոնցմէ ոմանք, կամ անձ մը, որ կուսակցական ըլլալէն ի վեր իր միակ ներդրումը կուսակցութեան մէջ եղած էր դատեր բանալ, այդ պատճառով Միութիւնը նոր դժուարութիւններու առջեւ դրաւ: Անշուշտ գաղտնիք մը չէ ըսածս. Լիբանանի հայութիւնը, ով որ հետաքրքրուած է ազգային կեանքով, գիտէ թէ որու մասին կը խօսիմ: Այդ անձը շարունակական կերպով տասնեակ մը տարիներէ ի վեր կը շարունակէ դատեր բանալ ըլլայ Միութեան դէմ, ըլլայ ղեկավարներու դէմ: Իր վերջին դատը Թ.Մ.Մ.-ի դէմ հասցուց տեղ մը, ուր դատարանի միջոցաւ պետական դժուարութիւններու առջեւ գտնուեցանք, երբ Միութիւնը այլեւս չէր կրնար իր նիւթական ներդրումը բերել «Չարթօնք»ի հրատարակութեան: Այս պատճառով է որ թերթը զրկուելով Թ.Մ.Մ.-ի նիւթական օժանդակութենէն, քանի որ այդ բանը պետականօրէն եւ օրինական տեսակէտէ արգիլուեցաւ, ստիպուած եղաւ դադրելու:

Հոս պիտի վերջանար հարցը, եթէ ուրիշ շարունակականութիւն մը չըլլար: Մինչ զբաղած էինք այդ նիւթական հարցերուն կարգադրութիւններ բերելով, այս անգամ դժուարութեան առջեւ գտնուեցանք խմբագրութենէն անձերու, յատկապէս պարոն խմբագիրին հետ, որուն առաջին օրէն ըսուած էր թէ «Չարթօնք» պիտի դադրի եւ նոր ձեւաւորում մը պիտի առնէ: Իրեն վստահեցուցած էինք թէ իր բոլոր օրինական իրաւունքները պիտի ստանայ մինչեւ վերջին լուման: Հակառակ այս բոլորին, այն անձին որ իր դատերով անուղղակիօրէն պատճառ եղած էր «Չարթօնք»ի դադրեցումին եւ իր շուրջիններուն միտումնաւոր հրահրումով, դատեր բացուեցան կրկին անգամ որպէսզի իրաւունքներ պահանջուին եւ այլն, եւ այդ դատերը երկարեցան ու երկարեցան մինչեւ այն օրը որ այդ իրաւունքներուն, որոնք արդէն իսկ խոստացուած էին սկիզբէն ի վեր, օրինաւորապէս տիրանան եւ դատերը ետ քաշուին:

Իմ միակ փափաքս է, որ հոս հասնելէ ետք մեր բոլոր բարեկամները,

ընկերները, բոլոր մեր շարքայիները, ղեկավարութիւնը հասկնան թէ այլեւս ժամանակը եկած է ձեռք-ձեռքի տալու եւ միասնաբար գործելու, որպէսզի «Չարթօնք»ը իր այս բացակայութենէն ետք յաջողութեամբ վերսկսի եւ յաջողութեամբ շարունակէ: Ասոր անշուշտ հիմնական թիկունք կեցողը պիտի ըլլայ ղեկավարութիւնը եւ անոր խմբագրական կազմը ու միասնաբար համագործակցելով «Չարթօնք»ը իր առաջուայ հմայքը ստանայ: Խօսքս հոս ոչ թէ անցած տասնեակ մը տարիներու, այլ՝ Թէքէտաններու, Ահարոնեաններու «Չարթօնք»ի, անոնցմէ մեզի մնացած փայլքին հանելու մասին է:

3.- Կարելի՞ է արդեօք այս իրավիճակը անցած համարել եւ նոր էջ մը բանալ «Չարթօնք»ի երկարատեւ պատմութեան մատենակին մէջ:

Պ.- Հոս կ'ուզեմ հիմնական եւ հաւանաբար պատմական եղելութեան մը անդրադառնալ, որ կատարուեցաւ այս վերջին քանի մը տարիներու ընթացքին: Պէտք է սկսիմ շատ հակիրճ պատմական մը տալով: Համեստօրէն կրնամ ըսել, որ երբ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետն էի ասկէ երեք-չորս տարի առաջ, այն գաղափարը ունեցայ թէ ժամանակն է որ կուսակցութիւնը պետականօրէն գրանցուի եւ օրինական իրավիճակը ունենայ: Չեմ գիտեր թէ մեր միւս կուսակցութիւնները կը ցանկան կամ ոչ, ամէն պարագայի Ռ.Ա.Կ.-ի պարագային Կեդրոնական Վարչութեան համաձայնութեամբ որոշում առինք եւ պետականօրէն կուսակցութիւնը արձանագրուեցաւ իբրեւ քաղաքական կազմակերպութիւն: Թէքէտան Մշակութային Միութիւնը արդէն արձանագրուած էր վաթսուն տարիէ ի վեր, որուն վաթսունամեակը տօնեցինք վերջերս: Ուրեմն, քանի որ մեր երկու կազմակերպութիւններն ալ պետական ճանաչում ունին, ժամանակն էր որ խորհէինք «Չարթօնք»ն ալ օրինական կազմակերպութիւն մը դարձնել: Սկզբնական շրջանին անոր արտօնատերը ընկ. Բարունակ Թովմասեանը եղած է, իսկ անոր Ամերիկա տեղափոխուելէն ետք, ութսունական թուականներուն, «Չարթօնք» ընկերակցութիւն մը ստեղծուեցաւ, որ նոյնպէս կազմուած էր անհատներէ: Անոնցմէ շատ սիրելի ընկերներ մահացան, ուրիշներ մնացին եւ եւ «Չարթօնք» ընկերակցութիւնը կաղաց, որովհետեւ ոչ մէկ օրինական հիմք ուներ: Այս միտքէն բխելով, երբ «Չարթօնք» դադրեցաւ եւ միւս կողմէ դատեր յարուցուեցան, խորհեցանք նոր կազմակերպութիւն մը մէջտեղ բերել, զոր կոչեցինք Շիրակ Հրատարակչական Ընկերակցութիւն, որուն երկու երրորդը կը պատկանի Թէքէտան Մշակութային Միութեան, իսկ մէկ երրորդն ալ կուսակցութեան: Հետեւաբար Շիրակ Հրատարակչական Ընկերակցութիւնը ոչ մէկ անհատի անունին է, ոչ մէկ անհատական բնոյթ ունի եւ ամէն անգամ որ վարչութիւնները փոխուին, նորը կը ներկայանայ

Ներքին Գործոց նախարարություն եւ կը դառնայ Շիրակ Հրատարակչական Ընկերակցութեան բաժնետերը: Ասիկա նորություն մըն է համաշխարհային իմաստով մեր բոլոր կազմակերպություններուն համար: Ուր ալ որ երթանք, կազմակերպությունները անհատներու անունով են, բացի Միացեալ Նահանգներէն, ուր օրինաւորապէս արձանագրուած են ըլլայ Թէքեան Մշակութային Միութիւնը, ըլլայ Ռ.Ա. Կուսակցութիւնը: Ասկէ բխելով եւ կը կարծեմ որ «Չարթօնք» լաւ հիմերու վրայ դրուեցաւ: Աւելի վստահ ըլլալու համար որ այս հիմերը լաւ են, որոշում առնուեցաւ թէ՛ կուսակցութեան եւ թէ՛ Թ.Մ.Մ.-ի կողմէ, որ փորձի շրջան մը ըլլայ, «Չարթօնք»ը հրատարակուի առայժմ որպէս երկշաբաթաթերթ՝ երկու ամսուայ համար, ապա որպէս շաբաթաթերթ մինչեւ որ մենք մեզի համար պայմաններ ստեղծենք եւ մենք մեր վրայ աւելի վստահելով «Չարթօնք»ը վերածենք եռօրեայի եւ օրաթերթի:

Հոս բան մը եւս պէտք է աւելցնել: Բոլոր միջոցները ձեռք պիտի առնենք եւ պիտի քանակք որ նման դրութիւններ այլեւս չկրկնուին: Ասիկա մեր պատմութեան մէջ չէ եղած եւ ինչ որ այս վերջին 10-20 տարիներու ընթացքին պատահեցաւ, վերջ պէտք է գտնէ: Մենք, թէ՛ Թ.Մ.Մ.-ը եւ թէ՛ Ռ.Ա.Կ.-ը, ժողովրդավարական սկզբունքներու վրայ հիմնուած ենք: Կը հաւատանք որ քննադատելը իրաւունք է, ոչ ըսելը իրաւունք է, բայց ատիկա պէտք է ըլլայ միութենական, կուսակցական ոլորտին մէջ, անդամական ժողովներու ընթացքին: Ով որ ըսելիք ունի՝ կ'ըսէ եւ հոն է որ կ'որոշուի, եւ եթէ այդ ըսուածները մեծամասնութիւն գոյացնեն՝ ատոր կ'ենթարկուինք: Սակայն այս ձեւով՝ երբ մեր ուզածը չըլլայ եւ դիմենք դատավարութեան եւ դատերու, Միութիւնը միշտ պիտի ըլլայ վտանգի մէջ, կուսակցութիւնը պիտի ըլլայ դժուարութիւններու մէջ եւ բոլոր այս աշխատանքները կրնան օր մը ոչինչ արժել:

Հետեւեալը, իմ մաղթանքս, ցանկութիւնս եւ երազս է որ այս դատերու հարցը միանգամ ընդմիշտ դադրի եւ թոյլ տրուի որ բոլոր կուսակցականները իրենց հոգիով եւ ոգիով ախորժակով գան եւ կուսակցութեան մաս կազմեն եւ ձեռք-ձեռքի տալով միասնական աշխատանք տանին ըլլայ «Չարթօնք»ի համար, ըլլայ մեր բոլոր կուսակցական աշխատանքներուն մէջ, նոյնն ալ Թ.Մ.Մ.-ի պարագային:

Հ.- Շատերուն յստակ չեն Ռ.Ա.Կ.-ի դիրքորոշումը եւ յանձնառութիւնները Հայրենիքի հանդէպ: Ինչ հիմերու վրայ է այժմ այդ կապը:

Պ.- Անկախութեան առաջին իսկ օրէն մեր կուսակցութիւնը ներկայ էր Հայաստանի մէջ: Որոշ կապեր մենք արդէն ունէինք Առաջին հանրապետութեան հետ: Անշուշտ կուսակցութեան հայաստանեան թելը իր վերիվայ-

րումները ունեցաւ եւ ասոր յաջորդող 95ի Ընդհանուր Պատգամաւորական ժողովէն ետք ծայր առին կուսակցական ներքին անհասկացողութիւնները, որոնք մեզ տազնապալի վիճակի մը մէջ դրին: Դժբախտաբար այնպիսի երեւոյթներ գոյացան, երբ կուսակցութեան մէկ թելը պետութեան հետ էր, միւս թելը՝ ընդդիմութեան: Այս օրերը դժբախտաբար ապրեցանք եւ ասիկա մեզի սաստիկ վնասեց ու Հայաստանի մէջ մեր կուսակցական կեանքը գրեթէ ոչնչութեան տարաւ: Ասկէ ետք փոփոխութիւններ տեղի ունեցան, կուսակցութեան եւ Թ.Մ.Ս.-ի միջեւ տարակարծութիւններ գոյացան: Մանրամասնութիւններու մէջ պիտի չմտնեմ: Պարզապէս ըսեմ թէ Թ.Մ.Ս.-ը եղաւ մէկ թելը, կուսակցութիւնը մնաց միւս թելը Հայաստանի մէջ: Զանի մը Ընդհանուր Պատգամաւորական ժողովներէ ետք, նաեւ Կեդրոնական Վարչութիւններու ընտրութիւններէ ետք, պետք է ըսեմ որ Հ.Ռ.Ա.Կ.-ը ներկայիս մաս կը կազմէ Կեդրոնական Վարչութեան, որուն մէջ անդամներ ունի եւ Կեդրոնական Վարչութիւնն ու Հ.Ռ.Ա.Կ.-ը օրինաւոր կերպով կը համագործակցին: Յարաբերաբար ասիկա անշուշտ մեր առաջուայ կացութենէն աւելի լաւ է, բայց եւ այնպէս բոլորս ալ գիտենք որ Ռ.Ա.Կ.-ը զօրաւոր եւ հիմնական կուսակցութիւն մը չէ Հայաստանի մէջ: Բայց լաւ ընթացք մը կայ: Ինչպէս գիտեք, որոշ համաձուլումներ եղան այլ կազմակերպութիւններու եւ կուսակցութիւններու հետ եւ ասիկա բնականաբար ոյժ մը պիտի ստեղծէ որպէս քաղաքական կազմակերպութիւն Հայաստանի մէջ: Յուսանք կա՛մ կառավարութեան եւ կա՛մ յաջորդ երեսփոխանական ընտրութիւններուն ընթացքին ռամկավարները աւելի լաւ արդիւնք ձեռք ձգեն:

Գալով այսօրուայ Հայաստանի իրավիճակին, պետք է ըսել թէ Կեդր. Վարչութիւնը Հանրապետական Վարչութեան հետ՝ Հ.Ռ.Ա.Կ.-ի հետ միասնաբար որոշում տուաւ ո՛չ ընդդիմութեան կողմը բռնել եւ ոչ ալ կուրօրէն պետութեան կողմն անցնիլ: Անշուշտ, օրինական տեսակէտէ պետութեան, այսինքն՝ պետականութեան, իշխանութեան հետ ենք, բայց եւ այնպէս այն բոլոր հարցերը որ ընդդիմութիւնը դրած է, որոնցմէ շատերը ժողովուրդին իրաւունքները պաշտպանելու համար են, անոնց հետ է մեր կուսակցութիւնը: Այսինքն՝ դիրքի մը վրայ ուր կ'ըսէ թէ պետք է իշխանութիւնը շարունակէ, բայց պետք է նաեւ նկատի առնէ ժողովուրդին իրաւունքները, մասնաւորապէս տնտեսական բնագաւառներու մէջ: Այսպիսով, մեր այսօրուայ դրուածքով կուսակցութեան յարաբերութիւնը Հայաստանի հետ կրնանք ըսել որ ընդունելի է եւ կ'ուզենք որ ատիկա աւելի բարելաւուի:

Հ.- Բնականաբար մեր լայն հասարակութեան կը հետաքրքրէ մեր երկրորդ հայրենիքի՝ Լիբանանի այսօրուայ կացութեան մասին մեր դիրքորո-

շումը: Որպես օրինական քաղաքացիները այս երկրին, ինչը կը համարէր որդեգրուելիք ամենաճիշդ ուղին:

Պ.- Բնականաբար եթէ ոեւէ հայու հարցնենք, պիտի անդրադառնայ 75ի պատերազմին եւ պիտի ըսէ թէ դրական չեզոքութիւնը լաւագոյն բանն է: Խորքին մէջ, գործնականօրէն թէեւ այդպէս է, բայց ատիկա կ'ենթադրէ հարց մը որ ես անձնապէս, որպէս արդէն 7 տարիէ ի վեր պետական երեսփոխան, պիտի ուզէի արծարծել: Արդեօք մենք հայե՞ր ենք պարզապէս լիբանանեան քաղաքացիութեամբ, լիբանանեան հպատակութեամբ եւ կ'ապրինք Լիբանանի մէջ, թե՞ մենք լիբանանցիներ ենք հայկական ծագումով: Հոս է հարցը: Եթէ մենք միշտ պիտի ըսենք թէ հայերը դրական չեզոքութիւն պետք է որդեգրեն, որպէսզի հայ համայնքին բան չպատահի, շատ բարի: Բայց այդպիսով տասնեակ տարիներ, սերունդներ ու սերունդներ պիտի մնանք պարզապէս հայ եւ կամ նոր երիտասարդութիւնը որ կամաց-կամաց, արդէն քանի մը սերունդէ ի վեր ինքզինք աւելի լիբանանցի կը կարծէ, ձգէ Լիբանանը եւ երթայ օտարութեան գիրկը, կամ մենք ալ պիտի ըլլանք լիբանանցիներ, անոնց պիտի ըսենք թէ մենք ալ լիբանանցի ենք, մեր ծագումը հայ է, Լիբանանի մէջ պիտի ապրինք իբրեւ լիբանանցի, ինչ որ պարագան է Ֆրանսայի, Նոյնը եւ Ամերիկայի մէջ: Մենք հոս կարծես որոշ բարդոյթ մը ունինք թէ հայերը պետք է որ ինքնուրոյն մնան եւ լիբանանեան քաղաքականութեան մէջ միայն դրական չեզոքութիւն կիրարկեն: Այս կապակցութեամբ, բարեբախտաբար ըսեմ թէ դժբախտաբար, ժամանակը պիտի որոշէ թէ որն է ճիշդը, որը սխալ: Բայց եւ այնպէս մեր ազգային երեք կուսակցութիւններու պարագային, որոնք իրենց մասնակցութիւնը ունին լիբանանեան քաղաքական կեանքէն ներս, այնպէս պատահեցաւ որ անոնցմէ մին ընդդիմութեան մէջ է, միւս երկուքն ալ մեծամասնութեան հետ: Հետեւաբար, ասիկա հայութեան մէջ կը ստեղծէ երկուութիւն մը՝ ընդդիմութիւն եւ իշխանութիւն: Բարեբախտաբար, ասոր հետ մէկտեղ, այդ երեսը պահելով իբրեւ լիբանանեան քաղաքական կեանքի բնական երեւոյթ, մեր կուսակցութիւնները իրենք իրենց մէջ որոշ հասկացողութեան մը եկած են, ըստ որու մեր հակառակութիւնը լիբանանի քաղաքական կեանքէն ներս չի թափանցեր հայ համայնքին մէջ, որուն հետեւանքով խնդիրներ ծագին եւ հայութիւնը պառակտուի: Ուրեմն 75ի այդ դրական չեզոքութիւնը ձեւով մը մենք ժառանգեցինք իբր հայկական կազմակերպութիւններ, որպէսզի իրարու հանդէպ թշնամական կեցուածքներ կամ հակառակութիւններ չունենանք: Այդ առումով միշտ կապի մէջ ենք անշուշտ: Միւս կողմէ՝ մէկ քայլ աւելի առաջ գացինք 75ի դրական չեզոքութենէն, ուր իբր լիբանանցիներ մենք նաեւ մեր տեսակետները ունինք, թէ կան հայեր որ կրնան ընդդիմութեան մաս կազմել

եւ կան ուրիշ հայեր, որ իրենց ներքին համոզումով կրնան իշխանութեան հետ ըլլալ: Ասիկա կրնայ այսօր այս ձեւով ըլլալ, վաղը կրնայ ընդդիմութիւնը իշխանութիւն դառնալ, իշխանութիւնը՝ ընդդիմութիւն եւ հայերն ալ իրենց կողմերը փոխեն: Հիմնականը այն է, որ այս փոխհասկացողութեան ոգին հայկական երեք կազմակերպութիւններուն միջեւ մնայ եւ այդ ծիրէն երբեք դուրս չէլլէ:

*3.- Որպէս Լիբանանի երեսփոխանական ժողովի մէկ անդամը, քնակա-
նաբար շփումներ ունիք ձեր պաշտօնակիցներուն եւ պետական անձնաւոր-
ութիւններու հետ: Ինչպէս է արդեօք անոնց կարծիքը մեր՝ հայերու մասին:
Արդեօք ի՞նչ կ'ակնկալեն մեզմէ:*

Պ.- Հոս պէտք է ըսել որ Լիբանանի անկախութենէն ի վեր հայերը միշտ յարգուած են, քանի որ անոնք սուր կեցուածքներ չեն ունեցած լիբանանեան քաղաքական կեանքէն ներս, այլեւ օրինակ բերուած են զանազան առիթներով: 2006ի լիբանանեան երկիւստութեան կլոր սեղանին, որուն մասնակից էի, միշտ հայերս օրինակ կը բերուէինք՝ թէ տեսէք, հայերը թէեւ երկու ճակատի վրայ են, բայց նաեւ որոշ միասնականութիւն մը ունին հոն ուր հայութեան ընդհանրական շահերը կը պահանջեն: Հոս պէտք է նշել թէ այսօրուայ իրականութեան մէջ հայութիւնը ի՞նչ դիրք ունի կամ ի՞նչ կրնայ ընել: Անմիջապէս կրնանք պատասխանել որ հայութեան դիրքը յստակ է՝ լիբանանցիք բոլորը պէտք է միանան: Բայց ի՞նչ կրնանք ընել, դժբախտաբար ոչինչ, այնպէս ինչպէս իրենք՝ լիբանանցիներն ալ անկարող են շատ բան ընել այդ ուղղութեամբ: Բոլորին արդէն յստակ է որ ապրիլը որոշ ձեւաւորում մը ստացած է ոչ միայն հայութեան, այլեւ բոլոր լիբանանցիներուն մօտ: Ինչպէս կը տեսնէք, լիբանանցիներու միջեւ դժուարութիւններ կան գիրար հասկնալու: Հարցերը շատ խորին են եւ անշուշտ տարածաշրջանի եւ համաշխարհային բոլոր իրադարձութիւնները, խաղերը այնպէս եղած է որ Լիբանանի մէջ կը խաղցուին: Հետեւաբար, մեր միակ ցանկութիւնն է որ լիբանանցիք աւելի դիրացնեն որ այդ դուրսի ազդեցութիւնները նուազին եւ գոնէ իրենք պատճառ ըլլան այդ դուրսի անհասկացողութիւններուն լուծում մը գտնուելուն: Անշուշտ ասիկա կրնայ թուիլ երազային, բայց եւ այնպէս իբրեւ ցանկութիւն, իբրեւ յոյս եւ ակնկալութիւն որ այսպիսի բան իրականանայ, մենք միշտ պէտք է մնանք եւ աշխատինք այդ ուղղութեամբ: Ասիկա մեր պարտականութիւնն է որպէս քաղաքական մասնակիցներ այս երկրէն ներս: Մեր յոյսն է որ Աստուած մեզի օգնէ եւ ինչպէս Պատրիարք Սֆէյր ըսաւ օր մը՝ այլեւս Աստուծոյ ձգած ենք այս դժուարին կացութենէն դուրս գալը: Հարցին մակերեսայնօրէն նայելով կը թուի թէ պարզ հարց մըն է, բայց խորքին մէջ

շատ բարդ է, որովհետեւ մենք չենք գիտեր իսկական դրդապատճառները: Հարցը կը դրուի իբրեւ թէ կառավարութեան մէջ մեծամասնութիւն բերելու, կամ ընտրական օրէնքին մէջ որոշ փոփոխութիւն մտցնելու պահանջ: Ասիկա կարծեմ այլեւս ժողովուրդին վրայ խնդալ եղաւ: Հարցը ասկէ շատ աւելի խորունկ է: Յուսանք որ աւելի չբարդանայ եւ ամենակարճ ժամանակի մէջ պատշաճ լուծումներ գտնուին:

3.- Ինչքանո՞վ կրցած ենք քայլ պահել Լիբանանի ներքին կեանքին ու անկէ բխող անհրաժեշտութիւններուն հետ:

Պ.- Ինչ կը վերաբերի քայլ պահելուն, մենք երկու ճակատներուն վրայ ալ ներկայ ենք, երկու ճակատներուն հարցերը որոշ չափով գիտենք: Վստահաբար, ոչ մէկ կողմին ոչ ալ միւս կողմին համար հայութիւնը շատ կարեւոր ազդակ մը չէ, բայց եւ այնպէս մենք ինչ որ կրնանք ըսել, ինչ որ կրնանք յուշել մեր մօտիկներուն, նոյնը եւ հակառակ կողմը իր մօտիկներուն՝ կ'ընենք: Կը խորհիմ որ հայութեան խօսքը եթէ մտիկ ընէին, արդէն հոս չէինք հասներ: Բայց եւ այնպէս մենք կը շարունակենք մեր բարեխօսութիւնները երկու կողմերուն մօտ ալ:

3.- Կա՞ն արդեօք չլուծուած խնդիրներ, ակնկալութիւններ մեզմէ՝ բոլոր կողմերէն ալ, որոնք սպասուած արդիւնքի չեն հասած:

Պ.- Ոչ, ընդհակառակը: Այդպէս պիտի ըլլար եթէ հայութիւնը 75ի չէզոքութիւնը որդեգրելով դուրս մնար այս բոլորէն: Այն ժամանակ՝ 75ին, արդէն որոշ դժգոհութիւն կար բոլոր լիբանանեան կողմերէն հայ համայնքի կրաւորական կեցուածքին պատճառաւ: Ինչպէս ըսի քիչ ամառ, ներկայիս հայերը որպէս լիբանանցի արդէն դիրքորոշուած են երկու կողմերու նկատմամբ եւ ատիկա ձեւով մը լիբանանեան երկու խմբաւորումներն ալ կը գոհացնէ: Հայերս որպէս անկախ համայնք դուրս մնալով այս բոլորէն չենք կրնար մենք մեզ չէզոքացնել: Կը կարծեմ որ ասիկա դրական երեւոյթ է: Միւս կողմէ մեր ազգային երեք կուսակցութիւններու բռնած քաղաքականութիւնն ալ երբ իրերհասկացողութեամբ շարունակենք, այդ ալ լաւ անդրադարձ կ'ունենայ:

3.- Վերադառնալով մեր այսօրուայ շարժառիթին՝ «Չարթօնք»ի վերահրատարակութեան, որպէս նոր սկիզբի կա՞ն ցանկութիւններ որոնք կ'ուզէիք փոխանցել «Չարթօնք»ի խմբագրական կազմին եւ ընթերցողներու ուշադրութեան:

Պ.- Այո, կը կրկնեմ վերը ըսածներս թէ ցանկութիւնս մէկ է՝ միասնակա-
նութիւն: Երբ կը խօսիմ մեր ճակատի՝ ռամկավար-թեքեանական ճակատի

մասին, պիտի մնամ միասնականության ծիրին մեջ եւ ինչպես Բարեգործականի նշանաբանը կ'ըսէ՝ միութիւնը զօրութիւն է: Մեր հակառակութիւնը կամ իրարու դէմ ընդդիմութիւն ընելը ոչ ժողովրդավարական միջոցառումներով յատկապէս մեզի համար տկարութիւն է եւ մեզի ակելի ու ակելի անկումի պիտի տանի: «Չարթօնք»ը ոտքի կանգնեցաւ, ահաւասիկ ասիկա առաջին թիւն է որ ձեր ձեռքերուն մէջ է: Ես իմ կողմէս գոնէ կու գամ վստահեցնել որ ըլլա՛նք ես ու գործակից ընկերներս, ըլլա՛ն խմբագրութեան պատասխանատուն եւ իր գործակիցները, ըլլա՛յ Հիմնադիրներու Մարմինը եւ ըլլա՛յ Թեքէեան Մշակութային Միութեան Վարչութիւնը, ջանք պիտի չխնայենք որ «Չարթօնք» շարունակէ իր երթը:

Ինծի միայն կը մնայ ըսել՝ եկեք, միացեք, օգնեցեք որ «Չարթօնք»ը իր յառաջիադացքը յաջող կերպով շարունակէ:

Բարի երթ «Չարթօնք»ին:

Հարցազրոյցը վարեց Հ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
«Չարթօնք», 1 Մայիս 2008

Մեր Հանդիպումները Յակոբ Գասարճեանի Հետ Ռ. Ա. Կ. Պետական Երեսփոխան Լիբանանի Խորհրդարանի

Լիբանանահայ իրականութենէն ներս ընկ. Յակոբ Գասարճեան արդէն իսկ հաստատած է իր ինն տարուայ քաղաքական երթը, ազգային եւ քաղաքական կեանքէն ներս՝ ծաւալած գործունեութեան փորձառութիւն մը, դարձած՝ ինքզինք պարտադրող հեղինակութիւն, որ այսօր մեզի առիթ կու տայ բարձրաձայն ըսելու, թէ ան՝ հակառակ իր անձին նկատմամբ գոյացած քննադատական երեւոյթներուն, ոչ միայն քաղաքական մտքի հասունութեամբ կ'ընդունի զանոնք բնականօրէն ու լայնախոհութեամբ, այլեւ Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի մեծ ընտանիքներուն մօտ ժողովրդային բնոյթով անվերապահ ընդունելութեան կ'արժանանայ, յանուն Ռամկավար Ազատական Կուսակցութեան փառապանծ անցեալին, ներկային ու հրաշագեղ տեսլականին:

Յառաջիկայ մօտալուտ խորհրդարանական ընտրութիւններու լոյսին տակ, փափաքեցանք որ «Մեր Հանդիպումները» շարքին մէջ իր իւրայատուկ տեղը գրաւէ ընկ. Յակոբ Գասարճեան՝ Լիբանանի Խորհրդարանի Երեսփոխան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի շրջանակի եւ Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ.Ե.Ը.-ի անդամ, ղեկավար, կուսակցապետ եւ իսկական Հայը:

Հ.- Յառաջիկայ ամիսներու ընթացքին նոր հանգրուանի մը առջեւ կը գտնուի լիբանանեան քաղաքական կեանքը եւ շուտով պիտի ունենաք երեսփոխանական նոր ընտրութիւններ: Անշուշտ կը լսենք, գոնէ հայկական ճակատի վրայ, թէ այս անգամ եւս տարբեր մօտեցումներ կան այս ընտրութեան հետ առնչուած: Պիտի ուզէինք իմանալ ձեզմէ թէ ճիշդ ի՞նչ ընթացքի մէջ են այդ ընտրական աշխատանքները:

Պ.- Ինչպէս միշտ, ընտրական աշխատանքները կանոնաւոր կերպով կ'ընթանան ամէն կազմակերպութեան մէջ, իւրաքանչիւրը ունենալով իրեն յատուկ ընտրական մեքենայ, եւ այդ մեքենան աշխատանքի լծելով կ'ունենանք համապատասխան աշխատանք, ապա՝ արդիւնք: Այս անգամ, թեքնիք գետնի վրայ, նոյնն է հարցը, բայց քաղաքական գետնի վրայ, որոշ նորութիւններ գոյացան, քանի որ Լիբանանը վերջին տարիներուն, ինչպէս գիտէք, զանազան քաղաքական եւ նոյնիսկ ապահովական դժուարութիւն-

Ներ ունեցաւ, յատկապէս 2006ի խորայելեան պատերազմին որպէս հետեւանք: Այդ նոր իրավիճակը անշուշտ սկսած էր Նախքան 2006ի պատերազմը, Նախկին վարչապետ ողբացեալ Ռաֆիք Յարիրիի Նահատակութենէն ետք: Ուրեմն այդ ոճիրէն ետք արդէն Նոր տուեալներ գոյացան Լիբանանի մէջ. իսկ երբ սուրիական ուժերը հեռացան Լիբանանէն եւ քաղաքական քարտեւը ձեւով մը Նոր իրավիճակ ստացաւ, գոյացան երկու հսկայ ուժեր, իրենց ետին ունենալով զանազան պատկանելութիւններ: Այսպէս կոչուած 8 Մարտի ուժերը, որ կ'ընդգրկէ Զրգապալա կուսակցութիւնը, Ամալ շարժումը եւ Զօրավար Ամնի կուսակցութիւնը, որոնք կը կազմէին ընդդիմութիւնը: Ատոր դիմաց կար մեծամասնութեան, այսինքն՝ Ներկայ խորհրդարանի մեծամասնութեան կողմը, որ կ'ընդգրկէր Մուսաթապալ հոսանքը, Լիբանանեան Ուժերը, Փաղանգաւոր կուսակցութիւնը, եւ ուրիշ զանազան կուսակցութիւններ, որոնց մէջ են Նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, եւ Ս.Դ. Զնչակեան կուսակցութիւնը: Զմոռնալով նշեմ Նաեւ, որ 8 Մարտի հետ կը գործակցի Նաեւ Զ. Յ. Դաշնակցութիւնը:

Այս երկու խմբաւորումները իրարու դէմ որոշ քաղաքական հակամարտութեան մէջ էին: Ատկէ ետք տեղի ունեցաւ պատերազմը ու պատերազմէն ետք պատահեցաւ Կեդրոնական Պեյրութի գրաւումը եւ ամէն ինչ սառեցաւ այնուհետեւ: Խորհրդարանի ժողովներ գոյութիւն չունեցան, կառավարութենէն իրենց ներկայացուցիչները հրաժարեցան եւ երկիրը մէկուկէ տարիէ աւելի այսպէս անյաջող վիճակի մէջ գտնուեցաւ... մինչեւ որ գոյացաւ Տոհայի համաձայնութիւնը, Զրգապալայի զինեալ ուժերու կողմէ Արեւմտեան Պեյրութի գրաւման պատճառով:

Ուրեմն, այդ համաձայնութեամբ, որուն ես ալ մասնակից եղած էի, վերջապէս բաւական դժուարութենէ ետք գոյացաւ որոշ հասկացողութիւն մը եւ ատոր հիման վրայ քաղաքի կեդրոնը պարպուեցաւ, խորհրդարանը կրկին սկսաւ իր աշխատանքին եւ ասոնց որպէս հետեւանք՝ ընտրուեցաւ հանրապետութեան Նախագահը, ինչպէս Նաեւ համաձայնութեան մը յանգեցանք, որ երեսփոխանական ընտրութիւնները գոյանան 9 Յունիսին:

Այս նոր ընտրական օրէնքը, որ կը կոչուի 1960ի երեսփոխանական օրէնք, անշուշտ իտեալ օրէնքը չէ, բայց ձեւով մը երկու կողմերը պարտաւորութիւն ունեցան զիջումներ կատարելով համաձայն ըլլալու ատոր ու գոյացաւ այդ համաձայնութիւնը:

Եւ հիմա կ'անկնկալենք որ այդ ընտրութիւնները տեղի ունենան: Ընտրական պայքարը եւ աշխատանքը արդէն իսկ սկսած են եւ այդ աշխատանքներուն մէջ կ'ընդգրկուին քաղաքական համաձայնութիւններ, որպէսզի ճշդուի թէ կողմերէն ո՞վ որո՞ւ դէմ ընտրապայքարի պիտի իջնէ...: 14 Մարտի

խմբաւորումը, որուն մենք կը պատկանինք, յստակ է որ որոշ հասկացողութիւն մը գոյացուցած է, որուն հիման վրայ որոշած ենք Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ ընտրութեանց մասնակցիլ. նոյնիսկ այն շրջանները, ուր ի սկզբանէ յայտնի են արդիւնքները: Քանի որ երբ այսօր Լիբանանի քարտեւը աչքի առաջ ունենանք, որոշ շրջաններ կան, օրինակ՝ Զարաւային Լիբանանը, ուր ձեւով մը անկարելիութիւն կարելի է նկատել որ 8 Մարտը չափի, կամ Զիւսիսային Լիբանանը, Թրիփոլին ու Պէյրութը, ուր 14 Մարտը չչափի...: Այսօրուրնէ դիտորդները կ'ըսեն որ ընդհանրապէս բո՛ւն պայթարը պիտի ըլլայ քրիստոնեական շրջաններու մէջ, ուր կան մէկ կողմէն Չօրավար Աունի եւ Դաշնակցութեան ուժերը, որուն դէմը կան Լիբանանեան Ուժերը, Փաղանգաւորները, անկախ անձնաւորութիւններ եւ նաեւ՝ ուրիշ կուսակցութիւններ, ինչպէս՝ Ահրար, կամ Զըթէ Ուաթանիէ եւ Ռ.Ա.Կ.-ն ու Ս.Դ.Զ.Կ.-ը: Ուրեմն, այս երկու համախմբումներու թեկնածուները պիտի որոշուին եւ ըստ այնմ պիտի յայտարարուին, գոնէ Ապրիլ 7էն առաջ, առաւելագոյնը ընտրութիւններու թուականէն երկու ամիս առաջ:

Հոս տեղին է յիշել թէ թեկնածուները պարտաւոր են իրենց թեկնածութիւնը ներկայացնելու ըստ Տոհայի համաձայնութեան, ուր գոյացաւ հասկացողութիւն մը երկու կողմերու միջեւ Պէյրութի 2րդ ընտրաշրջանի մասին որպէս նոր յղացում: Ժամանակին Պէյրութը երեքի բաժնուած էր. այս անգամ, որպէս նորութիւն, հակառակ որ կրկին երեքի բաժնուեցաւ, առաջին ընտրաշրջանը կ'ընդգրկէ միայն քրիստոնեայ աթոռներ, ուր կան մէկ կաթողիկէ հայ, մէկ առաքելական հայ, մէկ օրթոտոքս, մէկ մարոնիթ եւ մէկ յոյն կաթողիկէ: Այսպէս՝ 5 աթոռներ առաջին ընտրաշրջանին համար: Երկրորդ ընտրաշրջանը կազմուեցաւ Մտաուուար հայաշատ շրջանէն, Պաշուրա շրջանէն եւ Նաւահանգիստէն, ուր սիւննի եւ շիիթ ուժերը շատ են: Հոս 4 երեսփոխանական աթոռներ կան, 2 հայ առաքելական, 1 սիւննի եւ 1 շիիթ: Այս ընտրաշրջանին վրայ համաձայնութիւն եղաւ որ մէկ շիիթ եւ մէկ առաքելական երթայ 8 Մարտին, իսկ մէկ հայ առաքելական եւ մէկ սիւննի՝ 14 Մարտին: Իսկ 3րդ ընտրաշրջանը, որ կ'ընդգրկէ Այն Մրէյսէ, Չոքաթ Էլ Պլաթ, Մինէ Էլ Հոսըն, Ռաս Պէյրութ եւ Մագրաա եւ ուր արձանագրուած հայեր կան, որեւէ մէկ հայկական աթոռ չորոշուեցաւ եւ այս ընտրաշրջանին մէջ կ'ընդգրկուին 10 երեսփոխանական աթոռներ: Այս նորութիւնն էր որ ըստ իս անտրամաբանական էր, որ Պէյրութը բաժնէն 3 ընտրական շրջանի 4-5-10 աթոռներով, ուր պէտք է բաժանումները ըլլային հաւասար: Հիմա այս համաձայնութիւնը գոյութիւն ունի եւ կը կարծուի որ այսպէս պիտի շարունակուի եւ գործադրուի: Բայց գիտնալով Լիբանանի բոլոր տուեալները, կրնայ նաեւ պատահիլ որ վերջին վայրկեանին նոյնիսկ ասիկա նկատողութեան

չառնուի եւ պայքար գոյանայ 3 ընտրաշրջաններու մէջ:

Գալով Ռ. Ա. Կուսակցութեան, մեզի համար յստակ երկու նկատողութիւն գոյութիւն ունի: Առաջին հերթին, մենք քաղաքական բեմ բարձրացանք ողբացեալ Ռաֆիք Զարիրիին հետ գործակցելով, որու հետ մեր գործակցութիւնը սկսած էր 1996 թուականին, բայց 96ին կուսակցութիւնը իր շարքերէն անհատ մը չներկայացուց, այլ ընդունեց պրն. Յակոբ Տեմիրճեանի թեկնածութիւնը, իսկ 2000ին արդէն Ռաֆիք Զարիրիի հետ մեր համաձայնութիւնը այդ էր, որ թեկնածուն պիտի ըլլար կուսակցական մը եւ 2000ին իմ թեկնածութիւնս ներկայացուեցաւ եւ ես ընտրուեցայ: Նաեւ 2005ին, վերընտրութեամբ դարձեալ ընտրուեցայ:

Զետեաբար, առաջին կէտը այն է, որ մենք այդ թուականէն՝ 96էն սկսեալ կը գործակցինք Մուսթաֆայալ հոսանքին հետ: Եւ հոս պետք է շեշտենք, որ շնորհիւ նահատակ մեր բարեկամին, Ռ.Ա. Կուսակցութիւնը քաղաքական բեմ բարձրացաւ եւ իր երեսփոխանական թեկնածուն ընտրելով երեսփոխան մը ունեցաւ լիբանանեան խորհրդարանէն ներս: Այդ գործակցութիւնը կը շարունակուի 2000էն մինչեւ օրս:

Մեզի համար հիմնական էր իրարու հանդէպ ունենալ հաւատարմութիւն, որ շարունակենք մեր երթը նո՛յն ընթացքով: Քանի որ Զարիրի ընտանիքին ամենէն ազնիւ յատկութիւններէն մէկը հաւատարմութեան կառչիլն է, ո՛չ միայն հայերու պարագային իրենք հաւատարիմ եղան, այլեւ՝ իրենց հետ քաղաքական բոլոր զինակիցներուն:

Երկրորդ՝ կար մեր քաղաքական սկզբունքներու հարցը: Մենք իբր ռամկավարներ եւ ազատականներ, որպէս հաւատաւոր քաղաքացիները այս երկրին, որ մեր ծննդավայր հայրենիքն է,- հակառակ որ ունինք հայկական ծագում, լիբանանցի ենք քաղաքացիութեան,- կը հաւատանք Լիբանանի գերիշխանութեան, ազատութեան, անկախութեան, որպէս հետեւանք մեր սկզբունքին, որ է ժողովրդավարութիւնը:

Ուրեմն այս երկու կէտերուն հիման վրայ մենք անկարելի էր որ հեռանայինք այդ ուժերէն, որոնք կը ներգրաւէին այս սկզբունքները: Ուրեմն նախ Մուսթաֆայալ հոսանքին մէջ ըլլալով, երկրորդ՝ իբր հաւատացողը այս սկզբունքներուն, մենք ընդգրկուեցանք 14 Մարտի ուժերուն մէջ:

3.- Անշուշտ լիբանանեան հայրենիքին նկատմամբ մեր պարտաւորութիւնները կը կատարենք, սակայն ազգային այլ շրջանակներ ու մանաւանդ Դաշնակցութիւնը կ'ուզեն այս ընտրութիւններով տեսնել ազգային միասնականութեան եւ ուժի համախմբում մը, հրապարակ նետելով «հայկական երեսփոխանական պլոք» գաղափարը, որպէսզի ծառայէ,- ու ակնյայտ է այդ,-

առ հասարակ իր շահերուն: Ինչպէս, ուրեմն, պիտի կարենանք մէկ կողմէ լիբանանեան մեր պարտաւորութիւնները կատարել խառնուելով լիբանանեան ուժերուն եւ միւս կողմէ հեռու մնալ միասնական հայկական ցանկէ մը:

Պ.- Զարցումիդ վերջին մասով պատասխան մը տրուած կ'ըլլայ:

«Հայկական պլոք» ըսուածը յիսուն տարիէ ի վեր Դաշնակցութիւնը արդէն օգտագործած է լիբանանեան խորհրդարանին մէջ, երբ այդ օրերու երեսփոխանները իր տիրապետութեան տակ կը գտնուէին:

2000ի ընտրութիւններուն, ինչպէս այսօր, Դաշնակցութիւնը միասնականութեան պիտակին տակ փորձեց հաւաքել բոլոր հայ կազմակերպութիւնները: Անշուշտ, Դաշնակցութիւնը միասնականութեան մասին միշտ խօսած է, բայց հետեւեալ հասկացողութեամբ միայն. «Միանանք, բայց եկէ՛ք ու մեզի՛ հետեւեցէք»: Ասիկա միասնականութիւն չէ: Մենք իբր քաղաքական կազմակերպութիւն պիտի չուզէինք երեսփոխանական աթոռի մը համար երթալ ուրիշ կազմակերպութեան մը տիրապետութեան տակը ըլլալ: Այս գաղափարը միանգամ ընդ միշտ մերժուած է: 2000ին տեղի ունեցաւ այդ խաղը. Զ.Բ.Ը.Մ.-էն ռամկավարներու մօտիկ թեկնածու մը առնելով եւ բաժնուած հնչակեաններէն թեկնածու մը առնելով յայտարարեցին միասնականութեան ցանկ մը. միևնույն մեր կողմէ ունէինք ռամկավար թեկնածու մը եւ հնչակեան մը ու այսպէս...:

Այսօրուան տուեալներով, դարձեալ խօսք կ'ըլլայ միասնականութեան մասին եւ նոյն աճապարարութեամբ կը փորձեն շարունակել «միասնականութեան» մասին խօսիլ եւ ներկայացնել հինգ թեկնածուներ իբր «հայկական պլոք»: Անշուշտ այս հինգը Դաշնակցութեան պլոքն են եւ չեն ներկայացներ ամբողջական հայութիւնը, եթէ նոյնիսկ հոն ընդգրկուի Զ.Բ.Ը.Մ.-ին հետ առնչուած անձնաւորութիւն մը:

Գանք հարցումին առաջին մասին՝ որ նախ մենք լիբանանցիներ ենք: Լիբանանցի ենք հայկական ծագումով: Բոլորիս համար ալ սրբութիւն է հայերէն մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր դպրոցները, մշակոյթը, կազմակերպութիւնները ու այս բոլորին համար նուազագոյն զիջումն իսկ մենք պատրաստ չենք կատարելու:

Բայց եւ այնպէս, որպէս լիբանանցիներ մեր քաղաքական հասկացողութեամբ ունինք պատասխանատուութիւնը եւ պարտաւորութիւնը գիտնալու մեր հայկական շահերը լիբանանեան կեանքէն ներս:

Ինչպէս քիչ առաջ կ'ըսէի, քանի կը հաւատանք ազատութեան, անկախութեան եւ գերիշխանութեան, մենք պիտի միանանք այդ ուժերուն, որոնք այս սրբութիւնները կը պաշտպանեն: Եւ հետեւաբար մենք ստիպուած ենք միանալու 14 Մարտի համախմբումին: Մեր պատասխանը միասնականու-

թեան հարցին շուրջ եղած է հետեւեալը. եթէ կը հաւատան վերելը նշուած սրբութիւններուն եւ սկզբունքներուն, թող այն ատեն միանանք իրարու:

Մեր քաղաքական կեցուածքը պէտք է յստակ ըլլայ ու եթէ պիտի չհամաձայնիք, նորէն խնդիր չկայ: Մենք կրնանք քաղաքականապէս, լիբանանեան քաղաքականութեամբ առնչուած մեր կեցուածքները ունենալ, բայց Լիբանանի խորհրդարանէն ներս ամէն երեսփոխան ինքը իր հաւատացած կողմին հետ պիտի գործակցի: Հետեւաբար, հայկական պլոք մը մէջտեղ բերելու քաղաքականապէս կարելիութիւն չկայ: Բայց հայկական ազգային հարցերու մէջ կարելի է համաձայնիլ: 2000էն ի վեր այդ է մեր ըսածը, բայց Դաշնակցութիւնը ամբողջութեամբ տիրապետած է ԱԶԳԱՅԻՆ բոլոր կառոյցներուն եւ հոն չի խօսիր միասնականութեան մասին:

Մենք միշտ պատրաստ ենք համագործակցութեան: Բայց «հայկական պլոք» հասկացողութիւնը իսկապէս խորթ է նաեւ լիբանանցիներու մօտ: Պատմութեան մէջ բնաւ մարոնիթ պլոք չէ եղած, ոչ ալ օրթոտոքս կամ շիի կամ սիւննի: Այսինքն, հայերը երեւոյթ մը ստեղծած էին անցեալին, որ քննադատելի էր բոլոր լիբանանցիներուն կողմէ: Կ'ըսէին. «Եթէ դուք լիբանանցի էք, ինչո՞ւ լիբանանցիներու նման չէք ըմբռնէր քաղաքական մեր հարցերը»: «Պլոք»ի հարցը իսկապէս գաղթականի մը հոգեբանութիւնն է: Արդէն երրորդ-չորրորդ սերունդի լիբանանցիներ ենք եւ պէտք է քաղաքական կեանքի մէջ իբր լիբանանցի քաղաքացիներ խորհինք եւ գործենք անկաշկանդ, առանց որեւէ կազմակերպութեան պարտադրութեան ենթարկուելու: Ամէն լիբանանահայ պէտք է գիտակցութիւնը ունենայ որոշելու թէ ինք որո՞ւ եւ ինչպէ՞ս պիտի քուէարկէ: Այսօր ծիծաղելի կը գտնեմ երբ կը տեսնեմ որ 6 հայ երեսփոխանի դիմաց մէկ դաշնակցական ու մէկ համակիր երեսփոխան գոյութիւն ունի, իրենք դեռ կը պնդեն որ հայկական պլոք են:

Աւելի՛ն: Եթէ լիբանանեան քաղաքական երկու թեւերու մէջ «հայկական պլոք» հասկացողութիւնը իր ամբողջական առումով գործէ լիբանանեան խորհրդարանին մէջ, այդ պարագային ան լիբանանեան քաղաքական դաշտին մէջ մեծ պատասխանատուութիւններ ստանձնած պիտի ըլլայ: Ենթադրելով որ ընտրութիւններէն բխած խորհրդարանը կազմող երկու թեւերը զրեթէ հաւասար թիւով երեսփոխաններ ունենան, այդ պարագային, «հայկական պլոք»ը ինք պիտի ըլլայ Լիբանանի ճակատագիրը որոշողը, ինչ որ Լիբանանի հայ համայնքին համար անկարելիութիւն ու միաժամանակ վտանգաւոր կը թուի ըլլալ:

Հ.- Հիմա բացայայտ երեւոյթ է որ մեր կուսակցութիւնը ներքին տագնապներու բերումով այնքան ալ կազմակերպուած վիճակ մը չունի, մանա-

ւանդ Լիբանանի պարագային, եւ յետոյ մեր ընկերական շարքերուն մէկ մասը կը գտնուի Պուրճ Յամուտի հայաքնակ թաղամասերուն մէջ, որոնք առաւել-լաքար Դաշնակցութեան հսկողութեան կամ հակակշռին տակ են: Ինչպէ՞ս պիտի կարենաք այս մեր կուսակցական շարքերը համախմբել ձեր առաջնորդութեամբ լիբանանեան քաղաքական ձեր հոսանքին շուրջ:

Պ.- Այս հարցումը երկու մասերու կը բաժնեն:

Նախ անդրադարձար մեր ներկուսակցական իրավիճակի ներկային: Հետեւաբար, նախ անոր մասին ըսեմ որ մեր կուսակցական իրավիճակը նուազագոյն 1988էն ի վեր այսպէս տազնապ կ'ապրի: 1995ի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովով եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եկած էի համախոհական վարչութեան մը ընտրութեամբ: Համախոհութիւնը տեսեց միայն ութը ամիս, որմէ ետք դարձեալ շարունակուեցաւ այդ տագ-նապը: Այդ մասը ուրիշ էջ մըն է եւ մանրամասնութիւններու մէջ չեմ ուզեր մտնել: Բաւական ժամանակ տրամադրուեցաւ այդ հարցերը լուծելու եւ մասամբ լուծումներու յանգեցանք... ու ես որպէս այդ օրերու ատենապետը ցաւով կը յայտարարեմ որ մեղք եղաւ մեր կուսակցութեան, որովհետեւ 1996ով նախընթաց մը ստեղծուեցաւ մեր կուսակցութեան մէջ, ուր այլեւս դժուար էր առաջըլ առնել ներքին տազնապներուն: Ես յստակ պատասխան մը չունիմ այսօր, որովհետեւ այդ հիասթափութեան «վայրըս»ը անցաւ բոլոր շրջանակներէն ներս: Երբ անհասկացողութիւն կամ անձնական շահերէ բխած հակառակութիւն կայ մեր շրջանակներու շարքերէն ներս, այլեւս ընդ-դիմութիւնը ժողովրդավարական ձեւերով չ'ընթանար, ընդհանուր անդա-մական ժողովներու չսպասուիր, այլ, ընդհակառակը, թղթիկներով, թունալից նամակներով ու ներկայ օրերու համացանցերով ղեկավարներու կամ անհատ կուսակցականներու դէմ տգեղ պայքար մը կ'ըլլայ, խժբժանք, եւ անարդարօրէն զրպարտութիւններ կը ցեխարձակուին: Ու ամէն անգամ երբ նոր ղեկավարութիւն մը կու գայ, այս տազնապը կը շարունակուի շրջանա-յին թէ աւելի բարձր մակարդակներու վրայ:

Առայժմ այս նիւթին մասին պիտի չուզեմ արտայայտուիլ: Չայն կը ձգեմ ուրիշ առիթի:

Ինչ կը վերաբերի Լիբանանին, Լիբանանն ալ այս դժուարութիւններուն մէջ է տարիներէ ի վեր, ու դժբախտաբար այսօր ալ նոյն վիճակն է: Ես բոլոր իմ ելոյթներուս,- հիմա ալ առիթ է որ հոս ալ ըսեմ,- իսկապէս կոչ կ'ուղղեմ որ ընդդիմութիւնը գայ եւ գործէ կուսակցաշէն ուղիով, այսինքն՝ դառնայ դրական ընդդիմութիւն եւ ոչ թէ կործանարար: Յատկապէս ռամկավարներս հասկնալու ենք որ ղեկավարութեան փոփոխութիւնը կ'ըլլայ միայն ու միայն ժողովրդավարական ձեւերով, այսինքն ընտրութիւններով...: Գլուխ կոտրելով

ղեկավարություն չենք կրնար փոխել: Այս որո՞ւ կ'ուզես հասկցուր. ոմանք կը հասկնան, ուրիշներ կը մոլորուին եւ կացութիւնը այսպէս կը շարունակուի:

Բարեբախտաբար այդ միւս տեսակի կուսակցականները մեծ թիւ մը չեն ներկայացներ, հետեւաբար ղեկավարութիւնը կը շարունակէ իր բնականոն գործունեութիւնը, միշտ կոչ ընելով ու հրաւիրելով ձեռք ձեռքի տալու...: Վերջին մի քանի շաբաթներու ընթացքին, բաւական ընկերներ, որոնք նախկին ղեկավարներու կողմէ մոլորուած էին, վերսկսան յաճախել ակումբ ու մաս կազմել մեր կառոյցներուն: Իրենք կ'արտայայտուին ազատօրէն, կը յայտնեն իրենց մտահոգութիւնները անկաշկանդ կերպով, ազատօրէն կը հարցադրեն ու կը ստանան համապատասխան բացատրութիւններ:

Մեր մտահոգութիւնը այս հանգրուանին առաւելագոյնս կուսակցութիւնը միաւորելն է: Սակայն բնականաբար միշտ դժգոհողներ պիտի ըլլան, բայց քաղաքական կազմակերպութիւններու պարագային, բացայայտ երեւոյթ է, որ ընդդիմութիւն մը գոյանայ: Ժողովրդավարական կազմակերպութիւն մը երբ իր մէջ չունի ընդդիմութիւն՝ կը դադրի ժողովրդավարական ըլլալէ:

Հետեւաբար, ընդդիմութիւնը լաւ բան է եւ պէտք մըն է, բայց պէտք է գիտնանք անոր սահմանումը թէ ինչի՞ պիտի ծառայէ ընդդիմութիւնը: Ընդդիմութիւնը պէտք է գործէ բարելաւելու, ո՛չ կործանելու համար: Ու եթէ ունենայինք մաքուր ընդդիմութիւն մը, մենք այսօր արդէն հարց պիտի չունենայինք, ներքին տագնապ պիտի չունենայինք: Լիբանանի մէջ կամ աշխարհի ամէն կողմ ուր Ռ.Ա. Կուսակցութիւն գոյութիւն ունի:

Աշխատանքի մասին խօսեցանք: Մենք հիմա լուրջ աշխատանքի անցած ենք եւ կրնամ վստահեցնել որ թէպէտ 2000ին պէտք եղած փորձառութիւնը չունէինք եւ 2005ին ալ առիթը չունէինք (որովհետեւ առանց ընտրութիւններու վերահաստատուեցանք), սակայն այս ընտրութիւններուն բաւական լաւ կազմակերպուած աշխատանք մը կը տանինք: Այսօրուան կուսակցական մեքենային մէջ կան 50է անելի ընկեր-ընկերուհիներ, որոնք այս ուղղութեամբ կ'աշխատին եւ մնայուն 10 պաշտօնեաներ կան այդ մեքենային մէջ գերարդիական միջոցներով աշխատանք տանելու: Աշխատանքը արդէն 5 ամիսներ առաջ լրջօրէն սկսած է եւ այս անգամ մեր նպատակն է հնչակեաններու հետ միասնաբար ցոյց տալ որ Լիբանանի մէջ հայութիւնը կը ներկայացուի ամբողջական 2 թեւերով:

3.- Կը լսենք նաեւ որ Լիբանան-Հայաստան յարաբերութիւններուն մէջ ձեր օգտակարութիւնը կը բերէք մեր հայրենիքին: Այդ ուղղութեամբ կրնա՞ք քանի մը առնուած գործնական քայլերը ներկայացնել:

Պ.- Նախքան պատասխան տալս, 9րդ տարին ըլլալով խորհրդարանի մէջ

ես միշտ կը քննադատուի որ պետք եղածը հայութեան կամ Հայաստանի համար չեմ կատարեր, Լիբանանի մէջ հայ ազգի զաւակները կարելոր պաշտօններու չենք բերեր: Կ'ուզեմ այս առիթը գործածել բացատրութիւն մը տալով:

Նախ տանք համեմատութիւն մը անցեալի հետ: Երբ մենք չկայինք քաղաքական բեմի վրայ, 40 տարիներու ընթացքին լիբանահայերը ի՞նչ օգտուած էին Նախորդ այդ «պլոք»էն: Լիբանանեան օրէնքով որպէս յարանուանութիւն ու համայնք մեզի տրուած էին զանազան պետական գործերու մէջ որոշ պաշտօններ: 40 տարիներէ ի վեր օգտագործած ենք միայն 3-4 հատը, օրինակ՝ Կեդրոնական Դրամատան փոխ-նախագահի պաշտօնը, որ ինքնին առաջին կարգի պաշտօն է: Ատկէ դուրս, առաջնակարգ պետական պաշտօններու մէջ եթէ փնտռել ուզենք, շատ քիչ հայեր կան: Գալով երկրորդ եւ երրորդ կարգի պետական պաշտօններուն, ուր համայնքային բաժանում գոյութիւն չունի, բայց հայեր ունին իրաւունքներ, հոն եւս կը նկատենք հայ ազգի զաւակներուն բացակայութիւնը: Մեր աշխատանքը եղաւ առաջին հերթին գտնել թէ մենք ո՞ր եւ ո՞ր պաշտօններու վրայ իրաւունքներ ունինք: Պետք եղածին չափ թէեւ չկրցանք այդ պաշտօնները լեցնել, բայց հիմա արդէն փոխուեցաւ եւ սկսանք տեղադրել հայերը այդ պաշտօններուն վրայ:

Պետք եղած ձեւով չլաւանդեցանք երկու գլխաւոր պատճառով: Նախապէս պատճառը այն էր, որ միջին սերունդը պետք եղածին չափ արաբերէն լեզուին չէր տիրապետեր, սակայն հիմա արդէն այդ փոխուած է: Յետոյ, հայ համալսարանականները դժուարութեամբ կ'ուզէն պետական պաշտօններ ստանձնել, քանի որ բոլորին մօտ որպէս առաջին հարցում կը ծագի ամսականի հարցը եւ Լիբանանի պետական տուեալներով ամսականները բաւական ցած են համեմատած անհատական կառոյցներուն: Հետեւաբար, հայ երիտասարդներ կը Նախընտրեն ճամբորդել, քան հոս մնալով պետական պաշտօնեայ ըլլալ:

Գալով Հայաստանի հետ մեր յարաբերութեան, 2000ին երբ ընտրուեցանք ողբացեալ վարչապետ Հարիրիի հետ, երկու կարելոր այցելութիւններ տուինք Հայաստան, ուր պետականօրէն որոշ համաձայնութիւններ եղան Հայաստանի եւ Լիբանանի միջեւ, սակայն պետք եղած չափով չօգտուեցանք Լիբանանի քաղաքական ներքին վերիվայրումներու եւ կացութեան պատճառով: Հակառակ որ Հարիրի իբր գործարար որոշած էր ստեղծել որոշ կարելիութիւններ, անոնք եւս չիրագործուեցան՝ այս անգամ Հայաստանի պետութեան վերապահութիւններուն պատճառով:

Բայց եւ այնպէս, խորհրդարանական գետնի վրայ, ես երկու անգամ

միջխորհրդարանական հանդիպումներուն ներկայ եղած եմ, որոնցմէ մէկուն ընթացքին Լիբանանի խորհրդարանի նախագահը ներկայացնելու պատիւը ինծի տրուեցաւ երբ Հայաստան հրաւիրուած էինք, զանազան երկիրներու խորհրդարանի նախագահներու ներկայութեան: Ուրեմն կապերը կային, ա՛լ աւելի պէտք էր ջերմանային, բայց անշուշտ նախապայմանը՝ Լիբանանի ներքին կացութիւնն էր:

Ուրիշ կարեւոր բան մը, որ պէտք է նշել, այն է, որ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ չորս հայ երեսփոխաններու աշխատանքով եւ հետապնդումով ու գործակցութեամբը միւս երկու հայ երեսփոխաններուն, կարողացանք 6 Յունուարը, յատկապէս Ս. Ծնունդը, պաշտօնական պետական տօնի վերածել: Պետութիւնը, դրամատունները, եւայլն, այդ օրը յարգելով հայ համայնքը՝ փակ կը մնան:

Հ.- Իսկ Մեծ Եղեռնը ձեր շրջանին արդեօք խորհրդարանին մէջ ճանաչում գտա՞ն:

Պ.- Ոչ, մեզմէ երկու տարի առաջ ընդունուած էր, բայց մենք այդ մասին որոշ հարցանշաններ ունինք, որովհետեւ ընդունուած բանաձեւը թէեւ նպաստաւոր է Հայ Դատին համար, Լիբանանի նման երկրի մը մէջ, ուր հայութիւնը այսքան քաղաքական կշիռ ունի, տարբեր ձեւ մը առնելու էր: Աշխատանքը զոր տարած էր այդ օրերուն պարոն Խաչիկ Պապիկեանը, վերատեսութեան պէտք է ենթարկել: Այդ ալ գլխաւոր կետերէն մէկն էր մեր ծրագիրներու շարքին, սակայն ներքին տագնապները մեզի չթոյլատրեցին որ այդպիսի զգայուն հարց մը յառաջ քշենք, քանի որ Թուրքիա միջինաւելեւեան ոյժ մը ըլլալով, նուրբ հարցի մը կրնար վերածուիլ:

Հ.- Լիբանանահայ նոր երիտասարդութեան քաղաքական մտածողութիւնը ինչպէ՞ս կը գնահատէք արդեօք, ու այս մեր սերունդէն քաղաքական հարցերով մօտիկէն հետաքրքրուողներ կա՞ն:

Պ.- Ահաւասիկ կէտ մը, որ կը նկատեմ այժմեական եւ չափազանց կարեւոր: Ըսեմ, ըլլա՛յ Ռ.Ա.Կ.-ի կամ միւս կուսակցութեանց պարագային, կը շարունակենք կրկնել թէ ամէն բանէ առաջ հայ ենք: Այնքան ատեն որ այս մտայնութիւնը կայ, մենք կամաց-կամաց պիտի կորսնցնենք մեր երիտասարդութիւնը: Ես 2000ի ընտրութիւններէն առաջ, անձնական փորձառութեամբ,- քանի որ 15 տարի Փարիզ ապրեցայ,- կ'ըսէի որ մենք այլեւս լիբանանցիներ ենք հայկական ծագումով: Չիս որպէս դաւաճան կը ներկայացնէին, թէ մոռցած եմ ինքնութիւնս, հայկականութիւնս: Բայց երկու տարի չանցած, արդէն Արամ Ա. Կաթողիկոս իր ելոյթներէն մէկուն մէջ ըսաւ. «We

are Lebanese of Armenian origin»: Երթալով իր մօտ, յիշեցուցի թե երկու տարի առաջ զիս դաւաճան կը կոչէին...:

Հիմա փոխուած է կացութիւնը:

Ամէն լիբանանահայ պէտք է հասկնայ թէ մենք իսկապէս լիբանանցիներ ենք, իսկ եթէ մեր «կեթօ»ներուն մէջ պիտի շարունակենք ապրիլ, այն ատեն մեր սերունդէն ետք քաղաքականութեամբ զբաղող սերունդ պիտի չունենանք:

Այսօր դժբախտ իրողութիւն է, որ ռամկավարներ, հնչակեաններ, դաշնակցականներ, Բարեգործական չունին պէտք եղած հմայքը՝ համալսարանականներու մօտ, զանոսք ընդգրկելու իրենց կազմակերպութիւններէ ներս: Այդ իրենց մէջ ներգրաւելու կարողութիւնը շատ պակսած է:

Այսօր դժբախտ երեւոյթ է որ երբ երթաս որեւէ համալսարան, կը տեսնես որ հայ երիտասարդներն ու երիտասարդուհիները աւելի զացած եւ միացած են Փաղանգաւոր կուսակցութեան, Լիբանանեան Ուժերու, Առնի կուսակցութեան, եւայլն:

Բայց երիտասարդութիւնը, որ կ'ուսանի համալսարաններու մէջ, ինքզինք կը զգայ հարիւր տոկոս լիբանանցի: Կը զգայ որ ինք շաղուելու է Լիբանանի համայնքին ու անոր քաղաքական կեանքին մէջ: Մաս կազմելու համար լիբանանեան քաղաքական կեանքին՝ պէտք է մաս կազմէ լիբանանեան քաղաքական կազմակերպութեան մը:

Հոս է որ մեր ազգային բոլոր կուսակցութիւններն ալ պարտաւոր են որոշ վերատեսութեան ենթարկել իրենց ծրագիրները: Իմ կարծիքով, այս միայն Լիբանանի չի վերաբերիր: Նոյնը ճիշդ է Ֆրանսայի, Ամերիկայի կամ այլ երկիրներու համար: Որովհետեւ տուեալ երկրի քաղաքական կեանքին հետ եթէ առնչութիւն մը պիտի ուզենք ունենալ, ստիպուած ենք մեր երիտասարդները ներգրաւել գոնէ տուեալ երկրի որպէս քաղաքացիներ:

Ուրեմն պահպանելով իրենց հայկական տոհմիկ աւանդութիւնները, լեզուն, մշակոյթը, որպէս այդ երկրի քաղաքացիներ մաս պէտք է կազմեն հայկական քաղաքական կեանքին: Գոնէ հպարտ զգան որ հայկական կուսակցութեան մը մաս կազմելով հանդերձ ներգրաւուած կ'ըլլան այդ երկրին տեղական, քաղաքական կեանքին մէջ:

Ու կոչ կ'ընեմ բոլոր մեր կուսակցութիւններուն, որպէսզի իրենց ծրագիրներուն ու կանոնագրին մէջ ներգրաւեն այնպիսի կետեր, որոնք թոյլ տան տուեալ երկրի մը մէջ որպէս քաղաքական կազմակերպութիւն գործել:

Հ.- «Չարթօնք»ը մեզի համար հիմնական նշանակութիւն ունի: Գիտէ՞նք անոր կարեւորութիւնը: Արդե՞՞ք օրաթերթի դրութեան դառնալու կարելի-

ուրթիւնը հաւանական է:

Պ.- «Չարթօսնք»ը օրաթերթ էր եւ օրաթերթ պէ՛տք է ըլլայ: Մեր նշանաբանն է ա՛յս, մեր թերթին համար: Բայց, առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, «Չարթօսնք»ը շատ դժուար օրեր անցուց: Պատճառները տնտեսական էին, կազմակերպչական, վարչական: Այս ամէնուն միացնելով մեր ներքին տագնապը, հետեւեալները եղաւ այն, որ «Չարթօսնք»ը դադրեցաւ լոյս տեսնելէ:

«Չարթօսնք»ի դադարումը տեւեց մէկ տարիէ աւելի եւ վերսկսիլը բաւական դժուար էր: «Չարթօսնք» ընկերակցութիւնը արդէն պարտքերու տակ էր: Բարեբախտաբար, կուսակցութիւնը գրանցուած էր եւ նոր ընկերակցութիւն մը կազմուեցաւ՝ երկու երրորդը Թէքէեանին եւ մէկ երրորդը կուսակցութեան բաժինով: Այդ ընկերակցութիւնը անհատի անուններով չէ, ինչպէս անցեալին էր: Գոնէ լիբանանեան կեանքին մէջ ասիկա նորութիւն է: Թերթը կը պատկանի այսուհետեւ տուեալ կազմակերպութեանց:

Օրինական ձեւակերպումները բաւական ժամանակ խլեցին. ըսեմ նաեւ թէ տեղւոյն կացութիւնն ալ անբնական էր, ես մէկուկէս տարիէ աւելի գրասենեակս կամ տունս ալ չէի կրնար երթալ...:

Ու վերջապէս բոլոր դժուարութիւնները յաղթահարելով ծնունդ տուինք «Չարթօսնք»ին եւ յայտարարեցինք սկիզբէն թէ ամիսը նախ երկու թիւ լոյս պիտի տեսնէ, չորս ամիսներու համար, ապա՝ պիտի դառնայ շաբաթաթերթ:

Եւ ես խոստացած էի որ Յունուարէն սկսեալ եռօրեայի պիտի վերածենք «Չարթօսնք»ը: Որոշ թեքնիք պատճառներով այդ «յետոյ»ն ձգձգուեցաւ: Նոյնիսկ կը խորհիմք այսօրուընէ սկսեալ շաբաթը 3 թիւի վերածել: Ու այս հանգրուանին, յարաբերաբար կարճ ժամանակի մէջ, արդէն յաջողութիւն մը կը նկատենք եղածը: Չմոռնանք որ նախկին «Չարթօսնք» օրաթերթը միայն 4 էջ ուներ, սեւով-ճերմակ. հիմա արդէն լոյս կը տեսնէ 16 էջ, գունաւոր, ու երբ երկօրեայի վերածուի, պիտի ըլլայ ութական էջ ու շաբաթավերջի թիւն ալ՝ 16:

Այս յայտագրով յառաջ պիտի երթանք: Ու եթէ մինչեւ տարեգլուխ աւելի լաւ կազմակերպուինք, յառաջիկայ օրերէն սկսեալ օրաթերթի պիտի վերածուինք:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Պէյրուս, 26 Յունուար 2009

«ԱԶԳ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱԴՈՐ ՅԱԿՈՒ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ ՀԵՏ

- Նախքան վերջին խորհրդարանական ընտրություններուն անդրադառնալը, կ'ուզեմ խօսիլ լիբանանեան քաղաքական կեանքին մէջ հայկական մասնակցութեան մասին: Ինչպէս ծանօթ է շատերուն, մինչեւ 2000 թուականը լիբանանեան քաղաքական կեանքին մէջ հայ համայնքը ամբողջութեամբ կը ներկայացուէր Հ.Յ.Դ.-ի կողմէ: 2000ին Նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի օրօք, փոփոխութիւն տեղի ունեցաւ գոյութիւն ունեցող կացութեան մէջ: Վարչապետ Հարիրի որդեգրեց հայութեան ներկայացուցչութեան մէջ զանազանութիւն ապահովող քաղաքականութիւն մը: Այս քաղաքականութեան շնորհիւ է, որ առիթ տրուեցաւ հայ աւանդական միւս երկու կուսակցութիւններուն՝ Ռ.Ա.Կ.-ին եւ Ս.Դ.Հ.Կ.-ին, նոյնպէս մասնակցելու խորհրդարանական ընտրություններուն, որով այդ թուականէն երեք կուսակցութիւններն ալ տեղ գրաւեցին խորհրդարանին մէջ: Այսպիսով, վերացաւ «Հայկական պլոք» հասկացութիւնը, հակառակ անոր որ Դաշնակցութիւնը իր երկու երեսփոխաններով կը շարունակէր պնդել, որ ինք տակաւին կը ներկայացնէ «Հայկական պլոքը»ը: Նոյն վիճակը շարունակուեցաւ նաեւ 2005ի խորհրդարանական ընտրություններուն:

Գալով 2009ի ընտրություններուն, պետք է ըսել, որ մինչ այդ ընտրությունները որոշ փոփոխութիւններ տեղի ունեցած էին: Լիբանանեան քաղաքական զանազան կողմեր առարկութիւններ ունէին ընտրաշրջաններու բաժանման 2000ի օրէնքին դէմ, զայն նկատելով ներկայացուցչութիւն ապահովելու տեսակետէ անարդար օրէնք մը: Տոհայի մէջ գոյացած միջլիբանանեան համաձայնութեան հիման վրայ ետ դարձ կատարուեցաւ, եւ ընտրաշրջաններու բաժանման 1960ի օրէնքը որդեգրուեցաւ:

Բոլորը կը կարծէին, որ տեղի ունենալիք ընտրություններուն հայկական խորհրդարանական աթոռները պիտի գրաւուին Հ.Յ.Դ.-ի կողմէ: Դաշնակցութիւնը դարձեալ սկսաւ խօսիլ «Հայկական պլոք»ի մասին: Սակայն, ընտրություններուն արդիւնքով, Դաշնակցութիւնը միայն երկու երեսփոխան ունեցաւ խորհրդարանին մէջ, մինչ Ռ.Ա.Կ.-ը եւ Ս.Դ.Հ.Կ.-ը՝ չորս երեսփոխան:

Խօսելով «Հայկական պլոք» հասկացութեան մասին, ինչպէս քիչ առաջ կ'ըսէի, մինչեւ 2000 թուականը «Հայկական պլոք»ը Հ.Յ.Դ.-ի կողմէ կը դեկավարուէր, թէեւ պլոքին մէջ մէկ դաշնակցական երեսփոխան կար,

սակայն միւսները ամբողջովին ենթակայ էին կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին: Մեր հասկացողութեամբ ատիկա «Հայկական պլոք» ըլլալէ աւելի Յ.Յ.Դ.-ի պլոք էր, հայկական անունին տակ: 2000ին փոխուած էր կացութիւնը, եւ խորհրդարանին մէջ դաշնակցական, ռամկավար, հնչակեան եւ չեզոք երեսփոխաններ կային արդէն: Նոյնը կրկնուած էր 2005ին:

Կը կարծուէր, որ 2009ի ընտրութիւններուն նախկին կացութեան վերադարձ տեղի պիտի ունենայ: Հոս յիշեցնեմ, որ Տոհայի համաձայնութեամբ Պէյրութի երկրորդ ընտրաշրջանը նոր ձեւափոխութիւններու ենթարկուած ըլլալով, որոշուած էր, որ այդ ընտրաշրջանէն մէկ թեկնածու Դաշնակցութեան կողմէ եւ մէկ թեկնածու ալ հակառակորդ կողմէ առաջադրուի: Այդպէս ալ եղաւ, եւ առանց ընտրութեան, երկու թեկնածուներ՝ դաշնակցական եւ հնչակեան, խորհրդարանին մէջ իրենց աթոռները ապահովեցին: Գալով Պէյրութի միւս ընտրաշրջանի եւ Պեքաայի երեսփոխանական աթոռներուն, հոն ընտրապայքար եղաւ, հսկայական աշխատանք տարուեցաւ դուրսէն լիբանանահայեր բերելու եւ գիրենք ընտրութիւններուն մասնակից դարձնելու ուղղութեամբ: Հակառակ բոլոր այդ աշխատանքներուն, Պէյրութի երեք հայ երեսփոխաններ եւ Պեքաայի հայ երեսփոխան ընտրուեցան հնչակեան եւ ռամկավար թեկնածուներ:

Նախքան ընտրութիւնները, միջ-կուսակցական ժողովներու ընթացքին, մենք աշխատանք տարած էինք «Հայկական պլոք»ի վերաբերեալ համաձայնութիւն մը գոյացնելու ուղղութեամբ, որով առաջարկած էինք, որ պլոքը գործէ եւ միասնական հանդէս գայ միայն հայկական հարցերու, շահերու եւ լիբանանահայութեան իրաւունքներու պարագային: Ատկէ դուրս, իբրեւ հայկական ծագումով լիբանանցիներ, ամէն հայու ազատութիւն տրուի լիբանանեան քաղաքական կեանքին հանդէպ կողմնորոշուելու սա կամ նա ուղղութեամբ: Այս առաջարկը Դաշնակցութեան կողմէ մերժուած էր: Հակառակ անոր որ Դաշնակցութիւնը «8 Մարտ»ի դաշինքին, իսկ մենք ալ «14 Մարտ»ի ուժերուն մաս կը կազմէինք, մենք առաջարկած էինք դուրս գալ այդ դաշինքներէն եւ կազմել չեզոք համախմբում մը, որ սակայն դարձեալ մերժուած էր: Գալով «Հայկական պլոք»ին, իսկապէս որ լիբանանցիներուն համար խոտոր կը թուի «Հայկական պլոք» ըսուածը, քանի որ Լիբանանը, համայնքային դրութեամբ երկիր ըլլալով հանդերձ, խորհրդարանին մէջ համայնքային ոչ մէկ պլոք գոյութիւն ունի: Ես դեմ պիտի չըլլայի՝ եթէ խորհրդարանի մէջ դաշնակցական կամ ռամկավար պլոք գոյութիւն ունենար, բայց հայութեան անունը գործածել իբրեւ պլոք, քիչ մը անընդունելի կը թուի լիբանանցիներուն համար: Ճիշդ չէ նաեւ, որ բոլոր հայերը «մէկ կողովի մէջ» ըլլան:

Լիբանանեան քաղաքականութեան մէջ գոյութիւն ունեցող զանազանութիւնը հայկական իրականութեան մէջ ալ գոյութիւն ունի եւ այդ զանազանութիւնը պէտք է պահպանենք: Ամբողջ լիբանանահայութեան անունով խօսիլը կրնայ վնասել լիբանանահայութեան: Մենք պէտք չէ մոռնանք, որ մենք լիբանանցիներ ենք եւ մեր միակ տարբերութիւնը մեր հայկական ծագումն է: Մենք երկրին քաղաքացիներն ենք եւ կը մասնակցինք Լիբանանի, այլ ոչ թէ ուրիշ երկրի խորհրդարանական ընտրութիւններուն: Այս իմաստով շատ յստակ է մեր տեսակետը: Մենք մեր ազգային բոլոր սրբութիւնները պահպանելու, իրաւունքները եւ շահերը պաշտպանելու համար պատրաստ ենք ամէն զոհողութեան: Մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր հայ դպրոցը եւ մեր ակումբները մեզի համար սրբութիւններ են, եւ իբրեւ հայեր եւ հայ պատասխանատուներ՝ երեսփոխաններ, նախարարներ, կամ կուսակցական ղեկավարներ, մեր սուրբ պարտականութիւնը եւ պարտաւորութիւնն է պաշտպանել զանոնք: Ասիկա չի նշանակեր, որ մենք միակողմանի, իբր լիբանանահայեր, բոլորս պէտք է ներկայանանք քաղաքական մէկ կողմի հետ միայն:

Լիբանանի քաղաքական խոր իրավիճակին թելադրանքով իսկ յայտնի է, որ լիբանանահայութիւնը երբեք պատրաստ եւ ի վիճակի չէ Լիբանանի ճակատագիրը առանձին որոշելու: Լիբանանը այսօր երկու մասի բաժնուած է եւ ջախջախիչ մեծամասնութիւն մը գոյութիւն չունի: Խորհրդարանի 128 երեսփոխաններէն եթէ հանենք 6 հայ երեսփոխանները, մնացած 122 երեսփոխաններէն եթէ մէկ կողմը ունենար 59, իսկ միւս կողմը 63 կամ մօտաւորապէս այս թիւերու շուրջ, սա պիտի նշանակէր, որ լիբանանեան քաղաքական ճակատագիրը պիտի որոշէր հայկական պլոքը այս կամ այն կողմին մաս կազմելով: Ասիկա անկարելի պատասխանատուութիւն եւ ծանր բեռ մը պիտի ըլլար լիբանանահայութեան համար:

- Վերջին խորհրդարանական ընտրութիւնների ընտրարշաւի սկզբում Ռ.Ա.Կ.-ի կողմից առաջադրուելուց յետոյ, վերջին պահին հրաժարուեցիք ու Ռ.Ա.Կ.-ի թեկնածու առաջադրուեց անկուսակցական Ժան Օղասափեանը: Ի՞նչն էր պատճառը:

- Նախ եւ առաջ կ'ուզեմ յիշել եւ յիշեցնել բոլոր անոնց, որոնք հաւանաբար մոռցած կրնան ըլլալ, թէ վերջին երկու տարիներուն մեր ճակատի երեսփոխանները ինչպիսի դժուարութիւններու մէջ էին՝ ապահովական եւ նոյնիսկ կեանքի վտանգի տակ: Շատ դժուարին օրեր անցուցած եմ, երկար ատեն նոյնիսկ անձնական գրասենեակս եւ տունս չեմ կրցած այցելել: Այդ երկու տարիները այնպիսի տրամադրութիւն ստեղծած էին, որ երեսփոխանական աթոռ ունենալու հետաքրքրութենէն հրաժարէի: Այդ մթնոլորտին մէջ

Էի, երբ Տոհայի համաձայնությունը եղաւ եւ արդէն այդ օրերուն իմ ընկերներու եւ բարեկամներու յայտարարած էի, որ նպատակ չունիմ առաջադրուելու: Սակայն ընտրապայքարը այնպէս մը ընթացաւ, որ կուսակցութիւնը դարձեալ առաջադրէ իմ թեկնածութիւնը, որով ստիպուեցայ ընդունիլ զայն: Այս ընթացքին մեր կուսակցութեան վերին մարմինը՝ Կեդրոնական Վարչութիւնը եւ մանաւանդ անոր ատենապետ Մայք Խարապեանը իր այցելութիւններով ու տեսակցութիւններով յայտնի եւ անյայտ անձերու հետ, այնպիսի մթնոլորտ մը ստեղծեց, որ կարծես թէ կուսակցութեան ներսը երկուութիւն մը գոյութիւն ունի եւ Կեդրոնական Վարչութիւնը համաձայն չէ իմ թեկնածութեան:

Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը, խախտելով այն աւանդոյթը, որով Կեդրոնական Վարչութիւնը Լիբանանի Շրջանային Վարչութեան առաջադրած թեկնածուն է, որ կ'որդեգրէ Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն, յայտարարութիւն մը հրապարակեց, որով կոչ կ'ըներ «միասնականութեան»: Այդ յայտարարութիւնը մեզ բաւական դժուար կացութեան առջեւ դրաւ: Լիբանանի Շրջանային Վարչութիւնը մերժեց անշուշտ Կեդրոնական Վարչութեան այս յայտարարութիւնը: Թէեւ մթնոլորտ պոտորող եւ սիրտ խառնող քայլեր էին ասոնք, սակայն առանց ուշադրութիւն դարձնելու անոնց, ես կրնայի շարունակել պայքարը, եւ ինչպէս Ռ.Ա.Կ.-ի առաջադրած թեկնածու Ժան Օդասափեանը, ես նոյնպէս կրնայի յաջողութեան հասնիլ: Թեկնածութիւնս հանելու հիմնական պատճառը Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մայք Խարապեանի քայլերը չէին անշուշտ, այլ բազմաթիւ այլ պատճառներ եւս կային: Մեր կուսակցութեան ներքին հարցերը առաւել պատճառ եղան, որ ես հրաժարիմ իմ թեկնածութիւնը ներկայացնել: Ամէն պարագայի, կուսակցութիւնը իր աթոռը չկորսնցուց. հոգ չէ թէ անկուսակցական է պարոն Օդասափեան, բայց ան շատ լաւ կրնայ ներկայացնել մեր կուսակցութիւնը: Ռ.Ա.Կ.-ը խորհրդարանի մէջ ունեցաւ իր աթոռը եւ իրեն շատ մօտ այլ երեսփոխան մը՝ Պեքայի շրջանէն ընտրուած Շանթ Զինչինեանը, որ ռամկավար ընտանիքի գաւալ է: Մենք զմեզ բաւարարուած կը զգանք ունենալով երկու երեսփոխաններ:

- *Կուսակցական ձեր ընդդիմախօսները ձեզ քննադատում են կուսակցութեան պաշտօնաթերթ «Չարթօնք» օրաթերթը շուրջ մէկ տարի փակելու, ինչպէս նաեւ Ռ.Ա.Կ.-ը Լիբանանում որպէս տեղական կուսակցութիւն գրանցելու մէջ: Ի՞նչ կ'ասեք այդ քննադատութիւնների մասին:*

- Նախ սկսիմ երկրորդով: 5-6 տարի առաջ, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղած Ժամանակ, կուսակցութեան Կեդրոնական

Վարչության հետ խորհրդակցաբար, գաղափարը ունեցայ գրանցել տալու կուսակցությունը Լիբանանի օրենքներով: Կերոնական Վարչությունը եւ անոր ատենապետը համաձայն էին այդ գրանցումին, հակառակ անոր որ հիմա ուրիշ բան կ'ըսեն այդ մասին: Գրանցումը կարելու էր մի քանի պատճառներով: Շատերը գիտեն, որ Լիբանանի մեջ գործող հայկական կուսակցությունները պաշտոնապես գրանցուած չեն, անոնք կը գործեն մշակութային միություններու անուան տակ: Մեր կուսակցությունները թէեւ օրենքով արտօնագրուած չեն, բայց հանդուրժուած եւ թոյլատրուած են: Այդ վիճակը որեւէ օր կրնայ փոխուիլ. վտանգ մը, որ դամկէտան սուրի պէս ամէն օր կախուած կը մնար մեր գլխուն: Այդ իսկ պատճառով, ինչպէս նաեւ այլ տեսակի առաւելություններ ունենալու մտահոգութեամբ, ինչպէս եղաւ «Չարթօնք»ի պարագային, արձանագրել տուինք կուսակցությունը: Մեր կուսակցապատկան ունեցուածքը եւ դրամատնային հաշիւները տարիներ շարունակ անձերու անունով եղած են: Ֆինանսական եւ վարչական թափանցիկ վիճակ մը ունենալու համար էր, որ արձանագրել տուինք կուսակցությունը: Ընդդիմությունը միշտ առիթը պիտի օգտագործէր նման անտեղի եւ անհիմն քննադատություններ ընելու համար:

- *Դուք կրնա՞ք, որ դրական ընդդիմություն լինի նաեւ Ռ.Ա.Կ.-ում:*

- Անշուշտ: Եթէ հայկական կուսակցություն մը կայ, որ անպայման պէտք է դրական ընդդիմություն մը ունենայ, ատիկա Ռամկավար Ազատական Կուսակցությունն է, քանի որ մեր գաղափարախօսությունը մեզի արդէն կը պարտադրէ ժողովրդավարությունը, իսկ ժողովրդավարությունը չի կրնար գոյություն ունենալ առանց ընդդիմութեան: Հետեւաբար, ընդդիմությունը մեզի համար միշտ ողջունելի է եւ անհրաժեշտություն, բայց այդ ընդդիմությունը դրական պէտք է ըլլայ: Վերջին տարիներուն մեր ընդդիմությունը եղած է պարզապէս աթոռապաշտութեան, նախանձի եւ թռուցիկ բաժնող ընդդիմություն մը: Շատ ընկերներ իրենց նիւթական կարողությունները կը գործածեն այդ անձնական նպատակներուն հասնելու համար: Տարիներու ընթացքին մենք կրցանք դիմագրաւել այդ բոլոր դժուարությունները: Հիմա ալ նոր դժուարություններ կան, նոր ընդդիմություն մը գոյություն ունի, որ ատենին մեծամասնություն կը կազմէր: Մեծամասնություն-ընդդիմություն փոխած են իրենց դերերը: Ի վերջոյ, եթէ վերլուծելու ըլլանք Ռ.Ա.Կ.-ի վերջին տարիներու պատմությունը եւ խառնակչությունները, կը տեսնենք, որ բոլորը անձնական փառասիրություններ են, գաղափարական, քաղաքական կամ պատկանելութեան շուրջ լուրջ տարակարծություններ չկան:

Գալով «Չարթօնք» օրաթերթին, պէտք է ըսեմ որ թերթը լուրջ դժուարու-

թիւներ եւ նիւթական մեծ բացեր ունէր: Կարգ մը ընկերներ դատական գործեր յարուցած էին թերթին դէմ: Թերթը կը մատակարարուէր Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ, որ օրէնքով քաղաքական կազմակերպութիւն չըլլալով, քաղաքական օրկան մը մատակարարելու իրաւունքը չունի: Իրաւական այս բոլոր դժուարութիւնները յաղթահարելու համար պէտք եղաւ թերթը դադրեցնել որոշ ժամանակ: Ասիկա առիթ եղաւ, որ «Չարթօնք»ը ամբողջովին մաքրուի: Այդ ամիսներուն ընթացքին, երբ արդէն կուսակցութիւնը եւ Թէքէեան Մշակութային Միութիւնը արձանագրուած էին, շատ թափանցիկ կերպով նոր ընկերութիւն մը ստեղծեցինք, որուն տոկոսները միութեան եւ նոր արձանագրուած կուսակցութեան կը պատկանին եւ այդ ընկերութիւնն ալ, որ «Շիրակ Փրես» կը կոչուի, սեփականատերը եղաւ «Չարթօնք»ին: Երկար ժամանակ խլեց նաեւ թերթին տարիներ շարունակ կուտակած պարտքերուն, պետական տուրքերուն վճարումը եւ դատական քաջբշուքները: Արդէն նոր կարգավիճակով թերթը վերադարձուցինք մեր ընթերցողներուն:

- Անկախ Լիբանանում խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներից, արդեօք համահայկական նպատակներն ու շահերը չէ՞ն պարտադրում, որ աւանդական կուսակցութիւնները, այնուամենայնիւ, համագործակցութեան եզրեր գտնեն:

- Անկասկած: Որեւէ կուսակցութեան պատկանող երեսփոխան, կուսակցական պատկանելութիւն ունեցող կամ անկախ անհատ պէտք է ազգային շահերը գերիվեր դասէ կուսակցական շահերէ: 2000 թուականէն առաջ այդպէս էր, ատկէ վերջ ալ այդպէս եղաւ: Հակառակ անոր որ Դաշնակցութիւնը ոչ դաշնակցական երեսփոխանները չէր ուզեր ճանչնալ, բայց եւ այնպէս ամէն հարցի շուրջ, ուր հայ համայնքի շահերը կը շօշափուին, միասին կը գործակցինք: Միջ-կուսակցական ժողովները երբեք չեն դադրած եւ յոյս ունիմ, որ կը շարունակուին յետ այսու: Լիբանանահայ քաղաքական կուսակցութիւնները տակաւին 1975էն սկսեալ համագործակցութեան շատ գեղեցիկ մթնոլորտ մը ստեղծած են: Լիբանանահայ կուսակցական թէ անկուսակցական պատասխանատուներ նախանձախնդիր են, որ համագործակցութեան այդ մթնոլորտը տիրապետող մնայ: Հայկական իրաւունքներու պաշտպանութիւնը բոլորիս ճիտին պարտքն է: Հակառակ մեր սկզբունքային ծանօթ կեցուածքներուն Հայ եկեղեցւոյ երկփեղկումին հանդէպ, մենք համայնքային հարցերով սերտօրէն կը համագործակցինք նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ:

- *Գաղտնիք չէ, որ Ռ.Ա.Կ.-ը վերջին տասնամեակներին ներքին ճգնաժամ է ապրում: Արդեօք Լիբանանի խորհրդարանական ընտրություններում կուսակցության յաջողությունն ու այլ գործոններ կարո՞ղ են վերականգնել կուսակցության երբեմնի հզորությունն ու հմայքը:*

- Ես միշտ լաւատես եմ: Մեր շարքերը նոյն այս հաւատքով պետք է գործեն եւ ունենան այն հաստատ համոզումը, որ կուսակցութիւնը անպայման պիտի գտնէ իր միասնականութիւնը: Վերջին այս մի քանի ամիսներուն առիթը կար, որ կուսակցութիւնը միաւորուի եւ միացեալ ձեւով Ընդհանուր Պատգամաւորական ժողով մը գումարէ: 2000էն ի վեր կուսակցութիւնը երեսփոխան ունեցած է Լիբանանի մէջ, սակայն միասնականութիւն չէ եղած: 1995ի երկփեղկումէն ի վեր, ես, որպէս երեսփոխան եւ կուսակցական պատասխանատու, ճիգ չեմ ինչայած կուսակցութեան միասնականութիւնը վերականգնելու համար: Այսօր, միասնականութեան ձեռք մեկնած եմ բոլոր այն անձերուն, որոնք ատենին ընդդիմադիրներ էին եւ կուսակցութիւնը Հայաստանի թէ սփիւռքի մէջ երկուքի բաժնելով, անձամբ իմ դէմս ալ պայքարած էին: Ես պատրաստ եմ յանուն կուսակցութեան միասնականութեան անոնց հետ ալ համագործակցելու: Ինծի համար տակաւին մութ կը մնան կուսակցութեան միասնականութեան վերականգնման վերջին այս առիթէն չօգտուելու իրական պատճառները: Կարծես թէ պահանջուածը այդ պիտի ըլլար, որ Ռ.Ա.Կ.-ը միշտ բաժնուած եւ պառակտուած մնար: Ես համոզուած եմ, որ միայն մութ կողմերուն նպատակը կրնայ ըլլալ ատիկա:

- *Դուք լաւատես եք այն բանում, որ այսքան դժուարութիւններից, կուսակցական ներքին պառակտումներից ու ցնցումներից յետոյ էլ, այնուամենայնիւ, Ռ.Ա.Կ.-ը սփիւռքում վերականգնուելու, առողջանալու, հզորանալու ու ապագայում սփիւռքում գործելու ներոյժ ունի:*

- Մենք՝ ռամկավարներս, պետք է հաւատանք ապագային եւ աշխատինք, որ միութիւնը եւ միասնականութիւնը վերականգնի մեր միջեւ: Այդ միութիւնը պետք չէ ուշանայ: Այսօրուայ ղեկավարութիւնը դժբախտաբար չի ներկայացներ համասփիւռքեան մեր շարքերը, ատոր համար ալ երկար չի կրնար գոյատեւել: Այսպէս չի կրնար շարունակել, վաստակաւոր ղեկավարներ կան, փորձառու կուսակցականներ կան եւ երիտասարդութիւն մը կայ, որ հեռու է իրենցմէ: Մեր փառասիրութիւնները եւ աթոռամոլութիւնը մոռնալով, միասնաբար, ձեռք-ձեռքի տուած, պետք է վերականգնենք Ռամկավար կուսակցութիւնը: Նոյնիսկ եթէ Ռ.Ա.Կ.-ը գոյութիւն ունեցած չըլլար, հիմա՛ պետք է ստեղծուէր, որովհետեւ մենք միակ կուսակցութիւնն ենք, որ ազատականութեան եւ ժողովրդավարութեան կը հաւատանք:

Այսօր գոհունակությունս այն է, որ Հայաստանի մեջ իշխող գաղափարախօսությունը ժողովրդավարությունը եւ ազատականությունն են: Ասիկա մեզի համար մեծ դրամագլուխ մըն է, որպեսզի Հայաստանի թէ սփիւռքի մեջ միանանք եւ սատար կանգնինք հայրենի այժմու իշխանություններուն, կամ Հայաստանի մեջ գալիք որեւէ իշխանութեան, որ ազատականությունը եւ ռամկավարությունը կ'որդեգրէ իբրեւ գաղափարախօսություն:

«Ազգ», 2012

Յակոբ Գասարճեան. «Լիբանանը դեռ Սփիւռքի սիրտն է, իսկ սիրտը կը բաբախէ»

- Պարոն Գասարճեան, ուրախութեամբ կը շնորհաւորենք պետական պարգեւի առիթով եւ Ձեզի կը հաղորդենք շատ-շատերու քաջալերանքի խօսքերը, կ'ուզենք հարցնել. ի՞նչ զգացում ունեցաք, երբ տեղեկացաք, որ հայրենի կառավարութիւնը ըստ արժանւոյն կը գնահատէ Ձեր գործունեութիւնը:

- Ես շոյուած եմ այս պարգեւով, մեծ ուրախութիւն ապրեցայ: Հպարտութեան զգացում ունիմ, որ, իսկապէս, իմ երկարամեայ գործունեութիւնը ինչպէս քաղաքական ու հանրային, այնպէս ալ տնտեսական դաշտին մէջ նման գնահատանքի արժանացաւ: Պարգեւը ինքնին վկայութիւնն է այն բանին, որ վերջապէս ձեւաւորուած է այն ըղձալի կամուրջը Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, որու մասին տարիներ շարունակ կը փափաքէինք ու կ'երագէինք: Տասնամեակներ շարունակ մենք Սփիւռքի մէջ ծաւալած ենք ազգային ու քաղաքական գործունեութիւն՝ նպատակ ունենալով բոլոր ձեռնարկներով կենդանի պահել Ոգին, հայուն Էութիւնը, ապահովել մեր ներկայութիւնը աշխարհի տարբեր երկիրներու մէջ ծաւալուող ընկերային, մշակութային իրողութիւններուն մէջ: Շատ յաճախ գործած ենք մեր խղճի մտօք եւ սրտի թելադրանքով՝ ոչ միշտ զգալով Հայրենիքի շնչառութիւնը մեր թիկունքին: Պատճառները տարբեր էին, իսկ գլխաւոր պատճառը այն համակարգն էր, որու մէկ մասնիկը դարձած էր նաեւ Խորհրդային Հայաստանը: Չտարուելով տարերային գործունեութեան փորձութենէն, այնուհանդերձ անհրաժեշտութիւն կը համարէինք մշտառկայ կապը Հայաստանի հետ, որու գոյութեամբ արդէն մենք մեզ զօրաւոր պիտի զգայինք: Հիմա այդ կապը այլեւս անշրջելի է, այն հզօր ներկայութիւն է, որու միջոցով ալ առաւել նպատակամետ պիտի համարուին մեր հետագայ քայլերը: Մէկ անգամ եւս ըսեմ, որ պարգեւը ուրախութիւն պատճառեց ինծի, որովհետեւ իմ քառասունէ աւելի տարիներու գործունեութեան արժեւորումն է Հայրենիքիս կողմէ:

- Յիրաւի, Ձեր գործունեութիւնը բազմաճիւղ է, որու շարք մը դրուագներու, բնականաբար, մենք ծանօթ ենք: Սակայն, առաւել մօտիկէն ծանօթանալու համար, խնդրեմ փոքր-ինչ ներկայացուցէք Ձեր գործունեութիւնը:

- Նախ հպարտութեամբ արձանագրեմ, որ հին լիբանանցի եմ: Բնականաբար, արմատներս ծնողներուս յիշողութեան ծալքերուն մէջ են: Աւարտած եմ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, որ ամենանշանաւոր ուսումնական կառոյցներէն մէկն է Մերձաւոր Արեւելքի մէջ: Այնուհետեւ զբաղած եմ գործարարութեամբ, քանի որ կրթութիւնս նաեւ այդ կը պահանջէր: Սակայն շատ վաղ հասակիս գիտակցութեանս մէջ ամրապնդուած էր այն գաղափարը, որ ամէն հայ Սփիւռքի մէջ ոչ միայն իր գործին ու իր մասնագիտութեան կրողն է, այլեւ ամէն ինչ պիտի ընէ՝ ազգային կառոյցները կենդանի պահելու, քաղաքական կեանքը ազգային գաղափարներուն համահունչ դարձնելու համար: Հրապուրուեցայ այն գործունեութեամբ, որ կը ծաւալէր Սփիւռքի եւ աշխարհի ամենամեծ բարեգործական կառոյցներէն մէկը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որու Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան ամենագործուն անդամներէն մէկը եղայ: Պետութիւն եւ պետականութիւն ունեցողներու համար դիւրին է շատ հարցերու լուծումներ պահանջել պետութեան կողմէ, մինչդեռ Սփիւռքի համար այս կառոյցները այն հզօր ազգային կռուաններն են, որոնք ոչ միայն հայապահպանութեան խնդիրները լուծողներն են, այլեւ ընկերային, քաղաքական կեանքի ազդակներ կը հանդիսանան: Այս շրջանին հրապուրուեցայ ազատական գաղափարախօսութեամբ՝ օրինակ ունենալով Ռամկավար Ազատական Կուսակցութեան նշանաւոր գործիչները, եւ անդամակցեցայ կուսակցութեան: 1979ին Ֆրանսա մեկնեցայ, ուր փորձեցի նպաստս բերել ինչպէս Հ.Բ.Ը.Մ.-ի, այնպէս ալ Ռ.Ա.Կ.-ի գործունեութեան, ընտրուեցայ Ռ.Ա.Կ. Ֆրանսայի կազմակերպութեան ատենապետ: Ըսել է թէ՝ Ռ.Ա.Կ. Եւրոպայի կառոյցի առաջնորդն էի: 1995 ին եւ 1998ին երկու անգամ ընտրուեցայ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ: Եղած եմ նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի Շրջանակային Յանձնաժողովի ատենադպիր:

- *Գիտեմ, որ յատկապէս այս տարիներուն սերտացան Ձեր կապերը Հայաստանի հետ:*

- Անշուշտ: Հայաստանի խնդիրները, Հայաստանի հետ գործուն ամնչութիւններու ձեւաւորումը շատ կարեւոր էր բոլորիս համար: Աշխատած եմ Հայաստանի բոլոր նախագահներուն հետ եւ բոլորին հետ ալ քննարկած եմ այն առաջնային հարցերը, որոնք անհրաժեշտ են նորանկախ պետութեան, որ ունի հզօր Սփիւռք, ունի Սփիւռքի ներուժ, որ իմ կարծիքով, տակաւին լիարժեքօրէն եւ համակողմանիօրէն չէ ներկայացուած: Իսկ այդ ներուժի շնորհիւ պիտի կարենանք ունենալ հզօր Հայաստան, մանաւանդ որ այստեղ արդէն յառաջընթացի բոլոր նախադրեալները կան, մասնաւորաբար՝

կայացած է ապրանքային համակարգը, ապահովություն կայ: Չանքերու գործադրմամբ կարելի եղավ շարք մը բարեգործական ծրագիրներ գործի կոչել:

- 2000 թուականին Ձեր կենսագրությունը դարձեալ կապուեցաւ Լիբանանին: Դժուար չ'էր հեռանալ Եւրոպայէն եւ դարձեալ վերադառնալ Լիբանան, որ կորսնցուցած էր պատերազմի հետեւանքով իր հզօրութիւնները:

- Արդէն ըսի, որ Սփիւռքի մէջ հայ մարդը որքան գործարար է, իր անձնական գործին նուիրուած, այնուհանդերձ ան պետք է նաեւ հանրային գործիչ ըլլայ, որովհետեւ բոլորիս ջանքերու մէկտեղումով է, որ կը կարողանայ գոյատեւել Սփիւռքը: Գալով Լիբանան՝ նպատակս էր ամէն ինչ ընել, որպէսզի հանրային եւ տնտեսական գործունեութիւնս մէկտեղուէ՝ ի նպաստ մեր համայնքին, որ Սփիւռքի ամենամեծ համայնքն էր, ամենակազմակերպուածը: 2000ին եւ 2005ին ընտրուեցայ պետական երեսփոխան: Նպատակս էր ամրապնդել Հայաստանի եւ Լիբանանի տնտեսական եւ քաղաքական առնչութիւնները: Հանգուցեալ վարչապետ Ռաֆիք Հարիրիի Հայաստան կատարած այցելութեան ժամանակ պատուիրակութեան անդամ էի: Իմ եւ միւս երեսփոխաններու ջանքերով հայ-լիբանանեան յարաբերութիւնները նոր հանգրուանի հասան, իսկ այդ նոր հանգրուանները անհրաժեշտ են, քանզի Հայաստանը երիտասարդ պետութիւն է, անոր անհրաժեշտ են նորաձեւ յարաբերութիւններ, աշխարհաքաղաքական զարգացումներու համաձիրին մէջ՝ նոր գործընկերներ: Լիբանանի պարագային պիտի ըսեմ, որ այստեղ առկայ հայութեան գործօնը արդէն իսկ երաշխաւոր էր այն բանին, որ հնարաւոր պիտի ըլլար երկու երկիրներու, որոնցմէ մէկն ալ ցնցումներ ապրած էր, երկխօսութեան կայացումը:

- Այսօր, ի հարկէ, Լիբանանի հայ համայնքը, որքան ես նկատեցի իմ վերջին այցելութեան ընթացքին, չունի այն ազդեցութիւնները, որոնք գոյութիւն ունէին մինչեւ 1975 թուականը:

- Պատերազմը, որ տեւեց աւելի քան քսան տարի, ճակատագրական եղաւ լիբանանահայութեան համար: 250 հազարանոց համայնքը կազմաքանդման տիտուր նշաններ զգաց, ոմանք հեռացան Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ: Գալիֆորնիոյ հայութեան մէջ զգալի թիւ կը կազմեն լիբանանահայերը: Բարեբախտաբար, Լիբանանի քաղաքական կարգը այնպիսին է, որ ամէն ինչ կը յենի համայնքային կառավարման վրայ, իսկ այս կը նշանակէ, որ, չնայած թուակազմի սակաւութեան, հայութեան ազդեցութիւնը տակաւին կը պահպանուի: Դարձեալ վեց երեսփոխան ունինք, Պուրճ Համուտի քաղա-

քապետը հայ է, սակայն արդեն իսկ ակնյայտ է, որ տկարացած ենք: Հիմնաւոր գործունեութեան կարիքը ունինք կուսակցական եւ քաղաքական, մշակութային ծիրերուն մէջ, գործարարութեան աշխարհին մէջ: Ինչպէս ամէն տեղ, Լիբանանի մէջ եւս գոյութիւն ունի երիտասարդութեան աշխատանքի հարցը: Եթէ Հայաստան շուտ զօրանայ տնտեսապէս, ապա պիտի յուսանք, որ լիբանանահայ երիտասարդութիւնը այստեղ պիտի գայ՝ արդէն Հայաստանի մէջ ծեւաւորելով իր ապագան: Սակայն, անկախ ամէն ինչէ, Լիբանանը դեռ Սփիւռքի սիրտն է, իսկ այդ սիրտը կը բաբախէ:

- Պարոն Գասարճեան, թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել մեր գրոյցին համար եւ մաղթել ամենալաւն ու բարին:

- Շնորհակալութիւն: Պետք է անգամ մը եւս երախտագիտութիւնս յայտնեմ հայրենի իշխանութիւններուն եւ մասնաւորաբար տիկին Հրանոյշ Յակոբեանին, որու գործունեութիւնը ամենայն դրուատանքի արժանի է: Անոր ջանքերը ի խնդիր նախարարութեան կայացման, Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման ասպարեզին մէջ, անուրանալի են: Մասնաւորաբար կ'ուզեմ առանձնացնել այն հանգամանքը, որ տիկին նախարարը ջանքեր կը գործադրէ Արեւմտահայերէնի եւ Արեւելահայերէնի մերձեցումի ասպարեզին մէջ, իսկ լեզուական տարանջատութիւնը կը բերէ նաեւ հայութեան տարբեր հատուածներու զատութիւն: Մենք այլեւս իրարմէ զատուած ապրելու իրաւունք չունինք:

Զրոյցը վարեց ԼԵՒՈՆ ՄՈՒԹԱՖԵԱՆ
«Հայերն Այսօր», Երեւան, Ապրիլ 2012

ՅՕԴՈՒԼԾՆԵՐ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԵՒ ԿԱՆՉԸ

Տարի մըն է որ իր չորս եղանակները իրենց մէջ հաւանաբար կը հաւաքեն շատ մը խաչածեւուած դէպքեր, միտքերուն մէջ կը ձեւաւորեն մահուան տրամաբանութիւններ, որոնք կոչուած են գլխաւորաբար բռնաբարելու ապրելու մարդկային փափաքները, այնպէս ինչպէս պատահեցաւ Նահատակ Ռաֆիք Զարիրիի պարագային, Նաեւ Ս. Քահանայապետին վախճանումով...: Սակայն կեանքի ոգին մնաց կայուն, անխախտ, շնորհիւ յանուն ազգային միասնականութեան վերածնած ըմբոստացումին, որուն այնքան փարած էր Նահատակը: Բարեբախտաբար լիբանանցի ժողովուրդը հանդիսացաւ թարգմանը ազգային արտայայտութիւններուն, երկխօսութիւններուն, խաղաղութեան կոչերուն եւ այն մեծ սիրոյն, զորս Պապը ժառանգ ձգեց բոլոր հաւատացեալ ժողովուրդներուն:

Կեանքը չի վերջանար մահով, այլ կ'ապրի անորմով, ինչպէս էր հայու պարագային, որ մնաց ու կը մնայ յաւերժ ինչպէս Արարատը: Ահաւասիկ այսօր, 90 տարիներ ետք այդ մարդկային ցեղասպանութենէն, կը մնանք հաւատարիմ մեր Նահատակներուն յիշատակին, որովհետեւ անոնց արիւնը հասարակ արիւն չէր, այլ նման էր գարնանային անձրեւին, որ կը թրջէր հողը, որպէսզի կեանքին նոր ծնունդ տայ:

Անգամ մը եւս Ապրիլ 24...90 տարի եւ՝ 90 Ապրիլ 24:

24 Ապրիլ 1915ին, սուրբ անցաւ հայ ընտրանին եւ ատիկա արիւնահեղութեան առաջին հանգրուանն էր մեր հերոսական պատմութեան: Պատմութիւնը ժողովուրդի մը, որ Նահատակութիւնը ընդունեց՝ բայց չուզեց յանձնուիլ: Անոնք եղան իսկական Նահատակները իրաւունքի եւ արդարութեան, Նահատակները ազատութեան եւ վեհութեան:

1895էն 1922, հայ ժողովուրդը կրեց մահուան, բռնաբարութեան, աքսորի, տաժանակիր կեանքի բեռը: Զամայնքային բախում չէր եղածը, ոչ ալ յարանուանական, ոչ իսկ քաղաքացիական պատերազմ: Եղածը ցեղասպանութիւն էր, կատարուած ամենայն վայրագութեամբ, ընդդէմ խաղաղասէր ժողովուրդի: Այդ ցեղասպանութիւնը դրոշմեց իր սեւ հետքերը անցեալ դարու սկիզբը... իսկ 1.5 միլիոն հայ զոհ, ի տես աշխարհի լռութեան, որ եկաւ քաջալերել թուրքը իր սանձարձակութիւններուն մէջ:

Արդեօ՞ք հայ ժողովուրդը պիտի ունենար այլ կեանքի ուղի մը եթէ երոպական մեծ տերութիւններ ամեն ժամանակ յայտնէին իրենց դժգոհու-

թիւնն ու ընդվզումը հայ ժողովուրդին դեմ եղած ոճիրին առնչութեամբ:

Արդեօ՞ք մնայուն խաղաղութեան ըմբռնողութիւնը, ժողովուրդներու միջեւ, չունի բաւարար կայուն արմատներ, որոնք կրնան խաղաղութիւն հաստատել առանց բռնութեան եւ անիրաւութեանց պատճառաբանութիւններուն:

Այս անբնական ոճիրին պատասխանատուները մնացին անպատիժ: Այդ ոճիրը ճամբայ հարթեց աւելի վայրագութեանց ու բարբարոսութեանց, Զամպուտիայի, Ռուանտայի, Պոսնիայի թէ Չեչնիայի մէջ, հասնելով մինչեւ Պաղեստին, ուր իսրայելեան անիրաւութիւնները ընդդէմ պաղեստինցի ժողովուրդին ակնյայտ են: Պատերազմը իր զանազան երեսներով, տարբեր մակարդակներով եւ կործանումի գունաւոր տարբերակներով կը փճացներ ամէն ինչ որ կապուած է խաղաղութեան եւ Պաղեստինի վերականգնումին, առաւել կործանելով մարդկային, տնտեսական, քաղաքակրթական եւ մշակութային բոլոր յառաջադիմութիւններն ու երագները...

Այդ ցեղասպանութիւնը մնաց անտեսուած մինչեւ 1948, երբ Մ.Ա.Կ.-ի որոշումով վաւերացուեցաւ Օսմանեան թուրքերու կողմէ ձեռնարկուած լիակատար ցեղասպանութիւնը, ընդդէմ հայ ժողովուրդին: Ասիկա ինքնին հաստատումն էր Մ.Ա.Կ.-ի մաս կազմող շատ մը երկիրներու կամքին՝ ճանչնալու 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

24 Ապրիլ 2005ին ... 90 ամեակ Ցեղասպանութեան: Ի՞նչ կրնան ըլլալ նպատակները այս թուականին:

Ընդվզո՞ւմ, վրէժխնդրութի՞ւն, լա՞ց նահատակներու վրայ, կամ ի՞նչ արտայայտութիւն:

Հայկական հարցը ակադեմական նիւթ չէ որ սերտուի պատմութեան ֆաթիլներէն: Բոլորս ինքե՞նք մէջ: Ասիկա մարդկային իրաւանց, ժողովրդային արդարութեանց եւ ժողովուրդներու սերտ յարաբերութեանց հաստատումի հարցն է:

Հայկական հարցը պատմութեան գիրքերուն մէջ գրանցուած յիշատակի օր չէ միայն, այլ՝ հարց մը, որ արմատացած է հայ ժողովուրդի յիշողութեան մէջ որպէս ողջ եւ յաւիտենական իրականութիւն, որ չ'անհետանար ժամանակի ընթացքին:

Կրնայ հայ ժողովուրդը այդ դժբախտութիւնը վերածել դիմադրականութեան, որպէս ապրելու միջոց եւ յաջորդող սերունդներու մնայուն ժառանգ: Հայը գտաւ միջոցները տարածելու իր պահանջներու ծիրը եւ օգտագործելու իր կապերը միջազգային մակարդակներով, առանց ընկճումի՝ աշխարհի շատ մը արհամարհական եւ կամ անկենդան կեցուածքներուն դիմաց: Ժողովուրդը իր յիշեցումները անդադար դրած է մարդկութեան

տրամադրության տակ, ըսելով թե այդ ոճիրը վեճի հարց չի կրնար դառնալ, Նոյնիսկ ինքը՝ Թուրքիան, եթե անտեսե գայն եւ կամ համարե «Կարծեցեալ Ոճիր»:

Ներկայ թուրք ղեկավարության լիւ մերժումն ու հերքումը հայոց դեմ եղած ցեղասպանական ոճիրին հաւանաբար Նկատուի ճանաչման ժամանակաւոր յետաձգում, բայց, բայց այդ իրավիճակը չի կրնար պատմութեան իրականութիւնները անտեսել, որովհետեւ չի կրնար ջնջել պատմութեան իրաւունքները: Ժողովուրդներու եւ երկիրներու միջեւ խաղաղութեան մնայուն կապերը չեն կրնար հիմնուիլ անիրաւութեան գետնի վրայ:

Հայկական իրաւունքներ կան, Թուրքիա ուզէ զանոնք կամ ո՛չ: Որքան ալ ան փորձէ խանգարել կամ կեղծել պատմական իրականութիւնները որպէս իր անպարտելիութիւնը, կայ ամէն մէկ անձի իրաւասութիւնը, կայ ամէն մէկ ժողովուրդի իրաւասութիւնը եւ այսօր կայ մարդկային իրաւունքներու հովանին, իրականութեան ամենէն մեծ ուղին:

Առանց իյնալու կողմնակալութեանց եւ թակարդներու մէջ, առանց մտնելու մեկուսացումի շրջագիծին մէջ, կրնամ ըսել թե հայ ժողովուրդը շարժումի մէջ դրաւ միջազգային շրջանակները այն յոյսով որ կու գայ օրը երբ կարելոր անհրաժեշտութիւն կը Նկատուի ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը ներկայ թրքական պետութեան կողմէ:

Գիտենք թե Թուրքիա այսօր 1999 թուականէն սկսեալ թեկնածու է Եւրոմիութեան անդամակցութեան: Յստակ եւ վստահելի կարելիութիւնները տակաւին սերտումի տակ են եւ կան որոշ տրամաբանական ձգձգումներ, գլխաւորաբար իր այն բացասական կեցուածքներուն համար զորս Թուրքիա կը հայցէ միջազգային պատմական իրողութիւններու դիմաց, որոնցմէ, անկասկած, կարելորագոյնը Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն է, որ ինքնին մարդկային իրաւանց հարց է, եւ այդ կեցուածքով Եւրոպա կը տեսնէ ժողովրդավարութեան բացակայութիւնը, մինչ Թուրքիա կը կարծէ թե զրպարտութիւն է այդ իր դեմ...

Հայկական Ցեղասպանութեան հարցը եւ Թուրքիոյ ճանաչումը երկու ծայրայեղ զգայուն Նիւթեր են, որոնք կը պահանջեն մեծ ճիգ, Եւրոպական պետութեանց կողմէ, որպէսզի վերցուի «լռութեան դաւադրութիւն»ը, որ կը պատէ այդ պետութիւնները, եւ վերականգնին փոքրամասնութեանց մարդկային իրաւունքները, ինչպէս Կիպրոսի վերամիացումը եւ Հայաստանի շրջափակման վերացումը:

Հայկական պահանջատիրութիւնը կ'ըսէ Եւրոպայի ղեկավարութեանց, թե չվարանին պահպանելու իրենց քաղաքական արժեքները եւ, ըստ այդմ, չարտօնեն թրքական պետութեան Եւրոմիութեան անդամակցութիւնը,

մինչեւ որ ճանշնայ եւ որդեգրէ եւրոպական հիմնական պայմանները:

Մենք եւս կը հրաւիրենք սփիւռքացած հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը, որպէսզի իրենց ճիգերը չխնայեն հասնելու բաղձալի արդիւնքին:

Այս տարուան յիշատակութեան հանդիսութիւնները աշխարհով մէկ շատ են, ըլլան անոնք դասախօսութիւններ, ոգեկոչումներ եւ այլ շարժումներ, գլխաւորաբար ի նպաստ ժողովուրդներու անմոռացութեան եւ բարի կամեցողութեան, որպէսզի անմար մնայ յարգանքի քահը ո՛չ միայն նահատակներուն ի յիշատակ, այլեւ ցեղասպանութեան գործօնը չմոռցուի աշխարհի մարդկութեան խիղճերուն մէջ:

Ինչպէս աշխարհի, այնպէս ալ Լիբանանի մէջ յիշատակութեան առիթները ի գործ դրուած են, բայց հաւանաբար աւելի նուազ հանգամանքով, գլխաւորաբար այն պատճառով որ Լիբանանի ժողովուրդը արդէն իր նահատակ Ռաֆիք Հարիրիի կսկիծով ինքզինք չէ վերագտած եւ մենք հայերս, որպէս լիբանանցիներ, պարտաւորութիւնը ունինք կիսելու այդ ազգային կորուստը, որ պատահեցաւ անցեալ Փետրուարի չարայուշ 14ին...

24 Ապրիլը յիշատակն է հայ նահատակներուն:

Յիշատակն է բոլոր հալածուած ժողովուրդներուն:

Յիշատակն է անցեալի եւ այսօրուան նահատակներուն:

Յարգանք բոլոր նահատակներուն:

Յարգանք նահատակութեան որ կը բուրէ կեանք:

(«ԶԱՐԹՕՆՔ» ԲԱՑԱՌԻԿ- 2005, ՄԵՃ Եղեռնի 90 ամեակի առթիւ)

* * *

Հայոց ցեղասպանության 100 ամեակի սեմին, պատահական չէր Վատիկանեն լսել հայոց ի նպաստ մեծ յայտարարությունը՝ 20րդ դարասկիզբին թուրք պետության Հայոց դեմ գործադրած ոճիրին արդարացի սահմանումը որպես Ցեղասպանություն: Պատահական անձ մը չէր զայն սահմանողը: Ան Ֆրանչիսկոս մեծ մարդասեր Պապն էր՝ Աստուծոյ մարդը, որ իր խիղճին, Աստուծոյ եւ պատմության առաջ կատարեց իր աստուածահաճոյ պարտքը՝ հայ ժողովուրդին եւ համայն մարդկության հանդէպ ըլլալով արդար եւ անաչառ, հեռո՛ւ քաղաքական նեղմիտ հաշիւներէ եւ նկատառումներէ:

20րդ դարը, որ պատմական փաստը կը հաստատէ, թէ դարն էր գիտական եւ մշակութային իրագործումներու վերելքի, դժբախտաբար նաեւ դարը հանդիսացաւ փաստելու մարդուն վայրագությունը, որ լաւագոյնս արտացոլաց երկու աշխարհամարտերով, ցեղասպանություններով եւ մարդկության դեմ գործուած ոճիրներով:

Հայոց ցեղասպանությունը առաջինն էր այս բոլորին, զոր թուրք պետությունը գործադրեց ջարդելով իր իսկ հոգատարության տակ գտնուող քաղաքացիները՝ իր պատմական հողին վրայէն բնաջնջել փորձելով ամբողջ ժողովուրդ մը: Միջազգային ընտանիքին կողմէ օրին չառնուած քայլերը՝ պատժելու ոճրագործը, ճամբան հարթեցին ֆաշական եւ նացիական գաղափարախօսություններու, արիւնարբու բռնատիրություններու եւ ցեղասպանություններու, Հրեական ողջակիզումէն մինչեւ՝ Զամպոտիա, Ռուանտայէն մինչեւ Տարֆուր...Տահէշ եւ Նուսրա:

Մարդկային իրաւունքներու հասկացողությունը գոյություն ունէր մարդկային խոցող այս բոլոր բարբարոսություններէն ալ առաջ: 14րդ եւ 15րդ դարերուն եւրոպական աւատապետությունը տեղի տուաւ ժողովրդավարական եւ ազատական սկզբունքներու դիմաց ու աստիճանաբար չքացաւ: 1789ին Ֆրանսական յեղափոխության նախաշեմին ֆրանսացի մարքիզ Լա Ֆայէթ սահմանադրություն ղնելու առաջարկ բերաւ՝ թագաւորներու անսահման եւ անհաշուենկատ իշխանությունը զսպելու համար: Դժբախտաբար վերոյիշեալները չկրցան կանխարգիլել իշխանություններու կողմէ հետագային գործադրուած ոճիրները, որոնցմէ մեծագոյններէն էր Հայոց ցեղասպանությունը:

Ի տես նման բարբարոսություններու եւ զանոնք կանխելու նոր փորձ մը

ընելով, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Ժողովը 10 Դեկտեմբեր 1948ին որդեգրեց Մարդկային Իրաւունքներու Համաշխարհային Հռչակագիրը, որուն պատրաստութեան մէջ մեծ դեր ունեցաւ լիբանանցի տեսաբան մեծանուն Շարլ Մալէքը: Այդ թուականէն օր մը առաջ Մ.Ա.Կ.-ի Ընդհանուր Ժողովը որդեգրած էր Ցեղասպանութիւնը կանխարգիլելու եւ պատժելու համաձայնագիր որոշումը ու սահմանած՝ Մարդկութեան դէմ ոճիրի եւ ցեղասպանութեան միջազգային օրէնքի հասկացողութիւնը:

Հակառակ այն փաստին, որ 146 երկիրներ մինչեւ օրս վաւերացուցած եւ համաձայն գտնուած են վերոյիշեալ որոշումին, Հայոց ցեղասպանութիւնը, որ ամէն չափանիշերով կը համապատասխանէ նման ոճիրի սահմանումին, ճանչցուած չէ բոլոր պետութիւններէն, նաեւ՝ Մ.Ա.Կ.-էն, որուն Ընդհանուր Զարտուղարը թուականէս երկու շաբաթ առաջ խուսափեցաւ Ցեղասպանութիւն բառը գործածելէ՝ Օսմանեան Կայսրութեան մէջ հայոց հանդէպ գործադրած հրեշային արարքը կոչելով «վայրագութիւն», փոխան «Ցեղասպանութեան»: Տեղին է հոս սակայն նշել եւ շնորհակալութիւն յայտնել այն բոլոր պետութիւններուն, որոնց շարքին՝ նաեւ մեր սիրելի Լիբանանի պետութեան, որոնք խիզախաբար եւ վեհօրէն ընդունած են Հայոց ցեղասպանութիւնը՝ թրքական պետութենէն պահանջելով ճանաչում եւ հատուցում ի նպաստ հայ ժողովուրդին արդար իրաւունքներուն:

Հայոց ցեղասպանութեան 100 ամեակին առիթով այժմ սակայն կ'արժէ ինքնաքննադատութեան եւ վերարժեւորումի առողջ ճամբով վերլուծել, թէ ո՞ր յաջողեցանք եւ ո՞ր բացթողումներ արձանագրեցինք՝ Հայ Դատին հետապնդման մեր 100 ամեայ աշխատանքներուն մէջ:

Անհերքելի փաստ է այսօր, որ վերջին տաս տարիներուն, բաղդատած անոնց նախորդած տասնամեակներուն, Հայոց ցեղասպանութեան ճանաչում ապահովելու եւ զայն միջազգային ամբիոն բարձրացնելու մեր յաջողութիւններու չափանիշը անգուգական վերելք մը արձանագրեց: 12 Ապրիլ 2015ին Ֆրանչիսկոս Պապին՝ քրիստոնեայ եկեղեցւոյ անկեղծութեան ուղիին հաւատարիմ վերջին յայտարարութիւնը գազաթնակետը հանդիսացաւ արդարութեան ճամբուն վրայ մեր մինչեւ օրս արձանագրած յաղթանակներուն:

Չանագան տուեալներ նպաստեցին մեր յաջողութիւններուն: Նորահաս սերունդը, որուն հանդէպ ունինք մեծ յարգանք եւ համարում, իր գիտակցութեամբ եւ գիտական մօտեցումով լաւագոյն տուեալներէն մէկն էր անշուշտ: Ելեկտրոնային արհեստագիտութիւնն ու *մետիան* ունեցան իրենց հոյակապ դերը *լոպպիինկ*-ի, հանրային կարծիքի վրայ ազդեցութեան եւ տեղեկութիւն ու տեղեկատուութիւն տարածելու աշխատանքներու ծիրէն ներս: Այս բոլորը,

սակայն, ըստ մեզի, երաշխաւորուեցան միասնական աշխատանքի հոյակապ փորձով: Սփիւռքի մէջ հայ քաղաքական կուսակցութիւններու՝ անցեալի հետ բաղդատած՝ անհամեմատ գործակցութիւնն ու համերաշխութեան ոգին աւելի եւս խրախուսեցին եւ ճիշդ հունին մէջ դրին տարուող աշխատանքը: Միասնական եւ համերաշխ աշխատանքի ոգին, որ անմիջապէս եւ կարճ ժամանակի մէջ տուաւ իր պտուղները, եկաւ փաստելու, թէ անցեալին շատ ժամանակ, մարդուժ եւ գրիչ վատնած ենք իրարու հետ անտեղի մրցակցութեան ճամբուն վրայ: Պաղ պատերազմը, եկեղեցական արհեստական տագնապը եւ պառակտումն ու երկուութիւնը արգելակած են մեր գերլարումը՝ յանուն աւելի մեծ եւ համահայկական նպատակին, որուն իրագործումին նուիրուած են սփիւռքեան մեր բոլոր կազմակերպութիւններուն հիմնական նպատակներն ու ծրագրերը, որոնք ահագին հասարակ յայտարարներ ունի բոլորիս մօտ:

Մեր քաղաքական ու գաղափարախօսական տարբերութիւնները մեր հարստութիւնն են, իսկ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մէկ է մեզի համար, հայ ժողովուրդին պատմութիւնը լուսաւորող իր Նուիրապետական Աթոռներով, որոնք մեր հոգեւոր ու մշակութային արժէքներն են, իսկ անոնց գահակալները մեր ազգին հեղինակութիւնները: Վերոյիշեալներուն շուրջ մեր երբեմնի հակամարտութիւնը եւ անտեղի մրցակցութիւնը ջլատած են մեր ուժերը:

Հայոց ցեղասպանութեան 100 ամեակը հանգրուան մըն է՝ անցեալը վերլուծելով ապագան ծրագրելու: Հարիւրամեակը կ'ենթադրէ նոր, վերանայուած եւ առողջ ռազմավարութիւն, որուն վերնագիրը պէտք է ըլլայ միասնականութիւնը: Վկայ՝ մեր նորօրեայ յաղթանակները: Վկայ՝ «Ազդակ-Չարթօնք-Արարատ» միացեալ թիւը:

Միակամ քալենք դէպի նորանոր իրագործումներ: Դէպի աւելի եւս ճանաչումը մեր արդար Դատին ու Հայոց ցեղասպանութեան՝ այս մարդկային իրաւունքներու դէմ գործուած բռնաբարումին ու մարդկութեան դէմ գործուած ոճիրին: Միակամ քալենք դէպի պահանջատիրութիւն եւ մեր միացեալ իրաւունքներուն վերատիրացում:

ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐԵԱՆ
(«Չարթօնք»-«Ազդակ»-«Արարատ» միացեալ թիւ), Ապրիլ 2015

Սահմանադրական Փոփոխություններ, ՀանրաքուէԵւ Ազատական Ռամկավարություն

Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեան ստորագրած է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէն կայացնելու մասին հրամանագիր մը: Հրամանագիրին մէջ նշուած է.

«Ղեկավարուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 111րդ յօդուածի 2րդ եւ 5րդ մասերով, հիմք ընդունելով «Հանրաքուէի մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 7րդ յօդուածի 6րդ մասը եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու Նախագիծը հանրաքուէի դնելու վերաբերեալ՝ Հայաստանի Հանրապետութեան Նախագահի Նախաձեռնութեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի կողմէ տրուած համաձայնութիւնը՝ կ'որոշէ.

Ա. Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէն նշանակել 2015 թուականի Դեկտեմբեր 6ին:

Բ. Սոյն հրամանագիրը ուժի մէջ կը մտնէ պաշտօնական հրապարակման յաջորդ օրուընէ»:

Ռամկավարական վարչակարգի կարեւորագոյն միջոցառումներէն է հանրաքուէ կազմակերպել համաժողովրդային մակարդակով, որոշում առնելու տուեալ երկրի մը համայն ժողովուրդին վերաբերող հարցերու նկատմամբ, իսկ այս ուղղութեամբ Նման հանրաքուէի մը կազմակերպումը առաջինը չէ, իր անկախութեան առաջին իսկ օրէն, ի պատիւ իր պետականութեան՝ ռամկավար վարչակարգ որդեգրած Հայաստանի Հանրապետութեան համար:

Նման հանրաքուէի մը համար անշուշտ կենսական է դարձեալ ռամկավարական սկզբունքներու վրայ հիմնուած այն օրէնքը, որ անոր հետ կապուած ամէն քարոզարշաւ «այո»ի եւ «ոչ»ի ճակատներուն համար ըլլայ հաւասար: Որպէս ռամկավար ազատականներ, անկախաբար մեր անձնական թեր կամ դեմ դիրքորոշումէն տուեալ սահմանադրական փոփոխութիւններուն, մենք կը հաւատանք, որ տեղին ու ժամանակին սահմանադրական փոփոխութիւններ կատարելը *տիկնամիք* եւ ժամանակակից տուեալ է

պետության մը համար եւ երկիրը առաւել զարգացման կը մղէ՝ եթէ անշուշտ անոր վերաբերող հանրաքուէն անցնի բացարձակապէս ազատ, արդար, թափանցիկ եւ վստահութեան մթնոլորտի մը մէջ ու մեզի համար հպարտութիւն պիտի ըլլայ այս մէկը վկայել յառաջիկայ Դեկտեմբեր 6ին:

Վերոյիշեալը լաւագոյնս կազմակերպելու համար կենսական է Զայաստանի մէջ գործող կուսակցութիւններու դերը, որոնք կոչուած են ձեւաւորելու հայրենի ժողովուրդին քաղաքական միտքը, մինչ անոնց քանակն ու գունաւորումները չափանիշն են մեր Զայրենիքի մէջ ազատականութեան գաղափարախօսութեան տարածումին: Ազատական ռամկավարութիւնը ազգային մեր համակերպութեան երաշխիքն է եւ լաւագոյն կամուրջը՝ խաղաղութեան ու ազգապահպանման:

Ի զուր չէ, որ մեր տարիներու անձնական աշխատանքով ու առաջարկով, վերջապէս Ռ.Ա.Կ.-ի Գերագոյն Օրէնսդիր Ժողովը, մօտիկ անցեալին որոշ բարեփոխումներ մտցնելով մեր կուսակցութեան Դաւանանքին եւ Ընդհանուր Ուղեգիծին վերաբերող կուսակցութեանս նպատակին մէջ, աւելցուց հետեւեալ 5րդ յօդուածը. «Սատարել Զայաստանի Զանրապետութեան սահմաններուն մէջ ժողովրդային կամքի գերիշխանութեան կիրարկումին եւ ռամկավարական (ժողովրդավարական) ու ազատական սկզբունքներու ամրապնդումին, յարգելով մարդկային հիմնական իրաւունքները, մասնաւոր սեփականութեան իրաւունքը ներառեալ, եւ զարկ տալով ազատ տնտեսութեան»:

Զետեւաբար, այսօր Զայրենիքի մէջ գործող իւրաքանչիւր ռամկավար եւ ազատական դաւանանք որդեգրած կուսակցութիւն, ըլլայ ան օրուայ իշխող Զանրապետական կուսակցութիւնը, թէ Ռ.Ա.Կ. անուան տակ գործող Զանրապետական Վարչութիւնն ու այլ գաղափարական դաւանակից կուսակցութիւններ՝ մենք կը համարենք քոյր կազմակերպութիւններ, որոնց կոչ կ'ուղղենք ամենայն բժախնդրութեամբ սատար հանդիսանալու մօտակայ հանրաքուէին լաւագոյն կազմակերպման ու ընթացքին:

Ի միջի այլոց եւ այս առիթով կոչ կ'ուղղենք հայրենի պետականութեան՝ հաւատարիմ մնալ Ազատականութեան գաղափարախօսութեան, որ քաղաքական աշխարհահայեացք մըն է հիմնուած ազատութեան ու հաւասարութեան վրայ: Առաջին սկզբունքը շեշտուած դասական ազատականութեան մէջ, իսկ վերջինը աւելի ակնառու նորօրեայ կամ (ընկերային-սոցիալ) ազատականութեան մէջ:

Մենք լիայոյս ենք, որ շուտով քառորդ դար մը բոլորող մեր երիտասարդ անկախ Զայրենիքը իր աշխարհատարածքին մէջ լաւագոյն օրինակը կը հանդիսանայ ռամկավարութեան, ուր աւելի եւս կը զարգանան, կ'իմաս-

ՆՈՒՐՈՒՄ Ռ.Ա.Կ.-Ի ՃԱՄՔՈՎ

տաւորուին ու կը շեշտաւորուին ազատականութեան հիմքերը հանդիսացող ժողովրդավարական ընտրութիւնները, քաղաքացիական ընկերային իրաւունքներու ապահովումն ու մամուլի, կրօնի, առեւտուրի եւ մասնաւոր սեփականութեան ազատութիւնները: Սկզբունքներ, որոնք կ'երաշխաւորեն մեր ասպնջական ժողովուրդին աւելի ապահով եւ արագ սլացքով երթը դէպի լուսաւոր ապագայ:

ՅԱԿՈԲ ԳԱՍԱՐՃԵԱՆ
«Չարթունք», 13 Դոկտեմբեր 2015

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Ծնած է 12 Հոկտեմբեր 1946ին: Որդին է **Սեդրակ եւ Վալենթին Գասարճեաններու**: **Սեդրակ Գասարճեան** եղած է լիբանանահայ յայտնի արդիւնաբերող եւ ազգային-միութենական դեմքերէն: Ան տակաւին 4 տարեկան, 1925ին ծնողքին հետ ծննդավայր Քիլիսը հարկադրուած լքելով ապաստանած է Զալէպ, ուրկէ աւելի ուշ անցած է Պէյրութ, բնակութիւն հաստատելով Չուքաթ Էլ-Պլաթ թաղամասին մէջ: **Սեդրակ Գասարճեան** գործուն անդամ եղած է Զ.Բ.Ը. Միութեան, Զալէպի թէ Պէյրութի մէջ: Ան տարիներ շարունակ վարած է Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի փոխ-ատենապետի պաշտօնը: Իր եղբայրներուն՝ **Հայկազուն եւ Միսաք Գասարճեաններու** հետ հիմնած է «Գասարճեան Եղբայրներ» երկաթի եւ պողպատի ներածումի ընկերութիւնը:

Յակոբ Գասարճեան նախակրթութիւնը ստացած է Պէյրութի Զայ Աւետարանական Գոլճի, իսկ երկրորդականը՝ Պէյրութի **British School**-ի մէջ: 1971ին վկայուած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, մասնագիտանալով քաղաքային ճարտարապետութեան ճիւղին մէջ: Ամուսնացած է **Անի Ահարոնեանի** հետ, որ թոռնուհին է Հայկական Լեզոնի մարտիկներէն, Արարայի ճակատամարտի մասնակից եւ Ռ.Ա.Կ.-ի, Թ.Մ.Մ.-ի եւ Զ.Բ.Ը.Մ.-ի գործուն անդամներէն **Գասպար Մենակի**: Բախտաւորուած են երեք դուստրերով՝ **Վալերի, Զարոյի եւ Թամար**:

Շարունակելով իր հօր ասպարէզը, Յակոբ Գասարճեան 1989էն ի վեր ղեկավարած է «Սեդրակ Գասարճեան եւ Որդիք» ընկերութիւնը: 1977էն 1979 գործուն մասնակցութիւն ունեցած է Զ.Բ.Ը. Միութեան եւ Զ.Ե.Ը.-ի Լիբանանի կառոյցներուն մէջ: Անդամ եղած է Զ.Ե.Ը.ի Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան, որուն ատենապետութիւնը վարած է 1970-1971 շրջանին, ինչպէս նաեւ անդամակցած է Զ.Բ.Ը. Միութեան Պէյրութի մասնաճիւղի վարչութեան: Իբրեւ պասքէթպոլիստ, մասնակցած է Զ.Ե.Ը.-ի մարզական շարժումներուն եւ 1966ին պասքէթպոլի խումբին հետ այցելած է Հայաստան: Ատենապետած է նաեւ Զ.Ե.Ը.-ի Տնօրէն Գործադիր Մարմին: Անդամակցած է Զ.Ե.Ը.-ի Ասպետներու Համախմբումին: 1977ին անդամագրուած է Ռ.Ա.Կ.-ին:

1979ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն, ընտանեօք բնակութիւն հաստատած է Փարիզ, ուր լծուած է ազգային-

կուսակցական աշխոյժ գործունեության: 1983-1995 Վարած է Հ.Բ.Ը. Միության Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի ատենադպիրի պաշտոնը: Եղած է Հ.Բ.Ը. Միության Եւրոպայի Երիտասարդական Յանձնախումբի եւ Ռ.Ա.Կ.-ի Ֆրանսայի եւ ապա Եւրոպայի Շրջանային Վարչութեանց ատենապետը: Ի գնահատութիւն իր վեհանձն նուիրաբերումին, Հ.Բ.Ը.Մ.-ի Ցկեանս Պատուոյ Նախագահ Ալեք Մանուկեանի կողմէ արժանացած է Հ.Բ.Ը.Մ.-ի Բարերար Անդամի վկայականին, 1986ին: 1992-1996 տարիներուն մաս կազմած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Փարիզի Թեմի Վարչական Խորհուրդին: Կոստանեաններու եւ Խաչիկ Տարագճեանի հետ Փարիզի մէջ հիմնած է GKD հաստատութիւնը: 1995ին վերադարձած է Լիբանան:

1988ին ընտրուած է Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ: 1988-1995 տարիներուն Վարած է Ռ.Ա.Կ Եւրոպայի Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտոնը: 1991ին Մոնթրէալի մէջ գումարուած Ռ.Ա.Կ. ԺԸ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին վերընտրուած է Կեդրոնական Վարչութեան անդամ, ստանձնելով նաեւ Ռ.Ա.Կ.-ի Միջին Արեւելքի եւ Եւրոպայի Շրջանակներու պատասխանատուի պաշտոնը: 1995ին Կիպրոսի մէջ գումարուած Ռ.Ա.Կ. ԺԹ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին ընտրուած է Կեդրոնական Վարչութեան ատենապետ: 1998ին գումարուած ԻԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին վերընտրուած է այդ պաշտոնին, զոր Վարած է մինչեւ 2003: 1995ին ծայր առած կուսակցական ներքին պայքարներուն եւ պառակտումներուն վերջ տալու նպատակով 2000ին մասնակցած է Փարիզի մէջ գումարուած հաշտութեան ժողովին: 2003ին ընտրուած է Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ:

Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինն անդամակցած է 1992ին, իսկ 2011ին ստանձնած է անոր ատենապետութիւնը: Իր ջանքերով 2004ին Ռ.Ա. Կուսակցութիւնը պետականօրէն արձանագրուած է Լիբանանի մէջ: Առաւելաբար իր ջանքերով Ռ.Ա.Կ.-ի պաշտօնաթերթ «Զարթօնք» Մարտ 2004-էն Հոկտեմբեր 2006 հրատարակած է «Մուկիաք Զարթօնք -ալ նաշրա ալ տաուրիեա լի հըզալ ալ ռամղավար» արաբերէն յաւելումը:

Իբրեւ Ռ.Ա.Կ.-ի ատենապետ, շրջած է տարբեր երկիրներ՝ Ֆրանսա, Չուիցերիա, Գանատա, Միացեալ Նահանգներ, Արժանթին, Ուրուկուայ, Պրագի, Սուրիա, Յորդանան, Եգիպտոս, Կիպրոս, Անգլիա եւ Յունաստան: Պաշտօնական, կուսակցական թէ այլ առաքելութիւններով բազմիցս այցելած է Հայաստան: Քաղաքական հանդիպումներ ունեցած է բարձրաստիճան պատասխանատուներու հետ: Եղած է անդամ Լիբանանի ճարտարարուեստ-

ներու Շնկերակցութեան եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդին:

Յակոբ Գասարճեան Լիբանանի խորհրդարանի անդամ ընտրուած է երկու անգամ՝ 2000ին եւ 2005ին: Ռ.Ա.Կ.-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը իր թեկնածութիւնը յառաջադրած է Պէյրութի Գ. Ընտրաշրջանի Հայ Առաքելական աթոռին համար: Ան 2000ի ընտրութիւններուն մաս կազմած է Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած «Պէյրութի Որոշում» խորհրդարանական համախմբումին, իսկ 2005ի ընտրութիւններուն՝ Սաատ Հարիրիի գլխաւորած «Նահատակ Ռաֆիք Հարիրիի Ցանկ»ին եւ «Մուսթաֆայա» համախմբումին:

Ան անդամ եղած է Լիբանան-Իտալիա, Լիբանան-Պուլկարիա, Լիբանան-Աւստրիա, Լիբանան-Գերմանիա, Լիբանան-Եւրոպական Խորհրդարան բարեկամութեան խորհրդարանական խումբերուն, ինչպէս նաեւ Նախագահած է Լիբանան-Հայաստան բարեկամութեան խումբը: Գլխաւորած է Լիբանանի խորհրդարանի գաղթականներու հարցերու մնայուն յանձնախումբը: Մաս կազմած է խորհրդարանի տնտեսական եւ երիտասարդութեան ու մարմնամարզութեան յանձնախումբերուն: Մասնակցած է Լիբանանի խորհրդարանի մէջ կազմակերպուած Ազգային երկխօսութեան, 2006ին, ինչպէս նաեւ լիբանանեան 18 ամսեայ քաղաքական տաճնապին վերջ տուող 2008ի Տոհայի համաձայնագրի բանակցութիւններուն: Արժանացած է Իտալիոյ Հանրապետութեան Նախագահ Ժորժիո Նափոլիթանոյի շնորհած Սպայից աստիճանի Արժանեաց Շքանշանին, 2009ին: 2012ին արժանացած է Հայաստանի Հանրապետութեան Նախագահի «Մխիթար Գօշ» մետալին:

Հիմնադիրներէն է Հայաստանի «Անելիք» դրամատան, որուն Տնօրէններու Խորհուրդի Նախագահն է:

Յակոբ Ս. Գասարճեան
ՆՈՒԻՐՈՒՄ Ա.Ա.Կ.Ի ՃԱՄԲՈՎ

Հեղինակի հասցեն՝
HAGOP S. KASSARDJIAN
Dekwaneh, Parallel Tower Bld.
Block B, 4th Floor
BEIRUT - LEBANON

Տպագրութիւնը՝ օֆսէթ
Չափը՝ 17x21 սմ.
Թուղթը՝ կաւճապատ
Ծաւալը՝ 20.75 տպագրական մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ
Տպագրութիւնը՝ Տիգրան Մեծ Հրատարակչութեան տպարան
Արշակունեաց 2, Երեւան, Հայաստան

Ուրբի՛ ել հայ երիտասարդութիւն: Դո՛ւն ես ազգին յոյսն
ու ապագան: Ամէն տեղ երիտասարդութիւնն է պայքարի
առաջին գիծերուն վրայ: Դո՛ւն ալ, հա՛յ երիտասարդ,
գիտակցե՛ ոյժիդ ու գործածե՛ զայն յօգուտ հայրենիքիդ,
պաշտպանութեան ու վերականգնումին:

Հայրենիքի անկախութիւնն ու պատմական
սահմաններու վերականգնումը դարաւոր երազ մըն էին,
որ այսօր մասնակիօրէն իրականացած կը գտնենք
Հայաստանի Հանրապետութեան անկախացումով:
Քաղաքական եւ հողային այսպիսի միաւոր մը պիտի
հանդիսանայ կռուանը՝ իրականացնելու ամբողջական
Հայաստանի մեր ազգային երազը: Սակայն պէտք է
համախմբուինք եւ զօրացնենք այդ կռուանը, որպէսզի
մեր ազգային նպատակները դառնան իրական եւ
հեռանկարային:

Յակոբ Գասարճեան